Էջմիածին



ԺԱ
2019

ՀԶ. ՏԱՐԻ

Բարեկամ

ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄԱՆԱՒԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Նոյեմբեր

Ա. ԷՋՄԻԱԾԻՆ 2019



ՀՐԱՄԱՆԱՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«ԷՋՄԻԱԾԻՆ»
կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրակազմ

Գլխաւոր խմբագիր՝ **Գէորգ Մաղոյեան**

Գլխաւոր խմբագրի տեղակալ՝ **Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան**

Խմբագիրներ՝ **Արփինէ Չանթիկեան,**
Լուսինէ Վարդանեան

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Սրբագրիչ՝ **Նարինէ Սարգսեան**

Խմբագրական խորհուրդ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,**
Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Ազատ Բօզոյեան,
Գէորգ Տէր-Վարդանեան,
Վարդան Դեւրիկեան,
Գոհար Աւագեան

“Etchmiadzin”
Theological and Armenological Journal

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**
Deputy Editor-in-Chief **Archimandrite Andreas Yezekyan**
Editors **Arpine Chantikyan,**
Lusine Vardanyan
Technical editor **Gor Grigoryan**
Corrector **Narine Sargsyan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,**
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Azat Bozoyan,
Gevorg Ter-Vardanyan,
Vardan Devrikyan,
Gohar Avagyan

«Эчмиадзин»
Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворк Мадоян**
Заместитель главного редактора **Архимандрит Андреас Езекян**
Редакторы **Арпине Чантикян,**
Лусине Варданян
Технический редактор **Гор Григорян**
Корректор **Наринэ Саргсян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,**
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Азат Бозоян,
Геворк Тер-Варданян,
Вардан Деврикян,
Гоар Авакян

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Յիշեցէք զառաջնորդս ձեր,
որ խօսեցան ձեզ Բանն Աստուծոյ,
հայեցեալք յելս գնացից նոցա՝
նմանօրէն եղերուք հաւատոցն»
(Եբր. ԺԳ. 7–8)։

Ազգերի ու ժողովուրդների պատմության հոլովույթում քիչ չեն այն անձինք, որոնք ապրել եւ գործել են ճիշտ ժամանակին եւ ճիշտ վայրում՝ վճռորոշ դեր ունենալով տվյալ դարաշրջանի պատմության շրջադարձային իրադարձություններում։ Ազգերի պատմության շարքում իր առանձնահատուկ տեղն է գրավում հայ ժողովուրդը, որի պատմությունն առատ է հայրենանվեր եւ ազգաշեն գործերով հայտնի հայորդիների փառահեղ անուններով։ Միով բանիվ, ինչպես կասեր Պատմահայրը, աներկբա է, որ «բազում գործք արութեան գտանին գործեալ ի մերում աշխարհիս եւ արժանի գրոյ յիշատակի»։ Բայց եւ միանշանակ է, որ ժամանակը, դառնալով պատմություն, վերածվում է դատավորի՝ յուրաքանչյուրին պատմության մեջ հատկացնելով այն վայրը, որին արժանացել է անձն իր «գործք արութեամբ»։

Անշուշտ այս դիտանկյունից վերցրած Հայ Եկեղեցու անդաստանը լի է շնորհալի եւ հիշարժան եկեղեցականների անուններով, ի թիվս որոնց հատկապես հիշատակելի են Հայոց Հայրապետները, որոնցից շատերն անդուլ կերպով տքնել, պայքարել եւ գործել են հայ ժողովրդի հոգեւոր փրկության եւ քաղաքական ազատության ձեռքբերման եւ պահպանման համար։

Գոհություն Աստծու, այսօր, հայ ժողովուրդն անկախ եւ ազատ իր Հայրենիքում հնարավորություն ունի նորովի ստեղծագործել եւ արարել։ Սակայն չեն դադարել Հայ Եկեղեցու՝ իր զավակաց արյան գնով ձեռքբերված ազատությունը պահպանելու, զորացնելու եւ պատմական

արդարությունը վերականգնելու ջանքերը, չեն դադարել հայապահպանության եւ հայազարգացման ուղղությամբ տարվող պատասխանատու աշխատանքները։ Եւ այս ամենի թիկունքում, որպես արթուն հսկող, մշտապես կանգնած են եղել Ամենայն Հայոց կաթողիկոսները։

Այս տարի լրացավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման եւ գահակալության 20-ամյակը։ Աներկբա է, որ Վեհափառ Հայրապետը Հայոց այն կաթողիկոսներից մեկն է, որի գահակալության այս շրջանը պատմության մեջ այլեւս ամրագրվել է որպես Հայ Եկեղեցու վերազարթոնքի շրջան։ Իսկ Նրա օծման եւ գահակալության 20-ամյակի ոգեկոչումն առիթ է անդրադառնալու մեր ժողովրդի քրիստոնեական կյանքի ուղուն, կարեւորելու հոգեւոր-մշակութային մեր հարուստ ժառանգությունը եւ գնահատելու ոչ միայն ժառանգությունը կերտողներին, այլեւ նրանց, ովքեր այսօր եւս նախնյաց ավանդույթներով եւ ոգով կրթում, խնամում ու պահպանում են մեր ժողովրդի հավատքի ոգին՝ հաստատուն պահելով հայ ժողովրդի զավակներին մեր Տեր Հիսուս Քրիստոսի պարգեւած փրկության շնորհի մեջ։

Ժամանակակիցները բարձր գնահատանքով են խոսում Վեհափառ Հայրապետի նախանձախնդիր եւ արդյունավոր եկեղեցաշեն գործունեության մասին։ Վեհափառ Հայրապետը գահ բարձրացավ մի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդի համար նոր հորիզոններ եւ հնարավորություններ էին բացվել։ Նա, ներեկեղեցական, միջեկեղեցական եւ միջկրոնական ողջամիտ գործունեություն իրականացնելով, ցուցաբերում է բարդ իրավիճակներում կողմնորոշվելու եւ Հայ Եկեղեցին հորձանուտներից անխաթար ու անվնաս դուրս բերելու բացառիկ իրատեսություն։

Գարեգին Բ. Կաթողիկոսը նաեւ եկեղեցական կյանքի բարեփոխիչ է, ով իր գործունեության բոլոր ոլորտներում մշտապես դրսեւորել է կազմակերպչական փայլուն կարողություններ։ Այս մասին են վկայում նրա օրոք հրավիրված բազմաթիվ եկեղեցաժողովներն ու համաժողովները, որոնք կարեւոր նշանակություն ունեն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանական, ծիսական եւ կանոնական վիճակի անաղարտ պահպանման եւ արդի աշխարհի մարտահրավերների համապատասխան մատուցման համար։ Վեհափառ Հայրապետը, որպես զգոն եւ իմաստուն Հովվապետ, իր անխոնջ գործունեությամբ ու վաստակով նախորդների հետեւողությամբ ուղենշում է հոգեւոր այն լուսածիրը, որով անցնելու է հայ ժողովուրդը՝ Հայոց Եկեղեցին, պատմության խաչուղիներով։

Հայոց Եկեղեցու պատմության հետագա շարադրանքի առաջնային նպատակներից պետք է լինի, ինչպես մերօրյա հասարակությանը, այնպես եւ ապագա սերունդներին հնարավորություն ընձեռել լավագույնս ճանաչելու, անկողմնակալ ու անաչառ կերպով արժեւորելու հայրենասեր, եկեղեցանվեր կաթողիկոսի նախանձախնդիր եւ արդյունավոր 20-ամյա գործունեությունը, որի շնորհիվ այսօր Հայ Եկեղեցին ու եկեղեցականը հաստատուն ներկայություն են հայոց կյանքի բոլոր ոլորտներում։

Վստահ ենք, որ այն հսկայածավալ աշխատանքը, որն արդեն շուրջ 20-տարի, որպես ազգընտիր Հայրապետ, իրականացնում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ., իր ընդգրկմամբ դարակազմիկ է, եւ իհարկե, դժվար է նկարագրել այն բազմաոլորտ գործունեությունը, որ իրականացրել է Վեհափառ Հայրապետը 20-ամյա գործունեության ընթացքում։ Սակայն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրենանվեր ու եկեղեցաշեն գործունեության համառոտ ակնարկն իսկ վկայում է, որ Վեհափառ Հայրապետը լի է եռանդով, հաստատակամությամբ եւ վճռականությամբ՝ շարունակելու իր հոգեւոր ծառայությունը՝ ի բարօրություն համայն հայ ժողովրդի, ի սպաս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ Հայոց պետականության բարգավաճման։ Բարեգութ եւ ամենազոր Տիրոջից հայցում ենք, որ Նորին Սրբությանը շնորհի անկոտրում կամք եւ անբեկանելի կորով՝ շարունակելու եւ լրումին հասցնելու ժողովրդանվեր ու եկեղեցանպաստ բոլոր ծրագրերն ու տեսիլքները.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աշխատակազմի անունից Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ցանկանում ենք նորանոր հաջողություններ՝ քրիստոսահաստատ Ս. Էջմիածնին եւ հայ ժողովրդին ծառայելու սրբազան առաքելության մեջ։

Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆ. ՊՈՂՈՍՅԱՆ
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժնի
ու «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանի տնօրեն,
Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դասախոս

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 2010–2019 ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ*

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի 2010–2019 թթ. գործունեության սույն համառոտ տարեգրության հիմքում ընկած են Մայր Աթոռի պաշտոնական մամուլում՝ «Էջմիածին» ամսագրում եւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթում հրապարակված նյութերը: Միով բանիվ՝ օրագրության տեսքով ներկայացվում են Վեհափառ Հայրապետի 2010–2019 թթ. գործունեության հիմնական եւ հիշարժան տարեթվերը:

2010

Հունվարի 9-ին *պաշտոնական այցով մեկնել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմ՝ հրավերով թեմական խորհրդի:*

Հունվարի 20-ին *Մոսկվայում ստացել է «Ուղղափառ ժողովուրդների միասնության ամրապնդման գործում հատկանշական գործունեության, հասարակության կյանքում քրիստոնեական արժեքների հաստատման եւ ամրապնդման համար» Ալեքսի Բ. Պատրիարքի անվան 2009 թ. մրցանակը:*

Փետրվարի 15–16-ը *հովվապետական այցով մեկնել է Երուսաղեմ:*

Փետրվարի 15-ին *«Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշան է հանձնել Երուսաղեմի Հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Թորգոմ արք. Մանուկյանին:*

Մարտի 4-ին *ընդունել է Չեխիայի Հանրապետության Խորհրդարանի Պատգամավորների պալատի փոխնախագահ Վոյցեկ Ֆիլիպին:*

Նույն օրն *ընդունել է Եւրոպական ժողովրդական կուսակցության նախագահ Վիլֆրիդ Մարթենսին:*

Մարտի 6-ին *ընդունել է սերբ նշանավոր կինոռեժիսոր Էմիր Կուստուրիցային՝ ուղեկցությամբ տիկին Կուստուրիցայի:*

---

* *2010–2013 թթ. կենսագրական տվյալները քաղվել են «Էջմիածին» ամսագրից, իսկ 2014–2019 թթ. նյութերը՝ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթից:*

Մարտի 12-ին *ընդունել է ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ ժոաո Սոարեշի գլխավորած պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է Լեհաստանի Հանրապետության վարչապետ Դոնալդ Ֆրանցիշեկ Տուսկին։*

Մարտի 16-ին *դիմավորել է իր հրավերով Հայաստան ժամանած Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբություն Կիրիլ Առաջինին։*

Մարտի 19-ին *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ընդլայնված ժողովը։*

Մարտի 30-ին *ընդունել է ՀՀ-ում Չինաստանի ժողովրդական Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Թիան Չանչունին։*

Ապրիլի 5-ին *հանդիսապետել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանատան բացման հանդիսավոր արարողությունը եւ դիվանատան կառուցման բարերարներ տեր եւ տիկին՝ Նազար եւ Արտեմիս Նազարյանների մեծարման հանդիսությունը։*

Ապրիլի 7-ին *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը։*

Նույն օրն *ընդունել է Թուրքմենստանի փոխվարչապետ Խիդիր Սապարլիեւին։*

Ապրիլի 14-ին *ընդունել է «Կոմունիզմի «դասերը» եկեղեցիներին» միջազգային գիտաժողովի մասնակիցներին։*

Նույն օրն *ընդունել է Սլովակիայի Հանրապետության Խորհրդարանի Քրիստոնեադեմոկրատական խմբակցության առաջնորդ Պավել Ռուշեւսկուն։*

Ապրիլի 18-ին *կատարել է եպիսկոպոսական ձեռնադրություն։*

Ապրիլի 26-ին *ժամանել է Ադրբեջանի մայրաքաղաք Բաքու՝ մասնակցելու Բաքվում գումարված կրոնապետերի համաշխարհային գագաթնաժողովին։*

Ապրիլի 26-ից մայիսի 2-ը *հանդիպումներ է ունեցել Շվեյցարիայի հայոց թեմի երկու համայնքների՝ Նեոշաթել-ժուրայի եւ Ցյուրիխի եկեղեցական վարչությունների ատենապետներ պրն. Ալեն Ուգնատի եւ պրն. Վռամշապուհ Թերզյանի հետ։*

Մայիսի 3-ին *ընդունել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բադեն-Վյուրթեմբերգի շրջանի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու հոգեւոր սպասավորների պատվիրակության՝ գլխավորությամբ վերապատվելի Մանֆրեդ Վագների։*

Մայիսի 4-ին *մեկշաբաթյա աշխատանքային այցով մեկնել է Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի հայոց թեմեր։*

Մայիսի 13-ին *ընդունել է Լեհաստանի Սեյմի լեհ-հայկական պատգամավորական բարեկամական խմբի անդամներին՝ Լեհաստանի Սեյմի սենատոր Լուկաշ Աբգարովիչի գլխավորությամբ։*

Մայիսի 18-ին *ընդունել է մեկշաբաթյա այցով Մայր Աթոռում գտնվող Դամասկոսում գործող քրիստոնյա եկեղեցիների եպիսկոպոսների պատվիրակությանը՝ Հայ Առաքելական Ս. Եկեղեցու Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալբանդյանի գլխավորությամբ։*

Նույն օրն *ընդունել է պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Չեխիայի վարչապետ Յան Ֆիշերին։*

Մայիսի 19-ին *ընդունել է Օրենբուրգի նահանգապետ Ալեքսեյ Չերնիշեւին։*

Մայիսի 20-ին *ընդունել է Ֆրանսիայի Հանրապետության տնտեսական զարգացման նախարար Պատրիկ Դեւեջյանին։*

Հունիսի 1-ին *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը։*

Հունիսի 2-ին *նախագահել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների հերթական՝ հինգերորդ հավաքը։*

Հունիսի 21-ին *ընդունել է ԵՀԽ «Հավատք եւ կարգ» հանձնախմբի գործադիր վարչության 31 անդամներին։*

Հունիսի 25-ին *ընդունել է Ավստրիայի եւրոպական ու միջազգային հարցերի դաշնային նախարար Միխայել Շպինդելեգերի գլխավորած պատվիրակությանը։*

Հունիսի 28-ին *մասնակցել է ուղղափառության միջխորհրդարանային համաժողովի 17-րդ վեհաժողովի բացման արարողությանը։*

Նույն օրն *ընդունել է Գրողների համահայկական 5-րդ համաժողովի շուրջ 70 մասնակիցներին։*

Հուլիսի 7-ին *հայրապետական օրհնության գրով վավերացրել է Տ. Գարեգին արք. Բեքչյանի վերընտրությունը Գերմանիայի հայոց թեմի առաջնորդի պաշտոնում։*

Հուլիսի 9-ին *ընդունել է Ֆրանսիայի Սենատի պատվիրակությանը՝ Ֆրանսիա-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի նախագահ Սերժ Լագոշի գլխավորությամբ։*

Հուլիսի 11-ին *հանդիսապետել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ուսումնական հարկաբաժնին կից մասնաշենքի հիմնարկեքը։*

Հուլիսի 17-ին *ընդունել է ՌԴ փոխվարչապետ Ալեքսանդր Ժուկովի գլխավորած պատվիրակությանը։*

Օգոստոսի 25-ին *ընդունել է Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի նորանշանակ ներկայացուցիչ Դամիյու Դեսալեյնին։*

Օգոստոսի 31-ին *հանդիսապետել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցած կրթության մշակների օրհնության կարգը, որով սկիզբ է դրվել մի նոր՝ կրթական ոլորտի երախտավորների օրհնության ավանդության։*

Սեպտեմբերի 2-ին *հանդիսապետել է Ս. Գայանե վանքում գտնվող Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մանկատան շենքի բացման արարողությունը։*

Սեպտեմբերի 4-ին *հայրապետական պաշտոնական այցով մեկնել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան եւ արեւմտյան թեմեր։*

Սեպտեմբեր 9-ին *հանդիսապետել է Բոստոնի «Հայ ժառանգության զբոսայգու» հիմնարկեքի արարողությունը։*

Սեպտեմբերի 11-ին *հանդիսապետել է ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմի առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդյանց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը։*

Սեպտեմբերի 12-ին՝ *Խաչվերացի տոնին, հայրապետական Ս. Պատարագ է մատուցել նորաօծ առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդյանց եկեղեցում։*

Սեպտեմբերի 20-ին *ընդունել է սեպտեմբերի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի պատվիրակությանը՝ գլխավորությամբ Նառվսկի եպիսկոպոս Լազար Գուրկինի։*

Սեպտեմբերի 21-ին *հանդիսապետել է ՀՀ-ում Անկախության տոնի առիթով կատարվող Հանրապետական մաղթանքի արարողությունը։*

Սեպտեմբերի 23-ին *հանդիսապետել է Վանաձոր քաղաքի «Ս. Գրիգոր Նարեկացի» հայորդյաց տան բացման արարողությունը։*

Սեպտեմբերի 24-ին *հայրապետական օրհնությամբ հաստատել է սեպտեմբերի 21-ին Ռումինիայի հայոց թեմի թեմական պատգամավորական ժողովի կողմից Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ ընտրված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Հոլանդիայի հայոց հոգեւոր հովիվ Տ. Տաթեւ վրդ. Հակոբյանի ընտրությունը։*

Հոկտեմբերի 6-ին *ընդունել է Հայաստանում իր լիազորություններն ավարտած Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Սերժ Սմեսովին։*

Նույն օրն *ընդունել է Թուրքմենստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Աթա Սերդարովին։*

Հոկտեմբերի 8-ին *ընդունել է ապակենտրոնացված համագործակցության հայ-ֆրանսիական համաժողովի մասնակիցներին։*

Հոկտեմբերի 11-ին *ընդունել է Դեր Զորի նահանգապետ Հուսեյն Առնասին։*

Հոկտեմբերի 12-ին *ընդունել է Սլովենիայի Հանրապետության նախագահ Դանիլո Թյիրկին՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի։*

Նույն օրն *ընդունել է Ս. Թարգմանչաց տոնի առիթով կազմակերպված թարգմանության մրցույթին մասնակցած Երեւանի պետական համալսարանի հիսուն ուսանողների։*

Հոկտեմբերի 16-ին *ուղեկցությամբ թեմական առաջնորդների եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների՝ մասնակցել է Տաթեւի վանք տանող ճոպանուղու բացման արարողությանը։*

Հոկտեմբերի 28-ին *ընդունել է Մոնրեալի քաղաքապետ Ժերալդ Թրամբլեին։*

Հոկտեմբերի 29-ին *ընդունել է ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանից, Բելառուսից, Ուկրաինայից եւ Ղազախստանից Հայաստան ժամանած մի խումբ լրագրողների։*

Նոյեմբերի 1-ին *ցավակցական նամակ է հղել Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու քահանայապետ Բենեդիկտոս ԺԶ. Պապին, Բաղդադի Սայիդաթ ալ-Նայեաթ Ասորական Կաթոլիկ եկեղեցում տեղի ունեցած ահաբեկչական գործողության հետեւանքով զոհված 58 անմեղ զոհերի եւ Ասորական Կաթոլիկ (Քաղդեական) եկեղեցու անդամների սպանության կապակցությամբ։*

Նույն օրը *Մայր Աթոռի միաբան հայրերի ուղեկցությամբ մեկնել է Արմավիրի թեմ՝ Սարդարապատ գյուղ՝ կատարելու տեղի Ս. Աստվածածին եկեղեցու վերաօծման արարողությունը։*

Նոյեմբերի 4-ին *ընդունել է Արաբական Միացյալ Էմիրությունների արտաքին առեւտրի նախարար Շեյխա Լուբնա ալ-Քասիմիի գլխավորած պատվիրակությանը։*

Նույն օրը *նախագահել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի 20-ամյակին նվիրված արարողությունը։*

Նոյեմբերի 5-ին *ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության Արեւմտյան Ատրպատականի նահանգապետ Վահիդ Տալալզադեի գլխավորած պատվիրակությանը։*

Նոյեմբերի 9-ին *ընդունել է ՌԴ Ռոստովի մարզի նահանգապետ Վասիլի Գոլուբեւի գլխավորած պատվիրակությանը։*

Նոյեմբերի 11-ին *հանդիսապետել է երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի արձանի բացման արարողությունը։*

Նոյեմբերի 13–14-ին *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը։*

Նոյեմբերի 17-ին *ընդունել է Հայաստանում Ուկրաինայի արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Կուխտային։*

Նոյեմբերի 22-ին *ընդունել է ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Անրի Ռենոյին։*

Նոյեմբերի 24-ին *ընդունել է «Բարի գալուստ, Հայաստան» կին դիվանագետների եւ դիվանագետների կանանց ընկերակցության անդամներին՝ գլխավորությամբ ընկերակցության նախագահ տիկ. Նատալիա Նալբանդյանի։*

Նոյեմբերի 23-ին *նախագահել է Մայր Աթոռի հովանու ներքո անցկացվող «Լավագույն ուսուցիչ» ամենամյա հանրապետական մրցույթի մրցանակաբաշխությունը։*

Նոյեմբերի 25-ին, *Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ, Արեւմտյան Եւրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Նորվան արք. Զաքարյանի հրավերով, մեկշաբաթյա այցով մեկնել է Ֆրանսիա։*

Դեկտեմբերի 10-ին *Գեւորգյան հոգեւոր ճեմարանում հանդիսապետել է ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպս. Մաշալյանի հրաժեշտի ցերեկույթը։*

Դեկտեմբերի 11-ին *ընդունել է քառօրյա այցով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ Վոլոկոլամսկի միտրոպոլիտ Իլարիոն Ալֆեեւի։*

Դեկտեմբերի 15-ին *ընդունել է Երեւանում մեկնարկած «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելում, դատապարտում եւ հետեւանքների վերացում» խորագրով միջազգային գիտաժողովի մասնակիցներին։*

Դեկտեմբերի 16-ին *ընդունել է մի խումբ բժիշկների՝ ուղեկցությամբ Արա Բաբլոյանի։*

Նույն օրն *ընդունել է Հայաստանում Լատվիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Գինց Ապալսին։*

Դեկտեմբերի 18-ին *նախագահել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցած Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի հիմնադրման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստը։*

Դեկտեմբերի 20-ին *ընդունել է Եւրախորհրդարանի պատգամավոր, Հայաստանի հարցերով զեկուցող Տոմաշ Պորեբային։*

Դեկտեմբերի 24-ին *հանդիսապետել է Մայր Աթոռի վարչական նոր մասնաշենքի հիմնարկեքի արարողությունը։*

Դեկտեմբերի 31-ին *նախագահել է ամանորյա հանդիսության տոնակատարությունը։*

2011

Հունվարի 9-ին *մեկնել է ԱՄՆ՝ հանդիպելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարներին։*

Հունվարի 29-ին *ընդունել է ՀԲՀՄ նախագահ Պերճ Սեդրակյանին։*

Փետրվարի 9-ին *ընդունել է ՀՀ գյուղատնտեսության նորանշանակ նախարար Սերգո Կարապետյանին։*

Փետրվարի 15-ին *ընդունել է «Հայ միասնության խաչ» կազմակերպության ներկայացուցիչներին։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ զինված ուժերում ծառայող 46 հոգեւոր սպասավորներին՝ բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանի գլխավորությամբ։*

Փետրվարի 17-ին *ընդունել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի նախարար Յան Չիեչիին։*

Մարտի 3-ին *ընդունել է ՀՀ տարբեր մարզերից ժամանած հանրակրթական 32 դպրոցների տնօրեններին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի ՔԴԿ-ի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանի։*

Մարտի 10-ին *Վեհափառը մեկշաբաթյա այցով մեկնել է Ֆրանսիա։*

Մարտի 21-ին *ընդունել է Խորվաթիայի Հանրապետության Խորհրդարանի նախագահ Լուկա Բեբիչի գլխավորած պատվիրակությանը։*

Մարտի 22-ին *ընդունել է ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովի գլխավոր քարտուղար Սուպաչայ Պանիտչպակդիին։*

Մարտի 31-ին *ընդունել է Շվեյցարիայի Համադաշնության նախագահ տիկ. Միշելին Կալմի-Ռեյին՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի ուղեկցությամբ։*

Ապրիլի 6-ին *ընդունել է ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի գլխավորած Հայ կանանց միջազգային միության անդամներին։*

Ապրիլի 18-ին *ընդունել է Ռուսաստանի Դաշնության տարածքային զարգացման նախարար Վիկտոր Բասարգինին՝ ուղեկցությամբ ՀՀ տարածքային կառավարման փոխնախարար Վաչե Տերտերյանի։*

Ապրիլի 19-ին *ընդունել է հայ-ռուսական միջտարածաշրջանային առաջին համաժողովի առիթով Հայաստան ժամանած ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավար Սերգեյ Նարիշկինի գլխավորած պատվիրակությանը։*

Ապրիլի 20-ին *ընդունել է Ղազախստանի Լ. Գումիլեւի անվան եւրասիական ազգային համալսարանի պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ԵՊՀ-ի ռեկտոր Արամ Սիմոնյանի եւ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպս. Ժամկոչյանի։*

Նույն օրն *ընդունել է Վրաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլիին։*

Ապրիլի 23-ին *ընդունել է Շվեդիայի Թագավորության Ռիկսդագի պատգամավորներ, Շվեդիա-Հայաստան բարեկամության խորհրդարանական խմբի նախագահ Անելի Էնոքսոնին եւ խմբի անդամ Ֆրեդերիկ Մալմին։*

Ապրիլի 27-ին *ընդունել է Պոտսդամում բացվող Յոհաննես Լեփսիուսի տուն-թանգարանի տնօրեն Հանս Ուլրիխ Շուլցի գլխավորած պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է Եւրոպական խորհրդարանում Եւրոպական ժողովրդական կուսակցության խմբի փոխնախագահ Խայիմ Մայոր Օրեխային։*

Մայիսի 4-ին *ընդունել է «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի գլխավոր գործադիր տնօրեն Դանիել Յոհաննեսին՝ ՀՀ-ում ԱՄՆ-ի արտակարգ եւ լիազոր դեսպան Մարի Յովանովիչի ուղեկցությամբ։*

Հունիսի 3-ին *ընդունել է Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանին։*

Հունիսի 10-ին *միջեկեղեցական եւ հովվապետական վեցօրյա այցով մեկնել է Վրաստան՝ Վրաց Ուղղափառ Եկեղեցու Իլիա Բ. Կաթողիկոս-Պատրիարքի եւ Վիրահայոց թեմի թեմական խորհրդի հրավերով։*

Հունիսի 12-ին *ընդունել է Ուկրաինայի Գերագույն Ռադայի նախագահ Վլադիմիր Լիտվինի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային Ժողովի փոխնախագահ Սամվել Բալասանյանի։*

Հունիսի 19-ին *ընդունել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 13-րդ համաժողովի ծիսական հարցերով նախապատրաստող հանձնախմբի անդամներին։*

Հուլիսի 15-ին *ընդունել է ՀԲԸՄ-ի «Անդրանիկ» սկաուտական բանակումի 150 մասնակիցներին Հայաստանից, ԱՄՆ-ից եւ Սիրիայից։*

Հուլիսի 17-ին *ընդունել է Լիոնի քաղաքապետ Ժերար Կոլոնին։*

Հուլիսի 29-ին *ընդունել է Լեհաստանի նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկուն՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի։*

Օգոստոսի 23-ին *ընդունել է «Հայկական ներկապնակ» նկարիչների միջազգային փառատոնի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Սերգո Երիցյանի եւ Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանի։*

Օգոստոսի 24-ին *ընդունել է ՀԲԸՄ-ի «Բացահայտիր Հայաստանը» եւ «Հայաստան՝ կյանքի երկիր» երիտասարդական խմբերի անդամներին։*

Նույն օրն *ընդունել է Ֆրանսիայի «Միություն հանուն ժողովրդական շարժման» կուսակցության խորհրդարանական պատվիրակության չորս անդամներին՝ Վալերի Բուայեին, Գի Տեսիեին, Ժորժ Կոլումբիեին եւ Ժակ Ռեմլիեին։*

Օգոստոսի 28-ին *ընդունել է Ավստրիայի Ինսբրուկ քաղաքի հոգեւոր առաջնորդ Մանֆրեդ եպս. Շոյերի գլխավորած ուխտավորների խմբին։*

Նույն օրն *ընդունել է Կաթոլիկ Եկեղեցու Ավստրիայի Գրաց Սեկուա եւ Գուրկի թեմերից Հայաստան ժամանած 37 ուխտավորների՝ առաջնորդությամբ Բադ Սուզեի հոգեւոր հովիվ հայր Էդմունդ Մուհրերի։*

Օգոստոսի 31-ին *ընդունել է ՀՀ արտաքին գործերի նախարարության կենտրոնական օղակ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների խորհրդակցության մասնակիցներին՝ առաջնորդությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի։*

Նույն օրն *ընդունել է ԳԴՀ-ի պաշտպանության խորհրդարանական պետքարտուղար Քրիստիան Շմիդթի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի եւ ՀՀ զինված ուժերի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանի։*

Սեպտեմբերի 1-ին *երկօրյա այցով մեկնել է ԼՂՀ՝ մասնակցելու ԼՂՀ հռչակման միջոցառումներին։*

Սեպտեմբերի 6-ին *ընդունել է Երուսաղեմի Տաճարականների միաբանության պատվիրակությանը՝ գլխավորությամբ Երուսաղեմի տաճարականների հունական վաշտի գլխավոր հրամանատար Պողոս Զորակյանի։*

Նույն օրն *ընդունել է «Արմենիա» առագաստանավի անձնակազմին՝ գրող, հրապարակախոս Զորի Բալայանի ղեկավարությամբ։*

Սեպտեմբերի 11-ին *մեկնել է Վայոց ձոր։*

Սեպտեմբերի 17-ին *ընդունել է Բելգիայի Դաշնային Թագավորության Անտվերպենի համալսարանի պրոֆեսոր Լիլիան Վան Հոֆի գլխավորած ուսանողական խմբին։*

Սեպտեմբերի 18-ին *ընդունել է «Միջազգային Հաբիթաթ ֆոր Հյումենիթի» կազմակերպության տնօրենների միջազգային խորհրդի նախագահ Քեն Քլեյնի գլխավորած պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է ՁԺՀ-ի տնտեսական եւ սոցիալական խորհրդի պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանի եւ խորհրդի անդամների։*

Նույն օրն *ընդունել է «Պոլսահայ համայնքի օրերը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Պոլսից Հայաստան ժամանած Մխիթարյան սանուց միության «Դալար» երգի եւ պարի խմբի անդամներին։*

Նույն օրն *ընդունել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին։*

Սեպտեմբերի 22-ին *ընդունել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար Օլայվ Տվեյտի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպս. Մանուկյանի։*

Նույն օրն *ընդունել է Հայկական բարեգործական ընդհանուր միության՝ Արգենտինայի Բուենոս Այրեսի մասնաճյուղի տիկնանց հանձնախմբի ուխտավորներին՝ գլխավորությամբ Դիանա Սարաֆյանի։*

Նույն օրն *ընդունել է «Ս. Էջմիածնի երիտասարդներ» միության անդամներին։*

Սեպտեմբերի 27-ին *ընդունել է Սիդնեյի (Ավստրալիա) Համազգային «Արշակ եւ Սոֆի Գոլդն» ճեմարանի սաներին։*

Հոկտեմբերի 3-ին *ընդունել է ՀՀ-ում Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Մամուն Հարիրիին։*

Նույն օրն *ընդունել է նաեւ ՀՀ-ում Լիբանանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Զիադ Աթալային։*

Հոկտեմբերի 4-ին *ընդունել է Լիբանանի Հանրապետության խորհրդարանի նախագահ Նաբիհ Բըրրիին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ փոխնախագահ Սամվել Նիկոյանի։*

Հոկտեմբերի 6-ին *հանդիպում է ունեցել Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Նիկոլա Սարկոզիի եւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ։*

Հոկտեմբերի 7-ին *հայրապետական այցով մեկնել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմ։*

Հոկտեմբերի 15-ին *ավարտելով հայրապետական այցը ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմ՝ վերադարձել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին։*

Հոկտեմբերի 19-ին *ընդունել է Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի ռեկտոր, Մոսկվայի թեմի առաջնորդական փոխանորդ Վերեյսկի արքեպիսկոպոս Եւգենիին։*

Հոկտեմբերի 20-ին *ընդունել է «Գրական տապան 2011» ծրագրի շրջանակներում եւրոպական տարբեր երկրներից Հայաստան ժամանած մի խումբ գրողների՝ ՀՀ մշակույթի փոխնախարար Արեւիկ Սամուելյանի ուղեկցությամբ։*

Հոկտեմբերի 31-ին *ընդունել է ՀՀ-ում ԱՄՆ-ի նորանշանակ դեսպան Ջոն Ա. Հեֆերեւին։*

Նոյեմբերի 9-ին *ընդունել է Նորվեգիայի արտաքին գործերի նախարար Յոնաս Գահր Շտյորեին։*

Նոյեմբերի 10-ին *ընդունել է* Apple *ընկերության համահիմնադիր Սթիվեն Վոզնյակին՝ ուղեկցությամբ «Սինոփսիս Արմենիա» ընկերության գործադիր տնօրեն Հովիկ Մուսայելյանի։*

Նոյեմբերի 16-ին *ընդունել է Ռումինիայի արտաքին գործերի նախարար Թեոդոր Բակոնսկիի գլխավորած պատվիրակությանը։*

Դեկտեմբերի 1-ին *ընդունել է մանկական «Եւրատեսիլ 2011» մրցույթի մասնակիցներին։*

Դեկտեմբերի 10-ին *ընդունել է Լիբանանի Հանրապետության նախագահ Միշել Սլեյմանին՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի։*

2012

Հունվարի 24-ին *նամակ է հղել Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին՝ Ֆրանսիայի խորհրդարանի վերին պալատի կողմից ցեղասպանությունների ժխտումը քրեականացնելու մասին օրինագծի ընդունման կապակցությամբ։*

Հունվարի 29-ին *հանդիսապետել է Հայոց բանակի 20-ամյա հոբելյանի առիթով մատուցված Ս. Պատարագը։*

Հունվարի 30-ին *հայրապետական այցով մեկնել է Ֆրանսիայի եւ Անգլիայի թեմեր։*

Փետրվարի 12-ին *ընդունել է մի խումբ ավստրիացի կաթոլիկ ուսանողների՝ ուղեկցությամբ հայագետ Յասմին Դունթղագութի։*

Փետրվարի 15-ին *նախագահել է Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնի առիթով գումարվող քահանայից ավանդական ամենամյա հավաքը։*

Փետրվարի 16-ին *Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում նախագահել է ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի ուսանողության համատեղ ջանքերով կազմակերպված Վարդանանց հերոսամարտին նվիրված հանդիսությունը։*

Նույն օրն *ընդունել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Եկեղեցիների համատեղ գործողություն» Ալյանսի (*ACT Alliance*) սոցիալ-հոգեբանական խմբի անդամներին։*

Փետրվարի 21-ին *ընդունել է Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության նորանշանակ դեսպաններ Քեթրին Տեյն Լիչին եւ Տոնաթան Տեյմս Էյվզին։*

Փետրվարի 23-ին *ընդունել է Եւրանեստ խորհրդարանական վեհաժողովի սոցիալական, կրթության, մշակույթի եւ քաղաքացիական հասարակության հարցերով հանձնաժողովի պատգամավորների պատվիրակությանը։*

Փետրվարի 28-ից մարտի 1-ը *Մայր Աթոռ Ս. Էջմիածնում եւ Հառիճավանքում նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը՝ ընդլայնված կազմով։*

Մարտի 9-ին *ընդունել է Ճապոնիայի լիազոր նախարար, Ռուսաստանի Դաշնությունում Ճապոնիայի դեսպանատան առաքելության ղեկավարի տեղակալ Կեյդզի Իդեին։*

Մարտի 10-ին *ընդունել է Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ, ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի անդամ Արթուր Զիլինգարովին։*

Մարտի 18-ին *ցավակցական գիր է հղել Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Սրբազան Սինոդին, հոգեւորականությանը եւ ղպտի քրիստոնյաներին Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պապ, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Շենուդա Գ. Պատրիարքի մահվան կապակցությամբ։*

Մարտի 21-ին *ընդունել է Հայաստանում եւ Վրաստանում նորանշանակ պապական նվիրակ Նորին Սրբազնություն Մարեկ արքեպիսկոպոս Սոլփնսկուն։*

Նույն օրը *նախագահել է նորոգ հանգուցյալ, Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պապ, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Շենուդա Գ. Պատրիարքի համար կատարված հոգեհանգստյան արարողությունը։*

Մարտի 25-ին *հանդիսապետել է Քարոզչական կենտրոնի գործունեության մեկ ամյակի կապակցությամբ տեղի ունեցած հանդիսությունը։*

Մարտի 28-ին *ընդունել է «Վորլդ Վիժն» կազմակերպության Միջին Արեւելքի եւ Արեւմտյան Եւրոպայի տարածաշրջանային ղեկավար Կոնոնի Լեննեբերգին եւ Տարածաշրջանային գործառնությունների ղեկավար Դերք Բուին։*

Ապրիլի 3-ին *ընդունել է Բուլղարիայի վարչապետ Բոյկո Բորիսովի գլխավորած պատվիրակությանը։*

Ապրիլի 4-ին *ընդունել է Կիպրոսի Հանրապետության արտաքին գործերի նախարար էրատո Կոզակու-Մարկուլիսին։*

Ապրիլի 16-ին *ընդունել է Իսրայելի Քնեսետի անդամ, Իսրայելի գյուղատնտեսության եւ գյուղական զարգացման նախարար տիկին Օրիթ Նոկեդի գլխավորած պատվիրակությանը։*

Ապրիլի 17-ին *ընդունել է Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սերգեյ Մարտինովին։*

Ապրիլի 18-ին *ընդունել է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր տնօրեն Յուկիյա Ամանոյին։*

Ապրիլի 20-ին *ընդունել է Գրողների միության վեցերորդ համագումարի մասնակիցներին։*

Ապրիլի 21-ին *ընդունել է Ռումինիայի մշակույթի եւ ազգային ժառանգության նախարար Հունոր Կելեմենին։*

Ապրիլի 22-ին *ընդունել է «Երեւանը 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի մեկնարկի առիթով Հայաստան ժամանած Բուենոս Այրեսի քաղաքապետ Մաուրիսիո Մակրիի գլխավորած պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է հայ գրատպության 500-ամյակի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երեւանը 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակման միջոցառումների շրջանակներում Երեւանում անցկացվող ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության համաձայնագրի 40-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցներին։*

Ապրիլի 23-ին *ընդունել է Միլանի նահանգապետ Գվիդո Պոդեստային։*

Մայիսի 5-ին *ընդունել է Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության արտաքին գործերի նախարար Լուիս Ալմագրո Լեմեսի գլխավորած պատվիրակությանը։*

Մայիսի 7-ին *մեկնել է Արցախի Հանրապետություն՝ մասնակցելու Շուշիի ազատագրման 20-ամյակին եւ Հաղթանակի տոնին նվիրված միջոցառումներին։*

Մայիսի 11-ին *ընդունել է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի պատմության եւ իրավունքի ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտներին։*

Մայիսի 13-ին *ընդունել է Քուվեյթի շեյխուհի, Քուվեյթի «Օրինակելի մայր» հիմնադրամի նախագահ Շեյխա Ֆարիհա Ալ-Ահմադ Ալ-Սաբահի գլխավորած պատվիրակությանը։*

Մայիսի 15-ին *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը։*

Մայիսի 17-ին *ընդունել է ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Տիկահիտո Հարադային։*

Մայիսի 26-ին *ընդունել է Ֆրանսիայի Սենատի անդամներ Ֆիլիպ Մարինին, Սոֆի Ժուասենին եւ Բերնար Ֆուրնիեին։*

Մայիսի 31-ին *ներկա է գտնվել հինգերորդ գումարման Ազգային ժողովի առաջին նիստին, որի ընթացքում Նորին Սրբությունը հայրապետական իր օրհնությունն է բերել նորընտիր խորհրդարանին։*

Հունիսի 10-ին *ընդունել է ԳԴՀ Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռուպրեխտ Պոլենցին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում ԳԴՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հանս-Յոխեն Շմիդտի։*

Հունիսի 22-ին *ընդունել է «Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնության (*ACT Alliance*) գլխավոր քարտուղար Տոն Նդունային։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ-ում ԳԴՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հանս Յոխեն Շմիդտին՝ Հայաստանում դիվանագիտական առաքելությունն ավարտելու կապակցությամբ։*

Հունիսի 23-ին *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը։*

Հունիսի 25-ին *ընդունել է Լիտվայի Հանրապետության ազգային պաշտպանության նախարար տիկին Ռասա Յուկնեւիչիենի գլխավորած պատվիրակությանը։*

Հունիսի 27-ին *ընդունել է Ավստրիայի Դաշնային Հանրապետության նախագահ Հայնց Ֆիշերին՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի։*

Հունիսի 28-ին *հայրապետական այցով մեկնել է Մարսել՝ մասնակցելու Մարսելի Սրբոց Թարգմանչաց եկեղեցու 80-ամյակի հանդիսություններին։*

Հունիսի 29-ին *գլխավորել է Հայ Եկեղեցու եւրոպական համագումարը։*

Հուլիսի 11-ին *ընդունել է Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Սատվիենկոյի գլխավորած պատվիրակությանը։*

Հուլիսի 19-ին *ընդունել է ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Դիեգո Էրնեստո Ալվարես Ռիվերային։*

Հուլիսի 12-ին *Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում նախագահել է «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցանակի հանձնման արարողությունը։*

Հուլիսի 13-ին *ընդունել է Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի Մոսկվայի հայորդյաց տան ստեղծագործական խմբերին՝ ուղեկցությամբ հայորդյաց տան տեսուչ Տ. Առաքել քհն. Ամիրյանի։*

Հուլիսի 15-ին *ընդունել է ԱՄՆ արեւելյան եւ արեւմտյան հայոց թեմերի երիտասարդ ուխտավորներին։*

Հուլիսի 16-ին *ընդունել է Վատիկանի Արեւելյան Եկեղեցիների ժողովի նախագահ կարդինալ Լեոնարդո Սանդրիին։*

Հուլիսի 22-ին, *Ս. Պատարագի ավարտին, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի է արժանացրել ամերիկաբնակ բարեբար Նուբար Աֆեյանին՝ ի գնահատություն ազգային-եկեղեցական կյանքում իր կարեւոր եւ օգտակար հանձնառությունների։*

Հուլիսի 24-ին *հայրապետական այցով մեկնել է Իտալիա։*

Օգոստոսի 10-ին *հայրապետական այցով մեկնել է Ռումինիայի հայոց թեմ՝ հանդիսապետելու Սուչավայի Հաճկատար Ս. Աստվածա-*

ծին վանքի վերաօծման արարողությունը եւ հիմնադրման 500-ամյակի տոնակատարությունները։

Օգոստոսի 11-ին *հովվապետական այցով եղել է Ուկրաինայի հայոց թեմում։*

Օգոստոսի 13-ին *հանդիպումներ է ունեցել Ռումինիայի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Կրին Անտոնեսկուի, Ռումինիայի վարչապետ Վիկտոր Պոնտայի եւ Սենատի նախագահ Ֆիլիպ Պետրուի հետ։*

Օգոստոսի 17-ին *ցավակցական գիր է հղել Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցու Սրբազան Սինոդին, հոգեւորականությանը եւ եթովպացի քրիստոնյաներին՝ Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցու Աբունա Պաուլոս Պատրիարքի մահվան կապակցությամբ։*

Օգոստոսի 22-ին *ընդունել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Մոհամմադ Ռեխսիին։*

Օգոստոսի 27-ին *ընդունել է ՀՀ-ում Ավստրիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ալուս Կրաուտին։*

Նույն օրը *միածնաէջ Մայր Տաճարում նախագահել է Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցու երջանկահիշատակ Աբունա Պաուլոս Պատրիարքի համար կատարված հոգեհանգստյան արարողությունը։*

Օգոստոսի 29-ին *ընդունել է «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթում Հայաստանի հաղթողներին։*

Օգոստոսի 31-ին *հանդիսապետել է կրթության մշակների օրհնության մասնավոր կարգը։*

Սեպտեմբերի 1-ին *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի արտահերթ ժողովը։*

Սեպտեմբերի 5-ին *ընդունել է Արգենտինայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Հեկտոր Մարկոս Թիմերմանի գլխավորած պատվիրակությանը։*

Սեպտեմբերի 6-ին *ընդունել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր նորանշանակ դեսպան Ռայներ Մորելին։*

Նույն օրն *ընդունել է Իրաքի փոխվարչապետ Ռաուշ Նուրի Շաուեյսի գլխավորած պատվիրակությանը։*

Սեպտեմբերի 7-ին *հովվապետական այցով մեկնել է Ֆրանսիայի հայոց թեմ՝ Նիսի ծուխ։*

Նույն օրը *հանդիպում է ունեցել Նիսի քաղաքապետ Քրիստիան Էստրոզիի հետ։*

Սեպտեմբերի 8-ին *հանդիպում է ունեցել Ալպ-Մարիտիմ նահանգի նահանգապետ Քրիստոֆ Միրմանի հետ։*

Սեպտեմբերի 9-ին *հայրապետական Ս. Պատարագ է մատուցել Նիս քաղաքի Ս. Աստվածածին բազիլիկ եկեղեցում։*

Սեպտեմբերի 19-ին *ընդունել է «Ս. Թովմա Աքվինացի» համալսարանի (Մինեսոթա, ԱՄՆ) նախագահ հայր Դենիս Դիսին եւ հոգաբարձուների խորհրդի անդամներին։*

Նույն օրն *ընդունել է Բուենոս Այրեսի Մխիթարյան վարժարանի եւ Ավստրալիայի Համազգային «Արշակ եւ Սոֆի Գոլսդն» ճեմարանի սաներին։*

Սեպտեմբերի 23-ին *ընդունել է Քրիստոնեական միասնության պապական խորհրդի նախագահ Նորին Սրբազնություն կարդինալ Կուրտ Կոխին։*

Նույն օրն *ընդունել է Հայ օգնության ֆոնդի անդամներին։*

Նույն օրն *ընդունել է Եգիպտոսի Արաբական Հանրապետության մի խումբ մտավորականների եւ թերթերի գլխավոր խմբագիրների։*

Սեպտեմբերի 24-ին *ընդունել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սաքսոնա-Անհալթ երկրամասի մշակույթի եւ կրթության նախարար Շտեֆան Դորգելոհի գլխավորած պատվիրակությանը։*

Սեպտեմբերի 28-ին *ընդունել է Հյուսիսային Իրաքից Հայաստան ժամանած աշխարհի եզդիների հոգեւոր բարձրագույն առաջնորդ Միրե Միրա Թախսին Բեգի գլխավորած պատվիրակությանը։*

Հոկտեմբերի 2-ին *ընդունել է ԳԴՀ Բունդեսթագի փոխնախագահ Վոլֆգանգ Թիրզեի գլխավորած պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է Բուենոս Այրեսի Հայկական բարեգործական ընդհանուր միության տիկնանց միության անդամներին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ պատվավոր անդամ Հարություն Սարաֆյանի։*

Նույն օրն *ընդունել է Սիրիայի Արաբական Հանրապետության Հայկական բարեգործական ընդհանուր միության անդամներին եւ Հալեպի Կիլիկյան վարժարանի հոգաբարձուներին։*

Հոկտեմբերի 8-ին *ընդունել է «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպության տնօրենների խորհրդի անդամներին։*

Հոկտեմբերի 11-ին *ընդունել է Լենինգրադի մարզի նահանգապետ Ալեքսանդր Դրոզդենկոյի գլխավորած պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է Քյոլնի (Գերմանիա) Կաթոլիկ եւ Ավետարանական Եկեղեցիների ուխտավորներին՝ գլխավորությամբ Փորցի Բողոքական Եկեղեցու հոգեւոր հովիվ Կառլ Գյոփելի։*

Նույն օրն *ընդունել է Սլովակիայի Գերագույն դատարանի նախագահ Շտեֆան Հարաբինի գլխավորած պատվիրակությանը։*

Հոկտեմբերի 12-ին *ընդունել է Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարար, ՀՀ եւ ՌԴ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Մաքսիմ Սոկոլովին։*

Նույն օրն *ընդունել է Մոսկվայի (Ռուսաստանի Դաշնություն) միջտարածաշրջանային համագործակցության, ազգային քաղաքականության եւ կրոնական կազմակերպությունների հետ կապերի բաժնի ղեկավար Յուրի Արտյուխին։*

Հոկտեմբերի 14-ին *ընդունել է Հայ-իտալական խորհրդարանական բարեկամության խմբին։*

Նույն օրն *ընդունել է Ռիգայի (Լատվիայի Հանրապետություն) քաղաքապետ Նիլ Ուշակովին։*

Հոկտեմբերի 17-ին *ընդունել է Իտալիայի Հանրապետության պաշտպանության նախարար, ծովակալ Տիամպաոլո Դի Պաոլայի գլխավորած պատվիրակությանը։*

Հոկտեմբերի 18-ին, *ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ու մատենադարանի բարերարներ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյանների մասնակցությամբ, հանդիսապետել է «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի բացումը։*

Հոկտեմբերի 21-ին *հանդիսապետել է մոմավառության սրահի եւ կաթողիկոսական դամբարանի հողօրհնեքի արարողությունը։*

Հոկտեմբերի 24-ին *ընդունել է Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, Միացյալ ազգերի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գերշեւային։*

Նոյեմբերի 29-ին *ընդունել է ՌԴ Դաշնային ժողովի Դաշնային խորհրդի անդամ, ՀՀ ազգային հերոս Նիկոլայ Ռիժկովի գլխավորած պատվիրակությանը։*

Նոյեմբերի 30-ին *ընդունել է Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովին՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի։*

Նոյեմբերի 1-ին *նախագահել է Թեմական ներկայացուցչական չորրորդ ժողովի բացման նիստը։*

Նոյեմբերի 6-ին *հայրապետական այցով մեկնել է ԱՄՆ-ի Հայոց Արեւելյան թեմ՝ հրավերով թեմական խորհրդի։*

Նույն օրը *ցավակցական գիր է հղել Բուլղարիայի Ուղղափառ Եկեղեցու Սրբազան Սինոդին, հոգեւորականությանը եւ բարեպաշտ ժողովրդին Բուլղարիայի Ուղղափառ Եկեղեցու հովվապետ Մաքսիմ Պատրիարքի մահվան կապակցությամբ։*

Նոյեմբերի 22-ին *ազգային բարերար տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնին հանձնել է 2011 թ. փետրվարին նրան շնորհված «Ասպետ Սուրբ Էջմիածնի» հայրապետական շքանշանը։*

Դեկտեմբերի 6-ին *ընդունել է ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Իոաննիս Տայիսին։*

Դեկտեմբերի 7-ին *ցավակցական գիր է հղել Անտիոքի Հույն Ուղղափառ Եկեղեցու Սրբազան Սինոդին, հոգեւոր դասին եւ հավատացյալ ժողովրդին՝ Անտիոքի եւ Համայն Արեւելքի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Իգնատիոս Դ. Պատրիարքի մահվան կապակցությամբ։*

Դեկտեմբերի 14-ին *նախագահել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայորդյաց տանը տեղի ունեցած՝ հայ գրատպության 500-ամյակին նվիրված «Գրերի գյուտից մինչեւ գրատպություն» հանրապետական մրցույթի մրցանակաբաշխության հանդիսավոր ցերեկույթը։*

Դեկտեմբերի 18-ին *ընդունել է ֆրանսիացի աշխարհահռչակ դերասան Ալեն Դելոնին։*

2013

Հունվարի 17-ին *ընդունել է Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլիի գլխավորած պատվիրակությանը։*

Հունվարի 24-ին *ընդունել է ԱՊՀ երկրների Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանին։*

Հունվարի 29-ին *Ս. Էջմիածնից իր օրհնությունն ու շնորհավորանքն է հղել Տ. Նուրհան արքեպ. Մանուկյանին՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարք ընտրվելու առիթով։*

Փետրվարի 5-ին՝ *Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիսապետել է քահանայից ավանդական հավաքը։*

Փետրվարի 13-ին *ընդունել է Արմավիրի թեմի Մրգաշատ գյուղի համայնքի անդամներին։*

Փետրվարի 19–21-ը *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ընդլայնված կազմով ժողովը։*

Մարտի 1-ին *շնորհավորական ուղերձ է հղել Բուլղար Ուղղափառ Եկեղեցու նորընտիր Պատրիարք Նորին Սրբություն Նեոֆիտին։*

Նույն օրը *շնորհավորական ուղերձ է հղել Նորին Սրբություն Մատաթիա Ա.-ին Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք ընտրվելու առիթով։*

Մարտի 14-ին *շնորհավորական ուղերձ է հղել Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Ա. Պապին՝ Հռոմի եպիսկոպոս եւ Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ ընտրվելու առիթով։*

Մարտի 16-ին *ընդունել է ԳԴՀ Բունդեսթագի նախագահ Նորբերթ Լամմերթի գլխավորած պատվիրակությանը։*

Ապրիլի 5-ին *ընդունել է Ֆրանսիայի Մոմպելիե քաղաքից Հայաստան ժամանած կաթոլիկ ուխտավորների՝ առաջնորդությամբ հայր Քրիստիան Դամեռոնի։*

Ապրիլի 9-ին *ընդունել է Ռումինիայի Խորհրդարանի պատգամավորների պալատի նախագահ Վալերիու Շտեֆան Զգոնեային։*

Նույն օրն *ընդունել է Բուխարեստի (Ռումինիա) քաղաքապետ Սորին Միտչեա Օպրեսկուի գլխավորած պատվիրակությանը։*

Ապրիլի 16-ին *ընդունել է ՀՀ-ում Բրազիլիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան տիկ. Մարսելա Մարիա Նիկոդեմոսին։*

Նույն օրը *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունել է Պոեզիայի առաջին միջազգային փառատոնի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի։*

Ապրիլի 17-ին *ընդունել է ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Սուրեշ Բաբուին։*

Ապրիլի 18-ին *ընդունել է Եւրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդին։*

Նույն օրն *ընդունել է Հայաստանում ուխտավորաբար գտնվող Վրաստանի Լատին Եկեղեցու առաջնորդ Տուզեպպե արքեպիսկոպոս Պազոտտոյին, հոգեւոր սպասավորներին ու միանձնուհիներին՝ ուղեկցությամբ Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում եւ Արեւելյան Եւրոպայում Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Տ. Ռաֆայել արք. Մանուկյանի։*

Ապրիլի 19-ին *ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի եւ իսլամական առաջնորդման նախարար Սեյեդ Մոհամմադ Հոսեյնիի գլխավորած պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է «Վերածնունդ» միջազգային 5-րդ մրցույթ-փառատոնի ժյուրիի անդամներին։*

Ապրիլի 23-ին *ընդունել է Անդրկովկասում պապական նվիրակ Նորին Սրբազնություն Մարեկ արք. Սոլչինսկուն։*

Ապրիլի 24-ին *ընդունել է Սլովակիայի Հանրապետության Տրնավայի երկրամասի նահանգապետ Տիբոր Միկուշին։*

Նույն օրն *ընդունել եւ իր հայրապետական օրհնությունն է տվել ֆրանսահայ մի խումբ երիտասարդների՝ ուղեկցությամբ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բարերար Սարգիս Պետոյանի։*

Նույն օրը *հոգեւորականաց դասի ուղեկցությամբ այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ նախագահել է հոգեհանգստյան արարողությունը՝ ի հիշատակ Հայոց եղեռնի նահատակների։*

Ապրիլի 25-ին *ընդունել է Եւրոպական խորհրդարանի Հայաստանի հետ բարեկամության խմբի Հայաստան ժամանած պատվիրակության անդամներին։*

Նույն օրն *ընդունել է Հովնանյան դպրոցի (Նյու Ջերսի, ԱՄՆ) սաներին՝ Մայր Աթոռի բարերար տիար Հրաչ Թուֆայանի ուղեկցությամբ։*

Ապրիլի 30-ին *ընդունել է ԷԿԼՕՖ-ի գլխավոր տնօրեն Փաթ Գլիսոնին։*

Նույն օրն *ընդունել է Եւրոպական խորհրդարանի պահպանողականների եւ ռեֆորմիստների խմբի պատգամավորների պատվիրակությանը։*

Մայիսի 7-ին *հայրապետական այցով մեկնել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմ՝ հրավերով թեմական առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանի եւ թեմական խորհրդի։*

Մայիսի 10-ին *ներկա է գտնվել ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության կազմակերպած՝ ՀԲԸՄ հոգաբարձուների խորհրդի անդամ, ազգային բարերար տիար Նազար Նազարյանի մեծարման հանդիսությանը՝ նրան շնորհելով «Ասպետ Սուրբ Էջմիածնի» տիտղոս եւ հայրապետական շքանշան։*

Մայիսի 14-ին *հանդիսապետել է Աբովյանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու օծման արարողությունը։*

Մայիսի 15-ին *ընդունել է Համայն Ռուսիոց Պատրիարքի՝ Մոսկվայի թեմի պատրիարքական տեղապահ, Նովոսպասյան հայրապետական*

վանքի վանահայր Վոսկրեսենսկի եպս. Սավվային եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Բոսեի էկումենիկ դպրոցի տնօրեն հայր Իուան Սաուկային (Ռումին Ուղղափառ Եկեղեցի)։

Նույն օրն *ընդունել է ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարում ապահովող ծառայության աշխատակիցներին եւ այլ երկրների համանուն ծառայությունների ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ ՀՀ գլխավոր հարկադիր կատարող, արդարադատության գեներալ-մայոր Միհրան Պողոսյանի։*

Նույն օրը *ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսյանի հետ այցելել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Նագգաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոն։*

Մայիսի 21-ին *ընդունել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի տեղական մարմինների ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանի։*

Մայիսի 23-ին *հրաժեշտի հանդիպում է ունեցել ՀՀ-ում Շվեյցարիայի Համադաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Կոստանտին Օբոլենսկիի հետ։*

Մայիսի 26-ին *ընդունել է ՌԴ Կուրսկի մարզի պատվիրակությանը՝ գլխավորությամբ Կուրսկի մարզի նահանգապետի տեղակալ, ներքին քաղաքականության կոմիտեի նախագահ Լյուդմիլա Գրեբենկովայի։*

Մայիսի 27-ին *ընդունել է Չեխիայի Հանրապետության մշակույթի նախարար Ալենա Հանակովայի գլխավորած պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է Ուելսի արքայազն Չարլզին։*

Հունիսի 10-ին *ընդունել է աշխարհահռչակ օպերային երգչուհի Մոնսերատ Կաբալլեին։*

Հունիսի 20-ին *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի շենքում հանդիսապետել է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու շքանշանների հանձնման արարողությունը՝ «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանի արժանացնելով տիար Լազար Սուջյանին եւ տիկին Լաուրա Հարությունյանին։*

Հունիսի 21-ին *ընդունել է իսպանացի նշանավոր գրող Գոնսալես Գուարչին։*

Հունիսի 23-ին *հայրապետական այցով մեկնել է Ֆրանսիա եւ Շվեյցարիա՝ թեմական-եկեղեցական հարցերով։*

Հուլիսի 2-ին *ընդունել է Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի Հայ Փոինթ ծուխի մի խումբ ուխտավորներին։*

Հուլիսի 10-ին *ընդունել է ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասին։*

Հուլիսի 12-ին *նախագահել է «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցանակի հանձնման արարողությունը՝ այն շնորհելով մեծանուն կինոբեմադրիչ Արտավազդ Փելեշյանին։*

Նույն օրն *ընդունել է մի խումբ ավստրիացի կաթոլիկ ուխտավորների՝ առաջնորդությամբ Ավստրիայի Կաթոլիկ Եկեղեցու Գուրկի թեմի առաջնորդ եպիսկոպոս Ալոյս Շվարցի։*

Նույն օրն *ընդունել է Երեւանում անցկացվող հայ-ռումինական գործարար համաժողովի մասնակիցներին։*

Նույն օրն *ընդունել է պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Ռումինիայի մշակույթի նախարար Դանիել Կոնստանդին Բառբուին։*

Հուլիսի 21-ին *ընդունել է Արգենտինայի Բուենոս Այրես քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության «Մարի Մանուկյան» վարժարանի ավարտական սաներին։*

Հուլիսի 26-ին *ընդունել է ՀՀ-ում Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Իսսամ Նայալին։*

Հուլիսի 27-ին *ընդունել է Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովի գլխավորած պատվիրակությանը։*

Հուլիսի 30-ին *ընդունել է ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինկինին։*

Հուլիսի 30–31-ին *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը՝ ընդլայնված կազմով։*

Օգոստոսի 21-ին *ընդունել է երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներին։*

Օգոստոսի 24-ին *ընդունել է Անգլիկան Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Ջիբրալթարի անգլիկան եպիսկոպոս Տեոֆրի Ռոուելի։*

Օգոստոսի 27-ին *ընդունել է «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթում Հայաստանի հաղթողներին։*

Օգոստոսի 31-ին *հանդիսապետել է կրթության մշակների օրհնության մասնավոր կարգը։*

Սեպտեմբերի 4-ին *ընդունել է ՀՀ-ում Լիբանանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ժան Մաքարոնին։*

Նույն օրն *ընդունել է Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանին։*

Սեպտեմբերի 10-ին *հանդիսապետել է Ռուբեն Սեւակի անվան թանգարանի բացման արարողությունը։*

Սեպտեմբերի 13-ին *ընդունել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Մոհամադ Ոեիսիին եւ դեսպանության մշակույթի խորհրդական Մեհրան Շիրավանդիին։*

Սեպտեմբերի 15-ին *ընդունել է մի խումբ ավստրիացի ուխտավորների՝ գլխավորությամբ ավստրիական «Ֆուրխե» քրիստոնեական շաբաթաթերթի հիմնադիր եւ հրատարակիչ պրոֆեսոր Հայնց Նուսբաումերի։*

Սեպտեմբերի 16-ին *մեկնել է Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), ուր սեպտեմբերի 17-ին Նորին Սրբության հանդիսապետությամբ օծվել է Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի նորակառույց առաջնորդանիստ եկեղեցին, եւ կատարվել է առաջնորդանիստ եկեղեցական համալիրի բացման արարողությունը։*

Սեպտեմբերի 19-ին *ընդունել է ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի Նահանգային ժողովի խոսնակ Տոն Փերեզի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի։*

Սեպտեմբերի 24-ին *Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ նախագահել է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի բացման նիստը՝ մասնակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության եպիսկոպոսաց դասի։*

Սեպտեմբերի 30-ին *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Ալեք եւ Մարի Մանուկյաններ» գանձատանը հանդիսապետել է «Կառլ եւ Էմմա Սողոյաններ» ձեռագիր մատյանների ցուցասրահի բացման արարողությունը։*

Հոկտեմբերի 12-ին *մեկնել է Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմ՝ հանդիսապետելու Եկատերինբուրգի նորակառույց Ս. Կարապետ եկեղեցու օծման արարողությունը։*

Հոկտեմբերի 14-ին *ընդունել է լատվիացի հայտնի երգահան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ռայմոնդ Պաուլսին եւ ՌԴ Պետական Դումայի պատգամավոր, ՌԴ հոկեյի ֆեդերացիայի նախագահ Վլադիսլավ Տրետյակին։*

Հոկտեմբերի 15-ին *հանդիսապետել է «Իզմիրլյան» բժշկական հաստատության եւ «Ս. Ներսես Մեծ» գիտաբժշկական կենտրոնի վերաբացման արարողությունը։*

Հոկտեմբերի 16-ին *ընդունել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյակի առիթով Հայաստան ժամանած Ռումինիայի Հանրապետության ակադեմիայի նախագահ Իոնել Հայդուկին եւ տարբեր երկրների ակադեմիաների ներկայացուցիչների՝ ուղեկցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Ռադիկ Մարտիրոսյանի։*

Նույն օրն *ընդունել է ՌԴ պետական էրմիտաժի տնօրեն, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Միխայիլ Պիոտրովսկուն։*

Նույն օրն *ընդունել է տեր եւ տիկին՝ Տիգրան եւ Հելենա Իզմիրլյաններին, Իզմիրլյան ընտանիքի անդամներին եւ «Իզմիրլյան» հիմնադրամի պաշտոնյաներին։*

Նույն օրն *ընդունել է Կ. Պոլսի Ս. Գեւորգ հայկական եկեղեցու «Սահակյան» դպրաց դասին՝ ուղեկցությամբ Տ. Զաքեոս ծայրագույն վարդապետ Օհանյանի։*

Հոկտեմբերի 17-ին *ընդունել է 3-րդ միջազգային մեդիաֆորումի մասնակիցներին։*

Հոկտեմբերի 18-ին *ընդունել է Մայր Աթոռում անցկացվող «Եկեղեցի եւ պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ եւ մարտահրավերներ» թեմայով միջազգային գիտաժողովի մասնակիցներին։*

Հոկտեմբերի 22-ին *ընդունել է սիրիահայ մանուկների երգչախմբին՝ ուղեկցությամբ «Օգնիր եղբորդ» բարեգործական ծրագրի պատասխանատու Խաչիկ Տոզիկյանի։*

Հոկտեմբերի 28-ին *մեկնել է Հարավային Կորեա՝ մասնակցելու Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համագումարին։*

Հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 8-ը *մասնակցել է Հարավային Կորեայի Բուսան քաղաքում կայացած Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համագումարին։*

Հոկտեմբերի 31-ին *Հարավային Կորեայում հանդիպել է Հունգարիայի Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ Գուստավ եպիսկոպոս Բոլսկեի եւ Հունգարական Եկեղեցիների խորհրդի գլխավոր քարտուղար դոկտոր Վիլմոս Ֆիսչելի հետ։*

Նոյեմբերի 11-ին *վերադարձել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Հարավային Կորեա կատարած իր այցից։*

Նոյեմբերի 15-ին *ընդունել է Ուրուգվայի զբոսաշրջության եւ սպորտի նախարար Լիլիամ Քեշիշյանի գլխավորած պատվիրակությանը։*

Նոյեմբերի 16-ին *մեկնել է Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմ։*

Նոյեմբերի 17-ին *Մոսկվայի առաջնորդանիստ Ս. Պայծառակերպութիւն եկեղեցում «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» եւ «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ եւ օրհնության գրեր է հանձնել Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի 122 բարերարների՝ ի գնահատություն նրանց ազգօգուտ եւ եկեղեցաշեն գործունեության։*

Նոյեմբերի 21-ին *ընդունել է ՀՀ-ում Իտալիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Բրունո Սկապինիին։*

Նույն օրն *ընդունել է էլ-Քուվեյթի նահանգապետ Շեյխ Ալի ալ-Տաբեր ալ-Սաբահի գլխավորած պատվիրակության։*

Նոյեմբերի 27-ին *ընդունել է իսպանացի կաթոլիկ ուխտավորների։*

Դեկտեմբերի 6-ին *ընդունել է Ֆրանսիա-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ խմբի ղեկավար Ռընե Ռուքեի։*

Դեկտեմբերի 9-ին *ընդունել է ՀՀ-ում Ռումինիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Սորին Վասիլեին։*

Դեկտեմբերի 12-ին *մեկնել է Ֆրանսիայի հայոց թեմ, ուր նույն օրը Փարիզում ներկա է գտնվել իր բարձր հովանու ներքո կազմակերպված՝ աշխարհահռչակ օպերային երգչուհի Մոնսերատ Կաբալյեի մեծարման երեկույթին։*

2014

Հունվարի 8-ին *Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում ընդունել է Մայր Աթոռում գործող բոլոր բաժինների պաշտոնեությանը։*

Նույն օրը *Երեւանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում նախագահել է անվանի ճարտարապետ Ջիմ Թորոսյանի հոգեհանգստյան արարողությունը։*

Հունվարի 11-ին *ընդունել է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմական երիտասարդական միությունների, հասարակական կազմակերպությունների եւ բուհական ուսանողական խորհուրդների անդամներին։*

Հունվարի 27-ին *ընդունել է ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանին եւ տիկին Վերա Սեդրակյանին, ինչպես նաեւ՝ ՀԲԸՄ-ի փոխնախագահ Սինան Սինանյանին եւ տիկին Անժել Սինանյանին։*

Փետրվարի 20-ին *ընդունել է Միջխորհրդարանական միության բրիտանական խմբի անդամներին։*

Փետրվարի 25-ին՝ *Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիսապետել է քահանայից ավանդական հավաքը։*

Փետրվարի 26-ին *ընդունել է Հունաստանի Հանրապետության Խորհրդարանի նախագահ Վանգելիս Մեյմարակիսին։*

Նույն օրը *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունել է Երկրապահ կամավորականների միության նորընտիր վարչության անդամներին՝ ղեկավարությամբ միության նախագահ, Աժ պատգամավոր գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի։*

Փետրվարի 27-ին *Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում նախագահել է Ս. Վարդանանց զորավարների տոնին նվիրված հանդիսությունը։*

Փետրվարի 28-ին *ընդունել է ՀՀ-ում Իտալիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ջովաննի Ռիչուլլիին։*

Նույն օրը *Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում ընդունել է Համահայկական ձմեռային առաջին խաղերի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանի։*

Նույն օրն *ընդունել է Վրաստանի նախագահ Գեորգի Մարգվելաշվիլիին՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի։*

Մարտի 9-ին *ընդունել է շախմատի Եւրոպայի 15-րդ անհատական առաջնության մասնակիցներին։*

Մարտի 10-ին *ընդունել է Սերբիայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Իվան Մրկիչի գլխավորած պատվիրակությանը։*

Մարտի 11–13-ը *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը։*

Մարտի 24-ին *ցավակցական գիր է հղել Ասորի Ուղղափառ Եկեղեցու Ս. Սինոդին, հոգեւոր դասին եւ հավատացյալ ժողովրդին՝ Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարք Նորին Սրբություն Իգնատիուս Զաքքա Ա.-ի մահվան առիթով։*

Մարտի 28-ին *ընդունել է Քուվեյթի համալսարանի ռեկտոր Աբդ ալ-Լատիֆ Ահմադ ալ-Բադրի գլխավորած պատվիրակությանը։*

Ապրիլի 1-ին *ընդունել է ՀՀ-ում Չեխիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Տոմաշ Պերնիցկուն։*

Ապրիլի 4-ին *ընդունել է Երեւանի միջազգային կանանց ասոցիացիայի (ԵՄԿԱ) անդամներին՝ գլխավորությամբ ԵՄԿԱ-ի նախագահ Միրնա Մկրտչյան-Տեչլերի։*

Նույն օրը *նախագահել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետական խորհրդի նիստը՝ նոր կազմով։*

Ապրիլի 7-ին *Ս. Աստվածածնի Ավետման տոնի առիթով հանդիպում է ունեցել Մայր Աթոռի բաժիններում աշխատող 145 աշխատակցուհիների հետ։*

Ապրիլի 8-ին *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունել է Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի ավարտական լսարանի ուսանողներին՝ ուղեկցությամբ համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի։*

Ապրիլի 14-ին *ընդունել է ՀՀ-ի նորանշանակ վարչապետ Հովիկ Աբրահամյանին։*

Ապրիլի 16-ին *ընդունել է ՀՀ-ում Իրաքի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ղազի Տահիր Կալետին։*

Ապրիլի 23-ին *ընդունել է մի խումբ կաթոլիկ ուխտավորների՝ գլխավորությամբ Միլանի Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդարանի իսլամի հետ երկխոսության հարցերով պատասխանատու Դոն Ջիամպիերո Ալբերտիի։*

Ապրիլի 24-ին *հանդիպել է ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ էդ Ռոյսի գլխավորած կոնգրեսականների պատվիրակությանը։*

Մայիսի 2-ին *ընդունել է Ավստրիայի Հանրապետության գեներալների խորհրդի պատվիրակությանը՝ գլխավորությամբ գլխավոր շտաբի պետ Օթմար Կոմմենդայի։*

Մայիսի 5-ին *ընդունել է ՀՀ Ազգային ժողովի նորընտիր նախագահ Գալուստ Սահակյանին։*

Մայիսի 7-ին *եղբայրական այցով մեկնել է Վատիկան։*

Մայիսի 8-ին *Առաքելական պալատում հանդիպում է ունեցել Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հետ։*

Մայիսի 26-ին *ընդունել է Երկրապահ կամավորականների միության (ԵԿԱ) նախագահ, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանին, որը Հայ-*

բապետին փոխանցել է ԵԿՄ բարձրագույն պարգեւը՝ «Սպարապետ Վազգեն Սարգսյան» շքանշանը։

Մայիսի 27-ին *մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի չորրորդ նիստի աշխատանքներին։*

Մայիսի 28-ին, *Հանրապետության օրվա առիթով, Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ այցելել է Սարդարապատի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու հանուն հայոց անկախ պետականության զոհված հայորդիների անմահ հիշատակին։*

Նույն օրը *Մայր Աթոռի Միածնաէջ տաճարում Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ հանդիսապետել է Հանրապետական մաղթանքը։*

Հունիսի 11-ին *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում նախագահել է «Ճգնաժամը Սիրիայում. մարտահրավերներ հավատքի համայնքների համար» թեմայով երկօրյա միջազգային խորհրդակցությունը։*

Հունիսի 21-ին *ընդունել է հոգեւոր ֆիլմերի եւ արդի արվեստի «Ֆրեսկո» փառատոնի ժյուրիի անդամներին ու հյուրերին։*

Հունիսի 23-ին *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը։*

Նույն օրը *նախագահել է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Հայաստանում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (*UNICEF*) եւ «ՄԳԱ Վոթըր» ՍՊ ընկերության միջեւ համագործակցության հուշագրի ստորագրման արարողությունը։*

Հունիսի 24-ին *ընդունել է «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի եւ «Ակրոնիս» ընկերության հրավերով Հայաստանում գտնվող շախմատի աշխարհի գործող չեմպիոն, գրոսմայստեր Մագնուս Կարլսենին եւ աշխարհի գավաթակիր, գրոսմայստեր Լեւոն Արոնյանին։*

Հուլիսի 2-ին *Ս. Էջմիածնի մատենադարանում հանդիպում է ունեցել Հայ Եկեղեցու երիտասարդաց միավորման (ՀԵԵՄ) ներկայացուցչական ժողովի առիթով Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերից Մայր Աթոռ ժամանած երիտասարդական միությունների շուրջ վաթսուն ներկայացուցչի հետ։*

Հուլիսի 5-ին *նախագահել է Հին Վեհարանի վերաբացման հանդիսավոր արարողությունը։*

Հուլիսի 18-ին *Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում նախագահել է «Ոսկե ծիրան» կինոփառատոնի առիթով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցա-*

նակի հանձնման արարողությունը՝ շնորհելով այն աշխարհահռչակ լեհ կինոռեժիսոր Քշիշտոֆ Զանուսսիին։

Հուլիսի 19-ին *ընդունել է ՀՀ Սփյուռքի նախարարության «Սփյուռք» ամառային դպրոցի Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման եւ հայոց լեզվի արագացված ուսուցման դասընթացների մասնակիցներին։*

Հունիսի 28-ին *Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում նախագահել է Կ. Պոլսի «Ժամանակ» օրաթերթի 100-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր երեկույթը։*

Օգոստոսի 5-ին *նամակ է հղել Կովկասի մահմեդականների վարչության նախագահ, Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ Շեյխ-ուլ-Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեին՝ կոչ անելով ջանքեր գործադրել, որպեսզի երկրի իշխանությունների կողմից չվտանգվի ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը։*

Սեպտեմբերի 12-ին *Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսություններին դահլիճում նախագահել է «Ընտանիք, հասարակություն եւ Եկեղեցի. ժամանակակից մարտահրավերներ» խորագիրը կրող գիտաժողովը։*

Սեպտեմբերի 14-ին՝ *Խաչվերացի տոնին, մեկնել է Տավուշի թեմ, ուր հանդիսապետել է Բերդ քաղաքի նորակառույց Ս. Հովհաննես եկեղեցու օծման արարողությունը։*

Սեպտեմբերի 16–17-ը *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը։*

Սեպտեմբերի 17-ին *ընդունել է բարոնուհի Քերոլայն Քոքսի գլխավորած պատվիրակությանը։*

Սեպտեմբերի 18-ին *նախագահել է Եկեղեցական-ներկայացուցչական հինգերորդ ժողովի բացման նիստը։*

Սեպտեմբերի 23-ին *հովվապետական այցով մեկնել է Ծայրագույն Արեւելք՝ Հնդկաստան, Սինգապուր եւ Մյանմարի Միություն։*

Սեպտեմբերի 30-ին *Հնդկաստանի Կալկաթա քաղաքում նախագահել է Աղջիկների Դավթյան դպրոցի նոր մասնաշենքի հիմնարկեքի արարողությունը։*

Օգոստոսի 31-ին *հանդիսապետել է Մայր տաճարում կատարված կրթության մշակների օրհնության կարգը։*

Հոկտեմբերի 11-ին *Ն. Ս. Մոր Իգնատիոս Եփրեմ Բ.-ի հետ մասնակցել է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում կառուցված միջազգային դպրոցի բացման արարողությանը։*

Հոկտեմբերի 12-ին *նախագահել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-ամյակին նվիրված հանդիսությունը։*

Նույն օրն *ընդունել է պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Սերբիայի Հանրապետության նախագահ Տոմիսլավ Նիկոլիչին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի։*

Նույն օրն *ընդունել է Հայ կանանց միջազգային ընկերակցության (ՀԿՄԸ) 7-րդ միջազգային համաժողովի մասնակիցներին։*

Հոկտեմբերի 14-ին *ընդունել է ՀՀ-ում Չինաստանի ժողովրդական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Տիան Չանչունին՝ Հայաստանում դիվանագիտական առաքելությունն ավարտելու կապակցությամբ։*

Հոկտեմբերի 18-ին *մեկնել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմ։*

Նոյեմբերի 8-ին *հանդիսապետել է «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» հուշակոթողի բացման հանդիսավոր արարողությունը։*

Նույն օրն *ընդունել է ՌԴ առողջապահության նախարար Վերոնիկա Սկվորցովայի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանի։*

Նոյեմբերի 10-ին *ընդունել է «Սիսկո սիստեմզ» ընկերության ավագ փոխնախագահ, գլխավոր տնօրեն Մարիո Մացցոլային։*

Նոյեմբերի 11-ին *Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ նախագահել է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եպիսկոպոսաց հերթական ժողովը։*

Նոյեմբերի 14-ին *Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ հանդիսապետել է Մայր տաճարի հարեւանությամբ կառուցվող մոմավառության մատուռի եւ կաթողիկոսական դամբարանի հիմնօրհնեքի արարողությունը։*

Դեկտեմբերի 1-ին *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը։*

Դեկտեմբերի 4-ին *մեկնել է Շիրակի թեմ, որտեղ հանդիսապետել է Գյումրու հայորդյաց տան բացման արարողությունը։*

Դեկտեմբերի 8-ին *ընդունել է Եւրոպայի հրեական խորհրդարանի համանախագահ Վադիմ Ռաբինովիչին եւ Եւրոպայի հրեական խորհրդարանի պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության փոխնախագահ, Սենատի նախագահ Դանիլո Աստորիի գլխավորած պատվիրակությանը։*

Դեկտեմբերի 14-ին *ընդունել է Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանին։*

Դեկտեմբերի 24-ին *ընդունել է ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ժան-Ֆրանսուա Շարպանտիեին։*

Դեկտեմբերի 25-ին *ընդունել է ՀՀ-ում դիվանագիտական առաքելությունն ավարտած Լեհաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Զստիսլավ Ռաչինսկուն։*

2015

Փետրվարի 24-ին *ընդունել է ՀՀ-ում ԱՄՆ-ի արտակարգ եւ լիազոր նորանշանակ դեսպան Ռիչարդ Միլսին։*

Մարտի 6-ին *ընդունել է ՀՀ-ում Սլովակիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Պետեր Պրիպուտենին (նստավայրը՝ Մոսկվա)։*

Մարտի 9-ին *ընդունել է Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշակմաձեի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի բաժնի պետ Վարդան Ասատրյանի։*

Մարտի 13-ին *ընդունել է ՀՀ-ում Լեհաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Եժի Նովակովսկուն։*

Մարտի 18-ին *ընդունել է ՀՀ-ում Կանադայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Ռոնալդ Քյուրին (նստավայրը՝ Մոսկվա)։*

Մարտի 19-ին *ընդունել է «Արարատի ստորոտին» խորագիրը կրող միջազգային մեդիահամաժողովի մասնակիցներին։*

Մարտի 20-ին *ընդունել է Բելառուսի Հանրապետության Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Ժուկին՝ ուղեկցությամբ Հայաստանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի։*

Ապրիլի 10-ին *Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի հրավերով մեկնել է Վատիկան։*

Ապրիլի 26-ին *ընդունել է «Հովնանյան» դպրոցի (Նյու Ջերսի, ԱՄՆ) սաներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի բարերար տիար Հրաչ Թուֆայանի։*

Ապրիլի 28-ին *ընդունել է ԳԴՀ-ի Բունդեսթագի պատգամավորներ Ֆոլկմար Վոգելին եւ Մանֆրեդ Գրունդին։*

Ապրիլի 29-ին *ընդունել է Փարիզի «Համազգային» եւ Մարսելի «Դպրոցասեր» վարժարանների սաներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի բարերար Սարգիս Պետոյանի։*

Ապրիլի 30-ին *ընդունել է ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների արտակարգ եւ լիազոր դեսպան Ջասիմ Մուհամմադ Ալ Քասիմիին։*

Մայիսի 2-ին *ընդունել է Սանկտ Պետերբուրգի նահանգապետ Գեորգի Պոլտավչենկոյի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանի եւ ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինկինի։*

Մայիսի 5-ին *ժամանել է ԱՄՆ-ի Հայոց Արեւելյան թեմ՝ նախագահելու Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման արարողությունները։*

Հունիսի 5-ին *ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության հոգեւոր առաջնորդի՝ ուխտագնացությունների հարցով ներկայացուցիչ Սեյեդ Ալի Ղազի Ասգյարին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Իրանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսիի։*

Հունիսի 9-ին *ընդունել է Ս. Էջմիածնում ընթացող Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործադիր կոմիտեի նիստի անդամներին։*

Հունիսի 18-ին *ընդունել է ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Էյձի Տագուչիին։*

Հունիսի 24-ին *ընդունել է Արգենտինայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Գոնզալո Ուրիոլաբեիտիային։*

Նույն օրն *ընդունել է Հայաստանում դիվանագիտական առաքելությունն ավարտող ԳԴՀ-ի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռայներ Մորելին։*

Հունիսի 26-ին *ընդունել է Վրաստանի արդարադատության նախարար Տեա Ծուլուկիանիին եւ Վրաստանի պատիժների կատարման եւ պրոբացիայի նախարար Գեորգի Մղեբրիշվիլիին՝ ուղեկցությամբ ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանի եւ ՀՀ-ում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլիի։*

Հուլիսի 4-ին *ընդունել է Նյու Ջերսիի (ԱՄՆ) «Շուշի» պարախմբի անդամներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի բարերարներ տեր եւ տիկին՝ Հրաչ եւ Սյուզան Թուֆայանների։*

Նույն օրը *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի դահլիճում հանդիպում է ունեցել ՀԵԵՄ 3-րդ պատգամավորական ժողովի մասնակիցների հետ։*

Հուլիսի 5-ին *ընդունել է ԱՄՆ-ի արեւելյան հայոց թեմի Բոստոնի տարածաշրջանից Հայաստան ժամանած 46 ուխտավորների՝ ուղեկցությամբ ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի Վոթերթաուն քաղաքի Ս. Հակոբ եկեղեցու հոգեւոր հովիվ Առաքել քհն. Ալջալյանի եւ Մինեսոտայի Ս. Պողոս քաղաքի Ս. Սահակ եկեղեցու հոգեւոր հովիվ Թադեոս քհն. Բարսեղյանի։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդի «Սան Դամասո» կաթոլիկ ճեմարանի դասախոսներին, սաներին եւ նրանց ծնողներին՝ ուղեկցությամբ Մադրիդի հոգեւոր հովիվ Շնորհք աբգ. Սարգսյանի։*

Հուլիսի 11-ին *ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի եւ իսլամական առաջնորդման նախարար Ալի Ջանաթիին։*

Հուլիսի 12-ին *ընդունել է Իտալիայի Սիենա քաղաքի արք. Անտոնիո Բուոնքրիստիանիի առաջնորդած կաթոլիկ ուխտավորների խմբին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե վրդ. Անանյանի։*

Հուլիսի 14-ին *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի դահլիճում հանդիպում է ունեցել Հայաստանում վերապատրաստման դասընթացներին մասնակցող սփյուռքահայ 62 ուսուցչի հետ։*

Հուլիսի 15-ին *ընդունել է արդի արվեստի եւ հոգեւոր ֆիլմերի «Ֆրեսկո» միջազգային փառատոնի կազմակերպիչներին՝ գլխավորությամբ Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու, փառատոնի հոգեւոր խորհրդատու Բագրատ եպս. Գալստանյանի եւ Մայր Աթոռի ՔԴԿ-ի տնօրեն Վարդան եպս. Նավասարդյանի։*

Հուլիսի 19-ին *ընդունել է Իսպանիայի Կաթոլիկ Եկեղեցու թեմերի միջեկեղեցական հարաբերությունների ներկայացուցիչներին եւ ուխտավորներին՝ ուղեկցությամբ Մադրիդի եպիսկոպոսական ժողովի գլխավոր քարտուղար, Մադրիդի կարդինալի օգնական եպիսկոպոս Խուան Անտոնիո Մարտինեսի։*

Հուլիսի 24-ին *ընդունել է Եւրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթեային։*

Օգոստոսի 25-ին *ընդունել է «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եւրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) ներկայա-*

ցուցիչներին՝ ուղեկցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի։

Սեպտեմբերի 4-ին *ընդունել է ԱՄՆ-ի Հայոց Արեւելյան թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ թեմի հոգեւոր սպասավոր Գարեգին ավ. քհն. Գասպարյանի։*

Սեպտեմբերի 18-ին *հյուրընկալել է ՀՀ-ում ԳԴՀ-ի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Մաթիաս Քիսլերին։*

Նույն օրն *ընդունել է ՌԴ Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վիկտոր Սադովնիչիին՝ ուղեկցությամբ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ, Հայաստանի ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի եւ ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանի։*

Նույն օրն *ընդունել է նաեւ ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Իգոր Նազարուկին։*

Սեպտեմբերի 23-ին *ընդունել է Հայ Կաթողիկե Եկեղեցու Պատրիարք Գրիգոր-Պետրոս Ի. Կապրոյանին՝ ուղեկցությամբ Հայաստանի, Վրաստանի եւ Արեւելյան Եւրոպայում Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Ռաֆայել արք. Մինասյանի։*

Նույն օրն *ընդունել է Բրազիլիայի հայոց թեմի մի խումբ ուխտավորների՝ առաջնորդությամբ թեմական առաջնորդ Նարեկ եպս. Բերբերյանի։*

Սեպտեմբերի 24-ին *ընդունել է Կոնստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության ուխտավորներին եւ հոգեւորականներին՝ առաջնորդությամբ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանի։*

Սեպտեմբերի 25-ին *ընդունել է Բուլղարիայի հայոց թեմի ուխտավորներին՝ գլխավորությամբ թեմական առաջնորդ Իսահակ վրդ. Պողոսյանի։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Կաթոլիկ Եկեղեցու Արեւելյան Եկեղեցիների ժողովի նախագահ կարդինալ Լեոնարդո Սանդրիին, որը եկել էր մասնակցելու սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությանը։*

Սեպտեմբերի 26-ին *ընդունել է Սան Էջիդիոյի համայնքի պատվիրակությանը՝ գլխավորությամբ հայր Մարկո Գնավիի։*

Նույն օրն *ընդունել է Ասորի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչներին՝ Բեյրութի միտրոպոլիտ Նորին Սրբազնություն Մոր Կլեմես Խուռիին, Պատրիարքարանի արարողակարգի բաժնի ղեկավար Նորին Սրբազնու-*

թյուն Մոր Մորիս եպիսկոպոս Ամսիին, ինչպես նաեւ՝ Անտիոքի եւ համայն Արեւելքի Պատրիարք Մորան Մոր Բեչարա Բուտրոս Ալ Ռահի ներկայացուցիչ Նորին Սրբազնություն Բուլոս արքեպիսկոպոս Սայային։

Սեպտեմբերի 27-ին *ընդունել է Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Տամբովի եւ Ռասկազովսկի գերշ. Թեոդոսիոս միտրոպոլիտի։*

Սեպտեմբերի 28–30-ը *հրաժեշտի հանդիպումներ է ունեցել Ս. Մյուռոնի օրհնության արարողության առիթով Հայաստան ժամանած Քրիստոնեական Եկեղեցիների պատվիրակությունների հետ։*

Հոկտեմբերի 1-ին *հրաժեշտի հանդիպում է ունեցել Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պապ եւ Պատրիարք Նորին Ամենապատվություն Թեոդորոս Բ.-ի հետ։*

Հոկտեմբերի 2-ին *ընդունել է ՀՀ-ում դիվանագիտական առաքելությունն ավարտած Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսիին։*

Հոկտեմբերի 6-ին *ընդունել է «Վարդանանց ասպետներ» բարեգործական կազմակերպության անդամներին։*

Հոկտեմբերի 7-ին *ընդունել է Էջմիածին քաղաքի տոնի առիթով Հայաստան ժամանած Սերգիեւ Պոսադ քաղաքի քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար Յուրի Պոտյակինին (ՌԴ) եւ Շաղվիո Շավանիոյի քաղաքապետ Ժերար Դեշամին (Ֆրանսիա)՝ ուղեկցությամբ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի։*

Հոկտեմբերի 10-ին *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունել է ՀՀ Սահմանադրության ընդունման 20-ամյակին եւ ՀՀ Սահմանադրական դատարանի ստեղծման 20-ամյակին նվիրված Երեւանյան 20-րդ միջազգային խորհրդաժողովի մասնակիցներին՝ ուղեկցությամբ ՀՀ ՍԴ աշխատակազմի ղեկավար Առուշան Հակոբյանի։*

Հոկտեմբերի 11-ին *ընդունել է ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնոյի շրջանի բժիշկներին՝ ուղեկցությամբ Ֆրեզնոյում ՀՀ պատվո հյուպատոս Պերճ Աբգարյանի։*

Նույն օրն *ընդունել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) գլխավոր քարտուղար տիկին Միկայել Ժանին։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Լիբանանի Հանրապետության մշակույթի նախարար Ռոնի Արայջիին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Լիբանանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ժան Մաքարոնի։*

Հոկտեմբերի 15-ին *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում Ուսուցչի օրվա կապակցությամբ ընդունել է Մայր Աթոռի եւ ՀԲՄ հովանու ներքո գործող հայորդյաց տների 140 մանկավարժների՝ ուղեկցությամբ հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Կոմիտաս վրդ. Հովնանյանի։*

Հոկտեմբերի 24-ին *ընդունել է Ֆրանսիայի Բուժ դյու Ռոն նահանգի սենատոր Ժան Գերինիին։*

Հոկտեմբերի 25-ին *հյուրընկալել է Կիեւի Պեչորյան վանքի ուխտավորներին։*

Հոկտեմբերի 27-ին *մեկնել է Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն։*

Նոյեմբերի 24-ին *ընդունել է Սերբիայի Հանրապետության պաշտպանության նախարար Բրատիսլավ Դաշիչի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս. Աբրահամյանի։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադիին։*

Նույն օրն *ընդունել է նաեւ ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկուն։*

Նոյեմբերի 25-ին *ընդունել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարված Եւրոպայի Եկեղեցիների կոնֆերանսի ղեկավար մարմնի (ԵԵԿ) եռօրյա ժողովի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Հայաստանի Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար, ԵԵԿ-ի ղեկավար մարմնում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ Եզնիկ արք. Պետրոսյանի եւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե վրդ. Անանյանի։*

Նոյեմբերի 26-ին *ընդունել է իր հրավերով Հայաստան ժամանած Ահլ ալ-Բեյթի Համաշխարհային համագումարի գլխավոր քարտուղար Այաթոլլա Մոհամմադ Հասան Ախթարիին։*

Նոյեմբերի 28-ին *ընդունել է Վրաստանի եզդիների հոգեւոր խորհրդի նախագահ Դիմիտրի Պիրբարիի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստանի եզդիական համայնքի ներկայացուցիչների։*

Դեկտեմբերի 1-*ին ընդունել է «Հայկական հանրագիտարան» հրատարակչության աշխատակազմին՝ ուղեկցությամբ գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանի։*

Դեկտեմբերի 3-ին *ընդունել է Չեխիայի Հանրապետության Պատգամավորների պալատի նախագահ Յան Համաչեկի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովի։*

Դեկտեմբերի 4-ին *ընդունել է ՌԴ-ից Հայաստան ժամանած ռուս մտավորականների ներկայացուցչական պատվիրակությանը՝ ուղեկցությամբ գրող, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Զորի Բալայանի։*

Դեկտեմբերի 7-ին *ընդունել է ՌԴ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Չուրովին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինկինի։*

Դեկտեմբերի 8-ին *ընդունել է Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) կենտրոնական վարչության անդամներին՝ ուղեկցությամբ ՀՄԸՄ կենտրոնական վարչության ատենապետ Գառնիկ Մկրտչյանի։*

Դեկտեմբերի 9-ին *ընդունել է Թեհրանի փոխքաղաքապետ դոկտ. Մահմուդ Սալահին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադիի։*

Դեկտեմբերի 15-ին *ընդունել է ՀՀ-ում Կորեայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Պակ Ռո Բյուկին (նստավայրը՝ Մոսկվա)։*

Դեկտեմբերի 17-ին *ընդունել է Հունաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Պանոս Կամեննոսի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս. Աբրահամյանի։*

Դեկտեմբերի 22-ին *ընդունել է ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան տիկին Ջուդիթ Ֆարնվըրթին։*

2016

Հունվարին, *Ամանորի եւ Ս. Ծննդյան տոների առիթով, հարյուր հազար ԱՄՆ դոլար է փոխանցել Դամասկոսի հայոց թեմին՝ Սիրիայի հայկական դպրոցների համար։*

Հունվարին 14-ին *ընդունել է Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակի՝ 2015 թ. դեկտեմբերին իրականացրած «Ուրախ Ամանոր սահմանում» ծրագրի մասնակիցներին։*

Հունվարին 17-ին *ընդունել է ՀԲԸՄ նախագահ տիար Պերճ Սեդրակյանին։*

Հունվարի 27-ին *հանդիսապետել է Հայոց բանակի օրվա կապակցությամբ Մայր տաճարում մատուցված Ս. Պատարագը։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության սպասավորներին՝ գլխավորությամբ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս. Աբրահամյանի։*

Փետրվարի 1-ին *ընդունել է Վրաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Թինաթին Խիդաշելիի գլխավորած պատվիրակությանը։*

Փետրվարի 2-ին *ընդունել է Ս. Ղեւոնդյանց տոնի օրը քահանայական ձեռնադրության արժանացած քահանաներին։*

Նույն օրը *Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում նախագահել է Մայր Աթոռի կառույցներում ու Հայոց Եկեղեցու թեմերում սպասավորող քահանաների պարգեւաբաշխման արարողությունը։*

Փետրվարի 4-ին *նախագահել է ԳՀՃ-ի հոգեւոր հանդիսությունների դահլիճում տեղի ունեցած Ս. Վարդանանց զորավարների տոնին նվիրված հանդիսությունը։*

Փետրվարի 8-ին *հանդիպել է ՀՀ-ում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Հնդկաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Սուրեշ Բաբու Թադիպանենիի հետ։*

Փետրվարի 9-ին *ընդունել է Սերբիայի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Մայա Գոյկովիչի գլխավորած պատվիրակությանը։*

Փետրվարի 14-ին *ընդունել է Մայր Աթոռի նորապսակ միաբան սարկավագներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս. Հակոբյանի։*

Փետրվարի 15-ին *հրաժեշտի հանդիպում է ունեցել ՀՀ-ում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլիի հետ։*

Փետրվարի 16–18-ը *նախագահել է ԳՀԽ-ի ժողովը՝ ընդլայնված կազմով։*

Փետրվարի 20-ին *ընդունել է Հռոմի կաթոլիկ համալսարանի Ա. Ջեմելլի հիմնադրամի պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի եւ իսլամական կապերի կազմակերպության նախագահ, ԻԻՀ նախագահի խորհրդական Աբուզար Էբրահիմի Թորքամանին։*

Մարտի 2-ին *ընդունել է ՌԴ առողջապահության նախարար Վերոնիկա Սկվորցովային։*

Մարտի 10-ին *ընդունել է Շիրակի նորանշանակ մարզպետ Հովսեփ Սիմոնյանին եւ Թեմի առաջնորդ Միքայել եպս. Աջապահյանին։*

Մարտի 13-ին *ընդունել է ՀՀ կրթության ու գիտության նախարար Լեւոն Մկրտչյանին։*

Մարտի 23-ին *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունել է Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի ռեկտոր պրոֆ. Սուրոմի Սաբոլչին, դասախոսներին եւ ուսանողներին։*

Նույն օրն *ընդունել է Քուվեյթի արդարադատության, կրոնական կալվածքների եւ իսլամական հարցերով նախարար Յակուբ Աբդ ալ-Մոհսեն ալ-Սանիեի գլխավորած պատվիրակությանը։*

Մարտի 30-ին *ընդունել է արդյունաբերողների եւ գործարարների միջազգային կոնգրեսի խորհրդի նախագահության անդամներին։*

Ապրիլի 1-ին *ընդունել է Երկրապահ կամավորականների միության (ԵԿՄ) վարչության անդամներին։*

Ապրիլի 3-ին *նախագահել է Հայոց աշխարհի ապահովության եւ անսասանության համար կատարված Հանրապետական մաղթանքը։*

Ապրիլի 4-ին *Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում հանդիսապետել է հայրենիքի եւ հայրենյաց պաշտպան զինվորների համար կատարված միասնական աղոթքը։*

Նույն օրն *այցելել է ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ՝ տեսակցելու եւ իր հայրապետական օրհնությունն ու զորակցությունը փոխանցելու վերջին օրերին ԼՂՀ սահմանին մարտական գործողությունների հետեւանքով վիրավորված զինծառայողներին։*

Ապրիլի 13-ին *Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ մեկնել է Արցախ՝ զորակցելու ԼՂՀ իշխանություններին, արցախահայությանը եւ հայրենյաց պաշտպան զինվորներին։*

Նույն օրը *Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ այցելել է Գանձասարի վանք։*

Ապրիլի 14-ին *Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում հնչեցրել է Հանրապետական մաղթանք՝ Արցախի ապահովության եւ խաղաղության համար։*

Ապրիլի 15-ին *ընդունել է բժշկության եւ հարակից ոլորտների զարգացման գործում Նոբելյան մրցանակի արժանացած Ահարոն Չեխանովերին, Ադա Յոնաթին, Դեն Շեխտմանին եւ Էյիչի Նեգիշին։*

Ապրիլի 19-ին *ընդունել է ԱՄՆ-ից Հայաստան ժամանած «Հովնանյան» դպրոցի սաներին եւ պաշտոնեության ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի բարերար տիար Հրաչ Թուֆայանի։*

Ապրիլի 21-ին *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունել է ՌԱԿ-ի անդամներին։*

Ապրիլի 24-ին *ընդունել է «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երկրորդ գլոբալ ֆորումին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած Կիպրոսի Ներկայացուցիչների պալատի պատգամավոր, ԵԱՀԿ ԽՎ-ում Կիպրոսի պատվիրակության ղեկավար Սոֆոկլիս Ֆիտիսին ու Կիպրոսի համալսարանի ռեկտոր Կոստանդինոս Խրիստոֆիդեսին։*

Ապրիլի 25-ի *հանդիպել է ի ծնե հաշմանդամություն ունեցող եւ մանկական ուղեղային կաթվածով տառապող աշտարակաբնակ Դավիթ եւ Հասմիկ Խաչատրյաններին։*

Ապրիլի 27-ին *ընդունել է Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Էօռնեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտական խորհրդին։*

Մայիսի 6-ին *ընդունել է «Պլեներ Հայաստան –2016» խորագրով գեղանկարչության միջազգային սիմպոզիումի մասնակիցներին։*

Մայիսի 11-ին *ընդունել է Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն եպս. Ադամյանին եւ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի, Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի տնօրեն Կարեն Արիստակեսյանին։*

Մայիսի 12-ին *ընդունել է «Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնության (*ACT Alliance*) ղեկավար խորհրդի անդամներին։*

Մայիսի 15-ին *ընդունել է Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ալեքսեյ Սեմյոնովի գլխավորած պատվիրակությանը։*

Մայիսի 16-ին *ընդունել է «Քրիստոսի խաղաղություն» (*Pax Christi*) միջազգային կաթոլիկ կազմակերպության Ավստրիայի մասնաճյուղի գլխավոր քարտուղարության ներկայացուցիչներին եւ անդամներին։*

Մայիսի 19-ին *ընդունել է Գերմանիայից Հայաստան ժամանած Տրիեր կաթոլիկ թեմի ուխտավորներին։*

Մայիսի 20-ին *ընդունել է Մոսկվայի Պատրիարքության Ուկրաինայի Ուղղափառ Եկեղեցու՝ Ուկրաինայի Զինված ուժերի եւ զորամիավորումների հետ համագործակցության Սինոդական բաժնի նախագահ, Աստվածաբանական կանոնական հանձնախմբի նախագահ Բելոցերկովի եւ Բոգուսլավի միտրոպոլիտ Ավգուստինի գլխավորած պատվիրակությանը։*

Մայիսի 22-ին *ընդունել է Իրաքից Հայաստան ժամանած Ասորի Ուղղափառ Եկեղեցու շուրջ 50 ուխտավորների՝ ուղեկցությամբ Մեծ Բրիտանիայի Ասորի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Մար Աթանաս եպիսկոպոսի։*

Մայիսի 23-ին *ընդունել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտորատի, պրոֆեսորադասախոսական անձնակազմին եւ ուսանողներին՝ ռեկտոր Արսեն Լոքյանի գլխավորությամբ։*

Մայիսի 24-ին *ընդունել է ՀՀ-ում Ավստրալիայի նորանշանակ դեսպան Պիտեր Մարտին Թեշին (նստավայրը՝ Մոսկվա)։*

Մայիսի 29-ին *ընդունել է Օրլովի նահանգապետ տիար Վադիմ Պոտոմսկուն եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու վանական վարդապետ Իլիյ Նոզդրինին՝ ուղեկցությամբ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի բարերար Սամվել Մովսիսյանի։*

Մայիսի 30-ին *ընդունել է ՌԱԿ-ի կենտրոնական վարչության նորընտիր անդամներին՝ գլխավորությամբ վարչության ատենապետ Սերխիո Նահապետյանի։*

Նույն օրն *ընդունել է Հայաստանում աշխատանքային այցով գտնվող ՀԲՀՄ-ի նախագահ տիար Պերճ Սեդրակյանին։*

Մայիսի 31-ին *ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարար Մուսթաֆա Փուր Մոհամմադիի գլխավորած պատվիրակությանը։*

Հունիսի 1-ին *ընդունել է Հայոց Հայրապետի կողմից սահմանված Հայրապետական կրթաթոշակին այս տարի ներկայացված Հայաստանի բուհերի երեք ուսանողի՝ ուղեկցությամբ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի եւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս. Նավասարդյանի։*

Հունիսի 14-ին *ընդունել է ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Թիմուր Ուրազաեւին։*

Նույն օրը *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունել է «Գլոբալ բրիդջիզ» միջազգային կազմակերպության անդամներին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Բերնհարդ Մաթիաս Քիսլերի։*

Հունիսի 15-ին *ընդունել է Նիդեռլանդների Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Իոս Դաումային (նստավայրը՝ Թբիլիսի)։*

Հունիսի 16-ին *ընդունել է Ս. Վլադիմիր ուղղափառ ճեմարանի (ԱՄՆ) տեսուչ դոկտոր Ջոն քհն. Բեռին՝ ուղեկցությամբ Ս. Ներսես հայկական ընծայարանի տեսուչ (ԱՄՆ) Մարտիրոս ավագ քհն. Չեյանի։*

Հունիսի 19-ին *ընդունել է Բուշ-դյու-Ռոն նահանգային խորհրդի նախագահ Մարտին Վասալի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ «Բարձունք 5165» կազմակերպության նախագահ Ռոբերտ Ազիլազյանի (Ֆրանսիա)։*

Հունիսի 22-ին *ընդունել է Արգենտինայի ազգային բանկի նախագահ Կառլոս Մելքոնյանին՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանի ուղեկցությամբ։*

Հունիսի 24-ին *ընդունել է Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապին։*

Հունիսի 25-ին *Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հետ այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր։*

Նույն օրը *Հռոմի Սրբազան Քահանայապետի հետ մեկնել է Գյումրի։*

Նույն օրը *Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հետ հանդիսապետել է Հանրապետության հրապարակում կատարված էկումենիկ արարողությունը եւ խաղաղության աղոթքը։*

Հունիսի 26-ին *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Տրդատի բաց խորանում մատուցել է Պատարագ՝ աղոթական ներկայությամբ Հռոմեակաթոլիկ Եկեղեցու առաջնորդ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի։*

Նույն օրը *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանի գահասրահում Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի հետ ստորագրել է համատեղ հռչակագիր։*

Նույն օրը *Հռոմի Սրբազան Քահանայապետի հետ այցելել է Խորվիրապ։*

Հուլիսի 6-ին *ընդունել է Մարսելի համազգային դպրոցի եւ Փարիզի «Դպրոցասեր» վարժարանի թվով 26 աշակերտի՝ ուղեկցությամբ ֆրանսիաբնակ ազգային բարերար Սարգիս Պետոյանի։*

Նույն օրը *ԳՀՃ հանդիսությունների դահլիճում նախագահել է ճեմարանի՝ 2015–2016 ուսումնական տարվա փակման հանդիսությունը։*

Հուլիսի 8-ին *ընդունել է ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Իոաննիս Տայիսին։*

Հուլիսի 10-ին *ընդունել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի ավելի քան 30 ուխտավորի՝ ուղեկցությամբ Բոստոնի Ս. Երրորդություն եկեղեցու հոգեւոր հովիվ Վազգեն քհն. Կուզույանի եւ Մինեսոտայի Ս. Սահակ եկեղեցու հոգեւոր հովիվ Թադեոս քհն. Բարսեղյանի։*

Նույն օրն *ընդունել է Մասաչուսեթսի Վուսթըր քաղաքից ժամանած ուխտավորների՝ ուղեկցությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան Սահակ ծ. վրդ. Եմիշյանի։*

Հուլիսի 11-ին *ընդունել է Նիժնի Նովգորոդի եւ Արզամասի Գեորգի միտրոպոլիտին՝ ուղեկցությամբ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանի։*

Հուլիսի 21-ին *ընդունել է Անտիոքի Ուղղափառ Եկեղեցու Զահլեի միտրոպոլիտ Անտոնիոս Ալսորուն՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Լիբանանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ժան Մաքարոնի եւ բարերար Նիկոլա Աբոֆայիսայի։*

Նույն օրն *ընդունել է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամ Ջիմ Կոստային՝ ուղեկցությամբ Ֆրեզնոյում ՀՀ պատվո հյուպատոս Պերճ Աբգարյանի։*

Հուլիսի 28-ին *ընդունել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Կոմիտաս քհն. Զոհրաբյանի։*

Օգոստոսի 7-ին *ընդունել է ԱՄՆ-ի արեւելյան հայոց թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Նյու Յորքի Ս. Նահատակաց եկեղեցու հոգեւոր հովիվ Աբրահամ քհն. Մանուկյանի։*

Օգոստոսի 17–27-ը *հայրապետական այցով մեկնել է Հնդկաստանի Հանրապետության՝ Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարան։*

Օգոստոսի 18-ին *հանդիպումներ եւ առանձնազրույցներ է ունեցել ճեմարանի տեսչության եւ ուսուցչական կազմի հետ։*

Նույն օրը *մտերմիկ ու երկար հանդիպում է ունեցել աշակերտների հետ։*

Սեպտեմբերի 6-ին *նախագահել է Ստեփանակերտում տեղի ունեցող ԳՀԽ-ի հերթական ժողովը։*

Նույն օրը, *ԳՀԽ-ի անդամների ուղեկցությամբ, այցելել է ԼՂՀ պաշտպանության բանակի* N *զորամաս, ուր հանդիպել է հրամանատարական կազմի եւ զինվորների հետ։*

Սեպտեմբերի 7-ին, *ԳՀԽ-ի անդամների ուղեկցությամբ, այցելել է Գանձասարի վանք։*

Սեպտեմբերի 8-ին *այցելել է մարտական դիրքեր՝ ուղեկցությամբ ՊԲ հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ գեներալ-մայոր Վարդան Բալայանի։*

Սեպտեմբերի 13-ին *ընդունել է սեպտեմբերի 11–15-ը Մայր Աթոռում անցկացվող Արեւելյան ծեսի ուսումնասիրության ընկերության 6-րդ միջազգային գիտաժողովի մասնակիցներին։*

Սեպտեմբերի 14-ին *հանդիսապետել է Աշտարակի հայորդյաց տան բացման արարողությունը։*

Սեպտեմբերի 17-ին *ընդունել է Ֆրանսիայից ժամանած բժիշկների խմբին՝ ուղեկցությամբ դոկտ. Ժան Պիեռ Բերբերյանի։*

Սեպտեմբերի 20-ին *ընդունել է ՀՀ-ում դիվանագիտական առաքելությունն ավարտող Իսրայելի արտակարգ եւ լիազոր դեսպան Շմուել Մեիրոմին։*

Նույն օրը, *ՀՀ անկախության 25-ամյակի առիթով, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, մասնակցությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա.-ի, կատարել է Հանրապետական մաղթանք։*

Սեպտեմբերի 22-ին *ընդունել է կանադահայ ուխտավորների՝ ուղեկցությամբ Կանադայի հայոց թեմի առաջնորդ Աբգար եպս. Հովակիմյանի։*

Սեպտեմբերի 23-ին *այցելել է Էջմիածնի եւ Երեւանի ծննդատներ՝ հայրապետական իր օրհնությունները բերելու նորածիններին՝ ՀՀ անկախության 25-ամյակի առիթով։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ-ում արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեին։*

Սեպտեմբերի 25-ին *ընդունել է Արգենտինայի հայոց թեմի տիկնանց միության անդամներին։*

Նույն օրն *ընդունել է Արցախի Քարվաճառի շրջանի հինգ գյուղերից ժամանած 24 դպրոցականների։*

Նույն օրն *ընդունել է Արգենտինայի Մխիթարյան վարժարանի սաներին՝ ուղեկցությամբ մայրենի լեզվի ուսուցչուհի տիկ. Զեփյուռ Տիսչեկենյանի։*

Սեպտեմբերի 26-ին *ընդունել է Հայաստանում Քենթրբերիի արքեպիսկոպոսի պատվիրակ եւ անգլիկան համայնքի հոգեւոր սպասավոր հայր Ջոն Բարքրիին։*

Հոկտեմբերի 3-ին *ընդունել է ՀՀ առողջապահության նորանշանակ նախարար Լեւոն Ալթունյանին։*

Հոկտեմբերի 4-ին *ընդունել է ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նորանշանակ նախարար Վահան Մարտիրոսյանին։*

Հոկտեմբերի 6-ին *ԳՀՃ-ի դահլիճում նախագահել է «Ս. Գրքի հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը պատմության հոլովույթում» խորագիրը կրող միջազգային գիտաժողովի բացման արարողությունը։*

Հոկտեմբերի 7-ին *հանդիսապետել է ՀՀ կրթության ու գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի մասնակցությամբ՝ ԳՀՃ-ի Կոմիտասյան դահլիճում տեղի ունեցած ճեմարանին ասպիրանտուրայի ուսուցման իրավունքի շնորհման արարողությունը։*

Հոկտեմբերի 10-ին *ընդունել է 2015 թ. մարտին զարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծում ադրբեջանական կողմի սադրիչ գործողությունների ժամանակ ծանր վիրավորում ստացած ավագ լեյտենանտ Սարգիս Գաբրիելյանին՝ ուղեկցությամբ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս. Աբրահամյանի եւ հնդկահայոց հոգեւոր հովիվ Մովսես աբղ. Սարգսյանի։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Նաֆսիկա Նենսի Էվա Վրայլային։*

Հոկտեմբերի 11-ին *ընդունել է ՀՀ պաշտպանության նորանշանակ նախարար Վիգեն Սարգսյանին։*

Հոկտեմբերի 14-ին *ընդունել է ՀՀ նորանշանակ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին։*

Հոկտեմբերի 16-ին *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունել է 14-րդ «*LEEE EWDTS *2016՝ Արեւելք-Արեւմուտք. նախագծում եւ թեստ» միջազգային գիտաժողովի մասնակիցներին՝ ուղեկցությամբ գիտաժողովի նախագահ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Երվանդ Զորյանի։*

Հոկտեմբերի 17-ին *ընդունել է ՀՀ մշակույթի նորանշանակ նախարար Արմեն Ամիրյանին։*

Հոկտեմբերի 18-ին, *«Դեսպաններ առանց սահմանների» ծրագրի շրջանակներում, ՀՀ-ում Լիբանանի Հանրապետության դեսպանի կեցավայրում հանդիպում է ունեցել ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դեսպանների եւ դիվանագիտական առաքելությունների ղեկավարների հետ։*

Հոկտեմբերի 23-ին *ընդունել է Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի իշխան եւ մեծ վարպետ Ֆրա Մեթյու Ֆոստինգի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Վատիկանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Միքայել Մինասյանի եւ ՀՀ-ում Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի արտակարգ եւ լիազոր դեսպան Ժան-Միշել Ուղուրլյանի։*

Հոկտեմբերի վերջին *մեկնել է ԱՄՆ (Նյու Յորք)՝ գլխավորելու ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանի, ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Աբգար եպս. Հովակիմյանի, եւ ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանի հրավերով Նյու Յորքում կազմակերպվելիք ԳՀԽ-ի հերթական ժողովը։*

Հոկտեմբերի 29-ին *Նյու Յորքում ներկա է եղել ՀԲԸՄ 89-րդ համաժողովին եւ միության 110-ամյակին նվիրված միջոցառումներին։*

Հոկտեմբերի 30-ին *հանդիսապետել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի Ս. Վարդան առաջնորդանիստ տաճարում մատուցված Ս. Պատարագը։ Սրբազան արարողության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 17-րդ տարեդարձի առիթով կատարվել է Հայրապետական մաղթանք։*

Հոկտեմբերի 31-ին *նախագահել է ԳՀԽ-ի, ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի, ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմի, Կանադայի հայոց թեմի թեմական խորհուրդների դիվանների եւ ՀԲԸՄ կենտրոնական մարմնի անդամների միացյալ ժողովը։*

Նոյեմբերի 21-ին *երկօրյա այցով մեկնել է Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)՝ մասնակցելու Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի ծննդյան 70-րդ հոբելյանական տարեդարձի հանդիսություններին։*

Նոյեմբերի 22-ին *Մոսկվայում՝ Ս. Դանիելի պատրիարքանիստ վանքում, հանդիպել է Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա. Պատրիարքի հետ։*

Նույն օրը *Քրիստոս Ամենափրկիչ տաճարի եկեղեցական ժողովների դահլիճում ներկա է եղել Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա. Պատրիարքի ծննդյան 70-րդ հոբելյանական տարեդարձի առիթով կազմակերպված պաշտոնական համերգին։*

Դեկտեմբերի 5-ին *ընդունել է նորաօծ ինը քահանաներին։*

Դեկտեմբերի 6-ին *ընդունել է Վրաց Ուղղափառ Եկեղեցու Ախալքալաքի եւ Կումուրդոյի միտրոպոլիտ Նիկոլոզին՝ ուղեկցությամբ Սամցխե-Ջավախքի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Բաբկեն վրդ. Սալբիյանի։*

Դեկտեմբերի 5-ին *ընդունել է ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Յոգեշվար Սանգվանին։*

Դեկտեմբերի 9-ին *նախագահել է Մայր Տաճարում՝ Յեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի եւ այդ հանցագործության կանխարգելման միջազգային օրվա առիթով տեղի ունեցած հիշատակի արարողությունը։*

Դեկտեմբերի 13-ին *ընդունել է ՌԴ պետական էրմիտաժի տնօրեն Միխայիլ Պիոտրովսկուն։*

Դեկտեմբերի 13-ին *ընդունել է Մայր Աթոռի բոլոր սարկավագներին ու նորընծաներին։*

Դեկտեմբերի 29-ին *ընդունել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Մյանմարի, Սինգապուրի եւ Դաքքայի հոգեւոր հովիվ, Ծայրագույն Արեւելքում Նորին Սրբության ներկայացուցիչ Զավեն վրդ. Յազիչյանին եւ հանդիպման ավարտին վարդապետական ադամանդակուռ լանջախաչով զարդարել վարդապետի կուրծքը եւ Պահպանիչ աղոթքով օրհնել նրան։*

2017

Հունվարի 11-ին *ընդունել է Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի համայնքների զոհված զինծառայողների ընտանիքներին՝ ուղեկցությամբ Տավուշի թեմի առաջնորդ գերշ. Բագրատ եպս. Գալստանյանի։*

Հունվարի 17-ին *ընդունել է ՀՀ-ում Բուլղարիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մարիա Պավլովա Յոցորկովա-Կայմակչիեւային։*

Հունվարի 29-ին *ընդունել է ՀՀ պաշտպանության նախարարին եւ ՀՀ ԶՈՒ ԳՇ պետին՝ ի դեմս նրանց շնորհավորելով հրամանատարներին ու զինվորներին։*

Նույն օրը *ի գնահատություն հայրենիքին մատուցած ծառայությունների՝ Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանի է արժանացրել մի շարք զինվորականների։*

Փետրվարին *ընդունել է ՀՀ-ում Ֆինլանդիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Արյա Ինկերի Մակոնենին (նստավայրը՝ Հելսինկի)։*

Փետրվարի 15-ին *ընդունել է ՀՀ-ում Ռուս Ուղղափառ Եկեղեցու համայնքների կառավարիչ, Վլադիկովկասի եւ Ալանիայի Լեոնիդ եպիսկոպոսին եւ ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինկինին։*

Փետրվարի 23-ին *նախագահել է Մայր Աթոռում տեղի ունեցած հանդիպումը, որին մասնակցում էին իր հրավերով Մայր Աթոռ ժամանած Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության երեք միաբան եպիսկոպոսներ՝ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանը, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գարեգին արք. Բեքչյանը եւ Պատրիարքության Կրոնական ժողովի ատենապետ Սահակ եպս. Մաշալյանը։*

Փետրվարի 24-ին *գլխավորել է Արամ արք. Աթեշյանի, Գարեգին արք. Բեքչյանի եւ Սահակ եպս. Մաշալյանի հանդիպումը Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ եպիսկոպոսների հետ։*

Փետրվարի 28-ին *«Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան է շնորհել դիվանագետ, Արաբական Միացյալ Էմիրություններում եւ Կատարի պետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Գեղամ Ղարիբջանյանին՝ հայրենիքին ու ժողովրդին մատուցած ծառայությունների համար։*

Մարտի 7–9-ը *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը՝ ընդլայնված կազմով։*

Մարտի 9-ին *ընդունել է պաշտոնական այցով Հայաստան ժամանած Հունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոս Կոցիասի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Կարեն Նազարյանի եւ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ։*

Մարտի 10-ին *ընդունել է Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի ռեկտոր պրոֆ. Սուրոմի Սաբոլչի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր պրոֆ. Ռուբեն Միրզախանյանի։*

Մարտի 17-ին *ընդունել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանին։*

Մարտի 18-ին *միջեկեղեցական քառօրյա այցով մեկնել է Ֆինլանդիայի Հանրապետություն՝ Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու առաջնորդ արքեպիսկոպոս վեր. Կարի Մեկկինենի եւ Ֆինլան-*

դիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ, Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի Լեո արքեպիսկոպոսի հրավերով։

Մարտի 19-ին *Հելսինկիի լյութերական-ավետարանական Մայր տաճարի սրահում հանդիպում է ունեցել Ֆինլանդիայի հայ համայնքի հետ։*

Մարտի 20-ին *Հելսինկիի լյութերական-ավետարանական Մայր տաճարում հանդիպել է Ֆինլանդիայի Լյութերական-Ավետարանական Եկեղեցու պետ, Տուրկուի արքեպիսկոպոս Կարի Մեկկինենի հետ։*

Մարտի 21-ին *հանդիպել է Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս, Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետ Լեոյի հետ եւ Կուոպիո քաղաքում ուղղափառ եկեղեցու կենտրոն եւ թանգարան այցելելուց հետո, Նոր Վալաամ վանական համալիրում մասնակցել է աղոթքի։*

Նույն օրը *Ֆիննն Ուղղափառ Եկեղեցու նվիրապետի եւ նրա պատվիրակության հետ միասին հյուրընկալվել է Նոր Վալաամ վանքի վանահայր Սերգիոս վարդապետին։*

Նույն օրն *այցելել է Յոհենսու քաղաքում գտնվող Արեւելյան Ֆինլանդիայի համալսարանի ուղղափառ աստվածաբանության դպրոց, որտեղ ներկայացրել է համառոտ դասախոսություն՝ «Կա՞ արդյոք իսլամական աշխարհի վերաբերյալ հայկական մասնավոր ընկալում» թեմայով։*

Մարտի 30-ին *ընդունել է Եւրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության կարճաժամկետ դիտորդական առաքելության ղեկավար Իգնասիո Մանչես Ամորին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ պատգամավոր Արտաշես Գեղամյանի եւ Իսպանիայի Թագավորությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ավետ Ադոնցի։*

Նույն օրը *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը։*

Ապրիլի 6-ին *ընդունել է ֆրանսիական «La Croix» կաթոլիկ օրաթերթի աշխատակազմին եւ մի խումբ ընթերցողների՝ ուղեկցությամբ Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու սպասավոր Սահակ սրկ. Սուքիասյանի եւ օրաթերթի գլխավոր խմբագրության անդամ Ֆեդերիկ Մունյեի։*

Նույն օրն *ընդունել է Կաթոլիկ Եկեղեցու Ինսբրուքի թեմի (Ավստրիա) կառավարիչ մոնսինյոր Յակոբ Բյուրգլերին՝ ուղեկցությամբ «Ինսբրուք Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության տնօրեն Գեորգ Շաումերի։*

Նույն օրը *Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Նահատակ հոգեւորականաց հուշապատի առջեւ, նախագահել է հոգեհանգստյան կարգը՝ համայնավար բռնապետության զոհ դարձած հոգեւորականների համար, որին*

մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, պաշտոնեությունը եւ բռնադատված եկեղեցականների ժառանգներն ու հարազատները։

Ապրիլի 7-ին *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի շենքում հանդիպել եւ իր օրհնությունն ու բարեմաղթանքներն է փոխանցել Մայր Աթոռի տարբեր կառույցներում եւ բաժիններում պաշտոնավարող շուրջ 160 աշխատակցուհիներին՝ շնորհավորելով Ս. Ավետման տոնի առթիվ։*

Ապրիլի 9-ին *հանդիսապետել է Անդաստանի արարողությունը եւ մանուկների օրհնության կարգը եւ Մայր Աթոռում համախմբված մանուկներին խաչեր նվիրել։*

Նույն օրն *իր օրհնությունը բաշխել է նաեւ իր հրավերով Ս. Էջմիածին ժամանած Հրազդանի Երեխաների աջակցության հիմնադրամի ցերեկային կենտրոնի հաշմանդամություն ունեցող շուրջ 130 երեխաների, որոնց եւս նվերներ է ընծայել, ապա տոնի առիթով հիմնադրամին փոխանցել 2.000.000 ՀՀ դրամի օգնություն։*

Նույն օրն *ընդունել է տարբեր թեմերի եկեղեցիներում ծառայող մանուկ դպիրներին։*

Ապրիլի 10-ին *ընդունել է Հայրապետական կրթաթոշակին ներկայացված Հայաստանի բուհերի երեք ուսանողների՝ ուղեկցությամբ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի եւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս. Նավասարդյանի։*

Նույն օրն *ընդունել է Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսանողներին, ԵՊԲՀ-ի «Հերացի» ավագ դպրոցի աշակերտներին, ինչպես նաեւ ռազմական գործողությունների ընթացքում վիրավորված զինվորներին՝ ուղեկցությամբ ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանի։*

Ապրիլի 12-ին *ընդունել է Եւրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միության (ՈՒԵՖԱ) նախագահ Ալեքսանդր Չեֆերինին՝ ուղեկցությամբ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանի։*

Ապրիլի 17-ին *ընդունել է Մարսելի համազգային դպրոցի եւ Փարիզի դպրոցասեր միության վարժարանի 45 աշակերտների՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի բարերար Սարգիս Պետոյանի։*

Ապրիլի 19-ին *ընդունել է ՀՀ-ում Եգիպտոսի Արաբական Հայրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Թարեք Իբրահիմ Մուհամմադ Մաաթիին։*

Նույն օրը *հանդիպում է ունեցել արցախյան հակամարտության ընթացքում պատերազմական գործողությունների եւ զինադադարի պայմաններում զոհված զինծառայողների մայրերի եւ այրիների հետ։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ-ում Սերբիայի Հայրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Դուշան Սպասոեւիչին (նստավայրը՝ Աթենք)։*

Ապրիլի 23-ին *ընդունել է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի Հովնանյան վարժարանի աշակերտներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի բարերար Հրաչ Թուֆայանի։*

Ապրիլի 26-ին *ընդունել է ՀՀ պաշտոնական այցով ժամանած Հնդկաստանի փոխնախագահ, խորհրդարանի վերին պալատի նախագահ Մոհամմադ Համիդ Անսարիի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի։*

Ապրիլի 28-ին *ընդունել է պաշտոնական այցով Հայաստան ժամանած Լիբանանի Հայրապետության պլանավորման հարցերով պետական նախարար Մայքլ Ֆարաոնին՝ ուղեկցությամբ ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարայանի։*

Նույն օրն *ընդունել է Կաթոլիկ Եկեղեցու՝ Իտալիայի Կաստելանի թեմի երեսուն քահանայի՝ Ռոմանո եպս. Ռոսսիի գլխավորությամբ։*

Նույնը օրն *ընդունել է Քաղցկեղի վերահսկման միջազգային միության նորընտիր նախագահ, Հորդանանի արքայադուստր Դինա Մայրեդին՝ Մխիթար Հերացու անվան Երեւանի պետական բժշկական համալսարանի ռեկտոր Արմեն Մուրադյանի ուղեկցությամբ։*

Ապրիլի 30-ին *ընդունել է Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանին։*

Մայիսի 15-ին *Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի հիմնադրման 300-ամյակի առիթով թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանի հրավերով՝ մեկնել է Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)՝ ներկա գտնվելու Մոսկվայի հայկական առաջնորդանիստ եկեղեցական համալիրի տարածքի «Տապան» թանգարանում թեմի հիմնադրման 300-ամյակին նվիրված հայ անվանի նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսի բացման արարողությանը։*

Մայիսի 16-ին *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի նիստը։*

Մայիսի 19-ին *Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդարանում Ռուսաց լեզվի ակադեմիայի նախագահության կողմից*

ստացել է ակադեմիայի բարձրագույն պարգեւը՝ «Բեթղեհեմյան ոսկե աստղ» շքանշանը եւ վկայականը։

Մայիսի 20-ին *Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսություններ-ի դահլիճում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշան է շնորհել Գեւորգյան հոգեւոր ճեմարանի պատմական աստվածաբանության եւ հումանիտար առարկաների ամբիոնի վարիչ, Երեւանի պետական համալսարանի կրոնի պատմության եւ տեսության ամբիոնի դասախոս, փ. գ. թ., դոցենտ Ավետիս Քալաշյանին՝ բարձր գնահատելով հայրենիքին եւ Հայ Եկեղեցուն մատուցած նրա երկարամյա արդյունավոր ծառայությունն ու բարի վաստակը։*

Մայիսի 25-ին *ընդունել է «Քրիստոնեությունը Կովկասում, Ս. Հռիփսիմեի եւ Ս. Նունեի հետքերով» ծրագրի շրջանակներում Հայաստան ժամանած Վիեննայի պետական համալսարանի թվով 32 դասախոսի եւ ուսանողի՝ Կաթոլիկ աստվածաբանության ֆակուլտետի ծիսագիտության եւ խորհուրդների աստվածաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հ. Յ. Ֆոյլների ու քրիստոնյա Արեւելքի ուսումնասիրության եւ հայրաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռուդոլֆ Պրոկշինի առաջնորդությամբ։*

Նույն օրն *ընդունել է «Ավրորա» մարդասիրական մրցանակաբաշխությանը մասնակից հյուրերին, որոնց թվում՝ 2016 թ. մրցանակակիր Մարգարիտ Բարանկիցեին եւ 2018 թ. մրցանակի հավակնորդ, վիրաբույժ Թոմ Քատինային՝ ուղեկցությամբ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիր, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Ռուբեն Վարդանյանի։*

Մայիսի 28-ին *ընդունել է «Ավրորա» մրցանակաբաշխության առիթով Հայաստան ժամանած Հունաստանի Ալեքսանդրուպոլի միտրոպոլիտ Անթիմոս Կուկուրիդեսին եւ առաջնորդարանի դիվանապետ Իրենեոս վրդ. Լավցիսին՝ ուղեկցությամբ Հունաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Խորեն վրդ. Առաքելյանի։*

Մայիսի 29-ին *նախագահել է քահանայից հերթական ժողովը, որին մասնակցում էին Հայաստանի եւ Արցախի թեմերի հոգեւոր սպասավորները, ինչպես նաեւ ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմից, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի, Հարավային Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի, Ուկրաինայի, Ֆրանսիայի, Բուլղարիայի, Վրաստանի, Ռումինայի եւ Իրաքի հայոց թեմերից, Կենտրոնական Եւրոպայում հայրապետական պատվիրակությունից։*

Մայիսի 30-ին *ընդունել է Վատիկան Գաղտնի արխիվների եւ Առաքելական գրադարանի ղեկավար Մոնս. Ժան-Լուի Բրյուգեսի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Վատիկանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Միքայել Մինասյանի։*

Հունիսի 1-ին *ընդունել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարար Աշոտ Մանուկյանին։*

Հունիսի 2-ին *ընդունել է ԱՄՆ-ի «Ֆերահյան» հայկական դպրոցի 11-րդ դասարանի թվով 40 աշակերտի։*

Հունիսի 6-ին *նախագահել է Եկեղեցական-ներկայացուցչական 6-րդ ժողովը, որին մասնակցում էին Մայր Աթոռում եւ Նվիրապետական Աթոռներում պաշտոնավարող եպիսկոպոսներ, Հայաստանի եւ Սփյուռքի թեմերի առաջնորդներ, առաջնորդական տեղապահներ, հայրապետական պատվիրակներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Նվիրապետական Աթոռներից, հայրապետական պատվիրակություններից ու աշխարհասփյուռ թեմերից ընտրված հոգեւորականներ եւ աշխարհական ներկայացուցիչներ։*

Հունիսի 9-ին *ընդունել է Ավստրալիայի Վիլուպի քաղաքապետ Քեյլ Զայլզ Քիտնիին։*

Նույն օրը *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը։*

Հունիսի 11-ին *ընդունել է ԱՄՆ-ի արեւելյան եւ արեւմտյան, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմերի ուխտավորներին։*

Հունիսի 12-ին *ընդունել է «Ռոսատոմ» ատոմային էներգիայի պետական կորպորացիայի գլխավոր տնօրեն Ալեքսեյ Լիխաչյովին։*

Նույն օրը, *Ս. Հռիփսիմե կույսի հիշատակի օրվա առիթով, սրբուհու մասունքակիր Ս. Աջով օրհնել է բարեպաշտ ժողովրդին, ապա Ս. Գրիգոր Լուսավորչի կամարի առջեւ այն փոխանցել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովնան եպս. Հակոբյանին, որը եկեղեցական թափորով, Էջմիածնի հայորդյաց տան սաների թմբուկների զարկերի ներքո, տարել է Ս. Հռիփսիմեի վանք։*

Հունիսի 13-ին՝ *Ս. Գայանե կույսի տոնին, սրբուհու մասունքակիր Ս. Աջով օրհնել է ուխտավոր բարեպաշտ ժողովրդին եւ փոխանցել այն Կանադայի հայոց թեմի առաջնորդ Աբգար եպս. Հովակիմյանին, որն էլ եկեղեցական թափորի ուղեկցությամբ սուրբ մասունքը տարել է Ս. Գայանեի վանք։*

Հունիսի 19-ին *նախագահել է Հառիճի վանքում գործող Թրբանճյան ընծայարանի հիմնանորոգված մասնաշենքի բացման արարողությունը,*

որը վերանորոգվել եւ գործում է տեր եւ տիկին՝ Ջերալդ եւ Փատրիսիա Թրբանճյանների (Լոս Անջելես, ԱՄՆ) ազնիվ բարերարությամբ։

Հունիսի 20-ին *ընդունել է Մայր Աթոռի բարերարներ տեր եւ տիկին՝ Ջերալդ եւ Փատրիսիա Թրբանճյանների (Լոս Անջելես, ԱՄՆ) զավակներ Լորի Մնչերյան-Թրբանճյանին, Փոլ եւ Հարրի Թրբանճյաններին եւ նրանց ընտանիքներին՝ ուղեկցությամբ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի։*

Հունիսի 24-ին *նախագահել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2016–2017 ուս. տարվա փակման արարողությունը։*

Հունիսի 25-ին *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում հանդիպում է ունեցել ԱՄՆ հայոց արեւմտյան եւ արեւելյան թեմերի ուխտավորների հետ՝ ուղեկցությամբ խմբերի ղեկավարներ Տաթեւ ավագ. քհն. Հարությունյանի (Կուպերտինոյի Ս. Անդրեաս եկեղեցի) եւ Հակոբ քհն. Գեւորգյանի (Ֆիլադելֆիայի Ս. Երրորդություն եկեղեցի)։*

Հուլիսի 2-ին *ընդունել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի առաջնորդ գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամյանի եւ Բոստոնի Ս. Հակոբ եկեղեցու հոգեւոր հովիվ արժ. Տ. Առաքել քհն. Ալջալյանի։*

Հուլիսի 7-ին *ընդունել է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետ, գեներալ-մայոր Արթուր Օսիկյանին՝ ուղեկցությամբ Քրեակատարողական հիմնարկների հովվության պատասխանատու Տ. Ռուբեն վրդ. Զարգարյանի։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արսեն Հարությունյանին։*

Հուլիսի 9-ին *ընդունել է ԱՄՆ-ի Հայոց Արեւելյան թեմի երիտասարդաց միության «Ծառայություն Հայաստանին» եւ ԱՄՆ-ի Հայոց Արեւմտյան թեմի երիտասարդաց միության «Առաքելություն դեպի Հայաստան» կամավորական ծրագրերի մասնակիցներին՝ ուղեկցությամբ խմբերի ղեկավարներ արժ. Տ. Թադեոս քհն. Բարսեղյանի (Մինեսոտայի Ս. Սահակ եկեղեցի) եւ արժ. Տ. Գրիգոր քհն. Զաքարյանի (Կալիֆոռնիայի Ս. Կարապետ եկեղեցի)։*

Հուլիսի 18-ին *ընդունել է Գերմանիայից Քյոլնի համալսարանի մի խումբ կաթոլիկ ու բողոքական աստվածաբանների եւ գիտնականների՝ Կաթոլիկ Եկեղեցու Գերմանիայի Եպիսկոպոսաց ժողովի խոսնակ Մաթթիաս Կոպպի ղեկավարությամբ։*

Հուլիսի 18-ին *Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան է հանձնել Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության փոխատենապետեր տիար Սունիլ Սոբթիին եւ տիկին Սյուզան Ռուբենին՝ ի գնահատություն նրանց եկեղեցանվեր ընթացքի եւ բազմարդյուն վաստակի։*

Հուլիսի 20-ին *ընդունել է Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) հոբելյանական 10-րդ մարզախաղերին մասնակցելու համար Հայաստան ժամանած ՀՄԸՄ լոնդոնյան ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ գերաշ. Տ. Հովակիմ եպս. Մանուկյանի։*

Հուլիսի 21-ին *ընդունել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Մինեսոտայի Ս. Սահակ եկեղեցու հոգեւոր հովիվ արժ. Տ. Թադեոս քհն. Բարսեղյանի։*

Հուլիսի 21-ին *ընդունել է Կորեայի Հանրապետության Ջեոլաբուկ-դո նահանգի ղեկավար Սոնգ Հա-Ջինի գլխավորած պատվիրակությանը։*

Հուլիսի 23-ին *ընդունել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ուսուցիչների վերապատրաստման ծրագրին մասնակից սփյուռքահայ ուսուցիչներին՝ ուղեկցությամբ Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր պրոֆ. Ռուբեն Միրզախանյանի։*

Նույն օրն *ընդունել է «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի ղեկավարներին, ակնաբույժներին եւ բարերարներին՝ հիմնադրամի գործունեության 25-ամյակի առիթով։*

Հուլիսի 25-ին *ընդունել է Արգենտինայի հայոց թեմի Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցու, Վիսենտե Լոպեսի «Դերձակյան» եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության «Մարի Մանուկյան» վարժարանների ավարտական լսարանի սաներին՝ ուղեկցությամբ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Մաղաքիա վրդ. Ամիրյանի։*

Նույն օրն *ընդունել է Գրական փաստագրության միջազգային ակադեմիայի պատվիրակությանը՝ գլխավորությամբ ՌԴ վաստակավոր իրավաբան, ակադեմիայի նախագահ Վալերի Նարինյանի։*

Հուլիսի 26-ին *ընդունել է 2016 թ. նոյեմբերին, ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծում մարտական գործողությունների ժամանակ ծանր վիրավորում ստացած սերժանտ Գեւորգ Դադասյանին՝*

ուղեկցությամբ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ գերշ. Տ. Վրթանես եպս. Աբրահամյանի եւ Հնդկաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Մարտիրոսյանի։

Հոկտեմբերի 27-ին *ընդունել է ՀՀ-ում Ռուս Ուղղափառ Եկեղեցու համայնքների կառավարիչ, Վլադիկովկասի եւ Ալանիայի Լեոնիդ եպիսկոպոսին։*

Օգոստոսի 3-ին *ընդունել է ուխտավորաբար Հայաստան ժամանած Բելգիայի Մալին-Բրուքսել ավագ թեմի եւ Բրուքսելի շրջանի կաթոլիկ եպիսկոպոս Ժան Քոքրոլսին։*

Օգոստոսի 20-ին *հանդիպում է ունեցել ղարաբաղյան հակամարտության ընթացքում, մարտական գործողությունների եւ զինադադարի պայմաններում զոհված զինծառայողների մայրերի հետ։*

Օգոստոսի 24-ին *ընդունել է ՀՀ եւ արտերկրի ռազմաուսումնական հաստատությունների 2016–2017 ուս. տարվա շրջանավարտներին։*

Օգոստոսի 31-ին՝ *2017–2018 թթ. ուսումնական նոր տարեշրջանի նախօրեին, հանդիսապետել է կրթության մշակների օրհնության կարգը։*

Սեպտեմբերի 2-ին *ընդունել է Փասադինայի (ԱՄՆ) քաղաքապետ պրն. Թերրի Թորնեքի գլխավորած պատվիրակությանը։*

Սեպտեմբերի 6-ին *ընդունել է ղպտի ուխտավորների՝ գլխավորությամբ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու ԱՄՆ-ի Հարավային շրջանի թեմի առաջնորդ Յուսեֆ եպիսկոպոսի։*

Սեպտեմբերի 7-ին *երկօրյա այցով մեկնել է Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)՝ մասնակցելու տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպմանը։*

Սեպտեմբերի 8-ին *Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն)՝ Ս. Դանիելի պատրիարքանիստ վանքում, հրավիրվել է մասնակցելու Ադրբեջանի, Հայաստանի եւ Ռուսաստանի հոգեւոր առաջնորդների հանդիպմանը։*

Սեպտեմբերի 10-ին *հանդիսապետել է Ս. Պատարագի ավարտին կատարված միջեկեղեցական աղոթք-մաղթանքը՝ նվիրված Մերձավոր Արեւելքում խաղաղության հաստատմանն ու ամրապնդմանը, որին ներկա էին Իրաքի քրիստոնյա եկեղեցապետների խորհրդի անդամները։*

Սեպտեմբերի 11-ին *ընդունել է Իրաքի քրիստոնեական ավանդապահության նախարար տիար Ռաադ Քաչաչիին եւ Իրաքի Քրիստոնեական Եկեղեցիների առաջնորդներին՝ ուղեկցությամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. ավ. արք. Ասատուրյանի։*

Սեպտեմբերի 12-ին *նախագահել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2017–2018 թթ. ուսումնական տարվա բացումը։*

Սեպտեմբերի 14-ին *հանդիսապետել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Հօռնեկեան հանրակրթական դպրոց» ուսումնական հաստատության նոր շենքի բացման հանդիսավոր արարողությունը։*

Սեպտեմբերի 15-ին *Մոսկվայում, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդարանի հանդիսությունների դահլիճում հանդիսապետել է «Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի 300-ամյակ. պատմություն եւ ներկա» միջազգային գիտաժողովը, որին մասնակցում էին Հայաստանից, Ռուսաստանից եւ Ուկրաինայից ժամանած շուրջ 60 հայագետներ, պատմաբաններ, աստվածաբաններ, արվեստագետներ եւ մշակութաբաններ։*

Սեպտեմբերի 17-ին *ընդունել է Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Կարո Փայլանին։*

Սեպտեմբերի 18-ին *բացման խոսքով հանդես է եկել «Հայաստան–Սփյուռք» վեցերորդ համաժողովի բացման արարողությանը։*

Սեպտեմբերի 19-ին *ընդունել է «Վարդանանց ասպետներ» կազմակերպության ավագ դիվանի անդամներին՝ գլխավորությամբ կազմակերպության ավագ սպարապետ Գերրի Զամանիկյանի։*

Սեպտեմբերի 20-ին *ընդունել է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակ Արփինե Հովհաննիսյանի եւ ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Գրիգոր Հովհաննիսյանի։*

Նույն օրը *Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ նախագահել է երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Ա Հովսեփյան Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին նվիրված վավերագրերի եւ արխիվային նյութերի երկու ժողովածուների շնորհանդեսը։*

Սեպտեմբերի 22-ին *ընդունել է Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար Միխեիլ Գեորգաձեին՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանի։*

Սեպտեմբերի 24-ին *ընդունել է Գերմանիայից ժամանած «Ֆիլոքսենիա» միջեկեղեցական կազմակերպության անդամներին՝ կազմակերպության նախագահ մոնսինյոր Վիլմ Սանդերսի գլխավորությամբ եւ Գերմանիայի հայոց թեմի Բավարիայի հայ համայնքի հոգեւոր հովիվ արժ. Տ. Այգիկ քհն. Հովհաննիսյանի ուղեկցությամբ։*

Նույն օրը *հյուրընկալել է Բուենոս Այրեսի (Արգենտինա) Մխիթարյան վարժարանի 11-րդ լսարանի սաներին՝ ուղեկցությամբ բարձրաշնորհ հայր Եղիա ծայրագույն վարդապետ Քիլաղպյանի եւ Հայաստանի հետ վարժարանի կապերի պատասխանատու Ադրիանա Շուպարալյանի։*

Նույն օրը *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորաբաց «Գարեգին Ա.» կրթական կենտրոնում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշան է շնորհել Հայոց ցեղասպանության մասին պատմող «Խոստում» ֆիլմի պրոդյուսեր Էրիկ Իսրայելյանին եւ ֆիլմի ռեժիսոր Թերի Ջորջին։*

Սեպտեմբերի 25-ին *ընդունել է ՌԴ կրթության եւ գիտության նախարար Օլգա Վասիլեւային՝ ուղեկցությամբ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի։*

Սեպտեմբերի 26-ին *նախագահել է «Հայկական ազգային երաժշտական գանձարան» նախագծի պաշտոնական շնորհանդեսը։*

Նույն օրն *ընդունել է Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Օլիվիե Դասոյին եւ նրա տիկնոջը՝ ուղեկցությամբ Մեծ Բրիտանիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սարգսյանի։*

Սեպտեմբերի 27-ին *ընդունել է Իրաքի Հանրապետության գյուղատնտեսության նախարար, Հայ-իրաքյան միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Ֆալահ Հասան Զեյդան Ալ-Լահիբիի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Իրաքի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Կարեն Գրիգորյանի։*

Հոկտեմբերի 3-ին *ընդունել է Բուլղարիայից մի խումբ ուխտավորների՝ ուղեկցությամբ Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Իսահակ վրդ. Պողոսյանի եւ ՀԲՄՄ հայաստանյան գրասենյակի տնօրեն Վազգեն Յակուբյանի։*

Հոկտեմբերի 5-ին *ընդունել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան պատվիրակությանը՝ գլխավորությամբ Իրանի Իսլամական կապերի եւ մշակույթի կազմակերպության միջազգային գծով տեղակալ պրն. Աբբաս Խամեյարի։*

Հոկտեմբերի 7-ին *մայրաքաղաք Երեւանում ներկա է գտնվել ռուսական Ս. Խաչի վերացման եկեղեցու օծման արարողությանը։*

Նույն օրն *ընդունել է միջազգային գրոսմայստեր, աշխարհի կրկնակի գավաթակիր Լեւոն Արոնյանին եւ նրա տիկնոջը՝ Արիանա Կաուիլին։*

Հոկտեմբերի 8-ին *ընդունել է «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի ամերիկյան խորհրդատվական կոմիտեի անդամներին, հիմնադրամի վար-*

չության նախկին անդամներին, նվիրատուներին եւ հյուրերին՝ գլխավորությամբ հոգաբարձուների խորհրդի անդամ տեր եւ տիկին՝ Մայքլ եւ Մարի Հարաթունյանի, Ամերիկայի Երիցական եկեղեցու համաշխարհային առաքելության տնօրեն վերապատվելի Խոսե Լուիս Քասալի եւ «Ջինիշյան» հիմնադրամի ամերիկյան գրասենյակի տնօրեն տիկին Էլիզա Մինասյանի։

Հոկտեմբերի 10-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում ընդունել է սփյուռքահայ հայագիր եւ օտարագիր գրողների համաժողովի մասնակիցներին՝ գլխավորությամբ Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի։*

Նույն օրը *հանդիսապետել է ՀՀ զինված ուժերի զորամիավորումներին ընծայվող խաչվառների օրհնության եւ հանձնման արարողությունը։*

Հոկտեմբերի 11-ին *հանդիպել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի առաջին լսարանի 18 սաների հետ՝ առաջնորդությամբ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանի։*

Հոկտեմբերի 12-ին *ներկա է գտնվել ազգային բարերար տիար Էդուարդո Էօռնեկյանին «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչման շնորհման արարողությանը եւ օրհնության խոսք ասել։*

Նույն օրն *ընդունել է 2016 թ. նոյեմբերին՝ ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծում մարտական գործողությունների ժամանակ, ծանր վիրավորում ստացած սերժանտ Գեւորգ Դադասյանին՝ ուղեկցությամբ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ գերշ. Տ. Վրթանես եպս. Աբրահամյանի։*

Նույն օրն *ընդունել է Արամ Խաչատրյանի անվան 5-րդ միջազգային փառատոնի բացմանը մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած հոլիվուդյան հայտնի դերասան, ռեժիսոր, սցենարիստ եւ պրոդյուսեր Ջոն Մալկովիչին եւ նրա տիկնոջը՝ ուղեկցությամբ միջազգային մշակութային-հումանիտար համագործակցության հարցերով ՀՀ նախագահի խորհրդական Արմեն Սմբատյանի եւ Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի դիրիժոր եւ գեղարվեստական ղեկավար Սերգեյ Սմբատյանի։*

Հոկտեմբերի 13-ին *ընդունել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ալթոթինգի շրջանից ժամանած ուխտավորների՝ գլխավորությամբ Ալթոթինգի քաղաքապետ Հերբերտ Հոֆաուերի։*

Հոկտեմբերի 15-ին *ընդունել է Շվեյցարիայի աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Էվա Թոմիի եւ Գերմանիայի աստվածաշնչային ընկերության անդամ, Շտուտգարտի Լյութերական Եկեղեցու հոգեւոր տե-*

սուչ էքհարտ Շուլցբերգի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստանի աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար գերշ. Տ. Եզնիկ արք. Պետրոսյանի եւ ծրագրերի ղեկավար Արշավիր Գաբուճյանի։

Հոկտեմբերի 17-ին *5-օրյա այցով մեկնել է Բեռլին՝ Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների պետերի հետ մասնակցելու Եւրոպայում Ռեֆորմացիայի 500-ամյա հոբելյանի հիշատակության շրջանակներում անցկացվող պաշտոնական միջոցառումներին։*

Հոկտեմբերի 18-ին, *Եւրոպայում Ռեֆորմացիայի 500-ամյա հոբելյանի հիշատակության շրջանակներում անցկացվող պաշտոնական միջոցառումների շրջագծից ներս, պաշտոնական հանդիպում է ունեցել Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հետ։*

Նույն օրը *հանդիպել է Գերմանիայի հայոց թեմի Բեռլինի հայ համայնքի հետ՝ Բեռլինի Լուիզըն եկեղեցում։*

Հոկտեմբերի 19-ին, *Եւրոպայում Ռեֆորմացիայի 500-ամյա հոբելյանի հիշատակության միջոցառումների շրջանակում, պաշտոնական ընդունելությամբ հանդիպել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախկին նախագահ պրն. Յոհակիմ Գաուկի հետ։*

Հոկտեմբերի 20-ին *Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների պետերի հետ միասին հյուրընկալվել է Գերման-ավետարանական եկեղեցու «Հաց աշխարհի համար» սոցիալական ծառայության կենտրոնում։*

Նույն օրը *Ղպտի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ եւ Հնդիկ Մալաբար, Ասորի Ուղղափառ եկեղեցապետերի հետ միասին նախագահել է Բեռլինի՝ Դիտրիխ Բոնհոֆֆերի անվան Գերման-ավետարանական եկեղեցու կենտրոնում բացված «Մերձավոր Արեւելքի քրիստոնյաները» միջազգային գիտաժողովը, որի ընթացքում նաեւ հանդես է եկել օրհնության խոսքով։*

Հոկտեմբերի 21-ին, *Եւրոպայում Ռեֆորմացիայի 500-ամյակի հոբելյանական տոնակատարությունների շրջանակում Գերմանիա կատարած պաշտոնական այցի առիթով, այցելել եւ ծաղկեպսակ է դրել Բեռլինի Կաթողիկե Մայր Տաճարի հարեւանությամբ Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին կանգնեցված խաչքար-հուշարձանին, որտեղ կատարվել է Սրբոց Նահատակաց բարեխոսական կարգ։*

Նույն օրն *Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների պետերի եւ Գերման-ավետարանական եկեղեցու եպիսկոպոսաց խորհրդի նախագահ Հայնրիխ եպիսկոպոս Բեթֆորդ-Շտրոմի հետ միասին Բեռլինի ավետարանական Մայր Տաճարում հանդիսապետել է Մերձավոր Արեւելքում խաղա-*

ղության հաստատմանն ու քրիստոնյաներին նվիրված հատուկ միջեկեղեցական աղոթքը։

Հոկտեմբերի 23-ին *ընդունել է ՀՀ-ում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Բրազիլիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Էդսոն Մարինյո Դուարտե Մոնտեյրոյին։*

Հոկտեմբերի 25-ին *ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմի հաստատման 90-ամյակի առիթով հովվապետական այցով մեկնել է ԱՄՆ՝ հրավերով թեմական առաջնորդ գերշ. Տ. Հովնան արք. Տերտերյանի եւ թեմական խորհրդի։*

Հոկտեմբերի 26-ին, *ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմ հայրապետական այցելության շրջանակում, այցելել է «Վաչե Մանուկյան» դպրոց եւ հանդիպել աշակերտության հետ։*

Նույն օրն *այցելել է «Արարատ տուն» եւ իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները բերել տարեցներին, ապա իր գնահատանքն է հայտնել հաստատության խնամակալ մարմնին եւ աշխատակիցներին։*

Հոկտեմբերի 27-ին *ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմի Սրբոց Ղեւոնդյանց առաջնորդանիստ եկեղեցում հանդիպում է ունեցել շաբաթօրյա եւ կիրակնօրյա դպրոցների, ինչպես նաեւ հայ վարժարանների աշակերտների հետ։*

Հոկտեմբերի 28-ին *Սրբոց Ղեւոնդյանց մայր եկեղեցու հանդիսությունների սրահում հանդիպում է ունեցել շաբաթօրյա դպրոցների աշակերտության հետ։*

Նույն օրը *հանդիպում է ունեցել նաեւ թեմի երիտասարդների հետ։*

Հոկտեմբերի 29-ին՝ *Ս. Խաչի գյուտի տոնի օրը, ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմի Սրբոց Ղեւոնդյանց առաջնորդանիստ Մայր եկեղեցում մատուցել է Ս. Պատարագ։*

Նույն օրը՝ *երեկոյան, հովվապետական այցի առիթով, ներկա է եղել պաշտոնական ճաշկերույթի, որի ընթացքում ցուցադրվել է ԱՄՆ-ի Հայոց թեմի 90-ամյակին նվիրված ֆիլմը եւ «Շողակաթ» հեռուստաընկերության պատրաստած տեսաֆիլմը Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանի մասին։*

Նույն օրը, *հանդիսավոր ճաշկերույթի առիթով, Ժիրայր Թրբանճյանին շնորհել է «Ասպետ Ս. Էջմիածնի» հայրապետական բարձր շքանշանը։*

Հոկտեմբերի 30-ին *հովվապետական այցով ժամանել է Մեքսիկայի մայրաքաղաք Մեխիկո։*

Նույն օրը *ՀՀ դեսպանատանը Նորին Սրբությունը հանդիպում է ունեցել դեսպանատան աշխատակիցների հետ։*

Նույն օրն *այցելել է Գուադալուպեի եկեղեցի, որտեղ տեղի հոգեւորականների հետ աղոթք է բարձրացրել առ Աստված, ապա հանդիպել Մեխիկոյի քաղաքապետ Միգել Անխել Մանսեռային։*

Նույն օրը *Մեխիկոյի կաթոլիկ Մայր Տաճարում մասնակցել է միջեկեղեցական աղոթքի, որին ներկա էին Մեքսիկայի կարդինալ Նորբերտո Ռիվերա Կառեռան, պապական նվիրակը, քույր Եկեղեցիների եւ պետական իշխանությունների ներկայացուցիչներ։*

Նույն օրն *այցելել է Մեխիկոյի «Հիշողության եւ հանդուրժողականության թանգարան», որտեղ ներկայացված են 20-րդ դարի ցեղասպանությունների, այդ թվում եւ՝ Հայոց ցեղասպանության մասին պատմող ցուցանմուշներ։*

Նոյեմբերի 1–3-ը *նախագահել է ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմի առաջնորդարանում տեղի ունեցած Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը։*

Նոյեմբերի 3-ին *ԱՄՆ-ի հայոց արեւմտյան Թեմի առաջնորդանիստ կենտրոնում ընդունել է Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության (ԱՀԱԸ) հոգաբարձուների խորհրդի, Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի, Հյուսիսային Ամերիկայի հայ ավետարանական եկեղեցիների միության, Հայկազյան համալսարանի հոգաբարձուների խորհրդի ներկայացուցիչներին։*

Նոյեմբերի 23-ին *Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունել է ռասիզմի, այլատյացության եւ խտրականության դեմ պայքարի, քրիստոնյաների եւ այլ կրոնական խմբերի նկատմամբ անհանդուրժողականության կանխարգելման հարցերով ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ պրոֆեսոր Ինգիբյորգ Գաբրիելին եւ ԳԴՀ Բունդեսթագի պատգամավոր, ՔԴՄ/ՔՍՄ խմբակցության անդամ, պրոֆեսոր Հերիբերթ Հիրթեին՝ իր տիկնոջ հետ։*

Նոյեմբերի 24-ին *ընդունել է Վրաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանին։*

Նոյեմբերի 26-ին *ընդունել է Լիբանանյան-կանադական համալսարանի (Լիբանան) նախագահ դոկտոր Ռոնի Աբի Նախըլին եւ համալսարանի տնօրինության նախագահ, միջազգային ծրագրերի պատասխանատու դոկտոր Յոլանդ Սալիմին՝ ուղեկցությամբ տիկ. Միրեյ Խանամիրյանի։*

Նոյեմբերի 27-ին *ընդունել է ՀՀ-ում դիվանագիտական իր առաքելությունն ավարտող Ռումինիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Սորին Վասիլեին։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ-ում Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մուհամմադ Ահմադ Հաջ Իբրահիմին։*

Դեկտեմբերի 4-ին *ընդունել է Ռումինիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Մինասյանին։*

Դեկտեմբերի 5-ին *Գուգարաց թեմի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Մայր Աթոռի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի նախաձեռնությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Կոմիտասյան սրահում նախագահել է Ս. Հովհան Օձնեցու գահակալության 1300-ամյակին նվիրված «Հովհան Օձնեցի Իմաստասեր կաթողիկոսը եւ նրա ժամանակը» գիտաժողովը։*

Դեկտեմբերի 11-ին *ընդունել է Վրաստանի եւ Հարավային Կովկասի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու եպիսկոպոս Մարկուս Շոխին։*

Դեկտեմբերի 12-ին *նախագահել է Հայոց պատմություն, Հայոց Եկեղեցու պատմություն, հայոց լեզու եւ գրականություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաների ուսուցիչների եւ դասավարների՝ «Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցույթի 2017 թ. մրցանակաբաշխությունը։*

Դեկտեմբերի 14-ին *ընդունել է Հունաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Տերենս-Նիկոլաոս Քուիքին եւ Կիպրոսի Հանրապետության նախագահի՝ հումանիտար եւ արտերկրյա հարցերով հանձնակատար Ֆոտիու Ֆոտիսի գլխավորած պատվիրակություններին՝ ուղեկցությամբ ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի։*

Դեկտեմբերի 18-ին *ընդունել է ՌԴ Վոլոգդայի նահանգապետ Օլեգ Կուվշիննիկովի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի եւ Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոս Հրայր Կարապետյանի։*

Դեկտեմբերի 18-ին *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Գարեգին Ա.» կրթական կենտրոնում հանդիսապետել է շքանշանների հանձնման հանդիսավոր արարողությունը։*

Դեկտեմբերի 18-ին *ընդունել է նախորդ օրը Մայր Տաճարում ձեռնադրված վեց քահանաներին՝ առաջնորդությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ գերշ. Տ. Հովնան եպս. Հակոբյանի։*

Դեկտեմբերի 31-ին՝ *ժամը 24:00-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիսապետել է Հանրապետական մաղթանքի եւ նոնօրհնեքի արարողությունը։*

2018

Հունվարի 9-ին *հայրապետական այցով մեկնել է ԱՄՆ՝ հանդիպումներ ունենալու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարների հետ։*

Հունվարի 31-ին *ընդունել է ՀՀ կուսակցության կողմից ՀՀ նախագահի թեկնածու առաջարկված, Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սարգսյանին։*

Փետրվարի 2-ին *ընդունել է հունվարի 30-ից փետրվարի 4-ը Մայր Աթոռում իր հերթական՝ 15-րդ հանդիպումն անցկացնող Արեւելյան Ուղղափառ եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ աստվածաբանական երկխոսության միացյալ հանձնախմբի անդամներին։*

Փետրվարի 7-ին *ընդունել է ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոնաթան Լաքոտին։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Շվեյցարիայի Համադաշնության Ազգային խորհրդի նախագահ Դոմինիկ դը Բյումանի գլխավորած պատվիրակությանը։*

Փետրվարի 13-*ին ընդունել է Բուլղարիայի Հանրապետության նախագահ Ռումեն Ռադեւին՝ տիկնոջ՝ Դեսիսլավա Ռադեւայի հետ՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի։*

Փետրվարի 16-ին *ընդունել է ՀՀ-ում Լիբանանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Մայա Դաղերին։*

Փետրվարի 21-ին *ընդունել է պաշտոնական այցով Հայաստան ժամանած Լիբանանի Հանրապետության նախագահ Միշել Աունին՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Պապիկյանի։*

Մարտի 12-ին *ընդունել է ՀՀ-ում Բրազիլիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Մենդոնսա Սանկտոսին եւ նրա տիկնոջը՝ Սիմոնե Հագենաուեր Ռոգատտի Սանկտոսին։*

Մարտի 16-ին *հայրապետական երկօրյա այցով մեկնել է Ուկրաինայի հայոց թեմ՝ մարտի 17-ին Դնեպրի նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման առիթով։*

Մարտի 28-ին *ընդունել է Ուկրաինայի Բելգորոդ-Դնեստրովսկի քաղաքապետ Ալլա Գինակի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի։*

Ապրիլի 4-ին *Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի հրավերով ժամանել է Վատիկան՝ մասնակցելու Ս. Գրիգոր Նարեկացու արձանի բացման արարողությանը։*

Ապրիլի 13-ին *ընդունել է մայոր Սարգիս Ստեփանյանին, որը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախաձեռնությամբ եւ Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության աջակցությամբ ամիսներ առաջ մեկնել էր Հնդկաստան՝ ստանալու վերջույթների պրոթեզավորման համար անհրաժեշտ բուժումը։*

Ապրիլի 14-ին *ընդունել է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին եւ առաջին տիկին Նունե Սարգսյանին։*

Ապրիլի 22-ին *ընդունել է Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանին։*

Ապրիլի 26-ին *ընդունել է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին եւ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանին։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու Միկկելե քաղաքի եպիսկոպոս Սեպպո Հեկկինեին եւ վերապատվելի Տիմո Ռոսկվիստին։*

Ապրիլի 27-ին *ընդունել է Մարսելի համազգային դպրոցի եւ Փարիզի դպրոցասեր միության վարժարանի 45 աշակերտի՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի բարերար Սարգիս Պետոյանի եւ կրթական հաստատությունների տնօրենների։*

Ապրիլի 28-ին *իր հրավերով ընդունել է ՀՀ ԱԺ «Ելք» խմբակցության ղեկավար, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջնորդ Նիկոլ Փաշինյանին։*

Ապրիլի 29-ին *ընդունել է ԱԺ «ՀՀԿ» խմբակցության ղեկավար Վահրամ Բաղդասարյանին, ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Վիգեն Սարգսյանին եւ ՀՀԿ փոխնախագահ, ԱԺ պատգամավոր Արմեն Աշոտյանին։*

Ապրիլի 30-ին *ընդունել է Գերմանիայի Մարտին Լյութերի անվան Հալլե-Վիթենբերգի համալսարանի պատվիրակությանը՝ գլխավորությամբ համալսարանի ռեկտոր պրոֆեսոր Ուդո Շտրատերի եւ ուղեկցությամբ Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարա-*

նի հեռանկարային ուսումնասիրությունների եւ նախաձեռնությունների կենտրոնի գիտական ղեկավար Տիգրան Թորոսյանի։

Մայիսի 5–ին *ընդունել է ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Սան Խոսեի պետական համալսարանի պատվիրակությանը՝ համալսարանի ռեկտոր Մարի Փափազյանի գլխավորությամբ եւ Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պ. գ. դ. պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի ուղեկցությամբ։*

Մայիսի 7-ին *ընդունել է «Բյուլուքյան» հիմնադրամի անդամներին (Ֆրանսիա)՝ գլխավորությամբ հիմնադրամի նախագահ Շան-Պիեր Քլավզանի։*

Մայիսի 16-ին *ընդունել է ՀՀ-ում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Էյջի Տագուչիին։*

Նույն օրն *ընդունել է նաեւ ՀՀ-ում Իտալիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Վինչենցո Դել Մոնակոյին։*

Մայիսի 21-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում հանդիպել է մեկամսյա վերապատրաստման հերթական դասընթացներին մասնակցող Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի թեմերից ժամանած թվով 23 եկեղեցականի հետ։*

Մայիսի 22-ին *ընդունել է ՀՀ Սփյուռքի նախարար տիար Մխիթար Հայրապետյանին։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատի նախագահ Դեմետրիս Սիլուրիսին։*

Մայիսի 26-ին *ընդունել է ՀՀ պաշտպանության նորանշանակ նախարար Դավիթ Տոնոյանին։*

Մալիսի 27-ին *ընդունել է Արգենտինայի հայոց թեմի մի խումբ ուխտավորների, որոնց թվում էր նաեւ «Թեքեյան» մշակութային կենտրոնի «Սարդարապատ» շաբաթաթերթի խմբագրակազմի անդամներին՝ ուղեկցությամբ Բուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Մաղաքիա վրդ. Ամիրյանի։*

Նույն օրն *ընդունել է նաեւ ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմի ուխտավորների՝ ուղեկցությամբ Օքլենդ քաղաքի (Կալիֆոռնիա) Ս. Վարդան եկեղեցու հոգեւոր հովիվ Հովել քհն. Օհանյանի։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Ռամկավար ազատական կուսակցության Կենտրոնական վարչության եւ Գերագույն խորհրդի ղեկավար կազմին։*

Մայիսի 28-ին *ընդունել է ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունցին։*

Մայիսի 29-ին *հյուրընկալել է Հայ Եկեղեցու հայաստանյան թեմերի կիրակնօրյա դպրոցների սաներին՝ առաջնորդությամբ Մայր Աթոռի ՔԴԿ կենտրոնի տնօրեն Վարդան եպս. Նավասարդյանի։*

Հունիսի 6-ին *ընդունել է Մայր Աթոռի տարբեր կառույցների եւ թեմերի՝ քահանայական ձեռնադրության պատրաստվող թվով 13 սարկավագի՝ ուղեկցությամբ իրենց կանանց։*

Հունիսի 7-ին *ընդունել է 2018 թ. «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության մրցանակի հավակնորդներին՝ Զո Լա Աունին (Մյանմա), Սունիտա Քրիշնանին (Հնդկաստան) եւ Հեկտոր Թոմաս Գոնսալես Կաստիլյոյին (Մեքսիկա)՝ ուղեկցությամբ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիրներից մեկի՝ Նուբար Աֆեյանի եւ Հարութ Շիթիլյանի։*

Հունիսի 11-ին *ընդունել է Ֆրանսիայի Շաղվիո Շավանիոյի քաղաքապետ Ժերարդ Դեզամպի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի։*

Հունիսի 12-ին *ընդունել է ՀՀ Արմավիրի մարզպետ Գագիկ Միրիջանյանին՝ ուղեկցությամբ Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն եպիսկոպոս Ադամյանի։*

Հունիսի 13-ին *հյուրընկալել է «Ֆուլլեր տնաշինական կենտրոն» բարեգործական կազմակերպության միջազգային կամավորներին՝ ուղեկցությամբ կազմակերպության ատենապետ Դեյվիդ Մնելի եւ խմբի ղեկավար Լեո Մանուելյանի։*

Նույն օրն *ընդունել է նաեւ ՀՀ-ում Լեհաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Պավել Զեպլակին։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանին։*

Հունիսի 14-ին *հյուրընկալել է Անտիոքի Հույն Ուղղափառ Եկեղեցու՝ Զահլեի եւ Բաալբեքի միտրոպոլիտ Անտոնիոս Էլ Սոուրիին՝ ուղեկցությամբ բարերար Նիկոլա Աբու Ֆեյսալի։*

Հունիսի 15-ին *հյուրընկալել է ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանին։*

Հունիսի 17-ին *հյուրընկալել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան եւ արեւմտյան թեմերից ժամանած ուխտավորների՝ ուղեկցությամբ «Արարատ» տան վարիչ-տնօրեն Դերիկ Ղուկասյանի եւ Ժակլին Էլ Շամմասի, ինչպես նաեւ՝ Միչիգանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ծխական խորհրդի անդամների։*

Հունիսի 16-ին *այցելել է «Իզմիրլյան» բժշկական կենտրոն, որտեղ հանդիպել է արցախյան ազատամարտի, ապրիլյան քառօրյայի եւ զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ստացած 15 զինվորականների հետ։*

Հունիսի 19-ին *ընդունել է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Սրբոց Թարգմանչաց վարժարանի ուսուցիչներին՝ առաջնորդությամբ Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ, վարժարանի տեսուչ Նորայր վարդապետ Գազազյանի։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներին՝ գլխավորությամբ Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր, Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ Ժակ Մարիլոսյանի։*

Նույն օրը *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում հանդիպում է ունեցել Բջնիից Մայր Աթոռ ժամանած ուխտավոր դպրոցականների հետ։*

Հունիսի 22-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում ընդունել է Արարատյան հայրապետական թեմի Մասիս քաղաքի Ս. Գեւորգ եկեղեցու համայնքի անդամներին եւ ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի ՀՕՄ-ի երեխաների աջակցության կենտրոնի սաներին՝ առաջնորդությամբ եկեղեցու հոգեւոր հովիվ Աշոտ քհն. Սաֆարյանի։*

Հունիսի 23-ին *ընդունել է ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմի Սանտա-Կլարիտայի Ս. Սարգիս եկեղեցու ուխտավորներին՝ առաջնորդությամբ եկեղեցու հոգեւոր հովիվ Սերովբե քհն. Ալանջյանի։*

Հունիսի 26-ին *հանդիպել է Վիրահայոց թեմի Ախալցխայի ուխտավորների հետ։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Ավստրալիայի Եկեղեցիների հոգեւոր առաջնորդների էկումենիկ պատվիրակության անդամներին՝ գլխավորությամբ պատվիրակության նախագահ, Սիդնեյի Բյուզանդական Կաթողիկե եկեղեցու առաջնորդ, արք. Ռոբերտ Ռաբաթի եւ ուղեկցությամբ Հնդկաստանի եւ Ծայրագույն Արեւելքի հայրապետական պատվիրակ, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս. Նաջարյանի։*

Հունիսի 28-ին *ընդունել է Էջմիածնի քաղաքապետի պաշտոնակատար Դիանա Գասպարյանին։*

Հուլիսի 7-ին *Մայր Աթոռի միաբանների ուղեկցությամբ այցելել է հայ-ադրբեջանական միջպետական սահմանի նախիջեւանյան հատվածի տարբեր մարտական դիրքեր։*

Հուլիսի 9-ին *ընդունել է ԱՄՆ-ի հրեական կոմիտեի միջկրոնական գործերի բաժնի տնօրեն, Իսրայելի գլխավոր ռաբբինատի խորհրդական ռաբբի Դեյվիդ Շլոմո Ռոզենին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի միաբան խաժակ արք. Պարսամյանի եւ ԱՄՆ-ի հայկական միության նախագահ էնթոնի Պարսամյանի։*

Հուլիսի 11-ին *ընդունել է պապական նվիրակ եւ Աեոմոնայի տիտղոսակիր արքեպիսկոպոս Խոսե Ավելինո Բետանկուռին։*

Հուլիսի 12-ին *ընդունել է ՀՀ-ում ՌԴ նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիռկինին։*

Նույն օրն *ընդունել է Բրազիլիայի հայոց թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ թեմի առաջնորդ Նարեկ եպս. Բերբերյանի։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Արաբկիրի նորակառույց եկեղեցու համայնքի ուխտավորներին, որոնք Մայր Աթոռ էին այցելել առաջնորդությամբ եկեղեցու հոգեւոր հովիվ Բաբկեն քհն. Հայրապետյանի։*

Հուլիսի 15-ին *ընդունել է Եգիպտոսի հայոց թեմի հայկական ազգային վարժարանի սաներին, որոնք Հայաստան էին ժամանել Թումոյի ամառային ճամբարին մասնակցելու համար։*

Հուլիսի 17-ին *ընդունել է Երեւանի թիվ 135 դպրոցի մի խումբ աշակերտների՝ առաջնորդությամբ Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիվ Նորայր ավ. քհն. Բաղդասարյանի։*

Հուլիսի 22-ին *ընդունել է ԳԴՀ Բունդեսթագի պատգամավոր դոկտոր Քրիստոֆ Փլոսին՝ ուղեկցությամբ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչների։*

Նույն օրը *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում ընդունել է նաեւ աշխարհի 15 երկրներից Հայաստան ժամանած սփյուռքահայ 62 ուսուցիչների, որոնք Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմի նախաձեռնությամբ Հայաստանում մասնակցում էին վերապատրաստման մեկամսյա դասընթացներին։*

Հուլիսի 22-ին *հայրապետական այցով մեկնել է Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)։*

Հուլիսի 27-ին *ընդունել է տարբեր ժամանակահատվածներում ռազմական գործողությունների հետեւանքով հաշմանդամություն ստացած 5 զինվորականների՝ կապիտան Միքայել Սարգսյանին, կապիտան Գնել*

Համբարձումյանին, զորացրված ժամկետային զինծառայողներ Նարեկ Մարուքյանին, Կարեն Համբարձումյանին եւ Գրիգոր Հովհաննիսյանին։

Հուլիսի 29-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում ընդունել է Արգենտինայի հայոց թեմի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» կրթարանի, «Դերձակյան», եւ ՀԲԸՄ-ի «Մարի Մանուկյան» վարժարանների աշակերտներին եւ նրանց ծնողներին, որոնք Հայաստան էին եկել Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից 2018 թվականը Երիտասարդության տարի հռչակելու կապակցությամբ։*

Նույն օրը *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում ընդունել է Փարիզի առաջնորդանիստ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ուխտավորներին, Իսի-լե-Մուլինո քաղաքի հայկական Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու հովանու ներքո գործող «Արարատ» պարային խմբին եւ համայնքի վարչության անդամներին՝ ուղեկցությամբ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս. Հովհաննիսյանի եւ թեմում սպասավորող հոգեւորականների։*

Նույն օրն *ընդունել է նաեւ ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի Բոսթոնի շրջանի Հայփոյնթ համայնքի ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգեւոր հովիվ Վարդ քհն. Գյոզալյանի եւ ուղեկցությամբ նույն տարածաշրջանի կաթոլիկ եկեղեցու հոգեւոր հովիվ հայր Ջոն Դիլեյնիի։*

Հուլիսի 30-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում ընդունել է Ֆրանսիայի Մարսել քաղաքի «Ֆրանսիայի հայ երիտասարդություն» ընկերակցության ներկայացուցիչներին՝ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս. Հովհաննիսյանի եւ ընկերակցության ղեկավար պարոն Պասկալ Շամասյանի ուղեկցությամբ։*

Հուլիսի 31-ին *ընդունել է Իտալիայի Հանրապետության նախագահ Սերջիո Մատարելլային։*

Նույն օրն *ընդունել է նաեւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Մանե Թանդիլյանին։*

Օգոստոսի 19-ին *ընդունել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի Նյու Յորքի Սրբոց Նահատակաց եկեղեցու շուրջ 30 ուխտավորի՝ առաջնորդությամբ եկեղեցու հոգեւոր հովիվ Աբրահամ քհն. Մալխասյանի։*

Օգոստոսի 24-ին *ընդունել է Վիրահայոց թեմի Ախալցխեի հոգեւոր տեսչության հովանու ներքո գործող «Ախալցխա» պարային համույթի սաներին՝ առաջնորդությամբ Հակոբ աբդ. Սահակյանի։*

Օգոստոսի 25-ին *հանդիպում է ունեցել ԳԴՀ-ի կանցլեր Անգելա Մերկելի հետ։*

Նույն օրն *ընդունել է նաեւ ԳԴՀ-ի Բունդեսթագի պատգամավոր, հայ-գերմանական ֆորումի նախագահ Ալբերտ Վայներին։*

Օգոստոսի 27-ին *ընդունել է ՀՀ ԶՈՒ հինգ զինծառայողների, որոնց վերջույթների պրոթեզավորումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու վարչության աջակցությամբ կազմակերպվել էր Հնդկաստանում։*

Օգոստոսի 30-ին *ընդունել է ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արայիկ Հարությունյանին։*

Սեպտեմբերի 2-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում ընդունել է Լիբանանի «Ս. Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբման» 75 անդամներ, որոնք Մայր Աթոռ էին ժամանել Լիբանանից, ԱՄՆ-ից եւ Կանադայից։*

Սեպտեմբերի 6-ին *ընդունել է Ռումինիայի հայոց թեմի Կոստանցա քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգեւոր հովիվ Օշական քհն. Խաչատրյանի։*

Սեպտեմբերի 8-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում ընդունել է Շիրակի թեմի Գյումրու Ս. Հակոբ եկեղեցու ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգեւոր հովիվ Վարուժան քհն. Տերտերյանի։*

Սեպտեմբերի 9-ին *հանդիպել է Գերմանիայի Բողոքական Եկեղեցիների խորհրդի նախագահ Նորին Սրբազնություն Հայնրիխ եպիսկոպոս Բեդֆորդ-Շտրոմի հետ։*

Սեպտեմբերի 10-ին *ընդունել է ՀԲԸՄ-ի նախագահ տիար Պերճ Սեդրակյանին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ-ի Հայաստանի նախագահ տիար Վազգեն Յակուբյանի։*

Սեպտեմբերի 12-ին *ընդունել է Ֆրանսիայի Հանրապետության Սենատի՝ Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներ պարոն Ժիլբեր-Լյուկ Դընվինազին, պարոն Պիեռ Ուզուլիասին եւ խմբի գործադիր քարտուղար տիկին Վերոնիկ Բոկեին։*

Սեպտեմբերի 15-ին *հանդիպում է ունեցել Վրաստանում հավատարմագրված տասնհինգ երկրների արտակարգ եւ լիազոր դեսպանների հետ, որոնք համայն հայության հոգեւոր կենտրոն էին ժամանել՝ ուղեկցությամբ Վրաստանում ՀՀ-ի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի։*

Սեպտեմբերի 16-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում ընդունել է «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության Միջին Արեւելքի եւ Արեւելյան Եւրոպայի տարածաշրջանային ֆորումի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի ներեկեղեցական հարաբերու-*

թյունների գրասենյակի տնօրեն, «Վորլդ Վիժն» Հայաստանի Խորհրդատվության խորհրդի անդամ Պարույր քհն. Ավետիսյանի եւ ԵՀԽ հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն, «Վորլդ Վիժն» Հայաստանի Խորհրդատվության խորհրդի ատենապետ Կարեն Նազարյանի։

Սեպտեմբերի 19-ին *ընդունել է Գերմանիայի հայ գործարարների միության անդամներին՝ գլխավորությամբ միության նախագահ Մուրադ Աքյուզի եւ ուղեկցությամբ Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ եւ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան եպս. Ժամկոչյանի եւ Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Սերովբե վրդ. Իսախանյանի։*

Սեպտեմբերի 20-ին *ընդունել է ԱՄՆ-ի Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի ռեկտոր, կենսաբան, ակադեմիկոս Ջին Բլոքին՝ ուղեկցությամբ համալսարանի Դեյվիդ Գեֆենի անվան բժշկական քոլեջի համաղեկավար դոկտոր Էրիկ Էսրահլյանի։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության պատվիրակությանը՝ գլխավորությամբ ընկերակցության գործադիր տնօրեն Զավեն Խանջյանի։*

Հոկտեմբերի 10-ին *ընդունել է հայրենիքի պաշտպանության համար ռազմական գործողությունների հետեւանքով հաշմանդամություն ստացած երեք զինվորականներին՝ ուղեկցությամբ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս. Աբրահամյանի։*

Հոկտեմբերի 13-ին *ընդունել է Կանադայի վարչապետ Ջասթին Տրյուդոյին՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի։*

Հոկտեմբերի 17-ին *ընդունել է Եւրամիության արտաքին գործողությունների ծառայության Եւրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տնօրինության գործադիր ղեկավար, դեսպան Թոմաս Մայր-Հարթինգին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկու։*

Հոկտեմբերի 19-ին *ընդունել է ՀՀ-ում Կորեայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան ՈՒ Յուն-Գընին։*

Հոկտեմբերի 24-ին *Վատիկանում հանդիպել է Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հետ։*

Հոկտեմբերի 31-ին *ընդունել է ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ջուն Յամադային։*

Նոյեմբերի 3-ին *ընդունել է Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության պատվիրակությանը՝ գլխավորությամբ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի։*

Նոյեմբերի 4-ին *ընդունել է Արմավիրի նորանշանակ մարզպետ Համբարձում Մաթեւոսյանին՝ ուղեկցությամբ Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն եպս. Ադամյանի։*

Նույն օրն *ընդունել է ուրուգվայահայ ուխտավորներին։*

Նոյեմբերի 6-ին *ընդունել է ՀՀ-ում Շվեդիայի Թագավորության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ուլրիկ Թիդեստրոմին։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմին եւ ուսանողներին՝ գլխավորությամբ ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի։*

Նոյեմբերի 10-ին *ընդունել է «Եղիցի լույս» մրցանակին արժանացած կինոգետ, արվեստաբան, ՀԽՍՀ արտիստ Արմեն Մեդվեդեւին՝ գլխավորությամբ ՀՀ ժողովրդական արտիստ, «Ոսկե ծիրան» Երեւանի միջազգային կինոփառատոնի հիմնադիր Հարություն Խաչատրյանի։*

Նոյեմբերի 12-ին *ընդունել է ՀԲԸՄ նախագահ տիար Պերճ Սեդրակյանին։*

Նոյեմբերի 14-ին *ընդունել է ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանին։*

Նոյեմբերի 26-ին *ընդունել է հոկտեմբերի 7-ին ձեռնադրված նորաօծ յոթ քահանաներին։*

Նոյեմբերի 29-ին *ընդունել է ՏՏ ոլորտում 2018 թ. ՀՀ-ի պետական մրցանակին արժանացած «Նեյշնլ ինսթրումենթս» ընկերության համահիմնադիր դոկտոր Ջեյմս Թրուշարդին։*

Դեկտեմբերի 6-ին *ընդունել է հայրենիքի պաշտպանության համար ռազմական գործողությունների ժամանակ հաշմանդամություն ստացած երեք զինվորականներին, որոնք ավարտել էին բուժումը Հնդկաստանում։*

Նույն օրն *ընդունել է նաեւ Մայր Աթոռի միաբաններ Անդրանիկ վրդ. Գեւորգյանին եւ հնդկահայոց հոգեւոր հովիվ, Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Մովսես վրդ. Սարգսյանին։*

Դեկտեմբերի 14-ին *հանդիպում է ունեցել ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի հետ։*

Դեկտեմբերի 16-ին *ընդունել է «Լուսավոր Հայաստան» կուսակցության խորհրդարանական խմբակցության անդամներին։*

Դեկտեմբերի 18-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում հանդիպել է վերապատրաստման դասընթացներին մասնակցող Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի տարբեր թեմերից ժամանած 16 եկեղեցականների հետ։*

Դեկտեմբերի 22-ին *ընդունել է Եւրամիության մանկավարժական բուհերի ասոցիացիայի նախագահ, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, Ռուսաստանի կրթության ակադեմիայի թղթակից անդամ պրոֆեսոր Ալեքսեյ Լուբկովի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պ. գ. դ. պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի։*

2019

Հունվարի 10-ին *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում Ամանորի եւ Ս. Ծննդյան տոների առիթով հանդիպում է ունեցել Մայր Աթոռի տարբեր կառույցներում պաշտոնավարող աշխարհական աշխատակիցների հետ։*

Հունվարի 17-ին *ընդունել է ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական համակարգող Շոմբի Շարփին՝ ուղեկցությամբ ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների եւ ծրագրերի պատասխանատուների։*

Հունվարի 25-ին *ընդունել է ՀՀ Ազգային ժողովի նորընտիր նախագահ Արարատ Միրզոյանին։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ-ում Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Կարլոս Զգերբի ֆոն Շտայնմանին։*

Նույն օրը *շնորհավորական ուղերձ է հղել կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ, Հայ Եկեղեցու շքանշանակիր Տիգրան Մանսուրյանին՝ ծննդյան 80-ամյակի առիթով։*

Հունվարի 30-ին *հովվապետական այցով մեկնել է Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմ։*

Փետրվարի 2-ին *Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս. Նաջարյանի ուղեկցությամբ այցելել է Սիդնեյ քաղաքի Ս. Երրորդություն հայկական եկեղեցի։*

Փետրվարի 3-ին *Պատարագ է մատուցել Սիդնեյ քաղաքի Ս. Հարութիւն առաջնորդանիստ եկեղեցում։*

Նույն օրը *հանդիսապետել է Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի նորակառույց առաջնորդարանի բացման արարողությունը։*

Փետրվարի 4-ին *հյուրընկալվել է Ավստրալիայի Նյու Սաութ Վելսի նահանգային խորհրդարանում։*

Նույն օրն *այցելել է Սիդնեյի Ս. Աստվածածին կաթոլիկ Մայր տաճար։*

Փետրվարի 5-ին *այցելել է Համազգային «Արշակ եւ Սոֆի Գոլսդն» ճեմարան։*

Փետրվարի 5-ին եւ 6-ին *Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդարանում ընդունել է հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներին։*

Փետրվարի 6-ին *այցելել է ՀԲԸՄ-ի «Ալեքսանդր» վարժարան։*

Փետրվարի 8-ին, *Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս. Նաջարյանի եւ իր շքախմբի ուղեկցությամբ, Սիդնեյից մեկնել է Ավստրալիայի հայաշատ երկրորդ քաղաքը՝ Մելբուռն։*

Փետրվարի 10-ին *Ս. Պատարագ է մատուցել Նոր Զելանդիայի հայոց թեմի Մելբուռն քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում։*

Փետրվարի 20-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում հանդիպել է հերթական վերապատրաստման դասընթացներին մասնակցող 17 եկեղեցականների հետ։*

Փետրվարի 24-ին *ընդունել է ճանաչողական այցով Հայաստան այցելած Կանադայի ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Գիյ վրդ. Զափտլեյնիին։*

Մարտի 4-ին *ընդունել է Շիրակի նորանշանակ մարզպետ պրն. Տիգրան Պետրոսյանին՝ ուղեկցությամբ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արք. Աջապահյանի։*

Մարտի 6-ին *ընդունել է Միացյալ աստվածաշնչային ընկերությունների թարգմանական ծրագրերի տնօրեն Մարինա Լոմովային եւ Հայաստանի աստվածաշնչային ընկերության թարգմանական ծրագրերի համակարգող Մարիկա դե Լանգին՝ ուղեկցությամբ Հայաստանի աստվածաշնչյան ընկերության գլխավոր քարտուղար Եղնիկ արք. Պետրոսյանի։*

Մարտի 7-ին *ընդունել է Հայաստան ժամանած ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի առաջնորդ Դանիել վրդ. Ֆընտըգյանին։*

Մարտի 8-ին *հյուրընկալել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողներին՝ գլխավորությամբ ՀՀ ոստիկանության կրթահամալի-*

րի պետ գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի եւ քոլեջի պետ գնդապետ Վարդգես Ներսիսյանի։

Մարտի 12-ից 14-ը *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ընդլայնված ժողովը։*

Մարտի 16-ին *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելել է Գյումրի։*

Մարտի 18-ին *ընդունել է ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրություններ-ի արտակարգ եւ լիազոր դեսպան Մուհամմադ Ալ Զաաբիին։*

Նույն օրն *ընդունել է Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Մովսես արք. Մովսիսյանի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին թեմի հոգեւոր սպասավորներ, թեմական խորհրդի անդամներ, բարերարներ եւ տարբեր համայնքների ներկայացուցիչներ։*

Մարտի 19-ին *ընդունել է Տավուշի նորանշանակ մարզպետ տիար Հայկ Զոբանյանին՝ ուղեկցությամբ Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս. Գալստանյանի։*

Մարտի 20-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում հանդիպում է ունեցել եկեղեցականների վերապատրաստման հերթական դասընթացների քսան մասնակիցների հետ։*

Մարտի 24-ին *ընդունել է Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանին՝ ՀԲԸՄ-ի Կենտրոնական վարչական ժողովի անդամ, ՀԲԸՄ-ի Հայաստանի նախագահ տիար Վազգեն Յակուբյանի ուղեկցությամբ։*

Ապրիլի 2-ին *Մոսկվայի Ս. Դանիել պատրիարքանիստ վանքում հանդիպում է ունեցել Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի հետ։*

Ապրիլի 5-ին *ընդունել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանի եւ երկրորդ սենատի նախագահ Անդրեաս Ֆոսկուլեին եւ նրա գլխավորած պատվիրակությանը։*

Ապրիլի 7-ին *հանդիսապետել է Ստեփանակերտի Ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցու օծման արարողությունը։*

Ապրիլի 8-ին *Ս. Աստվածածնի Ավետման տոնի առիթով հանդիպում է ունեցել Մայր Աթոռի կառույցներում պաշտոնավարող աշխատակցուհիների հետ։*

Ապրիլի 9-ին *ընդունել է ՀՀ-ում ԱՄՆ-ի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան տիկին Լին Թրեյսիին։*

Ապրիլի 17-ին *ընդունել է Հայկական բարեգործական ընդհանուր միության Բուենոս Այրեսի (Արգենտինա) մասնաճյուղի տիկնանց հանձնախմբի անդամներին։*

Նույն օրն *ընդունել է ԱՄՆ-ի Կոնգրեսի պատվիրակությանը։*

Ապրիլի 22-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում ընդունել է Մարսելի համազգային դպրոցի եւ Փարիզի դպրոցասեր միության վարժարանի շուրջ 40 աշակերտների՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի բարերար տիար Սարգիս Պետոյանի։*

Ապրիլի 24-ին *ընդունել է Շվեդիայի Սոդերթելիե քաղաքի քաղաքապետ տիկին Բուել Գոդներին։*

Ապրիլի 25-ին, *Վատիկանի Պետքարտուղար կարդինալ Պիետրո Պարոլինի հրավերով, մեկնել է Ֆլորենցիա (Իտալիա)՝ մասնակցելու «Կրոնների փառատոն» արարողությանը։*

Մայիսի 3-ին *ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ նախագահել է ՀՀ եւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հարաբերություններին առնչվող հարցերով աշխատանքային խմբի առաջին հանդիպումը։*

Մայիսի 4-ին *հովվապետական այցով ժամանել է Կրետե (Հունաստան)՝ հանդիսապետելու Հերակլիոնի Ս. Հովհաննու Կարապետի հայկական եկեղեցու 350-ամյակին նվիրված միջոցառումները։*

Մայիսի 12-ին *ընդունել է Գերմանիայի Կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի պատվիրակության անդամներին՝ առաջնորդությամբ Եպիսկոպոսական ժողովի միջեկեղեցական հանձնաժողովի նախագահ եւ Մագդեբուրգի առաջնորդ Ֆայգե եպիսկոպոսի։*

Նույն օրը *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում հանդիպում է ունեցել Գերմանիայի հայոց թեմի քառասունհինգ ուխտավորների հետ, որոնք Ս. Էջմիածին էին ժամանել իրենց առաջնորդի եպիսկոպոսական ձեռնադրության եւ օծման առիթով։*

Նույն օրն *ընդունել է Կենտրոնական Եւրոպայի եւ Շվեդիայի հայրապետական պատվիրակ Տիրան եպս. Պետրոսյանի եպիսկոպոսական ձեռնադրության եւ օծման առիթով Ավստրիայից Հայաստան ժամանած պատվիրակությանը։*

Նույն օրը՝ *Ս. Տրդատի բաց խորանում մատուցված Պատարագի ընթացքում, եպիսկոպոսության աստիճանի է արժանացրել Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Սերովբե վրդ. Իսախանյանին։*

Մայիսի 14-ին *ընդունել է Շվեյցարիայի Կարմիր խաչի ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ Հայաստանում շվեյցարական «Կարմիր խաչի» ներկայացուցիչ Ջինա Սարգիզովայի։*

Նույն օրն *ընդունել է Հաղթանակի զորավարների հիշատակի հիմնադրամի ներկայացուցիչներին եւ Երկրորդ աշխարհամարտի հրամանատարների ժառանգներին։*

Մայիսի 15-ին *ընդունել է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ տիար Աշոտ Ղուլյանի գլխավորած պատվիրակությանը։*

Մայիսի 16-ին *հյուրընկալել է Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Էօռնեկեան» հանրակրթական դպրոցի 10-րդ եւ 11-րդ դասարանների չորս աշակերտների՝ ուղեկցությամբ դպրոցի տեսուչ, Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանի եւ դպրոցի տնօրեն տիկին Սուսաննա Վարդանյանի։*

Մայիսի 17-ին *հյուրընկալել է «Եկեղեցիների համատեղ գործողություն» դաշինքի (*ACT Alliance*) գլխավոր քարտուղար Ռուդելմար Բուենո դե Ֆարիային։*

Մայիսի 19-ին, *Շարժայի պետական տեղեկատվական խորհրդի ընդհանուր նախագահ Շեյխ Սուլթան բին Ահմեդ Ալ Քասիմիի հրավերով, մեկնել է Շարժա՝ մասնակցելու 2019 թվականն իբրեւ ԱՄԷ-ում Հանդուրժողականության տարի հռչակման առիթով կազմակերպված խորհրդի կրոնական նիստին։*

Մայիսի 27-ին *նախագահել է քահանայից հերթական ժողովը։*

Մայիսի 29-ին *ընդունել է Ֆրանսիայի Բուշ-դյու-Ռոն նահանգային խորհրդի նախագահ տիկին Մարտինժիլ Վասալի գլխավորած պատվիրակությանը։*

Հունիսի 2-ին *հյուրընկալել է Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանին։*

Հունիսի 8-ին *հանդիպում է ունեցել Համայն Բելառուսի Պատրիարքական էկզարխ, Մինսկի եւ Զասլավի միտրոպոլիտ Նորին Սրբազնություն Պավելի հետ։*

Հունիսի 9-ին *ընդունել է Ֆրեզնոյի պետական համալսարանի (ԱՄՆ) հայագիտության ամբիոնի 1–4 կուրսերի մի խումբ ուսանողների՝ ուղեկցությամբ ամբիոնի վարիչ դոկտոր Բարլոու սրկ. Տեր-Մկրտչյանի։*

Հունիսի 13-ին *ընդունել է Վիրահայոց թեմի ուխտավորներին։*

Հունիսի 14-ին *հանդիպել է Արմավիրի թեմի կիրակնօրյա դպրոցների շուրջ 240 սաների հետ՝ առաջնորդ Սիոն արք. Ադամյանի ուղեկցությամբ։*

Հունիսի 16-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում հանդիպում է ունեցել ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի Մինեսոտա նահանգի 36 ուխտավորների հետ։*

Հունիսի 17-ին *ընդունել է Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմից ժամանած ուխտավորներին։*

Նույն օրը *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում հանդիպում է ունեցել հունիսի 18–22-ը Մայր Աթոռում անցկացվելիք միաբանական համագումարի առիթով ժամանած միաբանների հետ։*

Հունիսի 18-ին *ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մաթիաս Քիսլերին։*

Հունիսի 19–20-ը *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը։*

Հունիսի 21-ին *ընդունել է Իրաքի Քուրդիստանի ինքնավար մարզի նախկին փոխվարչապետ եւ ֆինանսների նախարար Սարգիս Աղաջանին՝ ուղեկցությամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ավագ արք. Ասատուրյանի։*

Հունիսի 24-ին *«Քրիստոնյա ընտանիք՝ պաշտպանված հայրենիք» խորագրով հոգեւոր, ազգային-մշակութային միջոցառումների շրջանակներում ընդունել է ՀՀ ԶՈՒ 5-րդ բանակային կորպուսի զորամիավորումների եւ Արմավիրի կայազորի սպաներին՝ իրենց ընտանիքներով։*

Հունիսի 25-ին *ընդունել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուխտավորաբար եկած* N *զորամիավորման սպաներին եւ նրանց ընտանիքներին։*

Հունիսի 27-ին *հյուրընկալել է Արաբական Միացյալ Էմիրություններ Շարժայի գործադիր խորհրդի անդամ շեյխ Ֆահիմ բին Սուլթան բին Խալիդ Ալ Քասիմիի եւ Շարժայի կառավարական հարաբերությունների հարցերով վարչության պետ շեյխ Մաջիբ բին Աբդուլլահ Ալ Քասիմիի գլխավորած պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ-ում Հնդկաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Սանգվան Յոգեշվարին։*

Հունիսի 30-ին *ընդունել է ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքից ուխտավորաբար հայրենիք ժամանած հայորդիներին։*

Հուլիսի 2-ին *ընդունել է Մահաթմա Գանդիի հիշատակին նվիրված «Շարժվելով դեպի ազատություն եւ խաղաղություն» քայլերթի կազմակերպիչներ Փութան Վեեթիլ Ռաջագոփալանին, Աշոկ Սաջանհարին եւ Ջիկ Քար-Հարրիսին։*

Նույն օրը *հյուրընկալել է Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վիկտոր Սադովնիչիի գլխավորած պատվիրակությանը։*

Հուլիսի 5-ին *ընդունել է Հայաստանի 5-րդ միջազգային բժշկական համագումարի մի խումբ մասնակիցների։*

Հուլիսի 7-ին *ընդունել է Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում քահանայական ձեռնադրության ու օծման արժանացած տասներկու նորընծաներին։*

Հուլիսի 9-ին *ընդունել է ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի ուխտավորներին։*

Նույն օրը *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում հանդիպում է ունեցել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) ուսանողական խորհրդի անդամների եւ միջբուհական «հաղթանակած» երիտասարդական նախաձեռնության ներկայացուցիչների հետ։*

Նույն օրը *նախագահել է «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով իր կողմից սահմանված «Եղիցի լույս» մրցանակի հանձնման հանդիսավոր արարողությունը։*

Հուլիսի 11-ին *ընդունել է ՀՀ-ում Իսրայելի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Էլիավ Բելոցերկովսկուն։*

Հուլիսի 14-ին *ընդունել է Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կազմակերպած «Երաժշտական Հայաստան» եւ «Երեւանի ամառային փորձառություն» ծրագրերի շրջանակներում տարբեր երկրներից Հայաստան ժամանած մի խումբ հայ երիտասարդների։*

Հուլիսի 19-ին *ընդունել է ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանին։*

Հուլիսի 21-ին *հյուրընկալել է աշխարհի 15 երկրից Հայաստան ժամանած սփյուռքահայ 40 ուսուցչի՝ ուղեկցությամբ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի։*

Հուլիսի 22-ին *ընդունել է տարբեր ժամանակահատվածներում հայրենիքի պաշտպանության համար ռազմական գործողությունների հետեւանքով հաշմանդամություն ստացած վեց զինվորականների։*

Նույն օրը *հյուրընկալել է Ավստրալիայի Նյու Սաութ Ուելս նահանգի վարչապետ տիկ. Գլեդիս Բերեջիկլյանին։*

Հուլիսի 23-ին *ընդունել է Ախալցխայի եւ Սամցխե-Ջավախքի ուխտավորներին։*

Հուլիսի 26-ին *ընդունել է ՀՀ-ում Չեխիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Բեդրիխ Կոպեցկուն։*

Օգոստոսի 25-ին *«Գարեգին Ա.» կրթական կենտրոնում հյուրընկալել է Լիբանանի էջմիածնասեր տիկնանց միության շուրջ 40 անդամների։*

Նույն օրը *ընդունել է Լիբանանի Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության «Սարգիս Տիրունի» ուսանողական երիտասարդական միության 35 անդամների։*

Օգոստոսի 27-ին *ընդունել է պաշտոնական այցով Հայաստան ժամանած Շվեդիայի Թագավորության խորհրդարանի նախագահ Անդրեաս Նորլենի գլխավորած պատվիրակությանը։*

Նույն օրը *հյուրընկալել է Մայր Աթոռի հովանու ներքո անցկացվող «Ֆրեսկո» արդի արվեստի եւ հոգեւոր ֆիլմերի միջազգային փառատոնի հյուրերին, կազմակերպիչներին եւ կամավորներին։*

Օգոստոսի 28-ին *ընդունել է ՀՀ-ում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադիին։*

Օգոստոսի 29-ին *ընդունել է ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի եւ օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարների ամենամյա համաժողովի մասնակիցներին՝ առաջնորդությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի։*

Սեպտեմբերի 12-ին *ընդունել է Լիբանանից ժամանած պատվիրակությանը՝ գլխավորությամբ Զահլեի Անտիոքի միտրոպոլիտ Անտոնիոս էլ Սուրիի եւ «Գարդենիա լեբնիզ ֆարմս» ընկերության հիմնադիր տնօրեն Նիկոլաս Աբու Ֆայսալի։*

Սեպտեմբերի 13-ին *ընդունել է Ֆրանսիայի հայոց թեմի ուխտավորներին՝ առաջնորդությամբ թեմի առաջնորդ Վահան եպս. Հովհաննիսյանի։*

Նույն օրը *հյուրընկալել է հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ժառանգներին։*

Սեպտեմբերի 15-ին *հանդիպում է ունեցել իր հրավերով Հայաստան ժամանած Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախկին նախագահ Յոախիմ Գաուկի հետ։*

Սեպտեմբերի 20-ին *ընդունել է Լիբանանի Հանրապետության ազգային պաշտպանության նախարար Էլիաս Բու Սաաբի գլխավորած պատվիրակությանը։*

Սեպտեմբերի 25-ին *«Կրոնները հանուն խաղաղության» միջազգային միության ընտրյալ ընդհանուր քարտուղար պրոֆ. Ազզա Քարամից եւ գործող ընդհանուր քարտուղար հայր Կյոիշի Սուգինոից պաշտոնական գրություն է ստացել առ այն, որ օգոստոսի 20–23-ը Գերմանիայի Լինդաու քաղաքում տեղի ունեցած «Կրոնները հանուն խաղաղության» 10-րդ համաշխարհային համաժողովի ընթացքում առաջադրվել եւ աշխարհի 125 երկրներ եւ տարբեր կրոնական համայնքներ ներկայացնող 700 պատվիրակների կողմից ընտրվել է միության պատվավոր նախագահ։*

Սեպտեմբերի 26-ին *ընդունել է Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Աշոտ եպս. Մնացականյանին եւ Կահիրեի թեմական ժողովի անդամներին։*

Նույն օրն *ընդունել է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդի տնօրենների եւ հոգաբարձուների խորհրդի անդամներին։*

Հոկտեմբերի 4-ին *ընդունել է Լիտվայի Հանրապետության խորհրդարանի՝ Սեյմասի խոսնակ Վիկտորաս Պրանցկետիսի գլխավորած պատվիրակությանը։*

Նույն օրն *ընդունել է Բեռլինից (Գերմանիա) ժամանած մի խումբ ուխտավորների՝ գլխավորությամբ վերապատվելի Անդրեաս Գյութսեի եւ պրոֆեսոր Պաուլ Իմհոֆի։*

Հոկտեմբերի 7-ին *ընդունել է ՀՀ-ում Իրաքի Հանրապետության ժամանակավոր հավատարմատար էզզադդին Ռաշիդ Հաջիին։*

Հոկտեմբերի 9-ին *ընդունել է հոկտեմբերի 10–14-ը Արցախում կայանալիք «Համագործակցություն հանուն արդարության եւ խաղաղության» համաժողովի մասնակից Իրաքի պատվիրակության անդամներին։*

Հոկտեմբերի 10-ին *ընդունել է «Եկեղեցին եւ ընտանիքը 21-րդ դարում. արժեքներ եւ մարտահրավերներ» խորագրով միջազգային համաժողովի մասնակիցներին։*

Հոկտեմբերի 11-ին *ընդունել է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի պաշտոնեությանը՝ ուղեկցությամբ Պորտուգալիայում հիմնադրված Պորտուգալիա–Հայաստան բարեկամության միության նախագահ Վահե Մխիթարյանի։*

Հոկտեմբերի 12-ին *մեկնել է Ժնեւ։*

Հոկտեմբերի 13-ին *Ս. Պատարագ է մատուցել Ժնեւի Ս. Հակոբ հայկական եկեղեցում։*

Հոկտեմբերի 15-ին *ընդունել է պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի վարչապետ Գեորգի Գախարիային՝ ուղեկցությամբ Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի;*

Հոկտեմբերի 17-ին *հյուրընկալել է Ճապոնիայի վարչապետի հատուկ հարցերով խորհրդական Էիիչի Հասեգավային՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ջուն Յամադայի։*

Նույն օրն *ընդունել է Շվեյցարիայի աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Էվա Թոմիի գլխավորած պատվիրակությանը։*

Հոկտեմբերի 18-ին *հանդիսապետել է Տավուշի թեմի Դիլիջան քաղաքում տեղի ունեցած եկեղեցու հիմնօրհնեքի հանդիսավոր արարողությունը։*

Հոկտեմբերի 28-ին *ընդունել է Արեւելքի Ասորի Եկեղեցու պատվիրակությանը՝ առաջնորդությամբ Արեւելքի Ասորի Եկեղեցու պատրիարքարանի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու, Կալիֆոռնիայի (ԱՄՆ) Արեւելքի Ասորի Եկեղեցու առաջնորդ եւ Սինոդի քարտուղար եպս. Մար Ավա Ռոյելի։*

Հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 1-ը *նախագահել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը՝ ընդլայնված կազմով։*

Նոյեմբերի 3-ին *ընդունել է Հայաստանյայց Ս. Եկեղեցու թեմերի երիտասարդական միությունների ատենապետերին եւ Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորման (ՀԵՀԵՄ) կենտրոնական գրասենյակի աշխատակազմին՝ գլխավորությամբ ՀԵՀԵՄ-ի հոգեւոր տեսուչ եւ կենտրոնական գրասենյակի տնօրեն Թովմա վրդ. Խաչատրյանի։*

Նոյեմբերին 4-ին *ընդունել է Մայր Աթոռի Ս. Էջմիածնի միաբանությանը եւ պաշտոնեությանը, որոնք եկել էին շնորհավորելու իր օծման եւ գահակալության 20-րդ տարեդարձի բերկրալի օրվա առիթով։ Իր երախտագիտությունն է հայտնել շնորհավորանքների ու բարեմաղթանքների համար եւ իր հայրապետական օրհնությունը բաշխել ամենքին։*

Նույն օրն *ընդունել է պաշտոնական այցով ՀՀ ժամանած Տաջիկստանի Հանրապետության Մաջլիսի օլի Մաջլիսի Նամայանդագոնի նախագահ Շուքուրջոն Զուխուրովին եւ նրա գլխավորած պատվիրակությանը։*

Նոյեմբերի 5-ին *ընդունել է Չեխիայի հարավային Բոհեմիայի համալսարանի ռեկտոր Թովմաս Մաչուլային եւ պրոռեկտոր Ռադկա Զավոդս-*

կիին՝ ուղեկցությամբ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի։

Նույն օրն *ընդունել է Արարատի մարզի Արարատ, Արտաշատ եւ Վեդի համայնքների ուխտավորներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակի տնօրեն Մարկոս քհն. Մանգասարյանի։*

Նույն օրն *ընդունել է ՀՀ-ում Եւրոպական Միության պատվիրակության ղեկավար, ԵՄ-ի դեսպան Անդրեա Վիկտորինին։*

Նոյեմբերի 6-ին *ընդունել է պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Հունաստանի Հանրապետության նախագահ Պրոկոպիոս Պավլոպուլոսին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի։*

Նոյեմբերի 9-ին *ընդունել է պաշտոնական այցով ՀՀ ժամանած Սուրբ Աթոռի՝ պետությունների հետ հարաբերությունների քարտուղար արք. Պոլ Ռիչարդ Գալագերին եւ նրա գլխավորած պատվիրակությանը։*

Նոյեմբերի 29-ին *նախագահել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Գարեգին Ա.» կրթական կենտրոնում տեղի ունեցած գիտաժողովը՝ նվիրված բանաստեղծուհի, հրապարակախոս Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 100-ամյակին։*

Նույն օրը *«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարում հանդիպում է ունեցել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հայաստանյան թեմերում ծառայող բազմազավակ քահանաների ընտանիքների հետ։*

Դեկտեմբերի 1-ին *նախագահել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցած հանդիսությունը՝ նվիրված երանաշնորհ Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակին։*

Դեկտեմբերի 3-ին *ընդունել է ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Կիշան Դան Դեւալին։*

Դեկտեմբերի 4-ին *ընդունել է ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ինգա Ստանիտե-Տոլոչկիենեին։*

Դեկտեմբերի 6-ին *ընդունել է Գվատեմալայի Հանրապետության Կոնգրեսի առաջին փոխնախագահ Ֆելիպե Ալեխոս Լորենզանայի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ փոխնախագահ Լենա Նազարյանի։*

Նույն օրը *նախագահել է «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարում տեղի ունեցած «Հայրենիքի եւ ընտանիքի գաղափարները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակություններում» խորագրով գիտաժողովը։*

Դեկտեմբերի 10-ին *ընդունել է ՀՀ-ում Ռումինիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Կորնել Իոնեսկուին։*

Նույն օրն *իր օրհնությունն է բերել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Գարեգին Ա.» կրթական կենտրոնում անցկացվող եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տարեվերջյան ամփոփիչ ժողովի մասնակիցներին։*

Դեկտեմբերի 12-ին *Մայր Աթոռ Ս. Էջմիածնից իր օրհնությունն ու շնորհավորանքներն է հղել Սահակ եպս. Մաշալյանին՝ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք ընտրվելու առիթով։*

Դեկտեմբերի 14-ին *հյուրընկալել է բազմազավակ ընտանիքների Մասիս քաղաքից՝ ուղեկցությամբ հոգեւոր հովիվ Արարատ քհն. Օրդոյանի, եւ Արմավիր քաղաքից ու շրջակա համայնքներից՝ առաջնորդությամբ Արտակ ավագ քհն. Սիմոնյանի։*

Դեկտեմբերի 15-ին *ընդունել է Մինի ֆուտբոլի 16-րդ միջազգային մրցաշարում (Սանկտ Պետերբուրգ) հաղթանակած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո գործող «Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոնի եւ ՍՕՍ մանկական՝ գյուղերի հավաքական թիմին՝ մարզիչ Անդրանիկ Ղահրամանյանի, «Քյուրքչյան» կենտրոնի տնօրեն Արամ Մկրտչյանի եւ ՍՕՍ մանկական՝ գյուղերի ներկայացուցիչ Ռուբիկ Փաշինյանի ուղեկցությամբ։*

Դեկտեմբերի 16-ին *ընդունել է Վաշինգտոնի Սուրբ Գրքի թանգարանի պատվիրակությանը՝ գլխավորությամբ թանգարանի ցուցահանդեսների գլխավոր համակարգող Ջեֆրի Քլոհայի։*

Դեկտեմբերի 17-ին *ընդունել է Արեւելք-Արեւմուտք միջազգային ինստիտուտի (Նյու Յորք, ԱՄՆ) նախագահ եւ գործադիր տնօրեն Ուիլյամ Փարքերին։*

Դեկտեմբերի 19-ին *հյուրընկալել է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի առաջնորդությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած Արցախյան ազատամարտում եւ սահմանին մարտական հերթապահություն իրականացնելիս վիրավորված 15 հայորդու։*

Դեկտեմբերի 20-ին, *ի գնահատություն հայրենի երկրի եւ հայ ժողովրդին մատուցած բազմարդյուն ծառայությունների, «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշան է հանձնել Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, խմբավար Դավիթ Ղազարյանին, Երեւանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական*

գծով փոխտնօրեն, պ. գ. դ. Կարեն Մաթեւոսյանին, ճարտարապետ Գագիկ Գյուրջյանին։

Դեկտեմբերի 21-ին *հյուրընկալել է Արարատյան հայրապետական թեմի Երեւանի Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու «Նավասարդ» երիտասարդական միության անդամներին եւ Արցախի հերոս Գագիկ Ստեփանյանի անվան թիվ 135 հիմնական դպրոցի տարբեր դասարանների աշակերտներին՝ առաջնորդությամբ եկեղեցու հոգեւոր հովիվ Նորայր ավ. քհն. Բաղդասարյանի։*

Նույն օրը *«Ընտանիքի տարվա» շրջանակներում հյուրընկալել է Հրազդան եւ Ծաղկաձոր քաղաքներից ժամանած բազմազավակ ընտանիքների՝ ուղեկցությամբ Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել արք. Քարամյանի։*

Դեկտեմբերի 25-ին *ընդունել է Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արք. Աջապահյանի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին մարզային եւ քաղաքային իշխանությունների, թեմի տարբեր համայնքների ներկայացուցիչներ. Միքայել սրբազանին հանձնել է արքության պատվի՝ հայրապետական սրբատառ կոնդակը։*

Նույն օրը՝ *երեկոյան, իր հրավերով ընդունել է Դաւնի համախտանիշով երեխաների աջակցության՝ «Արեւ-երեխաներ» կենտրոնի սաներին, «Մարի Իզմիրլյան» մանկատան հատուկ կարիքավոր երեխաներին, «Ջերմիկ անկյուն» կազմակերպության 18-ը լրացած մտավոր եւ ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անդամներին եւ Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցու հովանու ներքո գտնվող անապահով ընտանիքների զավակներին՝ գլխավորությամբ Արարատյան հայրապետական թեմի հոգեւոր սպասավորներ Գրիգոր քհն. Հովհաննիսյանի եւ Գրիգոր քհն. Գրիգորյանի, Ամանորի եւ Ս. Ծննդյան տոների առիթով։*

Պատրաստեց
Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆ. ՊՈՂՈՍՅԱՆԸ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(3 նոյեմբերի 2019 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ ասէ ցնոսա. Մայր իմ եւ եղբարք իմ սոքա են,
որ զբանն Աստուծոյ լսեն՝ եւ առնեն»
(Ղուկ. Ը. 21)։

Սիրելի՛ հավատացյալներ,

Արարիչ Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը եւ այն մեր՝ մարդկանց տնօրինությանը հանձնեց։ Ամեն ինչ եւ ամեն բան բարի արարեց, մարդուն էլ՝ Իր նմանողությամբ ու պատկերով։ Ավանդեց մեզ՝ ունկնդիրներիս, սրբության, կատարելության հրավեր ու պատվիրան, որ միմիայն մեր բարօրության ու փրկության համար էր, որպեսզի կարողանանք հավարտ մեր երկրավոր կյանքի՝ Երկնավոր Հոր զավակները դառնալ՝ ժառանգակից լինելու հավիտենական արքայությանը եւ միանալու դրախտաբնակ սրբերի մեծ ընտանիքին։

Բավ է միայն «զբանն Աստուծոյ» լսել ու կատարել եւ կլինենք Քրիստոսին մայր, եղբայրներ ու քույրեր (Ղուկ. Ը. 21)։

Այս կիրակին, որ ութերորդն է Խաչվերացից հետո, սուրբգրային ընթերցվածների միջոցով կրկին մեզ բացահայտում է Աստծու առատապարգեւ սերը մարդ արարածի հանդեպ։ Մեկ անգամ եւս ուսուցանվում է, որ այդ սիրո արտահայտությունը, ողորմությունը եւ բոլոր շնորհների բաշխումը կատարվում են Հիսուս Քրիստոսի միջոցով։

Պողոս առաքյալը, եփեսացիներին ուղղված խոսքով, համայն աշխարհին բացահայտում է, որ Աստված մեզ բոլոր հոգեւոր օրհնություններով լցրեց՝ շնորհելով երկնավոր հաղորդություն Հիսուսի հետ։ Աշխարհի սկզբից ընտրեց մեզ՝ Քրիստոսի միջոցով, որ Աստծու առաջ լինենք

սուրբ եւ անարատ։ Նախասահմանեց մեզ որդեգրության Հիսուս Քրիստոսի միջոցով՝ հասնելու Նրան՝ ըստ Իր կամքի (հմմտ Եփես. Ա. 14–16)։

Մեր հայազն պատմությունն էլ վկայությունն է, որ Աստված ընտրեց մեր ազգին, առատորեն շնորհներ տվեց, որ լինենք սուրբ եւ անարատ։ Աստված Իր սիրո՛վ մեզ ընդունեց Իր որդեգրությանը։ Մենք էլ, դարերի մեր հավատարմությամբ, Նրա հանդեպ հավատքը դարձրինք մաշկի գույն, լսեցինք եւ կյանքի կոչեցինք յուրաքանչյուր խոսք, ապրեցինք եւ հավատարիմ մնացինք բոլոր պատվիրաններին։ Մեզ ոչինչ չշեղեց Աստծուց ուղենշված մեր ճանապարհից, եւ մեզ չպիտի սասանեն մեր հայրերի ուղղափառ հավատքից ո՛չ հուր, ո՛չ սուր եւ ո՛չ էլ որեւէ արհավիրք։

Եւ հավատում ենք, որ Արածանիի մկրտության եւ դրոշմի սրբազան խորհուրդներով հայերս արժանացանք Աստծու բոլոր շնորհներին, որն աստվածային պարգեւն է, տրված մեզ՝ իմացական արարածներիս, մեր հավիտենական փրկության համար։ Իսկ փրկությունը Քրիստոսով է, Կյանքը Քրիստոս է, որ մարմին առավ մեզանից յուրաքանչյուրի փրկության համար։ Ամենքս շնորհ ստացանք Տիրոջից, շնորհ սերմանվեց մեր հոգիների մեջ, եւ աստվածապարգեւ կյանքի ընթացքում մեզնից է կախված՝ կչորանա՞ արդյոք, թե՞ կպտղաբերի՝ մեկին երեսուն կամ ավելին։

Փառք եւ գոհություն Աստծուն, որ առաքելահաստատ մեր Ս. Եկեղեցին, հաստատումից ի վեր, հավատավոր հայ ժողովրդի կողքին է եղել հոգեփրկչական իր առաքելությամբ։ Կերտել է փառահեղ պատմություն, ստեղծել է աստվածախոս մշակույթ, կրթել է հայրենասեր սերունդ եւ աշխարհին ներկայացրել քրիստոնյա հային։ Խրատել, հորդորել եւ ուսուցանել է Ավետարանի ճշմարտությունները, որպես հոգատար մայր՝ խնամել եւ ոչինչ չի խնայել իր զավակի փրկության համար, հոգեւոր արժեքներով է սնել եւ պատրաստել անգամ «իմացեալ մահուան»՝ վասն հայրենյաց եւ վասն հավատոյ։ Այդպես ապրելով գիտենք, որ հզոր եւ հարատեւ հայրենիքի հիմքը ամուր եւ աստվածահաստատ ընտանիքն է, որ ավանդական արժեքների վրա խարսխված ամեն մեկ օր կյանքի է կոչում Քրիստոսից լսված Աստծու խոսքը, եւ կատարելով՝ իր ընտանիքի յուրաքանչյուր անդամին դարձնում Քրիստոսի մեծ ընտանիքի անդամ։

Շատ բան չէ, որ Աստված պահանջում է մեզանից, այլ միայն «զբանն Աստուծոյ» լսել եւ կատարել։

Այսօր էլ շարունակվում է Եկեղեցու ազգապահպան եւ հայրենակերտ առաքելությունը. երկու տասնամյակ է, ինչ կրկին բարգավաճում եւ առաջընթաց են ապրում Հայոց Եկեղեցու հոգեւոր-կրթական հաստատությունները, գործողների կողքին կառուցվում են նորերը, եւ նոր աստիճանի է բարձրանում հոգեւոր եւ հայեցի կրթության մակարդակը նորաստեղծ Հառիճի «Թրբանճյան» ընծայարանում, «Լիոնեկյան» հանրակրթական դպրոցում եւ« Թուֆայան», «Բեգեւյան», «Գուլամերյան» հայորդյաց տներում։ Հայ ուսումնասիրողը հայոց ոսկեդենիկ դպրության էջերը լրացնելու համար քայլերն ուղղում է նորաբաց «Գարեգին Առաջին» կրթական կենտրոն ու «Վաչե եւ Թամար Մանուկյաններ» մատենադարան։ Հսկայածավալ ընկերային ծրագրերից օգտվում են բարեգործական ճաշարաններում սնվող հարյուրավոր հայորդիները, հայրենիք ժամանած ներգաղթյալները, սեփական տունն ունենալու բերկրանքն ապրող ընտանիքը, կրկին քայլելու երազն ունեցող զինվորը։ Ընտանեկան հարկի տաքուկ ջերմությունն ու հոգատարությունն են զգում «Նագաշյան» եւ «Քյուրքչյան» կենտրոններում հասակ առնող երեխաները։ Հոգեւոր, մշակութային, ազգային իրենց գիտելիքներն են հարստացնում դպրոցներում հայ մանուկները՝ արժանի սերունդը դառնալով իրենց նախնիների։ «Ռուբեն Սեւակ», «Խրիմյան» եւ ի նորո վերականգնյալ Վեհարանի թանգարաններում հայ ստեղծագործ հանճարի արարումին է ծանոթանում Մայր Աթոռի յուրաքանչյուր այցելու։ Հավատավոր հայորդիներն իրենց գոհաբանական աղոթքն են բարձրացնում առ Աստված աշխարհասփյուռ երեքհարյուր եւ ավելի աղոթատներում։ Հոգեւոր մխիթարանքից անմասն չեն նաեւ անազատության մեջ մտքի, հոգու եւ մարմնի ազատություն փնտրող ապաշխարության ճանապարհը բռնած անհատները։ Վերջին տարիներն առանձնացան Հայոց Եկեղեցու կառավարման ոլորտի մէջ արձանագրված հաջողություններով։ Թեմական ու ծխական նոր կառույցներն ավելի ջերմեռանդ լծվեցին աշխարհասփյուռ հայության հոգեփրկչական առաքելությանը։ Քույր եկեղեցիների փոխադարձ այցելությունները եւ միասնական աղոթքները ավելի խաղաղ են դարձնում աշխարհը։ Հիրավի անկարող ենք այս մի քանի րոպեների ընթացքում ըստ արժանվույն ներկայացնել շուրջ երկու տասնամյակների ընթացքում մեր Մայր Եկեղեցու եւ հայ կյանքում արձանագրված բոլոր հաջողություններն ու ձեռքբերումները։

Սիրելիներ, վիճակի, պաշտոնի, կարգի շնորհը Աստված պարգեւում է անձին, որպեսզի նրա արարքները լինեն ուղիղ, իսկ սրբարար շնորհը նրան ներկայանում է կյանքի ընթացքին՝ ուղղությամբ ընթանալու ճանապարհի վրա։ Այդ շնորհներով առաքինացած իմաստուն եւ սուրբ հայրեր ու հայրապետներ եղել են քաջ հովիվները մեր Եկեղեցու՝ պատրաստ իրենց անձը դնելու վասն յուրաքանչյուր հավատավոր հայորդու։

Սրբազան հիմնադիրներից՝ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալներից եւ երկրորդ լուսավորիչ Ս. Գրիգորից սկսյալ՝ Մայր Աթոռը նույնացած է իր գահակալների հետ։ Ամենայն Հայոց կաթողիկոսները կերտել են տվյալ ժամանակի եկեղեցական դարաշրջանը՝ իրենց յուրահատուկ վաստակով եւ գործունեությամբ։ Տարբեր չէ պարագան նաեւ մեր օրերում։ Երբ արդեն երկու տասնամյակ՝ Աստծուց մեզ հովվելու է կոչված ազգընտիր Հայրապետը Հայոց, հանձին Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, որը գահակալության այս 20 բեղուն տարիներին մշտապես հավատարիմ մնաց իր ուխտին եւ իր տեսիլքին, որի բարեբեր արդյունքները տեսնում ենք այսօր։

Ներկա ժամանակներում եկեղեցական կյանքը ձեւավորվում, ուղղություն եւ առաջնորդություն է ստանում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Սրբազնագույն Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետության ներքո, եւ մենք այսօր տոնում ենք մեր սիրելի Հայրապետի գահակալության 20-երորդ տարեդարձը եւ ուղղում ենք մեր սրտագին աղոթքներն առ Աստված՝ Հայրապետական մաղթանքով։

Վեհափառ Տեր, փառք ենք տալիս Աստծուն, որ Դուք, ընտրյալ հաջորդը Լուսավորչի, արժանավոր շարունակողը եղաք երջանկահիշատակ մեր հայրապետների առաքելության. անցած 20 տարվա ընթացքում մենք տեսնում ենք, թե ինչպես Ձեր իմաստությամբ, տեսլականով ու անձանձրույթ աշխատանքով իրականանում են այն բոլոր սքանչելի ծրագրերը, որոնց շնորհիվ քրիստոնեացած հայ ոգին ավելի է տոգորվում հայոց ինքնությամբ եւ պահպանվում հայ ժողովրդի կյանքում։

Սիրելի՛ հավատացյալներ, այսօրվա սուրբ եւ անմահ Պատարագի մասնակցությամբ յուրաքանչյուրս առիթ ունենք մեր գոհունակությունը հայտնելու Տիրոջը, որ հնարավորություն ընձեռեց հայ ժողովրդի հոգեւոր եւ մշակութային ժառանգության հավերժական ակունք Էջմիածնի սուրբ հովանու ներքո հավաքված աղոթելու Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 20-րդ տարեդարձի

առիթով։ Թույլ տվեք ձեր եւ Մայր Աթոռի միաբանության անունից շնորհավորելու նրան եւ շնորհակալություն հայտնելու Վեհափառ Հայրապետին՝ անցնած 20 տարվա ընթացքում արձանագրված բազում իրագործումների համար, որոնց շնորհիվ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին առավել զորացած շարունակում է իր առաքելությունը ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի։

Վեհափա՛ռ Տեր, բոլորս աղոթում ենք, որ Տերը Ձեզ ամուր եւ զորավոր պահի, Ձեր այդ հարատեւությունը մշտապես մնա, այդ ոգով շարունակեք առաջնորդել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, քարոզեք «զբանն Աստուծոյ», իսկ մենք էլ խոստանում ենք լսել եւ կատարել՝ որպես քրիստոնյա հայ ընտանիքի անդամներ։

Թող Աստված օրհնի ամենքիս այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն։

ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ՝ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ

Կազարամյակների պատմություն ունեցող հայ ժողովրդի համար Մեծ եղեռնը ազգային դատին նվիրվածության առհավատչյան է, սերունդների հիշողության մեջ անթեղված համազգային վշտի խտացած արտահայտությունը։ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հավաստում է, որ թեեւ «մահը կյանքով հաղթելու» ճանապարհով ազգային հոգեբանության մեջ լիովին հաղթահարվել է «եղեռնի բարդույթը», իսկ «վերապրած հայությունը կենսահաստատ հավատքով իր հանդեպ գործված չարը բարիով հաղթելու քրիստոսաշնորհ զորությամբ» ապրում է իր ստեղծագործ կյանքով, այդուհանդերձ, հայ ժողովուրդը պահանջատիրության եւ իրավատիրության դիրքերից այսօր էլ պայքարում է Հայոց ցեղասպանությունը միջազգայնորեն դատապարտելու համար։

Վերոնշյալից ամենեւին չի հետեւում, թե Մեծ եղեռնի դատապարտումը սոսկ «վրեժխնդրության ծարավ» է։ Այդ է վկայում նաեւ Հայոց Հայրապետը. «Ցեղասպանության դառը հիշողությունները 100 տարիների ընթացքում չարությամբ ու ոխակալությամբ չեն մթագնել մեր ժողովրդի հոգին։ Մեր վշտին ատելություն չի խառնվել, սակայն եղել ենք անհաշտ՝ խարդավանքների, մեր պատմության խեղաթյուրման հանդեպ, եղել ենք աննահանջ՝ ճշմարտության պայքարի մեր ճանապարհին»[1]։ *Եւ դա այն պարագայում, փաստում է Վեհափառ Հայրապետը, որ Հայոց ցեղասպանության հիշողությունը պարփակել է ազգային կյանքը բնութագրող մի ամբողջական համակարգ եւ սերտաճել է ազգային-հասարակական, քաղաքական, հոգեւոր-մշակութային ու քաղաքակրթական կյանքի բոլոր ոլորտների հետ։ Հայոց հայրապետը պարզաբանում է, որ մեր ժողովուրդը բարոյական*

[1] *«Էջմիածին», 2015, Դ., էջ 37։*

մեծ պատասխանատվություն ունի՝ անմեղ զոհերի հիշատակը վառ պահելու, նրանց տառապանքները չմոռանալու, քանի որ այն համայն աշխարհով սփռված հայերիս բարոյական միասնության անկյունաքարերից է։ Այդ պատճառով է նաեւ, որ Հայոց ցեղասպանության միջազգայնորեն դատապարտումը հայ ժողովրդի համար դարձել է առաջնահերթություն։ Վեհափառ Հայրապետը բացատրում է. «Հայոց եղեռնը արիւնալի եւ անլուր ողբերգութեան մռայլ էջ բացեց ոչ միայն մեր ժողովրդի, այլ նաեւ ազգերի պատմութեան մէջ»[2], քանի որ Օսմանյան Թուրքիայի կողմից մեր ժողովրդի նկատմամբ իրագործած ցեղասպանության արդյունքում «Արեւմտեան Հայաստանում՝ բնօրրան մեր հայրենիքում եւ Թուրքիայի հայաշատ բնակավայրերում կազմակերպուած ջարդերին, սովին ու հիւանդութիւններին, որ իշխում էին բռնագաղթի ճանապարհներին, զոհ գնացին ազգիս մէկ եւ կէս միլիոն զաւակներ։ Թալանուեց դարերով ստեղծուածը, արդար վաստակը մեր ժողովրդի.... Հայաթափուեց Արեւմտեան Հայաստանը, որտեղ մեր ժողովուրդը հազարամեակներ՝ Նոյեան դարից ի վեր, ապրել, արարել եւ իր պատմութիւնն ու մշակոյթն է կերտել *(ընդգծումը.–* Ա. Ք.*)»*[3]։

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության եւ դրա միջազգային ճանաչման հարցին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այն դիտարկում է՝ եւ պատմական, եւ իրավական, եւ բարոյական տեսանկյուններից։ Նա համոզված է, որ միայն այդ շարակարգում է հնարավոր մեկընդմիշտ կանխել ցեղասպանության ամեն մի փորձ, «...որպեսզի ոչ մի ժողովուրդ երբեմ չկրի իր հոգում ցեղասպանության վիշտն ու վիրավորանքը, եւ ոչ մի հողում չկառուցվեն եղեռնի եւ հոլոքոստի հուշարձաններ *(ընդգծումը.–* Ա. Ք.*)»*[4]։ *Նույն տրամաբանությամբ եւ արժեքային մոտեցմամբ նա բարձրաձայնում է նաեւ, որ*

---

[2] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), Ս. Էջմիածին, 2010, էջ 324։*

[3] *«Էջմիածին», 2014, ԺԲ., էջ 6։ Վեհափառ Հայրապետը փաստում է նաեւ՝ «1915 թուականին աւերն էր թագաւորում, սարսափն ու մահը հայոց բնակավայրերում։ Փլւում էր տունը հայի գլխին, այրւում էր հողն իր մշակի ոտքի տակ, ակօսը գերեզման էր դառնում, եկեղեցին՝ անբարբառ յուշարձան։ Եփրատի ափերից մինչեւ Արաքսի հովիտներ, Սեւ ծովից մինչեւ Միջերկրական՝ ձորերը լցուեցին հայ մարդկանց դիակներով, գետերը՝ արիւնով։ Թալանուած ու տանջահար անզէն ժողովուրդը՝ կին, մանուկ ու ծեր քշուեցին անջուր անապատ, եւ նրանց վերջին աղօթքի ունկնդիրը եղաւ տօթակէզ քամին». «Էջմիածին», 2005, Դ., էջ 4։*

[4] *«Էջմիածին», 2001, Ե., էջ 36։ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը գրում է՝ Հայոց ցեղասպանությունը մոռացության մատնելու հետեւանքներից մեկն էլ այն է, որ «...իբրեւ այս ամենի տրամաբանական ողբալի հետեւանք՝ պատերազմի ու արյան ձայներն այդպես էլ չլռեցին աշխարհում։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ու դրանից հետո ընդհուպ մինչեւ Ի. դարավերջ հասնող ցեղասպանություններն ու նախճիրները շարունակեցին*

Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանությունը եղել է միակողմանի գործողություն, *քանի որ «Առաջին համաշխարհային պատերազմի թոհ ու բոհի մէջ երիտթուրքական իշխանութիւնները ժամանակը պատեհ նկատեցին՝ աւարտին հասցնելու հայութեան բնաջնջման թուրքական պետութեան որդեգրած քաղաքականութիւնը եւ ընդմիշտ լուծելու Հայկական հարցը։ Արեւմտեան Հայաստանում՝ մեր հայրենիքի մեծագոյն հատուածի վրայ եւ կայսրութեան հայաշատ այլ բնակավայրերում իրականացուեցին անզէն հայ բնակչութեան կազմակերպուած ջարդեր։* Մեր ժողովուրդը մահուան էր դատապարտուել միայն հայ եւ քրիստոնեայ լինելու համար, քանզի հայ մնալ ու քրիստոնեայ, նշանակում էր շարունակել լինել բնիկ ու տոհմիկ ժողովուրդը Հայաստան երկրի *(ընդգծումը.– Ա. Ք.)»*[5]։

Վեհափառ Հայրապետը նշում է նաեւ, որ Մեծ եղեռնի հետեւանքով «...դատարկվեց Արեւմտյան Հայաստանն իր տոհմիկ ժողովրդից, իսկ ենիչերու արնածոր սրից ու արնախում հայացքից մազապուրծ հայերը սփռվեցին աշխարհե աշխարհ....»[6]։ *Նա հավելում է, որ նախապես որոշված կարգով իրականացված եղեռնագործ այդ ծրագրի հետեւանքով «միլիոնավոր հայորդիներ, զրկվելով իրենց պատմական տարածքներից ու բնակավայրերից, ստիպված եղան ապաստան գտնել ամենատարբեր երկրներում՝* որակվելով իբրեւ «հայրենազուրկ» եւ կրելով ափսորի ու գաղթի ճանապարհի դառը պայմանները *(ընդգծումը.– Ա. Ք.)»*[7]։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրտի ցավով անդրադառնում է նաեւ այն իրողությանը, որ չնայած անհերքելի այդ փաստերին, ուրացման ճանապարհն ընտրած թուրքական կառավարությունը կոչ է անում «խոսքի ազատության եւ բազմակարծությունը հարգելու» դիրքերից «վերանայել պատմական իրականությունը», իսկ ցեղասպանությունը համարում է ոչ այլ ինչ, քան «1915 թ. պատահական միջադեպ», եւ պնդում, որ

արատավորել մարդկային աստվածատուր մտքի լուսավոր ձեռքբերումներով պսակված համաշխարհային պատմության ճակատը». «Էջմիածին», 2014, Թ., էջ 23։

[5] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), էջ 319։*

[6] *Անդ, էջ 326։ Այս հարցում համահունչ է նաեւ միջազգային հեղինակավոր կուսակցություններից մեկի՝ Եւրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) քաղաքական հանձնաժողովի 2015 թ. մարտի 3-ի «Հայոց ցեղասպանությունը եւ եւրոպական արժեքները» բանաձեւը, որը Թուրքիային առաջարկում է ճանաչել Հայոց ցեղասպանությունը եւ դրան հետեւող ունեզրկման իրականությունը, «ինչպես նաեւ նյութական եւ բարոյական հատուցումներ ապահովել՝ իրականացնելով եւրոպական երկրին վայել քաղաքականություն». տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» (օրաթերթ), 4 մարտի 2015 թ.։*

[7] *«Էջմիածին», 2014, Թ., էջ 23։*

*միլիոնավոր անմեղ զոհերը ոչ թե ոչնչացվել, այլ «մահացել են ԻԱ. դարասկզբին»։ Վեհափառ Հայրապետի կողմից «ուրացման այդ քաղաքականությունը» անվերապահ մերժվում է ցեղասպանության գործուն ղեկավարներից մեկի՝ Ջեմալ փաշայի խոստովանությամբ, որի մասին գրում է. «Թուրքիայի Հանրապետության ղեկավարների եւ նույնիսկ քաղաքացիական հասարակության ականջները հարատեւ փակ են.... Ջեմալ փաշայի՝ գերմանացի սպային խոստովանած մարգարեական խոսքերի առաջ՝ «Ես ամաչում եմ իմ ազգի համար» (*Ich schäme mich für meine Nation*)»[8]։*

Հիմնովին մերժելով եւ անընդունելի համարելով Հայոց ցեղասպանության բացահայտ կամ քողարկված ժխտման, ինչպես նաեւ գիտակցված անտարբերության ամեն մի փորձ՝ Հայոց հայրապետը հավաստում է, որ «Ցեղասպանության ժխտումը ոչ միայն ցեղասպանության ենթարկված ժողովրդի իրավունքների, արժանապատվության ու արդարության ոտնահարում է, այլ նաեւ խարխլում է միջազգային իրավունքի եւ համընդհանուր բարոյականության հիմերը, ծանր հարված հասցնում ազգերի ու ժողովուրդների հարաբերություններին եւ խաղաղ համակեցությանը»[9]։ Զարգացնելով այդ մոտեցումը՝ Վեհափառ Հայրապետը պարզաբանում է. «Ցեղասպանության ոճրագործության ժխտման եւ այն անպատիժ թողնելու համար մարդկությունը չափազանց մեծ գին է վճարում: Ժխտողականության հանդուրժումը անտարբեր է դարձնում մարդուն իր նմանի տառապանքի հանդեպ եւ հանրության կյանքում լուեցնում բարոյական պատասխանատվության ձայնը՝ զրկելով նման սարսափի կրկնությունը կանխելու հանձնառությունից: *Մարդկությունը բարոյական պարտավորություն ունի պայքարելու ընդդեմ ցեղասպանության հանցագործությունների (ընդգծումը.–* Ա. Ք.*)»*[10]։

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության շարժառիթների համակողմանի քննական արժեւորմանը՝ Վեհափառ Հայրապետը պատմական փաստերի վերլուծական ընդհանրացմամբ արձանագրում է. «Ի. լուսաւորեալ դարը եղեռնով սկսուեց մեր ժողովրդի համար, որ նոր ժամանակներում յոյս ունէր գտնել անձի ապահովութիւն, մարդկային իրաւունքի

---

[8] *«Էջմիածին», 2014, Թ., էջ 23։*

[9] *«Էջմիածին», 2015, Դ., էջ 23։*

[10] *Անդ, էջ 24։ Այդ առնչությամբ Գարեգին Բ. Կաթողիկոսը նշում է. «Բարոյականությունը, որ պիտի լինի հիմնամուր սյունը հասարակական կյանքի եւ պետությունների քաղաքականության, դժբախտաբար, այսօր հաճախ զոհաբերվում է աշխարհաքաղաքական շահերին։ Նման հանցավոր դիրքորոշման ու վերաբերմունքի հետեւանքները ողբերգական են բազմաթիվ ժողովուրդների համար». անդ։*

պաշտպանութիւն եւ խաղաղ կեանք։ Այս էր Հայկական հարցի բովանդակութիւնը։ Սահմանադրական իրաւունքներից խօսող երիտթուրքական իշխանութիւններն ամեն բան հաշուարկել էին՝ չկայ ժողովուրդ, չկայ Հայկական հարց, չկայ ժառանգորդ, չկայ պահանջատէր։ Չարահնար ծրագրի հեղինակները վստահ էին, որ իսպառ պիտի բնաջնջուի հայութիւնը, երկրէ երկիր ցրուելով՝ անյիշատակ ու անհետ պիտի վերանայ պատմութեան ասպարէզից»[11]։ Վեհափառ Հայրապետն անընդունելի եւ անհեթեթ է համարում նաեւ Հայոց ցեղասպանության՝ թուրքական մերժողականության մաս կազմող «շահերի անհամատեղելիության» սնանկ վարկածը։ Նա հիմնավորում է, որ ցեղասպան Թուրքիայի միակողմանի նպատակադրումն է եղել՝ բռնի ոչնչացնել հայ ժողովրդին, եւ այդ նպատակին հետամուտ «Օսմանյան Թուրքիան, օգտվելով Առաջին աշխարհամարտի պատեհությունից, Արեւմտյան Հայաստանում եւ Թուրքիայի հայաշատ վայրերում իրականացրեց հայաջնջման իր հրեշավոր ծրագիրը»[12]։

Անվերապահ մերժելով «ուրացության» կամ «գիտակցված մոռացության» ցանկացած դրսեւորում՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը փաստում է. «... երբ մի ողջ ազգ կառավարության կողմից տեղահան է արվում իր հայրերի հողից ու կոտորվում, մարդկության դեմ կատարված այդօրինակ ոճիրը կոչվում է ցեղասպանություն *(ընդգծումը.– Ա. Ք.)»[13]։*

Վեհափառ Հայրապետը հավաստում է նաեւ, որ թուրքական կառավարության մշակած եւ սառնասրտորեն իրականացրած զանգվածային ջարդերն ու բռնությունները մեր ժողովրդի պատմության ամենածանր, կորստաբեր եւ արյունալի ողբերգությունն են, որոնք ժամանակին չդատապարտվեցին, քանի որ քաղաքական կյանքում երկակի չափանիշներով առաջնորդվող պետությունների կողմից «թաղվեցին գիտակցված անտարբերության» մեջ, իսկ «արդարության պահանջով տոգորված ձայներն այդպես էլ լսելի չեղան միջազգային քաղաքական հանրությանը»[14]։ Այնինչ,

---

[11] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), էջ 320։*

[12] *Անդ, էջ 326։*

[13] *«Էջմիածին», 2001, ԺԲ., էջ 23։ Վեհափառ Հայրապետը նշում է. «Մեր ժողովուրդը բազմադարյա իր կենսագրության մեջ շատ ու շատ է աղետահարվել ու կորուստներ կրել, բայց առանձնակի ցավ են տասնինը եւ քսաներորդ՝ լուսավորյալ համարվող դարերում թուրքական կառավարության մշակած եւ սառնասրտորեն իրականացրած ջարդերը, որ ուղղված էին «Հայկական հարցի» «լուծմանը»՝ չկա հայություն, չկա Հայկական հարց սկզբունքով։ Շուրջ 1.5 միլիոն հայ սրի քաշվեց, զոհ գնաց սովին ու հիվանդություններին».* ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), էջ 326։*

[14] *Տես «Էջմիածին», 2014, Թ., էջ 22։*

պնդում է Գարեգին Բ. Կաթողիկոսը, Մեծ եղեռնի ճանաչումը յուրատիպ «բարոյական պարտք» է ոչ միայն Թուրքիայի, այլ նաեւ բոլոր այն պետությունների եւ միջազգային կառույցների համար, որոնք ԺԹ. դարի երկրորդ կեսին զինվորագրվել էին «Հայկական հարցը լուծելու» քաղաքականությանը։ Եւ չնայած որեւէ մեկի համար գաղտնիք չէր, որ ցեղասպանությունը հայ ժողովրդի, նրա մշակույթի, լեզվի, ազգային զգացմունքների, կրոնի եւ գոյության տնտեսական հիմքերի համակարգված ու ծրագրավորված ոչնչացումն էր, այդուամենայնիվ, երկակի չափանիշների կիրառման արդյունքում, նրանք ցեղասպանության հարցը վերածեցին յուրահատուկ աշխարհաքաղաքական գործոնի։ Դա է եղել նաեւ այն հիմնական պատճառը, որ հայերի կոտորածների մահասարսուռ օրերին շատերը չէ, որ առաքինություն ու քաջություն ունեցան ընդվզելու Աստծու եւ մարդկության դեմ գործվող ոճիրի դեմ, իսկ «փոքրաթիվ ազնիվ.... անհատների ցասումն ու զգաստացնող կոչը, որպես մարդկության տրոփող խղճի աղաղակ, խեղդվեց Առաջին աշխարհամարտի որոտներում, անարձագանք կորավ հզոր տերությունների մեծ քաղաքականության ոլորաններում»[15]։

Կորավ, սակայն չթաղվեց անհետ եւ մի յուրահատուկ բարոյական արժեչափ դարձավ քաղաքակիրթ աշխարհի համար։ *Այդ առնչությամբ Հայոց հայրապետը հավաստում է, որ խաղաղասեր ու ստեղծագործ հայ ժողովուրդը «չարը բարիով հաղթելու վստահությամբ, հավատով ու հույսով» է նայել գալիքին եւ լիահույս է եղել, որ «ազգային խտրականությունը, ազգերի իրաւունքների ոտնահարումներն ու բռնությունները, ազգամիջեան անհանդուրժողականությունը, ժողովուրդների դէմ գործուող յանցանքները բացառելու կամքի եւ ձգտումի արտայայտությունը պիտի լինեն Հայոց ցեղասպանութեան համընդհանուր ճանաչումն ու դատապարտումը»[16]։ Եւ այդ հույսով ու հավատով, սակայն «Եղեռնի չապաքինուած ցաւը եւ Հայ դատի արդար պահանջը սրտում», հայ ժողովուրդն այսօր կերտում է իր նոր ու ազատ կյանքը եւ «իր կորուսեալ երկրի պատկերը» վերակենդանացրել է՝ հայրենիքում կառուցելով Նոր Արաբկիր, Նոր Խարբերդ, Նոր Զեյթուն, Նոր Կիլիկիա, Նոր Մալաթիա[17]։*

Ըստ Հայոց հայրապետի՝ այդ ամենը մեկ անգամ եւս հավաստում է, որ հայ ժողովրդի հավաքական հիշողության մեջ ցեղասպանությունը լոկ

---

[15] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), էջ 326։*

[16] *Անդ, էջ 324–325։*

[17] *Տե՛ս անդ, էջ 328։*

պատմական տարեգրություն չէ, այլ դարձել է «արձանագրված կենդանի իրականություն»։ Ցավը սրտում՝ հայ ժողովուրդը պայքարել է նաեւ մարդկության դեմ ուղղված ոճրագործությունների եւ ազգահալած քաղաքականության ցանկացած դրսեւորման դեմ։ Վեհափառ Հայրապետը, միջազգային քաղաքական հանրությանը հասանելի դարձնելով «վերքն ու ցավը արարող ուժի վերափոխող» եւ արդարության պահանջով տոգորված հայ ժողովրդի ձայնը, մեկ անգամ եւս հիշեցնում է, որ «...եղեռնահար մեր ժողովուրդը չդադարեց յուսալ համընդհանուր դատապարտումը մեր նախնեաց դէմ գործուած եղեռնագործութեան՝ վասն արդարութեան բողոքի իր ձայնը միշտ հնչեցնելով ի լուր աշխարհի, որպէսզի նման ողբերգութիւններն այլեւս երբէք չմթագնեն մարդկութեան կեանքը»[18]։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցույց է տալիս, որ «վերընձյուղվելու աստվածատուր իր շնորհով» եւ ապագայի անսասան տեսիլքով հայ ժողովուրդը «հառնեց մահվանից», հաղթահարեց ցեղասպանության հետեւանքները եւ վերակերտելով իր ապագան՝ «Հայրենիքի փրկուած հողակտորի վրայ վերականգնեց պետականութիւնը, աւերակներից ու խլեակներից վերակերտեց հայրենի երկիրը, դարձրեց գիտութեան, կրթութեան, մշակոյթի, «լոյսի եւ յոյսի հայրենիք»[19]։ Վեհափառ Հայրապետը միաժամանակ բարձրաձայնում է, որ «միջազգային հանրությունը դեռեւս բարոյական պարտք ունի Հայոց ցեղասպանության դատապարտման գործում», եւ արթնության կոչով դիմում է հանրությանը. «Թող հայ ժողովրդի մարտիրոսական փորձառությունը՝ իբրեւ չարչարանաց դառն օրինակ, եւ դրա դատապարտումը՝ իբրեւ արդար անդրադարձ, պարզվեն լուսավորյալ բոլոր մարդկանց առաջ.... Այս լուսավոր հիշատակի վրա է, որ Մենք այսօր հույսով առլեցուն դիմում ենք միջազգային հանրությանը՝ գեթ մի պահ անդրադառնալու այն գիտակցված թմբիրին ու մոռացությանը, որով արդեն մեկ դար պարուրված է պատմության սրտի մեջ երկայր դաշույնի պես խոր մխրճված դառը պատմական փաստը՝ Հայոց Մեծ եղեռնը»[20]։ Վեհափառ Հայրապետը նաեւ հորդորում է դատապարտել մարդկության դեմ կատարված բոլոր եղեռնագործությունները եւ լիահույս պնդում է. «Հավատացած ենք, որ մարդկային խղճին նույնիսկ մի պահ անդրադարձը կարող է փոխել այն անտարբերությունն ու շահարկվող վերաբերմունքը, որն այսօր առկա է կատարված ու դեռ

[18] *«Էջմիածին», 2009, Դ., էջ 4։*
[19] *«Էջմիածին», 2014, ԺԲ., էջ 6։*
[20] *«Էջմիածին», 2014, Թ., էջ 24։*

շարունակվող ցեղասպանությունների եւ զանգվածային սպանությունների հանդեպ»[21]։

Մարդկության դեմ ուղղված ոճիրների միջազգային դատապարտման խնդիրը Հայոց հայրապետը կարեւորում է նաեւ այն շարակարգում, որ «Հայոց ցեղասպանության դատապարտումը նույնքան անհրաժեշտ է բոլոր ժողովուրդներին, որ դարավոր երազ ունեն հաշտության, խաղաղության, փոխվստահության, բարի կամեցողության *(ընդգծումը.– Ա. Ք.)»*[22]։ *Նա նշում է, որ թեեւ մի շարք պետություններ, նշանավոր պետական, հասարակական ու մշակութային գործիչներ ընդունել են Հայոց ցեղասպանության իրողությունը, սակայն դեռեւս իր հաղթանակին է սպասում եղեռնագործությունը դատապարտող համամարդկային արդարությունը, քանի որ՝ «Ութ տասնամյակից ավելի տեւած կեղծ հակահայկական քարոզչությունը, վավերագրերի ու փաստաթղթերի ոչնչացումը դարձավ, արդի ցեղասպանագետներից մեկի բնորոշմամբ, «ժամանակակից աշխարհում համընդհանուր անգիտության ու մոռացության ամենահաջողված օրինակը» (Ս. Կոհեն, Երուսաղեմի Եբրայական համալսարան)։* Եւ այսօր էլ՝ Հայոց Մեծ եղեռնից շուրջ հարյուր տարի անց, դեռեւս առկա են արդարության ու սեփական մեղքի գիտակցման զգացումները խեղդող սուտ ու մտացածին պատճառաբանություններ *(ընդգծումը.– Ա. Ք.)»*[23]։

Ի հակադրություն ժամանակակից Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունը մերժելու սնանկ պնդումներին՝ Հայոց հայրապետը հիմնավորում է, որ հայոց բնաջնջման ցեղասպանական ծրագիրն ունեցել է պետական հրահանգավորում եւ իրագործվել է պետականորեն օրինականացված գործողություններով։ Անվերապահ պաշտպանելով հայ ժողովրդի արդար իրավունքները՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը մատնանշում է, որ ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին հոգեվարք ապրող Օսմանյան կայսրության տարածքում հայերի ոչնչացման գաղափարը դարձել էր պետական քաղաքականություն եւ անկախ վարչաձեւից՝ իրագործվել է նպատակադիր ու հետեւողական կերպով։ Վեհափառ Հայրապետը մեր ժողովրդի ողբերգական պատմությունը եւ Մեծ եղեռնի հարցը շաղկապում է «համամարդկային արդարության» գաղափարի հետ եւ տեղափոխում «համամարդկային դաշտ»։ Նշյալ մոտեցումը նա բացատրում է

---

[21] *Անդ։*

[22] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), էջ 327։*

[23] *«Էջմիածին», 2014, թ., էջ 22–23։*

նրանով, որ հայոց պատմության այդ սեւ տարեգրությունը «արիւնալի եւ անլուր ողբերգութեան մռայլ էջ բացեց ոչ միայն մեր ժողովրդի, այլ նաեւ ազգերի պատմութեան մէջ» եւ այդ պատճառով էլ «սեւ խարանով դաջուեց մարդկութեան պատմութեան էջերում»[24]։

Վեհափառ Հայրապետը միանգամայն վստահ պնդում է, որ միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության դատապարտումը ոչ այլ ինչ է, եթե ոչ «ազգային խտրականութիւնը, ազգերի իրաւունքների ոտնահարումներն ու բռնութիւնները, ազգամիջեան անհանդուրժողականութիւնը, ժողովուրդների դէմ գործուող յանցանքները բացառելու կամքի եւ ձգտումի արտայայտութիւն...»[25]։ Իսկ նման իրականություն կերտելու արմատական քայլերից մեկը, վստահեցնում է նա, համայն հայ ժողովրդի արդարացի իրավունքների պաշտպանությունն է։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը փաստում է, որ թեեւ մեր դատը դեռեւս չի հաղթանակել, սակայն ջանքերն ամենեւին էլ անարդյունք չեն, քանզի «Հայոց ցեղասպանությունը դատապարտած առանձին մարդասեր անձանց այսօր փոխարինում են պետություններ, Եկեղեցիներ, միջազգային ու եկեղեցական կազմակերպություններ։ Այսօր Հայոց ցեղասպանության ճանաչման՝ մեր ժողովրդի արդար պահանջը թեեւ ոչ անհրաժեշտ հզորությամբ, բայց բազմաձայն դառնալու ուժականությամբ արձագանք է գտնում նաեւ Թուրքիայում։ Այս ամենը մեր ժողովուրդը մեկդարյա պայքարով է ձեռք բերել, միայնակ տոկացել, համբերել բազում նեղությունների, հանձն առել զոհողություններ, դրսեւորել նվիրում, հավատքի գերագույն ուժ եւ գործադրել մեծագույն ջանքեր՝ իր կյանքը վերընձյուղելու եւ բարձրացնելու, իր արդար դատը աշխարհին լսելի դարձնելու համար»[26]։

Գարեգին Բ. Կաթողիկոսը նաեւ նկատում է, որ ցեղասպան երիտթուրքերի կամ նրանց ժառանգների կողմից ժխտողականությունը բարոյական ծանրագույն հարված է ոչ միայն եղեռնը վերապրածների, այլ նաեւ խաղաղ եւ բարօր կյանքով ապրելու ձգտում ունեցող համայն մարդկության համար։ Նա նաեւ հիմնավորում է, որ ցեղասպանության կամ մարդկության դեմ բռնի որեւէ արարք չպետք է անպատիժ մնա, իսկ նման հանցագործությունների դատապարտումն ու կանխարգելումը որոնում է

---

[24] *Տե՛ս* Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), էջ 326, 324։*

[25] Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), էջ 324–325։*

[26] *«Էջմիածին», 2014, Ե., էջ 12–13։*

միջազգային համագործակցության ոլորտում։ Ահա թե ինչու Հայոց հայրապետը միանգամայն հիմնավոր պնդում է. «Անմեղ կյանքեր խլող եղեռնագործությունները, անկախ դրսեւորման ձեւերից ու եղանակներից, հանցագործություն են մարդկության դեմ եւ խստագույնս դատապարտելի։ Դրանց դեմ պայքարը՝ իբրեւ դարի մարտահրավեր, պարտքն է յուրաքանչյուր ժողովրդի, պետության, միջազգային հանրության եւ կառույցի *(ընդգծումը.– Ա. Ք.)»*[27]։

Շեշտելով, որ Հայոց ցեղասպանության դատապարտումը միաժամանակ պետք է հորդոր լինի ցեղասպանությունների համընդհանուր դատապարտման եւ մարդկության դեմ նման ոճիրների կանխարգելման գործում՝ Վեհափառ Հայրապետը, վերահաստատելով այդ հարցում Հայաստանի ու հայ ժողովրդի հանձնառությունը, նկատում է, որ ցավ ի սիրտ՝ Մեծ եղեռնի միջազգային դատապարտության գործընթացը դեռեւս հեռու է իր հանգրվանային կացությունից։ Իր ժողովրդի շահերը բարձրաձայնող Հայոց հայրապետը վստահեցնում է. «Արդարութեան համար՝ մինչեւ մեր դատի յաղթանակ, միասնաբար՝ Եկեղեցի, Ազգ եւ Պետութիւն, աննահանջ պիտի շարունակենք մեր պայքարը։ Արդարութիւն է պահանջում մեր անմեղ զոհերի արիւնը, մեր ժողովրդի կրած տառապանքը, արդարութիւն են պահանջում մեր աւերակուած սրբութիւնները, մեր ժողովրդի ոտնահարուած իրաւունքները, նաեւ՝ կեղծուող եւ խեղաթիւրուող պատմութիւնը մեր ժողովրդի»[28]։

Վերոնկարագրյալը վկայում է, որ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդես է գալիս իբրեւ ցեղասպանություն ապրած ժողովրդի ու նրա բյուրավոր նահատակների ոգեղենության ընդհանրական ներկայացուցիչ։ Նա իր անսասան հավատքի դիրքերից Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության մասին բարձրաձայնել է՛ւ միջազգային տարբեր կառույցների բարձր ամբիոններից, է՛ւ պետական ղեկավարների ու քաղաքական գործիչների հետ հանդիպումների ժամանակ, է՛ւ միջեկեղեցական ու միջկրոնական գործակցության, նաեւ անձնական նախաձեռնությունների ոլորտներում։

---

[27] *«Էջմիածին», 2015, Դ., էջ 24։ Արտահայտելով ցեղասպանության ճանաչման գործում հայ ժողովրդի սպասումները՝ Վեհափառ Հայրապետը հավաստում է. «Ցեղասպանութիւն վերապրած մեր ժողովուրդը հաւատացել եւ հաւատում է, որ տասնեակ երկրների, պետական, հասարակական կազմակերպութիւնների ու անհատների կողքին, որոնք ճանաչել են Հայոց ցեղասպանութիւնը, պիտի կանգնեն նորերը՝ համոզումով, որ արդարութեան հաստատումը պայմանն ու երաշխիքն է թշնամանքից եւ բռնութիւնից զերծ խաղաղ աշխարհի». «Էջմիածին», 2014, ԺԲ., էջ 7։*

[28] *«Էջմիածին», 2014, ԺԲ., էջ 6–7։*

Մեր ուսումնասիրած նյութի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ համազգային դատը հետապնդելու եւ հայ ժողովրդի հավաքական հիշողությունն ի լուր ամենքի հնչեցնելու գործին Ամենայն Հայոց Կաթողիկոսը ձեռնամուխ է եղել իր օծումից անմիջապես հետո։ 2000 թ. օգոստոսին ՄԱԿ-ի կրոնական եւ հոգեւոր առաջնորդների՝ Հազարամյակի աշխարհի խաղաղության գագաթնաժողովում աշխարհի կրոնական խճանկարը ներկայացնող պատվիրակությունների ներկայությամբ բարձրաձայնելով Հայոց ցեղասպանության հարցը՝ Վեհափառ Հայրապետը հայտարարել է. «Հոգեւոր ու բարոյական հավերժական արժեքների, ճշմարտության, ազատության, արդարության եւ իրավունքի ոտնահարումը մշտապես դուռ է բացում տարաձայնությունների ու հակամարտությունների համար։ Միայն վերջին հարյուրամյակում մարդկությունը վերապրել է համաշխարհային երկու պատերազմ։ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Օսմանյան Թուրքիայի կողմից մեկ ու կես միլիոն հայեր կոտորվեցին եւ գրեթե նույնքան տարագրվեցին իրենց պատմական հայրենիքից»[29]։ Գագաթնաժողովի մասնակիցներին նա հիշեցրել է նաեւ, որ մարդկության դեմ ուղղված ցեղասպանության հանցագործությունը չունի վաղեմության ժամկետ, եւ այդ պատճառով է, որ Հայոց ցեղասպանությունը լռության մատնելը չարիք դարձավ պատմության հետագա ընթացքի համար։ Հայոց հայրապետը իրավամբ նկատել է. «Եթե միայն մարդկային հասարակությունը ուժ եւ քաջություն ունենար կանխելու այդ կոտորածը կամ ցեղասպանությունից հետո դատապարտելու այդ եղելությունը, Հիտլերը, վեց միլիոն հրեաների ողջակիզումը նյութելիս, հնարավորություն չէր ունենա հայտարարելու. «Ո՞վ է հիշում հայկական կոտորածները»։ 85 տարի անց Հայաստանը եւ ողջ աշխարհում սփռված հայությունը դեռեւս սպասում են Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու համընդհանուր դատապարտմանը, որ որպես արդարության հաղթանակ՝ նույնքան անհրաժեշտ է աշխարհի բոլոր ժողովուրդներին՝ նաեւ թուրք ժողովրդին, քանզի չարիքը բացառելու ճանապարհը չարիքի մերժումն է մեր հոգիներում»[30]։

---

[29] *«Էջմիածին», 2000, Թ., էջ 9։*

[30] *Անդ։ Վեհափառ Հայրապետն ի լուր ամենքի հավաստել է. «Մենք հավատում ենք, որ Հայոց ցեղասպանությունը պիտի ճանաչվի ու դատապարտվի բոլոր պետությունների կողմից.... քանզի ոճիրի դատապարտումն է այն ճանապարհը, որով պիտի կանխվեն դրանց հետագա կրկնությունները, բռնություններն ու ահաբեկչությունները». «Էջմիածին», 2004, Զ., էջ 19–20։ Նա միաժամանակ վստահեցրել է. «Այս հավատով մեր ժողովուրդը աղոթող է, որպեսզի ոչ մի ժողովուրդ էլ չտեսնի ցեղասպանության ողբերգությունը։ Այսօր, երբ շատ պետություններ, միջազգային ու պետական կազմակերպություններ ճանաչում*

Այդ նպատակին են ծառայել նաեւ 2000 թ. նոյեմբերի 9-ին եւ 2001 թ. սեպտեմբերի 27-ին Կաթոլիկ Եկեղեցու Հովհաննես-Պողոս Բ. պապի եւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի համատեղ հայտարարությունները, որոնցում հաստատվել է Հայոց ցեղասպանության իրողությունը[31]։

Հայոց ցեղասպանության դատապարտման հարցում հետեւողական դիրքորոշման անուրանալի մեկ այլ վկայություն է Ամենայն Հայոց Կաթողիկոսի 2001 թ. ապրիլի 24-ի ուխտը Դեր Զորում։ Այդ առնչությամբ Վեհափառ Հայրապետը նշում է. «Իրականացրինք մի անկատար ուխտ, որ իղձն ու ցանկությունն էր անցնող Ի. դարի լուսահոգի Հայոց հայրապետների, անկատար մի ուխտ, որ իղձն ու երազանքն էր հայրենաբնակ մեր ժողովրդի, որովհետեւ անցած 86 տարիներին հնարավորություն չընձեռվեց, նրանք հնարավորություն չունեցան գալ Դեր Զոր՝ ծնրադրելու այդ սուրբ հողին, աղոթք բարձրացնելու առ Աստված, խնկարկելու նրանց անմահ հիշատակին։ Ահա՛, Հայոց հայրապետների օրհնությունն եմ բերել, ոչ միայն անցած դարի 132 Ամենայն Հայոց հայրապետների օրհնությունը, այլ նաեւ մեր ժողովրդի սերը։ Հայրենիքի սերն ու օրհնությունը մեր հոգում ծրարած՝ ուխտի եմ եկել։ Եկել եմ այդ օրհնությունը ծածկույթ դարձնելու Դեր Զորի անապատների վրա, որպեսզի այդ օրհնության ներքո նրանք հանգչեն խաղաղ ու հանգիստ, որպեսզի խաղաղվեն նրանց հոգիները՝ տեսնելով, որ իրենց երազները մարմին են առել եւ իրականություն են դարձել՝ ի դեմս Ազատ, Անկախ Մայր Հայաստանի *(ընդգծումը.– Ա. Ք.)»*[32]։

Եւ ոգեկոչելով մարտիրոսության ուղին ընտրած բյուր նահատակների հիշատակը՝ Գարեգին Բ. Կաթողիկոսն ասում է. «Մենք այս առիթով մեզ հետ հայրենիքից բերել եմք հող, որպեսզի Սուրեն Սրբազանն այդ հողը շաղ տա Դեր Զորի անյուններ վրա, որ նահատակները հանգիստ հանգչեն հայրենի հողի ներքո։ Բերել եմք նաեւ ջուր Ս. Էջմիածնից։ Գիտեմք, որ տասնյակ մղոններ անցած մեր նահատակները պապակ են, եւ հավատացած եմք, որ Ս. Էջմիածնից բերված այդ ջուրը պիտի նրանց պապակը մարի.... Նահատակաց մատուռին բերել եմք մի խաչ, որից լույս պիտի ճառագի նահատակներին, եւ նրանք պիտի այսուհետեւ հանգիստ հանգչեն *(ընդգծումը.– Ա. Ք.)»*[33]։

եւ դատապարտում են Հայոց ցեղասպանությունը, Մենք հավատում ենք, որ այս մեծ ոճիրի համընդհանուր ճանաչումը դառնալու է մարդկային կամքի դրսեւորում՝ մերժելու բռնություններն ու պատերազմները». «Էջմիածին», 2005, Զ., էջ 16–17։

[31] *Տե՛ս «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 11, 2001, Թ., էջ 29։*

[32] *«Էջմիածին», 2001, Դ., էջ 32։*

[33] *Անդ, էջ 30։ Վեհափառ Հայրապետը նաեւ ասել է. «Արդարեւ, սիրելիներ, բազմիցս խաչվելով չէ, որ խաչակից ենք Քրիստոսին, այլ որովհետեւ հարություն ենք առել, մահը*

Գարեգին Բ. Կաթողիկոսը վկայում է նաեւ, որ համայն հայության սպասումն է, որ խոսի արդարությունը, եւ դատապարտվի հայերի ցեղասպանությունը, քանզի՝ «Ցավի ու տրտմության մեջ մարդ չի կարող ստեղծարար կյանքով ապրել։ Ուրախությունը, բերկրանքը, սերը հոգում ծրարած անհատն է զորեղ, արի եւ ունակ հրաշագործելու»[34]։

Նորին Սրբությունը համոզված է նաեւ, որ Հայոց ցեղասպանությունը մոռացության մատնելու հետեւանքով մարդկության դեմ նման վայրագությունները շարունակական կլինեն։ Եւ հորդորում է նման անտարբերությանը վճռապես հակադարձել. «Մենք ապրում ենք պատմական բարդ ժամանակահատվածում, երբ միջազգային հանրության մեջ ավելի է խորանում երկակի չափանիշների կիրառումը, որը շատ հաճախ պայմանավորված է ոչ թե արդարության բարձր զգացումով, այլ տնտեսական կամ աշխարհաքաղաքական շահերով ու նախապատվություններով»[35]։ Նա Հայոց ցեղասպանության ճանաչման եւ միջազգային դատապարտման անհրաժեշտությունը բարձրաձայնել է նաեւ տարբեր երկրների պետական ու քաղաքական գործիչների հետ ունեցած հանդիպումների ընթացքում[36]։

Հայ ժողովրդի իրավունքների վերականգնման եւ պատմական արդարության հաստատման ջատագով Վեհափառ Հայրապետը միաժամանակ ուշադրություն է հրավիրել այն իրողության վրա, որ հայ ժողովրդի դեմ Օսմանյան Թուրքիայի ծրագրած անթիվ հալածանքները, տեղահանությունները, զանգվածային կոտորածներն ու ավերներն սկսվել են անհամեմատ ավելի վաղ[37] եւ իրագործվել են քաղաքակիրթ Արեւմուտքի ուղեկցող հայացքի ներքո։ *Եւ դատապարտելով ցեղասպանությունը ժխտելու ցանկացած փորձ՝ բարոյական մոտեցման դիրքերից* նա *պնդել է, որ աստվածային պատվիրաններին դեմ գործած ցանկացած բռնություն չունի եւ չի կարող ունենալ արդարացում։ Վեհափառ Հայրապետը նաեւ բարձրաձայնել*

կյանքով ենք ոտնակոխել եւ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի օրինակով ամոթապարտ թողել մեզ խաչողներին։ Մեր ժողովրդի տարագիր զավակները ստեղծարար իրենց կյանքը վերընձյուղեցին աշխարհի տարբեր երկրներում եւ քրիստոնյա հայի ազնիվ ու օրինավոր նկարագրով հարգանք ու վստահություն վաստակեցին ամենուր։ Այդ նույն քրիստոնյա հայը՝ հաց ստեղծող, արհեստավոր, վաճառական, բժիշկ ու ճարտարապետ, Օսմանյան Թուրքիայում անցնող դարասկզբին մահվան դատապարտվեց, քանզի բնիկ ու տոհմիկ ժողովուրդն էր Արարատի երկրի, քանզի դարերով վկայել ու վկայում էր իր հավատարմությունը Քրիստոսին ու Նրա սիրույն, որով մերժել էր չարը ու հաղթել մահեր». անդ, էջ 29։

[34] *Անդ, էջ 33։*

[35] *«Էջմիածին», 2014, Ե., էջ 13։*

[36] *Տես «Էջմիածին», 2001, Ե., էջ 23, Ժ.–ԺԱ., էջ 29, ԺԲ., էջ 21, 2002, Զ.–Է., էջ 9, 2004, Զ., էջ 16։*

[37] *Տես «Էջմիածին», 2009, Դ., էջ 3–4։*

է, որ իբրեւ զանգվածային բռնության եւ ոչնչացման քաղաքականություն՝ ցեղասպանությունը մերժելի ու դատապարտելի է ոչ միայն իրավական, այլ նաեւ պատմական, բարոյական, քաղաքակրթական ու այլ տեսանկյուններից։ Այդ շարակարգում Նորին Սրբությունը հավաստել է, որ ցեղասպանության մերժումը նույնպես յուրատիպ հանցագործություն է, ցեղասպանությունն արդարացնող գաղափարախոսություն եւ քարոզչության տրամաբանական շարունակություն։ Դրանով իսկ մերժման քաղաքականությունը վերածվում է ցեղասպանություն վերապրողների հոգեբանական վերականգնմանը խոչընդոտող երեւույթի։ Վեհափառ Հայրապետն ընդգծում է նաեւ, որ «Թուրքիայի համար նույնպես Հայոց ցեղասպանության ճանաչումը պիտի դառնար մարդկային իրավանց եւ ժողովրդավարության իրական նվաճում՝ առանց որի Թուրքիան պիտի դժվարանա կառուցել ազատ, արժանապատիվ ու երջանիկ կյանք»[38]։

Աներկբա է, որ միջազգային ամենատարբեր հարթակներում, տարբեր երկրների խորհրդարաններում, պետական, քաղաքական ու հոգեւոր գործիչների հետ ունեցած հանդիպումների ընթացքում եւ միջազգային գիտաժողովներում Հայ դատի ու պահանջատիրության առնչությամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետեւողական գործունեությունը եւ գնահատականները նպատակ են հետապնդել հասարակական կարծիք ստեղծելու Հայոց ցեղասպանությունը միջազգայնորեն դատապարտելու համար։ Վեհափառ Հայրապետի դիրքորոշումը չափազանց հստակ է. եթե ցեղասպանությունը չի պատժվում, ապա չկա նաեւ որեւէ երաշխիք, որ այն կրկին չի իրագործվի որպես քաղաքական եւ տնտեսական խնդիրներ լուծելու միջոց։ Այդ դիտանկյունից նա լիահույս է, որ եղեռնագործի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու համարժեք փոխհատուցումը պատմական դաս կլինի ներկա եւ ապագա բոլոր հայատյացների համար։

---

[38] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), էջ 334։ Նորին Սրբությունը նաեւ փաստում է, որ «ուրացման քաղաքականություն» որդեգրած Թուրքիան երիտթուրքերի ցեղասպան վարչակարգի «իրավահաջորդի իրավունքով» այսօր եւս շարունակում է նույն քաղաքականությունը։ Վկայությունը Քեսաբի 2014 թ. էթնիկական զտումներն էին եւ հայաթափումը։ Այդ առնչությամբ Վեհափառ Հայրապետը բարձրաձայնում է. «Ներկայիս ազգային մեր կյանքի մտահոգություններից է շարունակում մնալ Մերձավոր Արեւելքում, հատկապես Սիրիայում ապրող մեր ժողովրդի զավակների դժվարին կացությունը։ Վերջին շրջանում նոր տագնապ են հարուցել Քեսաբում, Թուրքիայի աջակցությամբ, ծայրահեղական զինյալների ծավալած ռազմական գործողությունները։ Հայաբնակ շրջանի ավերումը եւ հայ բնակչության տարհանումը շարունակությունն են հայ ժողովրդի հանդեպ որդեգրած թուրքական նույն ոճրագործ քաղաքականության, որին պիտի կարողանանք դիմակայել պետական, եկեղեցական, ազգային մեր կառույցներով՝ միասնական ջանքերով պաշտպանելով մեր ժողովրդի իրավունքները (ընդգծումը.– Ա. Ք.)». «Էջմիածին», 2014, Դ., էջ 9։*

Դաս առ այն, որ քաղաքական հարցերը հանցավոր ճանապարհով լուծելու նման եղանակն անխուսափելիորեն հարվածելու է հենց իրենց։

*Ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի իրավունքների վերականգնման եւ այդ հարցում պատմական արդարության հաստատման հետեւողական գործունեության բնութագրական մեկ այլ օրինակ է Գերմանիայի Քրիստոնյա-դեմոկրատական միություն եւ Քրիստոնյա-սոցիալիստական միություն խմբակցության կողմից Բունդեստագ ներկայացված դիմումի վերաբերյալ Գարեգին Բ. Կաթողիկոսի դիրքորոշումը։ Դիմումով առաջարկվում էր ոգեկոչել «Հայերի՝ 1915 թ. ապրիլի 24-ին սկիզբ առած տեղահանությունների եւ կոտորածների 90-ամյակը եւ նպաստել հայերի եւ թուրքերի հաշտությանը»։ Արտահայտելով հայ ժողովրդի միասնական կամքը՝ Վեհափառ Հայրապետը ողջունում, իր գնահատանքն ու օրհնությունն է բերում նախագծի հեղինակներին։ Բայց նաեւ իրավացիորեն պարզաբանում է, որ դիմումի մեջ հիշատակված «կոտորածներ» եւ «մահվան երթեր» սահմանումները չեն կարող հարցի արդարացի լուծում համարվել, քանի որ «Օսմանյան կայսրության տարածքում թուրքական իշխանությունների կողմից հայ բնակչության ոչնչացումը եղել է ծրագրված պետական քաղաքականություն եւ բնութագրվում է որպես «աղետալի ջարդարարություն», որպես «բնաջնջում» կամ «հիմնահատակ ոչնչացում», որը միջազգային օրենքների համաձայն՝ հանդիսանում է «ոճրագործություն ընդդեմ մարդկության» (*crime against humanity*)[39]։*

Նա վկայում է նաեւ, որ այդ ճանապարհով են ընթացել 16 երկրի օրենսդիր մարմինները, որոնք ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիայի հիման վրա ճանաչել եւ օրենքով հաստատել են Հայոց ցեղասպանության իրողությունը։ Այդ բովանդակությամբ 1983 թ. սկսյալ հայտարարություններ է կատարել Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (ԵՀԽ) եւս։ 2000 թ. «Հայկական ցեղասպանություն» բանաձեւում է ընդունել նաեւ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին։ 1987–2005 թթ. ընթացքում նույն բովանդակությամբ չորս բանաձեւ է ընդունել նաեւ Եւրոպական խորհրդարանը։ Պնդելով, որ «Հայ ժողովրդի հոգում ցեղասպանության ցավը վերստին արթնանում է Թուրքիայում ցեղասպանության պաշտոնական ժխտմամբ, ինչպես նաեւ թուրքական ժխտումը արդարացնելուն կամ նույնիսկ մեղմելուն միտված երրորդ կողմի բոլոր փորձերով»՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը Գերմանիայի Բունդեստագին

---

[39] *Մանրամասները տե՛ս* ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, *Հատընտիր պաշտոնական (1999–2009 թթ.), էջ 335–336։*

գրում է. «Քրիստոնյա-դեմոկրատական եւ Քրիստոնյա-սոցիալիստական միության դիմումագրի մեջ բացակայում է «ցեղասպանություն» բառը։ Հետեւաբար՝ դիմումագիրը արդար չէ իր իսկ առջեւ դրված նպատակի հանդեպ, որ է՝ նպաստել հայերի եւ թուրքերի միջեւ հաշտեցմանը։ Երկու ժողովուրդների հաշտությունը կարող է տեղի ունենալ միայն պատմական ճշմարտության ճանաչման հիմքի վրա։ *Գերմանիան իր նպաստը կարող է բերել՝ ընդունելով իրավական արժեք ունեցող հայտարարություն, որով ընդգծվի, որ Հայոց Մեծ եղեռնը ցեղասպանություն է՝ համապատասխան ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիայի (ընդգծումը.–* Ա. Ք.*)»*[40]։

Վերոնշյալ հարցին Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձել է նաեւ 2006 թ. սեպտեմբերին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում տեղի ունեցած Համաշխարհային եւ ավանդական կրոնների կրոնապետերի երկրորդ համագումարում, որտեղ նրա կողմից բարձրացված՝ ցեղասպանության դատապարտման անհրաժեշտության պնդումն ընդունվել է ծափողջույններով[41]։ *Առավել բնութագրական է 2006 թ. հունիսին Ստամբուլում Թուրքիայի մի շարք լրատվամիջոցների ներկայացուցիչների համար Գարեգին Բ. Կաթողիկոսի մամուլի ասուլիսը, որտեղ «Իրեն ուղղուած բազում հարցերուն Վեհափառը կը պատասխանէր վճռական ու Հայրապետին յատուկ քաջութեամբ. «Ցեղասպանութիւնը պատմական փաստ է. մեզի համար վիճարկելի հարց չէ Եղեռնը»։ Պատմութեան ձայնը կարձագանքէր Վեհափառի հոգիէն։ Ազատ աշխարհի մէջ նոյն խօսքը չէր կրնար ունենալ նոյն կշիռը, քան այն տեղին մէջ, որտեղ նահատակներու ոգին կը սաւառնէր՝ լսելու համար արդարութեան ձայնը.... Նահատակներու կտակէն բխած նոր կտակը կը բերուէր առաւել բոցավառելու յաւերժական կրակը, որը ուրիշ բան*

---

[40] *Տե՛ս անդ, էջ 337։ Այս շարակարգում, անկասկած, չափազանց կարեւոր իրադարձությունների շարքում պետք է դասել Առաջին աշխարհամարտում Թուրքիայի դաշնակիցների՝ Ավստրիայի (Ավստրո-Հունգարիա) 2015 թ. ապրիլի 22-ի (տե՛ս «Արմենպրես», 24 սեպտեմբերի 2015 թ.) եւ Գերմանիայի կողմից* «1915 թ. հայերի եւ մյուս քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանության հիշատակի եւ ոգեկոչման մասին» *2016 թ. հունիսի 2-ի բանաձեւերի ընդունումը (տե՛ս «Արմենպրես», 2 հունիսի 2016 թ.)։*

[41] *Տե՛ս «Էջմիածին», 2006, Թ., էջ 18։ Բնութագրական է նաեւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու եւ ԱՊՀ երկրների Միջկրոնական խորհրդի կողմից 2006 թ. Մոսկվայում կազմակերպված 49 երկրի կրոնական առաջնորդների ու հոգեւոր ներկայացուցիչների գագաթնաժողովում Գարեգին Բ. Կաթողիկոսի հավաստումն այն մասին, որ «Մենք պետք է խոստովանենք, որ մինչեւ մեր կողմից չեն դատապարտվի պատմական բոլոր չարագործությունները մարդկանց եւ ազգերի նկատմամբ, ավերածություններն ու ցեղասպանությունները, մենք կշարունակենք մնալ դրանց կրկնության վտանգի առջեւ, ինչի վկաներն էլ մենք հաճախ դառնում ենք այսօր». «Էջմիածին», 2006, է.–Հ., էջ 7։*

չէ, եթէ ոչ արշալոյսուող նոր Հայաստանը՝ Ս. Էջմիածնի ժայռին վրայ խարսխուած»[42]։

2007 թ. աշնանը Ամերիկա կատարած հովվապետական այցելության շրջանակում Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ԱՄՆ 110-րդ կոնգրեսի ներկայացուցիչների պալատում անդրադառնալով Հայոց ցեղասպանության հարցին, նշել է. «Մենք հիշում ենք Հայոց ցեղասպանության զոհերին, ցեղասպանություն, որի հետեւանքները դեռեւս ապրում է ողջ աշխարհը՝ ցեղասպանության նորանոր դրսեւորումներով»[43]։ Խոսնակ Նենսի Փելոսիի հետ հանդիպմանը Նորին Սրբությունն իր երախտագիտությունն է հայտնել նրան եւ այն կոնգրեսականներին, որոնք քաղաքական խիզախություն են դրսեւորել եւ հանձնառու են դարձել հասնելու Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչմանը[44]։

Ցեղասպանություն վերապրած ժողովրդի հայրապետը, քաջ գիտակցելով սիրո, եղբայրության, ժողովուրդների բարեկամության, խաղաղ եւ ապահով կյանքի արժեքը, մեկ անգամ չէ, որ կոչ է ուղղել բոլոր ազգերին ու երկրներին՝ առաջարկելով «...համընդհանուր դատապարտության արժանացնել պատմության մեջ կատարված եւ ներկայիս իրագործվող բոլոր ցեղասպանությունները, որպեսզի իշխանության կրողները անդրադառնան պատասխանատվությանը եւ հետեւանքներին այն բոլոր ոճիրների, որ գործվել եւ գործվում են Աստծու ստեղծագործության նկատմամբ, եւ որ այդ իրողությունների մերժումը նույնքան մեծ անարդարություն է, որքան իրագործումը»[45]։ Գարեգին Բ. Կաթողիկոսը բազմիցս բարձրաձայնել է նաեւ այն մասին, որ Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումը կնպաստի ապահով եւ արդար աշխարհի կերտմանը։ Արտահայտելով աշխարհասփյուռ հայ ժողովրդի միասնական կամքը՝ նա հավաստել է. «...Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը հրավեր է աշխարհին՝ անտարբեր չգտնվելու մարդկային տառապանքի ու նորօրյա

---

[42] «Էջմիածին», 2006, Զ., էջ 55։ Ասուլիսի ամբողջական նյութը տե՛ս անդ, էջ 28–33։

[43] «Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 24–25։

[44] Տե՛ս անդ, էջ 25։ Այդ օրն էլ Կոնգրեսի արտաքին գործերի հանձնաժողովն ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող թիվ 106 բանաձեւը։ Արժանահիշատակ է նաեւ, որ 2014 թ. ապրիլի 10-ին ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 12 կողմ, 5 դեմ ձայներով ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող թիվ 410 բանաձեւը, որը, ցավոք, Կոնգրեսի հավանությանը չարժանացավ։

[45] Տե՛ս «Էջմիածին», 2008, Ե., էջ 7։ Իսկ Հռոմի քահանայապետական Սալեզյան համալսարանում Վեհափառ Հայրապետը նաեւ մատնանշել է. «Այսօր էլ Թուրքիայում շարունակվում է մշակութային եղեռնը։ Այն, ինչ չէր ավերվել ցեղասպանության տարիներին, ավերվում է այսօր։ Լավագույն դեպքում հայկական եկեղեցիները վերածվել են մզկիթների կամ ծառայեցվել են տնտեսական նպատակներով». անդ, էջ 11։

նահատակությունների հանդեպ, գործադրելու առավել ջանքեր՝ դադարեցնելու եւ կանխելու համար մարդկության դեմ գործվող ոճիրները։ Սա է այն պտուղը, որ պիտի աճի նահատակության արմատից»[46]։ Դա առավել կարեւոր է նաեւ այն պատճառով, մատնանշել է Վեհափառ Հայրապետը, որ Օսմանյան կայսրության եւ Թուրքիայի այլ վարչակարգերի կողմից Ի. դարասկզբին ծրագրված ու գործադրված հրեշավոր ոճրագործությունների եւ «եղեռնագործությունների ալիքը չշրջանցեց նաեւ Օսմանյան կայսրության ազգային ու կրոնական մյուս փոքրամասնություններին, ինչպես՝ եղբայրական հույն եւ ասորի ժողովուրդների զավակներին»[47]։

Հայ Եկեղեցու բարձրագույն նվիրապետը ցեղասպանության հարցին անդրադարձել է նաեւ ազգային մշակույթի ոչնչացման հոլովույթում։ Այդ դիտանկյունից նա պնդել է, որ ցանկացած ժողովրդի ազգային ինքնությունը այլ բան չէ, քան ինքնանույնացում նրա ներկայի եւ անցյալի հետ, որ ինքնությունը յուրահատուկ «հոգեւոր ու հասարակական հիշողություն է», «Արարչի կողմից ազգությանը տրված անանց բարոյական արժեհամակարգի» պահապանը, որը ձեւավորում է նաեւ ազգային մշակույթն ու կենսաձեւը։ *Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերահաստատել է, որ Հայոց ցեղասպանությունն ուղեկցվել է նաեւ ազգային մշակույթի ոչնչացմամբ։ Այդ առնչությամբ Վեհափառ Հայրապետը նշել է. «Ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում ուղեկցվեց նաեւ մշակութային եղեռնով։ Բազմաթիվ սրբավայրեր՝ եկեղեցիներ, վանքեր, մենաստաններ, հոգեւոր ու մշակութային նվիրական արժեքներ անդառնալիորեն ոչնչացվեցին»[48]։ Ապա հավելել է, որ այդ ամենի արդյունքում «Թալանուեց դարերով ստեղծուածը, արդար վաստակը մեր ժողովրդի։ Խոնարհուեցին ու աւերուեցին հազարաւոր մեր վանքերն ու եկեղեցիները, ազգային հաստատութիւնները, դպրոցները, ոչնչացուեցին եւ կորստեան մատնուեցին մեր հոգեւոր ու մշակութային արժէքները»[49]։ Նա սրտի ցավով փաստում է նաեւ, որ հայ ժողովրդին պատուհասած եղեռնագործությունը «...ողջ աշխարհով մեկ սփռեց ու ցրեց նաեւ նրա բազմադարյա մշակույթի հրաշքով փրկված բեկորները՝ կիրառական արվեստի նմուշներից մինչեւ համաշխարհային քաղաքակրթության գանձերը համալրած ռոսլինյան ձեռագիր մատյանները»[50]։*

---

[46] *Տե՛ս «Էջմիածին», 2015, Դ., էջ 21։*

[47] *Անդ, էջ 26։*

[48] *Անդ, էջ 27։*

[49] *«Էջմիածին», 2014, ԺԲ., էջ 6։*

[50] *«Էջմիածին», 2000, Թ., էջ 39։ Հայոց հայրապետը «մշակութային վանդալիզմի» անուրանալի վկայություն է համարել նաեւ ներկայիս Ադրբեջանի Նախիջեւանի*

Վերոնշյալը նկատի ունենալով՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. Կաթողիկոսները, 2013 թ. ապրիլի 24-ի համատեղ հայտարարությամբ կոչ ուղղելով Թուրքական պետությանը, պահանջեցին՝ «1. Ճանաչել Հայոց ցեղասպանությունը, 2. Ամբողջապես հատուցել հայ ժողովրդի կրած կորուստների եւ մարդկային ու ազգային ոտնահարված իրավունքների դիմաց, 3. Անհապաղ վերադարձնել հայ ժողովրդին՝ որպես իրավատիրոջ, հայկական եկեղեցիները, վանքերը, եկեղեցապատկան կալվածքները եւ հոգեւոր-մշակութային արժեքները»[51]։

Եւ իբրեւ ամենի տրամաբանական հանգուցալուծում՝ պետք է դիտարկել նաեւ Հայ Եկեղեցու կողմից *2015 թ. ապրիլի 23-ին* «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» ցեղասպանության նահատակ-վկաների սրբադասումը: *Այդ առնչությամբ Վեհափառ Հայրապետը հավաստել է. «Ցեղասպանության նահատակների սրբադասումը կենարար նոր շունչ, շնորհ եւ օրհնություն է բերում եկեղեցական ու ազգային մեր կյանքում։ Մենք հավատում ենք, որ մեր ժողովրդի հոգեւոր նոր վերածննդի պսակն ենք հյուսում՝ Հայոց ցեղասպանության նահատակներին սրբադասելով։ Մեր սուրբ նահատակների հիշատակն այլեւս ոչ թե զոհի ու ննջեցյալի հոգեհանգստյան աղոթք է, այլ՝ հաղթանակած ու նահատակության արյամբ սրբագործված անմարմին զինվորների հաղթական օրհներգություն»[52]։*

ինքնավար մարզի տարածքում գտնվող հայկական Ջուղա քաղաքի գերեզմանատան հազարավոր հուշարձանների՝ վաղքրիստոնեական մշակույթի հնագույն եզակի արժեքների բարբարոսական ոչնչացումը։ Եւ «բարբարոսության այդ դրսեւորման» մասին նա աներկբա հավաստել է. «Մշակութային եղեռնի նման երեւույթը, նաեւ հայոց գերեզմանների պղծումը երբեք չեն կարող նպաստել մեր ժողովուրդների բարի կամեցողության ու խաղաղասիրության ոգու զորացմանը». «Էջմիածին», 2003, Ժ.–ԺԱ., էջ 23։

[51] «Էջմիածին», 2013, Դ., էջ 7։

[52] «Էջմիածին», 2015, Դ., էջ 34–35։ Նորին Սրբությունը հավելել է նաեւ. «Ցեղասպանության մեր սուրբ նահատակների բարեխոսության անդրանիկ հայցով այսօր Մեր աղոթքն ենք վերառաքում առ Աստված, որ Իր օրհնության ներքո անխոով պահպանի մեր ժողովրդին ու համայն մարդկությանը, որ հագենա արդարության ծարավի հոգին մեր ժողովրդի, որ աստվածային ողորմությամբ արդարության եւ ճշմարտության շողերը փայլատակեն աշխարհում ու ցրեն մարդկության կյանքն ալեկոծող ոճիրների, եղեռնագործությունների խավարը, եւ եղբայրության ու համերաշխության մեջ մարդկությունը կերտի իր բարօր, երջանիկ կյանքը». անդ, էջ 35։

ԼՈՒՍԻՆԷ ՎԱՐԴԱՆԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՇԱԿՈՒԹԱԽՆԱՄ ԱԶԳԱՆՈՒԷՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ (2000–2019 ԹԹ.)

Հայ ժողովրդի կեանքում պետականութեան ու պետութեան կորստի անապահով ժամանակներում թէ աշխատանքի ու արարման վաստակած խոնջենքի մէջ մշտապէս եղել է Հայոց Եկեղեցու լոյսի առաջնորդութիւնը, ուղղորդել նրան դէպի քրիստոնէական խաղաղութեան ու սիրոյ դժուար տրուող, սակայն կենսապարգեւ յաղթանակը։

1999-ից Հայոց Եկեղեցու այդ առաքելութիւնը պէտք է իրականացնէր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Ներսիսեանը։ Նրա հայրենանուէր եւ պետականամէտ գործունէութեան ծիրում մշտառկայ է հայոց մշակոյթը՝ որպէս հայ ոգու յարատեւութեան յայտանիշ եւ ազգային ինքնութեան պահպանման անխաթար միջոց։

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջին իսկ կոնդակում հայոց մշակոյթը բնորոշուած է որպէս Լոյսի էատարր, որպէս փրկող եւ աստուածային շնորհ. «Յարութեան յաղթական հաւատքը դարձրած արարող զօրութիւն, աղօթաբոյր մատեան, ծաղկեցինք, գիտութեան կաճառ վանքեր հիմնեցինք, դարերի մէջ մեզ բաժին ընկած փշոտ ճանապարհներին երգ ու բառով, գոյն ու քարով երկնեցինք զարմանահրաշ մշակոյթը մեր»[1]։

Կոնդակում շեշտուած է այն հանգամանքը, որ «Եկեղեցու ունեցուածքը՝ որպէս համազգային սեփականութիւն», *ի թիւս այլ ոլորտների՝ եկեղեցական, կրթադաստիարակչական, տնտեսական, ընկերային եւ այլն, սպասաւորելու է նաեւ մշակութային ոլորտը՝ ամեն կերպ նպաստելով նրա զարգացմանը (տե՛ս 2000, Բ., էջ 8)։*

---

[1] *«Էջմիածին», 2000, Բ., էջ 5 (այսուհետ «Էջմիածին» ամսագրից մէջբերումների յղումը կնշուի բնագրում՝ միայն տարեթուի, համարի եւ էջի յիշատակումով)։*

Այսօր՝ արդէն տարիներ անց, ասուածի առաջին պարզ եւ ակնառու վկայութիւնը մշակութային գործիչներին ուղղուած, ինչպէս նաեւ արուեստի, գիտութեան եւ կրթութեան կարեւոր իրադարձութիւնների առիթով տրուած հայրապետական օրհնութեան գրերն ու կոնդակներն են, որոնց 20-ամեայ պատմութիւնը հայ ազգի մշակութային կեանքի իւրօրինակ օրագիրը կարող է լինել, Հայոց Հայրենիքի, Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան ճշմարիտ վաւերագիրը։

Փորձենք թերթել այդ «վաւերագիրը»՝ քաղաքերումներ ընթերցելով օրհնութեան գրերից եւ կոնդակներից։

Գիտական ձեռնարկումներ

Յայտնի է, որ գիտական կեանքի մի կարեւոր մասն են կազմում գիտաժողովները, որոնք գիտական նորոյթներ հրապարակելու, գիտական հարցեր քննարկելու, նոր հետազօտութիւնների դուռ բանալու լաւագոյն հարթակ են։ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծ կարեւորութիւն է տալիս թէ՛ Մայր Աթոռում, թէ՛ այլուր տեղի ունեցող նման միջոցառումներին՝ յաճախ պատւում դրանք իր ներկայութեամբ, հայրապետական օրհնութեան խօսքով կամ գրով բարի եւ արդիւնաւոր ընթացք մաղթում գիտական այդ ձեռնարկներին։ Յիշատակենք Վեհափառ Հայրապետի 20-ամեայ գահակալութեան ընթացքում տեղի ունեցած գիտաժողովներից մի քանիսը։

2000 թ. ապրիլի 18-ին ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիայում հրաւիրուած «21-րդ դարը՝ առանց ցեղասպանութիւնների» գիտաժողովն սկսուեց Հայոց Հայրապետի օրհնութեան խօսքով, որը Մեծ եղեռնի 85-րդ տարելիցին եւս մէկ անգամ դատապարտում էր ընդդէմ մարդկութեան գործուած այդ յանցագործութիւնը, ոգեկոչում ժամանակի առաջադէմ անհատների՝ Հենրի Մորգէնթաուի, Եօհաննէս Լէփսիուսի, Արմին Վէգներ եւ այլոց խիզախումը յանուն արդարութեան, իսկ յետոյ եկողներիս շարունակական պայքարի կոչում ճշմարտութեան վերջնական յաղթանակի համար՝ ի շահ ոչ միայն հայ ժողովրդի արդար դատի, այլ նաեւ ի նպաստ համայն մարդկութեան (2000, Դ., էջ 16–17)։

Ժամանակագրօրէն առաջ անցնելով՝ նշենք՝ 2005 թ. ապրիլի 20-ին՝ ուղիղ հինգ տարի անց՝ Հայոց ցեղասպանութեան 90-րդ տարելիցին նուիրուած համաժողովին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց

Կաթողիկոսը, իր ողջոյնի եւ օրհնութեան խօսքը բերելով միջազգային համաժողովի մասնակիցներին, միւս երկրների հետ նաեւ Յեղասպանութիւնն իրականացրած երկրին՝ Թուրքիային կոչեց ճանաչել իր իսկ գործած ոճիրը, քանզի միայն այդպէս է հնարաւոր արդարութեան եւ ճշմարտութեան յաղթանակը, քանզի չճանաչուած եւ չդատապարտուած ոճիրները նոր ոճիրներ են ծնում, մահուան քարաւանները շարունակւում են համակենտրոնացման ճամբարներով եւ գազախցիկներով (2005, Դ., էջ 21)։

Ժամանակագրօրէն շատ աւելի առաջ անցնելով՝ նշենք, որ մարդկութեանն ուղղուած այս նոյն պատգամը Վեհափառ Հայրապետը հնչեցրել է նաեւ «Աւրորա» մրցանակաբաշխութեան առիթով (5 մայիսի, 2017 թ.)։ Պատգամն ի մասնաւորի ասում է. ««Աւրորա» մրցանակաբաշխութիւնը աւելի լաւ ու բարի աշխարհ կառուցելու իւրօրինակ կոչ ու հրաւէր է քաղաքակիրթ աշխարհին՝ հետեւողականօրէն պայքարելու ընդդէմ մարդկութեան դէմ իրագործուող յանցագործութիւնների, որոնք չունեն որեւէ արդարացում։ Մարդասիրական արժէքների տարածումով է, որ պիտի արդիւնաւորուեն ջանքերը յանուն աշխարհի խաղաղութեան եւ ազգերի ու պետութիւնների միջեւ համերաշխ գոյակցութեան՝ աստուածային լոյսն ու շնորհներն առատացնելով մարդկային կեանքում» (2017, Ե., էջ 9–10)։

2000 թ. եւս մէկ կարեւոր ձեռնարկ պէտք է իրականացուէր Գիտութիւնների ազգային ակադեմիայում՝ գիտաժողով՝ նուիրուած Մխիթարեան միաբանութեան 300-ամեակին։ Մխիթարեանների գործունէութեան համապարփակ լուսաբանումներով էր յագեցած Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը։ Մասնաւորապէս նշւում էր, որ Մխիթար Սեբաստացին եւ նրա հիմնած միաբանութիւնն արեցին ամեն հնարաւորը՝ հայ մշակոյթը զարգացնելու, ամեն գնով հարազատ ժողովրդին ծառայելու համար։ Օտար ափերում նրանք ստեղծեցին մի փոքրիկ Հայաստան եւ երբեք չմոռացան իրենց տպագրած գրքերի տիտղոսաթերթերին նախ եւ առաջ ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը, իսկ Եւրոպայում ընդունուած Փրկչական թուականի կողքին՝ Հայաստանեայց Եկեղեցում ընդունուած հայոց թուականը դաջել։

Իր խօսքի աւարտին Վեհափառ Հայրապետը նաեւ մի յուզիչ դրուագ յիշատակեց Մկրտիչ Խրիմեանի եւ Ղեւոնդ Ալիշանի կեանքից, որը երկու հայրենասէր գործիչների ընդհանուր եւ միաւորող սիրոյ օրինակելի վկայութիւնն էր։ Մէջբերենք այդ հատուածը. «Խորհրդանշական մեծ իմաստ ունեն երբեմն պարզ զուգադիպութիւնները, ինչպէս

Խրիմեան Հայրիկի ու Ղեւոնդ Ալիշանի պարագայում, որ ծնուել են մի-եւնոյն՝ 1820 թ. եւ համընթաց անցել ութ տասնամեակների վաստակեալ ճանապարհ։ Ժողովուրդը Խրիմեանին անուանեց Հայոց Հայրիկ, իսկ հայր Ալիշանին՝ Հայոց Նահապետ, հոգեւոր կամուրջ կապելով Ս. Էջմիածնից մինչեւ Ս. Ղազար եւ 1901 թ. տօնախմբելով իր խնկելի մեծերի 80-ամեայ տարեդարձները։ Այդ օրերին Վենետիկում յիշւում էր Ս. Էջմիածինը, իսկ Մայր Աթոռում՝ Ս. Ղազարը։ Արդէն դողդոջուն Նահապետը, յիշելով մշտառոյգ Խրիմեանին, ասում է. «Ան Մասսի հովին տակ կը քնանայ, Արաքսի ջուրը կը խմէ, Հայաստանի հացը կ'ուտէ, անոր հողի ուժը կ'առնէ»։ Հայոց Նահապետին նոր ուժ ու զօրութիւն պարգեւելու համար Հայոց Հայրիկը պատուիրում է՝ «Մասիսի հողէն, Երասխի ջուրէն ու Հայաստանի ծաղիկներէն քիչ մը վերցնեն եւ փոքրիկ արկղով մը ղրկեն Վենետիկ»։ Աւա՜ղ, սակայն, այն ուշ տեղ հասաւ եւ ցօղուեց հայր Ալիշանի թարմ հողաթմբին» (2000, ԺԱ., էջ 37–39)։

Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի կարեւորութիւնը ողջ հայութեան սրտում է։ Յայտնի է նաեւ այն սերտ համագործակցութիւնը, որ մշտապէս եղել է Մայր Աթոռի եւ Մատենադարանի միջեւ, ի վերջոյ, Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանն ստեղծուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերուած ձեռագրերի հիման վրայ։ Իր գահակալութեան սկզբում Գարեգին Բ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն իր անդրանիկ այցելութիւնը Մատենադարան նշանաւորեց այդ անգին հաւաքածուն եւս մէկ մատեանով հարստացնելով՝ ընծայաբերելով ԺԲ. դարի ձեռագիր մի Աւետարան։ Յատկանշական է նաեւ նրա՝ Մատենադարանին տուած բնութագիրը, որում արտացոլուած է գրի եւ գիտութեան հանդէպ ողջ հայ ժողովրդի սրբազան երկիւղածութիւնն ու պատկառանքը. «Երբ մուտք ես գործում Մատենադարան, ակամայից ձեռքդ շարժւում է դէպի ճակատդ, որպէսզի խաչակնքես, քանզի Մատենադարանը մեզ համար տաճարի եւ սրբութեան ընկալում ունի» (2000, Ե., 47)։

Ի յաւելումն նշենք՝ հայ ժողովրդի բնորոշ գծերից մէկը նրա գրքասիրութիւնն է, գրքի զօրութիւնը գիտակցելու, գրքով վերապրելու կարողութիւնը եւ անգամ մահուան օրհասի մէջ գիրքն անձնուիրաբար փրկելու վճռականութիւնը։ Ի լրումն այդ սիրոյ է տրուած Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի սրբատառ կոնդակը Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղօթամատեանի գրութեան 1000-ամեակի առիթով (2002, ԺԱ.– ԺԲ., էջ 3–5)։ Կոնդակը նախախնամ խորհուրդ է տեսնում

«Մատեանի...» գրութեան 1000-ամեայ եւ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամեայ յոբելեանների համընկնումի մէջ, նորոգութեան մի նոր պատգամ, որը փրկարար աղօթքի կոչ է նաեւ. «Հոգի ու մարմին ամոքող բուժարար աղօթքով Սուրբ Նարեկացու հետ նայենք հոգուց ներս ու տեսնենք այնտեղ անհասանելի Աստուծոյ անընդմիջելի մերձաւորութիւնը։ Հաւատով հաստատենք մեր ընթացքը դէպի ակունքը կեանքի, ակունքը ամենայն բարեաց ու շնորհաց, Աստծուն ընտրենք մեր գործերին զօրակից եւ Սուրբ Նարեկացու հետ բարձունքներն ի վեր աղօթք խնկարկելով՝ հաւատով հայցենք, որ Փրկիչ Տէրը ամենախնամ ու փրկագործ Իր Սուրբ Նշանը դրոշմի մեր բոլոր ճանապարհներին» (2002, ԺԱ.–ԺԲ., էջ 4)։

Գրի եւ գրքի նկատմամբ պաշտամունքի հասնող սիրոյ մէկ այլ նշան, որը, թերեւս, ամենից առաջինն ու թանկն է, Հայոց գրերի գիւտին նուիրուած տօնն է, որի 1600-ամեայ յոբելեանի առթիւ է Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ տրուած 2005 թ. յունուարի 29-ին, Հայոց ՌՆԾԴ. թուին։ Յիրաւի, ինչպէս Կոնդակի սուրբգրային բնաբանն է ասում. «Յիշեաց զմեզ Տէր եւ օրհնեաց զմեզ» (Սղմ. ՃԺԳ. 12), եւ հայ ժողովուրդն ունեցաւ այն աստուածապարգեւ գիրը, որի շնորհիւ «Հայաստանի հողը պաշտպանուած եղաւ, թէ՛ ոտնակոխ, կանգուն եղաւ Հայոց պետականութիւնը, թէ՛ կործանուած, երեսունվեց տառերով, Գրով Կենդանի միշտ պաշտպանուած մնաց հայ հոգին, քանզի մաշտոցեան նշանագրերը, մագաղաթին շարուելով, հոգիներում էին գրի առել մեր ժողովրդի գոյութեան իմաստն ու խորհուրդը» (2005, Ա., էջ 16)։

Իր խօսքում Վեհափառ Հայրապետն այսպիսի պատգամ յղեց համայն հայութեանը. «Սիրելի՛ ժողովուրդ Հայոց, սրտիդ սեղմած պահպանի՛ր մաշտոցեան գիրը մեր հարազատ, եւ միշտ նուիրական պիտի մնան մեր Հայրենիքն ու Սուրբ Եկեղեցին։ Սիրի՛ր մեր մայրենին, ու պիտի գովերգուեն փառքերը նախնեաց, շնորհը ծաղկի, տեսիլքը ազնիւ ու մաքուր եւ ձգտումը վսեմ՝ հայրենեաց կեանքում։ Լուսաւոր ու պայծառ պահի՛ր Հայոց դպրոցը, եւ մեր զաւակների հետ յաւէրժի մասին պիտի զրուցեն Ագատն Արարատ, Մայր Արաքս ու Մայր Տաճար, որ ընդմիշտ յիշում են այն երջանիկ օրերի խնդութիւնը, երբ պատուական մեր ուսուցիչները հայերէն հնչող Աստուծոյ խօսքով երանելի, ցանկալի ու սքանչելի դարձրեցին Հայոց աշխարհը» (2005, Ա., էջ 16)։

Ի տեղին յիշենք նաեւ ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիայում Հայոց գրերի գիւտի 1600-ամեակին նուիրուած միջազգային

գիտաժողովի մասին, որն իրականացում էր Մատենադարանի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի օժանդակութեամբ։ Մասնակիցներին ուղղուած Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջոյնի խօսքում, որտեղ ընդգծուած է գրերի գիւտի փրկարար նշանակութիւնը հայ ժողովրդի կեանքում, հայ ազգի յարատեւութիւնը շաղկապուած սահակ-մեսրոպեան մշակոյթի աւանդներին, Սուրբ Թարգմանչաց գործի շարունակութեանը, երեւակում է այդ իրադարձութեան բացառիկ արժէքն ու նշանակութիւնը։ Մէջբերենք մի հատուած. «Մեր պատմութեան հերոսական օրինաչափութիւններից է, որ յաճախ, անգամ օրհասական պայմաններում, հայ միտքը ծնունդ է տալիս հիասքանչ ստեղծագործութիւնների եւ արարումների, որոնք փրկարար զօրութեամբ յաղթական ուժ եւ ոգի են ներշնչում աստուածասէր մեր ժողովրդին։ Այսպէս նաեւ 16 դարեր առաջ շնորհազարդեալ Մեսրոպ Վարդապետի պայծառ ու հանճարագործ գիւտը աստուածային գիտութեան աղբիւրը բխեցրեց հայ ժողովրդի համար, եւ Հայոց պատմութեան ոսկեդարը մտքի ու հոգու զարթօնքով սնեց եւ կրթեց քրիստոսասէր մեր ազգը Աստուածաշնչի իմաստութեամբ» (2005, Թ., էջ 15)։

Աստուածաշնչի կենարար խօսքի կարիքն էր, որ ԺԷ. դարում ծնեց մէկ այլ սխրանք. 1666 թ. Ամստերդամում, Ոսկան վարդապետ Երեւանցու ջանքերով, հոգածութեամբ Յակոբ Դ. Ջուղայեցի Կաթողիկոսի, լոյս տեսաւ հայերէն առաջին տպագիր Աստուածաշունչը։ 2016 թ. այդ կարեւոր եւ ուրախառիթ իրադարձութեան 350-ամեակն էր, որը պանծացուեց հայրապետական սրբատառ կոնդակով՝ տրուած 2016 թ. յուլիսի 28-ին։ Իր խօսքում Նորին Սրբութիւնը, զուգահեռներ տանելով երկու նշանաւոր իրադարձութիւնների՝ գրերի գիւտի եւ Աստուածաշնչի առաջին հրատարակութեան միջեւ, կարեւորելով Սուրբ Գրքի տպագրութեամբ սկիզբ առած հայալեզու հոգեւոր եւ գիտական գրականութեան բազմապատկումը, դիմեց ողջ հայութեանը. «Մեր յորդորն ենք բերում թեմական եւ համայնքային մեր կառոյցներին, կրթական ու գիտական հաստատութիւններին՝ պատշաճ միջոցառումներով ու տօնախմբութիւններով նշանաւորելու Աստուածաշունչ մատեանի տպագրութեան արժանայիշատակ յոբելեանը։ Մաղթում ենք, որ մեր պետութեան այս կարեւոր իրադարձութեան յիշատակութիւնն առաւել զօրացնի աշխարհասփիւռ Մեր զաւակներին՝ ամուր պահելու նախնեաց հաւատքը եւ հաւատարմութիւնը ազգային աւանդներին, որպէսզի Քրիստոսի լոյսը շարունակի սիրով, նուիրումով ու երկնային շնորհներով լցնել մեր կեանքը»։

Իրադարձութիւնը նշանաւորեց նաեւ «Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնն ու հրատարակութիւնը պատմութեան հոլովոյթում» խորագիրը կրող գիտաժողովը, որ տեղի ունեցաւ 2016 թ. հոկտեմբերի 6–8-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում։ Գիտաժողովին իրենց մասնակցութիւնը բերեցին հայ եւ օտարազգի գիտնականներ Հայաստանից, Ռուսաստանից, Վրաստանից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Ամերիկայի Միացեալ Նահանգներից ու Կանադայից, Մայր Աթոռի միաբաններ, ճեմարանականներ եւ այլ հրաւիրեալներ։ Գիտաժողովի փակումը տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց տօնին Օշականի «Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրատուն» գիտամշակութային կենտրոնում՝ խորհրդանշելով հայ մշակոյթի շարունակական զարգացումը (տե՛ս 2016, ժ., էջ 11)։ Հետագայում հրատարակուեց նաեւ գիտաժողովի նիւթերի ժողովածուն՝ «Ոսկանեան Աստուածաշնչի հրատարակութեան 350-ամեակը» (Ս. Էջմիածին, 2018)։

Սակայն այսքանով չաւարտուեցին Ոսկանեան Աստուածաշնչի տպագրութեանը նուիրուած միջոցառումները։ Հոկտեմբերի 17-ին Մայր Աթոռի մատենադարանում տեղի ունեցաւ Հայկական գրադարանների չորրորդ միջազգային համաժողովի հանդիսաւոր բացումը՝ «Անցեալի պահպանութիւն՝ յանուն ապագայի» խորագրով, որը նոյնպէս նուիրուած էր հայկական առաջին տպագիր Աստուածաշնչի 350-ամեակին (2016, ժ., էջ 7)։ Համաժողովի մասնակիցներին ուղղուած Վեհափառ Հայրապետի խօսքում դրուատանք կար ընդհանրապէս տպագրութեան երախտաւորների եւ մասնաւորապէս՝ հայ հրատարակիչների վերաբերեալ։ Նորին Սրբութիւնը ջերմօրէն արտայայտուեց նաեւ գրքի ներկայիս պահապանների՝ ժամանակակից գրադարանների աշխատակիցների մասին, որոնք զարգացող աշխարհում ընթերցողին, թղթէ գրքից զատ, այսօր արդէն թուային տարբերակն են մատուցում։ Կաթողիկոսի պատգամն էր՝ «Ինչպիսի ձեւի մէջ էլ ներկայացուի՝ գիրքը պիտի շարունակի հոգեւոր սնունդ մատուցել մեր ժողովրդին, հաստատուն պահել աստուածօրհնեալ ճանապարհներում եւ առաջնորդել իր բարօր ու լուսաւոր կեանքի կերտմանը» (2016, ժ., էջ 11–12)։

2017-ին լրանում էր Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի 300-ամեակը, ինչի առթիւ կազմակերպուեցին գիտաժողովներ Մոսկուայում, Սանկտ Պետերբուրգում, Դօնի Ռոստովում։ Սեպտեմբերի 15-ին եւ 16-ին Մոսկուայում տեղի ունեցած գիտաժողովին Վեհափառ Հայրապետն իր օրհնութեան խօսքն էր յղել գիտաժողովի մասնակիցներին։ Բարձր էր գնահատուած ռուսահայոց թեմի ողջ գործունէութիւնը, այն է՝

օտարութեան մէջ յուսալի պատուար դառնալ հարազատ ժողովրդի համար եւ ամեն կերպ նպաստել նրա ազգային ինքնութեան պահպանմանն ու քրիստոնէական արժէքներով ապրելուն (2017, Թ., էջ 14–15)։

2017 թ. արդիւնաւոր էր գիտական միջոցառումներով։ Տարեմուտին՝ դեկտեմբերի 5-ին, Գէորգեան հոգեւոր ճեմարանը կազմակերպել էր «Յովհան Օձնեցի Իմաստասէր Կաթողիկոսը եւ նրա ժամանակը» խորագրով գիտաժողով, որն իր ներկայութեամբ պատուեց եւ օրհնութեան խօսք ասաց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Նա բարձր գնահատեց Ս. Յովհաննէս Օձնեցի Հայրապետի վաստակը Հայոց Եկեղեցու եւ ժողովրդի կեանքում։ Նշեց, որ իր խորագիտակ եւ շրջահայեաց մտքի համար հայ ժողովուրդը սրբացրել է նրան եւ մեծարել «Իմաստասէր» անուամբ։ Նա մեծարուել է նաեւ որպէս «Երկրորդ Ոսկեբերան», եղել Թադէոս ու Բարդուղիմէոս առաքեալների, Գրիգոր Լուսաւորչի գործի շարունակողը եւ հետեւողական պայքար մղել «Հայաստանում քրիստոնէութեան պահպանման, մեր Եկեղեցու դաւանանքն ու ծէսը տեսականօրէն հիմնաւորելու եւ այդ ծիրում մեր Եկեղեցու քրիստոսաբանական նկարագիրն ամբողջացնելու համար։ Իր ճառերով, ծիսական կանոններով եւ դրանց մեկնաբանութեամբ, Կանոնագրքի կազմումով, անզուգական շարականներով ու հոգեւոր երգերով, որ կրում են նրա աստուածաբանական մտքի դրոշմը եւ հաւատքի երկնաթռիչ շունչը, Յովհաննէս Օձնեցի Հայրապետը ամենայն իրաւամբ համարւում է մեր ուղղափառ հաւատքի հիմնասիւներից մէկը» (2017, ԺԲ., էջ 8)։

Իր համապարփակ խօսքի աւարտին Հայոց Կաթողիկոսը յիշեցրեց Ը. դարում ապրած Հայոց Հայրապետի յորդորն ու պատգամը յետոյ եկողներիս. «Մեծագործ Հայրապետի 1300-ամեակը հրաւէր է վառ պահելու նրա սուրբ յիշատակը եւ աւելի վառ՝ այն սէրը, որով Հայոց հոգելոյս Հայրապետը պայծառ է պահել Հայ Եկեղեցու լոյսն ու իր կեանքով աւելացրել պայծառութիւնը հոգեւոր մեր տան։ Սա է նրա մեծագոյն պատգամը, հայրական յորդորն ու խրատը մեզ։ Եւ չկայ աւելի մեծ գնահատական նրա կեանքին ու գործին, քան մեր հաւատարմութիւնը նրա թողած անգնահատելի ժառանգութեանը եւ առաքելաշաւիղ ընթացքին» (2017, ԺԲ., էջ 8)։

2018 թ. դեկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցաւ «Արարատ» ամսագրի հիմնադրման 150-ամեակին նուիրուած գիտաժողով, որն իր ներկայութեամբ պատուեց եւ օրհնութեան խօսք ասաց Հայոց Հայրապետը։ Նա ներկայացրեց Հայ Եկեղեցու պաշտօնական

ամսագրի անցած ուղին եւ դերակատարումը հայ հոգեւոր, գիտական, գեղագիտական մտքի զարգացման ասպարէզներում։

«Մեր խորին յարգանքն ու խոնարհումն ենք բերում երանաշնորհ Գէորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ամսագրի վաստակաշատ խմբագիրների եւ «Արարատի» բոլոր երախտաւորների լոյս յիշատակի առջեւ։ Գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ հրատարակուող նիւթերի յատուկ ընտրութեամբ «Արարատ» ամսագիրը դարձաւ այդ ժամանակաշրջանում Կովկասում առաջին գիտական լուրջ հանդէսը, որի շուրջ համախմբուած հայ աստուածաբան հոգեւորականները, գիտնականները, գրողները կարեւոր աւանդ բերեցին գիտութեան ճիւղերի զարգացմանը։ Այսօր էլ «Արարատ» ամսագրի գիտական հարուստ նիւթերը, նաեւ կաթողիկոսական կոնդակների ու կարգադրութիւնների, Սինոդի գրագրութիւնների, թեմերի, գաղթավայրերի, ազգագրութեան վերաբերեալ տեղեկութիւնները օգտաշատ գիտելիքների աղբիւր են ընթերցողների եւ ուսումնասիրողների համար»,– ասուած է Վեհափառ Հայրապետի օրհնութեան խօսքում (2018, ԺԲ., էջ 8)։

2019 թ. յատուկ իմաստ ունէր Հայոց Եկեղեցու եւ հայոց պետութեան համար, քանի որ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն այն հռչակեց Ընտանիքի տարի։ Աշխարհը՝ որպէս մարդկութեան մեծ ընտանիք, պէտք է ընթանայ «Քրիստոսի պարգեւած փրկութեան աստուածապատուէր ուղիներով», որպէսզի ձեւաւորի առողջ հասարակութիւն եւ մարդուն սատարող ամուր ընտանիքներ։ 2019 թ. յունուարի 6-ին, Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի առիթով, Վեհափառ Հայրապետը հետեւեալ պատգամը հնչեցրեց. «Մեր պատմութեան օրհնեալ ժամանակաշրջանում մեր ժողովուրդը Քրիստոսով դարձել է հաւատաւոր մէկ ընտանիք՝ լուսաւորուելով Տիրոջ կենարար շնորհներով։ Առ Տէրը հաւատարիմ ընթացքը բարեպաշտ մեր նախնեաց, մենք, որպէս նրանց հարազատ զաւակները, պիտի շարունակենք պահպանել անսասան հաւատով եւ ապրել ու գործել առաջընթացի վճռականութեամբ։ Այսօր մեր կեանքի նոր փոփոխութիւններում թեւածում են յոյսն ու լաւատեսութիւնը՝ նորանոր ձեռքբերումներ արձանագրելու, յաջողութիւններ ու յաղթանակներ կերտելու։ Միմեանց ապաւինելով ու սատարելով՝ ի զօրու ենք շէնացնել մեր կեանքը հայրենիքում ու սփիւռքում, պաշտպանել մեր սահմանները, ազգային արդար իրաւունքները, հզօրացնել Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկիրը։ Հայրենիքի արժանաւոր զաւակ դաստիարակելու, պետութեան

քաղաքացի կրթելու առաջին հանգրուանն ընտանիքն է։ Ընտանիքում է կերտւում ազգի ապագան, դրւում հիմերը հզօր պետութեան։ Ընտանիքի գորովաշատ միջավայրում են մանուկ հոգիներում պտղաբերում Աստուծոյ խօսքի սերմանուած հունդերը, սնուցւում հոգեւոր-բարոյական արժէքները, բարին ընտրելու աներկիւղ ոգին։ Ընտանիքում մատուցուած օրինակով կրթւում են միմեանց հանդէպ սէրը, վստահութիւնը եւ հոգատարութիւնը։ Արդ, նախանձախնդիր մնանք նուիրականութեանն ու ամրութեանը ընտանիքի։ Անխաթար պահպանենք աստուածահաստատ ընտանիք հասկացութիւնը, նրա սրբութիւնը, ազգային աւանդոյթները, խնամենք ու բարձրացնենք մեր հոգեւոր ու ազգային կեանքը եւ մնանք մշտապէս Տիրոջ որդեգրութեան շնորհի մէջ՝ որպէս հաւատաւոր մէկ ընտանիք, որպէս Աստուծոյ սեփական ժողովուրդ» (2019, Ա., էջ 10–11)։

Հայրապետական յորդորն էր եկեղեցական եւ թեմական կառոյցներին, ինչպէս նաեւ հոգեւոր սպասաւորներին՝ «նախաձեռնել ընտանիքներին ուղղուած աջակցութեան ծրագրեր ու միջոցառումներ, կազմակերպել ուխտագնացութիւններ Մայր Հայրենիք, Սուրբ Էջմիածին, Տէրունական եւ հայրենական սրբավայրեր՝ զօրանալու հաւատքով, տոգորուելու հայրենեաց սիրոյ ջերմութեամբ եւ ազգի ու հայրենիքի զաւակը լինելու նուիրական գիտակցութեամբ» (2019, Ա., էջ 11)։

Ընտանիքի տարուայ շրջանակներում 2019 թ. հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցաւ «Եկեղեցին եւ ընտանիքը 21-րդ դարում. արժէքներ եւ մարտահրաւէրներ» խորագրով միջազգային համաժողովը։ Համաժողովի մասնակիցներին ուղղուած իր ողջոյնի խօսքում Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքից քաղաբերենք մի հատուած. «Արդի աշխարհում վտանգւում են ընտանիքի եւ նրա առաքելութեան մասին ընկալումները։ Տարածում են գտնում ընտանիքի նուիրական գաղափարը աղճատող եզրոյթներ եւ հասկացութիւններ, որոնք ներկայացւում են իբրեւ ժամանակակից կեանքի թելադրանքներ։ Մտայնութեան ու բարքերի այսօրինակ այլափոխումը յաճախ քօղարկւում է անհատի ազատութեան եւ իրաւունքների լոյսի ներքոյ՝ խեղաթիւրելով ընտանեկան կեանքի իրական արժէքն ու բացառիկութիւնը» (2019, Ժ., էջ 5–6)։

Այսպիսի պայմաններում աւելի է կարեւորւում Եկեղեցու դերը՝ որպէս կայունութեան, հաստատունութեան խորհրդանիշի, ինչը եւ ընդգծեց իր խօսքում Վեհափառ Հայրապետը. «Եկեղեցու տեսակէտները ընտանիքի վերաբերեալ հիմնուած են ոչ թէ մարդկային փոփոխուող

կենսակերպի եւ մտայնութիւնների, այլ Աստծոյ կենարար խօսքի ու յայտնութեան վրայ։ Ընտանիքի մասին քրիստոնէական վարդապետութիւնը ձեւաւորուել է աստուածադիր օրէնքի համաձայն՝ հաստատելով ամուսնութեան սրբութիւնն ու արժէքը (Եբր. ԺԳ 4)։ Սուրբ Գիրքը յստակ ընդգծում է ամուսնութեան եւ ընտանիքի նուիրականութիւնն ու նպատակները։ Աստուած ստեղծեց մեր նախածնողներ Ադամին եւ Եւային այր ու կին (Ծնն. Ա 28)։ Տղամարդու եւ կնոջ միութեան սրբագործութեամբ Տէրն ընտանիքը դարձրեց նուիրական օջախ, որի յարկից ներս արարչագործութիւնն է շարունակւում» (2019, ժ., էջ 6)։

Կաթողիկոսն ընտանիքը համարեց իւրօրինակ եկեղեցի, որը իւրաքանչիւր անհատի կեանքում կարեւոր դերակատարում ունի աստուածճանաչութեան, օրինապահութեան, սիրոյ, նուիրումի հարցերում, որը ձեւաւորում է վաղուայ քաղաքացուն։

Նրա խօսքում անդրադարձ կար նաեւ ժամանակակից կեանքում շատացող ամուսնալուծութիւններին։ Վեհափառ Հայրապետը կարեւորեց Եկեղեցու դերն ամուսնութեան սրբութեան գաղափարը մարդկանց հասցնելու գործում։ Խօսեց նաեւ այն սոցիալական ծրագրերի մասին, որոնք իրականացուել են Ընտանիքի տարուայ շրջանակներում. Եկեղեցու օրհնութիւնն ու նիւթական աջակցութիւնը կարիքաւոր եւ բազմազաւակ ընտանիքներին, առկայ խնդիրների վերհանումն ու քննարկումը տարբեր հանդիպումներում, քարոզներում, այլ իրավիճակներում։

Վերջում Կաթողիկոսի խօսքը եւս մէկ պատգամ էր՝ ընտանիքներում սէրը, համերաշխութիւնն ու ներդաշնակութիւնը ամրապնդելու։

2019 թ. նոյեմբերի 29-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա.» կրթական կենտրոնում տեղի ունեցաւ Սիլուա Կապուտիկեանի 100-ամեակին նուիրուած գիտաժողով, որը կազմակերպուել էր Մայր Աթոռի եւ «Սիլուա Կապուտիկեան» գրական հիմնադրամի ջանքերով։ Ներկաները հանդէս եկան բանաստեղծուհու գրական եւ հասարակական գործունէութիւնը բնութագրող ելոյթներով, կիսուեցին յուշերով։

Վեհափառ Հայրապետի խօսքը տպաւորիչ իմաստաւորումն էր բանաստեղծուհու ողջ անցած ուղու՝ սկսած գրական ժառանգութիւնից մինչեւ այցելութիւնները հայրենաբաղձ սփիւռքահայութեանը, մինչեւ քաղաքացիական խիզախումով նուիրուելը արցախեան պայքարին եւ նոյն

խիզախութեամբ իր նորանկախ հայրենիքին վերաբերող մնացած բոլոր հարցերով ապրելը։ Դիպուկ էր բնորոշուած բանաստեղծուհու գրական վաստակը. «Նրա ստեղծագործութիւնը՝ արձակ թէ բանաստեղծութիւն, շնորհալի խօսքով գովքն է հայրենիքի, վերյուշը մեր պատմութեան, նրա սլացքների ու վշտերի եւ ապագայի հանդէպ լուսաւոր հաւատի։ Արդարեւ, նրա ստեղծագործութիւնը պահապան զինուորի պէս հսկում է հազարագանձ մեր լեզուի մաքրութեանը, մեր ժողովրդի զաւակաց սրտերում հայրենեաց սիրուն, որպէսզի ազգս Հայոց միաւորուած լինի իր սրբազան, աստուծապարգեւ Հայրենիքով եւ միշտ հարազատ իր ինքնութեանը՝ կերտի իր կեանքը»։

Այս ամենով հանդերձ՝ Սիլուա Կապուտիկեանը նուիրեալ զաւակն էր Հայոց Եկեղեցու, ինչի մասին նոյնպէս գորովանքով նշուած էր Վեհափառի խօսքում, յիշատակուած էր բանաստեղծուհու՝ «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշանին արժանանալը՝ որպէս հայոց լեզուի եւ գրականութեան «աննկուն ու նուիրեալ մշակի»[2]։

Կրթական ձեռնարկումներ

Հայոց կաթողիկոսները մշտապէս կարեւորել են մատաղ սերնդի կրթական խնդիրները, հոգածութեամբ վերաբերուել Հայաստանի եւ Սփիւռքի կրթական համալիրներին։ Իր գահակալութեան 5-րդ տարեդարձի առթիւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հիւրընկալւում է Երեւանի պետական համալսարանում, որտեղ մայր բուհի գիտական խորհրդի որոշմամբ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր հայրենասիրական, հասարակական-մշակութային գործունէութեան եւ քրիստոնէութեան քարոզչութեան ասպարէզում ձեռք բերած ակնառու նուաճումների համար շնորհւում է ԵՊՀ պատուաւոր դոկտորի գիտական աստիճան։ Հայրապետական պատգամը ներկաներին հայրենիքին եւ ազգին արժանի զաւակ լինելն է, արտաքին աշխարհից եկող մարտահրաւէրներին դիմակայելու համար համախմբուելը Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցու յարկի ներքոյ։ Նա նաեւ յաւելեց, որ Հայոց Եկեղեցին ամեն ինչ անում է այդ կապերն ամրապնդելու, բազմակողմանի համագործակցութեամբ նպաստելու նաեւ գիտական կեանքի կազմակերպմանը՝ գիտական եւ

---

[2] *«Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթ (այսուհետ՝ շարադրանքում՝ ՔՀ), 2019, դեկտեմբեր Ա., թիւ 23, էջ 4։*

կրթական գործուղումներ, Հայոց Եկեղեցու պատմութիւն առարկայի դասաւանդում դպրոցներում, գիտաժողովների կազմակերպում եւ այլն։ Զանտեսուեց նաեւ «Էջմիածնի»՝ որպէս կրօնական եւ գիտական հանդէսի կարեւոր դերակատարումը (2004, ԺԱ.–ԺԲ., էջ 122–125)։

Նոյն՝ 2004 թ. տեղի են ունեցել նաեւ երկու կարեւոր կրթահամալիրների՝ Գէորգեան հոգեւոր ճեմարանի հիմնովին վերանորոգուած շէնքի (օգոստոսի 5) ու Սեւանի Վազգէնեան դպրանոցի նոր մասնաշէնքի (հոկտեմբերի 5) բացման արարողութիւնները։ Գէորգեան ճեմարանի վերանորոգման աշխատանքներն իրականացուել էին շնորհիւ տէր եւ տիկին՝ Գէորգ եւ Սիրուարդ Յովնանեանների։ Իր օրհնութեան եւ գնահատանքի խօսքում Գարեգին Բ. Կաթողիկոսը դրուատանքի արժանացրեց Յովնանեան գերդաստանի այս հայրենանուէր գործը. չէ՞ որ Գէորգեան ճեմարանը երկար դարեր կրթել ու դաստիարակել է հայ միտքը, գիտութեան կաճառ եղել շատ-շատերի համար։ «Այսօրուայ ուրախութիւնն աղօթք է դարձել մեր հոգում մեր երջանկայիշատակ նախորդ Հայրապետների համար, որոնց տեսիլքն ու երազն է եղել տեսնել վերաբացուած դռներն այս պատմական հաստատութեան, տեսնել զօրացած ու անշեղ ընթացող մեր Եկեղեցին։ Քանզի նրանով են ապրել եւ պահպանել իրենց ինքնութիւնը մեր նախնիք, նրանով են հայաշունչ ոգով կրթել ու դաստիարակել իրենց զաւակներին»,– ասուած է Կաթողիկոսի խօսքում (2004, Է.–Ը., էջ 20)։

Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոցի նոր մասնաշէնքը կառուցուել է բարերարութեամբ դամասկոսաբնակ տէր եւ տիկին՝ Գառնիկ եւ Անի Յակուբեանների։ Իր օրհնութեան եւ գնահատանքի խօսքում՝ ուղղուած Յակուբեան ընտանիքին եւ Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր անձնուէր աջակիցներին, Նորին Սրբութիւնը դիմեց նաեւ դպրանոցի սաներին՝ յորդորելով ստեղծուած բարեկարգ պայմաններում առաւել նուիրուածութեամբ իրենց անձը պատրաստել հոգեւոր սպասաւորութեան աստուածահաճոյ առաքելութեանը (2004, Թ.–Ժ., էջ 34)։

Կրթութեան ոլորտում մեր կեանքի կարեւորագոյն օղակներից մէկը հանրակրթական դպրոցն է, որի պատերի ներքոյ ձեւաւորւում է ՀՀ քաղաքացին, ձեռք բերում անհրաժեշտ կողմնորոշիչներ։ Վեհափառ Հայրապետի սահմանած «Տարուայ լաւագոյն ուսուցիչ» մրցանակաբաշխութիւնը, որն իրականացւում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, կոչուած է ոգեւորելու եւ շահագրգռելու ուսուցիչներին՝ իրենց դժուարին եւ պատասխանատու գործում (2007, ԺԱ., էջ 73–74)։

Ի լրումն՝ մէջբերենք մի հատուած Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջերմ գնահատանքով լի խօսքից՝ ասուած 2017 թ. դեկտեմբերի 12-ին «Լաւագոյն ուսուցիչ» հանրապետական մրցոյթի մրցանակաբաշխութեան հանդիսութեանը. «Աստուածաշնչեան Ժողովողն ասում է. «Մարդու իմաստութիւնը լոյս է տալիս նրա երեսին» (Ժող. Ը. 1)։ Սուրբգրային խօսքի շնորհընկալներն այսօր դուք էք, սիրելի՛ ուսուցիչներ, որ հարստացած գիտելիքներով եւ հոգու իմաստութեամբ՝ լոյս էք տալիս ձեր սաներին, ձեր կողմից կրթուող ու դաստիարակուող սերունդներին, որպէսզի նրանք եւս լուսաւորուեն, ճանաչեն կեանքի իմաստը, առաջնորդուեն հոգեւոր արժէքներով եւ կարողանան յաղթահարել իրենց առջեւ բարձրացող խնդիրներն ու փորձութիւնները։ Այսօրուայ արագօրէն զարգացող եւ փոփոխուող աշխարհում ուսումն ու կրթութիւնը, նկարագրի, անհատականութեան ձեւաւորումը առաջնահերթ են ազգի եւ պետութեան համար։ Արդ, դուք՝ խոնարհ ու պարզ սպասաւորներդ գիտութեան եւ կրթութեան, ձեր մտային ու հոգեւոր իմաստութեան լոյսով ի զօրու էք առողջ եւ զօրաւոր սերունդ պատրաստել, որ պիտի շէնացնի մեր հայրենի երկիրն ու ազգային կեանքը, պիտի պահպանի մեր սահմանները եւ պիտի պաշտպանի մեր ժողովրդի իրաւունքները։ Մենք համոզուած ենք, որ այս գիտակցութիւնը, այս տեսլականն ամեն օր ձեր աշխատանքում ներշնչում է ձեզ՝ յաւելելով կորով ու նուիրում» (2017, ԺԲ., էջ 12–13)։

Պարգեւատրումներ

Աւելի վաղ արդէն նշել ենք, որ Հայ Առաքելական Եկեղեցու պարգեւատրումների պատմութիւնն իր համապարփակութեամբ եւ պետականամէտ բնոյթով հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային կեանքի իւրօրինակ հայելի, անկախութեան շրջանի Հայաստանը ճանաչելու միջոց կարող է լինել, հետեւելն այդ պատմութեանը՝ Հայաստանի, Արցախի, Սփիւռքի անքակտելի միասնութեանն իրապէս հասու լինելու դիւրին հնարաւորութիւն։ Այսպէս, 2000 թ. փետրուարի 7-ի կոնդակով Սփիւռքում գրական գործունէութեան համար «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով է պարգեւատրուել Անդրանիկ Սարեանը (ԱՄՆ, Լոս Անջելես)։ Հայ պատանիների մէջ հայապաշտ ոգին վառ պահելու, Սփիւռքում հայեցի կրթութիւն ապահովելու, ինչպէս նաեւ գրահրատարակչութեան ասպարէզում թէ՛ Լիբանանի հայութեան, թէ՛ ամերիկահայութեան կեանքում

կարեւոր ներդրում ունենալու համար հայրապետական օրհնութեան եւ գնահատանքի է արժանացել Փայլակ Ահարոնեանը (2000, Բ., էջ 29, 37–38)։ Ծննդեան 65-րդ տարեդարձի առթիւ հայրապետական օրհնութեան եւ գնահատանաց գրի, ինչպէս նաեւ «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանի է արժանացել Արմէն Ջիգարխանեանը, որն իր արուեստով «ծառայում է Բարու արգասաւորմանը աշխարհում»։ Դրուատանքով նշւում է նրա աշխատանքը ռուսական բեմի վրայ, միաժամանակ շեշտւում իր ժողովրդի հաւատարիմ եւ սիրելի զաւակը մնալու փաստը (2000, Ժ., էջ 28)։ Առանձնայատուկ ջերմութեամբ է բնութագրուած բեմարուեստի մէկ այլ շնորհալի մշակ՝ Սօս Սարգսեանը. բարձր է գնահատուած յատկապէս նրա՝ սերունդներին հայրենասիրութիւն փոխանցելու ձիրքը (2000, ԺԲ., էջ 5–6)։ Սօս Սարգսեանը նոյնպէս արժանացել է «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանի (2000, ԺԲ., էջ 14)։

Նոյն կերպ գիտական գործունէութեան 45 եւ արխիւային աշխատանքի 40-ամեայ վաստակի համար հայրապետական օրհնութեան եւ գնահատանքի, ինչպէս նաեւ «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանի է արժանացել Սանդրօ Բեհբուդեանը, որը, ի դէպ, Վազգէնեան հոգեւոր դպրոցում է ծաւալել իր մանկավարժական գործունէութիւնը (2000, Ժ., էջ 30)։ Նոյն տարում հայրապետական օրհնութեան գրի է արժանացել նաեւ Վազգէնեան հոգեւոր դպրանոցը (2000, ԺԲ., էջ 7–8)։ Կրթարանի տասնամեայ յոբելեանին նուիրուած հանդիսութիւնը, որ տեղի է ունեցել դեկտեմբերի 5-ին Ալ. Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի նախագահութեամբ էր (այս մասին մանրամասն տե՛ս 2000, ԺԲ., էջ 20–32)։

Հայոց Եկեղեցու այս բարձր՝ «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանին արժանացել են նաեւ ակադեմիկոս Սերգէյ Համբարձումեանը (2002), երաժիշտներ Ալեքսանդր Յարութիւնեանն ու Տիգրան Մանսուրեանը (2004), սփիւռքահայ բանաստեղծ Ժագ Յակոբեանը (2004), պատմաբաններ Պետրոս Յովհաննիսեանն ու Սիմոն Կրկէաշարեանը (2004), օպերային երգչուհի Յասմիկ Պապեանը (2005), գիտամանկավարժական գործունէութեամբ լեզուաբանութեան ասպարէզում մեծ յաջողութիւնների հասած, ինչպէս նաեւ ազգային եւ եկեղեցական կեանքին անմնացորդ նուիրուած կանադահայ Դորա Սաքայեանը (2005), գրական եւ լրագրողական ազգօգուտ գործունէութեամբ աչքի ընկած ամերիկահայ Գրիգոր Շէնեանը (2005)։

Այս բարձր պարգեւին է արժանացել ճարտարապետութեան բնագաւառում իր անուրանալի վաստակն ունեցած Ջիմ Թորոսեանը։ Նրա նախագծերով թէ՛ հայրենիքում, թէ՛ հայրենիքից դուրս ստեղծուել են ուրոյն ճարտարապետական լուծումներով կառոյցներ։ Նրան վստահուել են պատասխանատու պաշտօններ, ինչպէս օրինակ՝ Երեւանի գլխաւոր ճարտարապետ եւ Սպիտակի վերանորոգման քաղաքաշինական խորհրդի նախագահ։ Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի անդամ հանդիսանալով՝ նա իր մասնագիտական կարողութիւնները ծառայեցրել է պատմական վանքերի վերանորոգմանը, նոր եկեղեցիների ու եկեղեցապատկան շէնքերի կառուցմանը։ Ի վերջոյ, Ջիմ Թորոսեանի համահեղինակութեամբ է ստեղծուել Սուրբ Էջմիածնի Գլխաւոր Մուտքի եւ Բաց Խորանի նախագիծը, որի իրագործումը Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեայ յոբելեանի ամենանշանակալից ձեռնարկներից էր (2005, Ժ.–ԺԱ., էջ 16)։

Աղասի Այւազեանի գրական վաստակը, նրա կինօսցենարները, որոնք «համակուած են սիրով ու հաւատարմութեամբ մեր ազգային արժէքների ու Հայրենի ժառանգութեան հանդէպ», նոյնպէս արժանացել են Հայոց Եկեղեցու բարձր պարգեւին՝ «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ շքանշանին (2005, Ժ.–ԺԱ., էջ 18)։

Հայրապետական հոգածութիւնն ու օրհնանքը մշտապէս եղել են նաեւ Սփիւռքի հայորդիների հետ. «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշանով պարգեւատրուել է Սանկտ Պետերբուրգում բնակուող Ռուբինա Քալանթարեանը, որի երգարուեստը հոգեւոր բերկրութիւն է բերել ունկնդիրներին Սանկտ Պետերբուրգի եւ աշխարհի բազում այլ բեմերից, իսկ նա ինքը՝ արժանացել միջազգային բազմաթիւ մրցանակների, կոչումների ու պարգեւների։ «Մենք տեղեակ ենք նաեւ Մայր Հայրենիքի, հարազատ ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ Ձեր անմնացորդ սիրուն ու նուիրումին։ Գոհունակութիւն է Մեզ համար, որ Դուք գործուն մասնակցութիւն էք բերում Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի ազգային եւ եկեղեցական կեանքին՝ արժանանալով բարեխնամ առաջնորդի, հոգեւոր դասի եւ հաւատաւոր հայորդեաց խորին յարգանքին»,– ասուած է հայրապետական կոնդակում (2005, Ժ.–ԺԱ., էջ 21)։

Սփիւռքն առանց հայեցի կրթութեան, այդ կրթութեան շնորհիւ հայ մանուկների հոգում ծլարձակած Հայրենիքի, Հայ Առաքելական Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի հանդէպ սիրոյ երկար չէր գոյատեւի։

Ահա թէ ինչու Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն առանձնակի խնամքով ու օրհնաբեր հոգածութեամբ է վերաբերւում հայկական գաղթավայրերում կրթութեան ջահը վառ պահողներին։ Այդպիսիներից է լոսանջելեսաբնակ Թորգոմ Փոսթաճեանը, որը մեծապէս նպաստել է Մեսրոպեան նախակրթարանի եւ երկրորդական վարժարանի, ինչպէս նաեւ այլ կրթական հաստատութիւնների (այդ թւում՝ հայրենիքում) բարելաւմանն ու բարգաւաճմանը (2005, ԺԵ.–ԺԱ., էջ 24–25)։

2006 թ. ապրիլի 1-ի կոնդակով Հայոց Եկեղեցու այս բարձր պարգեւին է արժանացել Երեւանի Ալեքսանդր Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարուեստական ղեկավար, Իտալիայի «Լա Սկալա» թատրոնում եւ բազում այլ բեմերում ելոյթ ունեցած, Հայաստանի Հանրապետութեան եւ Լիտուայի ժողովրդական արտիստի բարձր կոչմանն արժանացած Գեղամ Գրիգորեանը։

«Զօրեան հիմնարկի» 25-ամեայ յոբելեանի առթիւ Հայոց Մեծ եղեռնի ճանաչման գործում իր յամառ եւ աննկուն մասնակցութեան համար Հայ Առաքելական Եկեղեցու այս բարձր պարգեւին է արժանացել այդ հիմնարկի ամենագործուն ներկայացուցիչներից մէկը՝ կանադահայ Գուրգէն Սարգիսեանը (2006, Զ., էջ 48)։

Սփիւռքում ապրող մէկ այլ հայորդու՝ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան «Մասիս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Արշակ Գազանճեանին, «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ բարձ շքանշանը շնորհուել է ազգային կեանքում գրական ու հասարակական բեղուն գործունէութեան, երիտասարդ սերնդի հայեցի կրթութեան ու դաստիարակութեան, Փասատէնայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու համայնքային կեանքին իր նուիրումն ու հաւատաւոր մասնակցութիւնը բերելու համար (2005, ԺԵ.–ԺԱ., էջ 26)։

Հայոց Եկեղեցին իր կենտրոնաձիգ քաղաքականութեամբ մշտապէս նպաստել է Հայրենիք-Սփիւռք կապերի ամրապնդմանը, քաջալերել իր հաւատաւոր զաւակների ջանքերը՝ ի նպաստ Հայրենիքի բարօրութեան։ Այդպիսի նուիրումի համար հայրապետական օրհնութեան եւ գնահատանքի, ինչպէս նաեւ Հայոց Եկեղեցու «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանին է արժանացել լոսանջելեսաբնակ Յարութ Սասունեանը։ Օրհնութեան խօսքում դրուատուած է նրա ազգանպաստ գործունէութիւնը թէ՛ «Դը Քալիֆորնիա Քուրիըր» շաբաթաթերթը հրատարակելու, թէ՛ երկրաշարժից տուժած եւ շրջափակման ու պատերազմի մէջ գտնուող իր հայրենակիցներին ցուցաբերած աջակցութեան համար։ Յարութ Սասունեանը

ղեկավարել է Միացեալ հայկական ֆոնդը, «Լինսի» հիմնադրամը, մասնակցել ազգանուէր բազում այլ ձեռնարկների, որոնց հիմքում հայ մշակոյթի եւ կրթութեան զարգացումն էր, ճանապարհների վերանորոգումը կամ Գիւմրիում բնակարանների կառուցման աշխատանքները, իսկ նրա հեղինակած «Հայոց Ցեղասպանութիւնը՝ աշխարհը կը խօսի՝ 1915–2005. վաւերագրեր եւ յայտարարութիւններ» գիրքը՝ Հայ Դատի մասին եւս մէկ անգամ բարձրաձայնելու հետեւողական ջանքերի արտայայտութիւն (2007, Ա., էջ 18–19)։

Հայ Առաքելական Եկեղեցու հաւատարիմ զաւակներից մէկի՝ լիբանանահայ Յարութիւն Արմէնեանի վաստակի գնահատութեանն է ուղղուած 2007 թ. յունուարի 15-ին տրուած հայրապետական կոնդակը, որով «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշան է շնորհւում արժանի հայորդուն՝ առողջապահութեան ոլորտում, գիտամանկավարժական գործունէութեան մէջ ունեցած յաջողութիւնների, ինչպէս նաեւ Հայաստանի ամերիկեան համալսարանը տարիներ շարունակ հմտօրէն ղեկավարելու համար։ Չի անտեսուել նաեւ Արմէնեանի գեղանկարչական արուեստը. դրուատական խօսքեր են ասուած դրա՝ յոյս ու լաւատեսութիւն առաջացնող բնոյթի մասին (2007, Ա., էջ 20–21)։

2007 թ. յունիսի 8-ի հայրապետական կոնդակով «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ շքանշան է շնորհուել Ռադիկ Մարտիրոսեանին, որը մեծ վաստակ ունի գիտական ու մանկավարժական ասպարէզում։ Կաթողիկոսի օրհնութեան խօսքում բարձր գնահատական է տրուած նրա պաշտօնավարմանը որպէս դասախօսի, ԵՊՀ ռեկտորի, Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրէնի եւ վերջապէս ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիայի նախագահի։ Նա նաեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գերագոյն հոգեւոր խորհրդի անդամ է։ Յատկանշական է, որ նոյն թուականի նոյն օրը «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշանով պարգեւատրուել է գիտութեան ոլորտի մէկ այլ երախտաւոր՝ Վլադիմիր Բարխուդարեանը, որը պատմագիտութեան ոլորտում իր բազմաթիւ ուսումնասիրութիւնների ու յօդուածների, կազմած դասագրքերի, միջազգային գիտաժողովներին մասնակցութեան, ինչպէս նաեւ Երեւանի պետական համալսարանում եւ այլ բարձրագոյն կրթական հաստատութիւններում ոչ միայն դասաւանդելու, այլ նաեւ իր ուսանողներին հայրենասիրական աւիւնով բոցավառելու համար արժանացել է հայրապետական բարձր օրհնութեան եւ գնահատանքի։ Յաւելենք, որ նա նոյնպէս իր

հայրենանուէր գործունէութեան ցանկում ունէր Հայ Առաքելական Եկեղեցու գերագոյն հոգեւոր խորհրդի մէջ լինելու պատիւը։

Գրականութեան եւ արուեստի բնագաւառում իրենց անուրանալի վաստակի համար «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշանին են արժանացել նաեւ արձակագիր եւ հրապարակախօս Պերճ Զէյթունցեանը, ժողովրդական երգի անզուգական կատարող Ռուբէն Մաթեւոսեանը, դերասանուհի Սուետլանա Գրիգորեանը։ Հայրապետական օրհնութեան եւ գնահատանքի գրով դիպուկ է բնորոշուած նրանց արուեստն ու բերած նորոյթը հայ մշակոյթի գանձարանին (2007, Զ.-Է., էջ 24–29)։ Իսկ մէկ տարի անց, 2008 թ. մարտի 12-ին տրուած կոնդակով, այս բարձր պարգեւին են արժանացել հայ բեմարուեստի երկու այլ երախտաւորներ՝ Գալեա Նովենցն ու Երուանդ Ղազանչեանը, ինչպէս նաեւ Վարուժան Խտրշեանը (Բէյրութ), որը Սփիւռքում է ծառայել թատերական արուեստին՝ հանդէս գալով թէ՛ որպէս տաղանդաւոր դերասան եւ բեմադրիչ, թէ՛ որպէս Լիբանանի պետական համալսարանի դասախօս (2008, Գ., էջ 24–28)։

Արուեստն ու կրթութիւնը մշտապէս գործել են բարեսէր եւ հաւատացեալ հայորդիների հոգածութեան շնորհիւ՝ այդպիսի անհատներին եւս մշակութային գործիչների շարքում պատուաւոր տեղ վերապահելով։ Ֆրանսիայում Լիօնի ամենօրեայ վարժարանի շէնքը հայ մանուկներին ազգային կրթութիւն ապահովելու մի վայր է, որի կառուցման մէջ մեծ ներդրում ունի Արփինէ Մարգարեանը։ «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ շքանշանին արժանացնելով մեծազնիւ եւ հայրենասէր տիկնոջ եւ նրա ամուսնու՝ հայորդեաց համայնքային կեանքը բարելաւելու ջանքերը՝ հայրապետական օրհնութեան եւ գնահատանքի գիրը մասնաւորապէս ասում է. «Իբրեւ բարեպաշտ զաւակ աստուածասէր մեր ժողովրդի, դուք տասնեակ տարիներ սիրով ներդնում էք Ձեր ջանքերը, հետամուտ լինելով, որ մեր Եկեղեցու հովանու ներքոյ միշտ շէն ու պայծառ մնայ հայորդեաց համայնքի կեանքը, զօրաւոր լինի նրանց եկեղեցասէր ոգին, աննկուն՝ ազգային ինքնութիւնը պահպանելու նախանձախնդրութիւնը» (2007, Թ., էջ 27)։

Սփիւռքի կրթարաններից ակնկալուող բարին խորին ակնածանք է ծնում ուսման գործին նպաստողների հանդէպ։ Այդպէս՝ լոսանջելեսաբնակ Վարդգէս Գուրուեանը տարիներ շարունակ ջանք ու եռանդ չի խնայել Բէյրութի Յովակիմեան-Մանուկեան, Քուէյթի Ազգային վարժարանների, ՀԲԸ միութեան Մելքոնեան կրթական հաստատութեան համար։

Այնուհետեւ մանկավարժական գործունէութիւնը շարունակել է Հոլիվուդի Թեքէեան մշակութային միութեան Արշակ Տիգրանեան վարժարանի տնօրէնի պաշտօնում։ Իր այդ գործունէութեան, ինչպէս նաեւ Հոլիվուդի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցու համայնքային կեանքին հոգածու մասնակցութեան համար նա նոյնպէս Վեհափառ Հայրապետի՝ 2008 թ. մարտի 3-ին տրուած կոնդակով արժանացել է «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ բարձր պարգեւին (2008, Գ., էջ 22–23)։

Ակադեմիկոս Էմիլ Գաբրիէլեանին ուղղուած հայրապետական օրհնութեան եւ գնահատանքի խօսքում ասուած է. «Գոհութեան աղօթքով առ Աստուած, որ պարգեւում է մեր ժողովրդին գիտութեամբ անուանի, ազնիւ ծառայութեամբ նուիրեալ զաւակներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ, սիրելի՛ պրն. Գաբրիէլեան, հայրապետական մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները»։

Թուարկուած են նրա ձեռքբերումներն առողջապահութեան եւ գիտութեան ոլորտում, Մայր Աթոռի «Սուրբ Ներսէս Մեծ» բժշկական կենտրոնի տնօրէնների խորհրդի ատենապետի պարտականութիւնները կատարելիս (2008, է., 35–36)։

Սփիւռքում ապրող երկու շնորհաշատ հայուհիներին՝ Լուսին Ամարային (ԱՄՆ, Նիւ Եորք) եւ Անահիտ Աճեմեանին (ԱՄՆ, Նիւ Եորք), երաժշտարուեստում ունեցած ձեռքբերումների համար նոյնպէս վիճակուած էր արժանանալու «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ բարձ շքանշանին (2008, Թ., 32–35)։ Յատկանշական է, որ երկուսի կենսագրութեան մէջ իր առանձնայատուկ տեղն ունի Հայ Առաքելական Եկեղեցին։ Մասնաւորապէս՝ Լուսին Ամարան շուրջ չորս տասնամեակ մասնակցել է Պատարագի սրբազան արարողութիւններին ԱՄՆ հայոց արեւելեան թեմի Սուրբ Վարդան եկեղեցու երգչախմբի կազմում, ինչպէս նաեւ անմասն չի մնացել առաջնորդարանի կազմակերպած միջոցառումներից (2008, Թ., էջ 32)։ Նոյն կերպ Անահիտ Աճեմեանն իր մասնակցութիւնն է բերել ԱՄՆ հայոց արեւելեան թեմի համայնքային կեանքին՝ առաջնորդանիստ Մայր տաճարում երգելով Սուրբ Պատարագի արարողութիւններին եւ առաջնորդարանի գեղարուեստական միջոցառումներին (2008, Թ., էջ 34–35)։

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գնահատանքին եւ «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշանին է արժանացել նաեւ ամերիկաբնակ մէկ այլ երգչուհի՝ Լիլի Ջուգասեանը, որն իր երկնառաք արուեստի շնորհիւ վաստակել է հանդիսատեսի սէրը, ստացել

բազում մրցանակներ, ճանաչում ձեռք բերել։ Զբաղուել է նաեւ մանկավարժական գործունէութեամբ։ Ահա երգչուհու կատարողական արուեստի մասին մի գեղեցիկ յուշ՝ քաղուած հայրապետական օրհնութեան գրից. «Մենք ջերմութեամբ ենք յիշում նաեւ տասնեակ տարիներ առաջ Ձեր ելոյթը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, երբ անուանի երգչուհի Գոհար Գասպարեանի հետ Ձեր երգը հնչեցրիք որպէս աղօթք եւ փառաբանութիւն Բարձրեալն Աստծուն, որ գթառատութեամբ խնամում եւ Իր հովանու ներքոյ պահպանում է հաւատաւոր մեր համայն ժողովրդին» (2008, Ժ., էջ 13–14)։

2008 թ. դեկտեմբերի 4-ին՝ ծննդեան 90-րդ տարեդարձի առթիւ «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանի է արժանացել մոսկուաբնակ քանդակագործ եւ գեղանկարիչ Նիկողոս Նիկողոսեանը, որի ստեղծագործութիւնները զարդարում են Հայաստանի եւ Ռուսաստանի քաղաքները, ընդգրկուած են աշխարհի շատ երկրների թանգարաններում ու ցուցասրահներում։ Հայրապետական օրհնութեան եւ գնահատանքի գրում յիշատակուած է նաեւ տաղանդաւոր արուեստագէտի երկարամեայ մանկավարժական փորձը Մոսկուայի գեղարուեստի ինստիտուտում (2008, ԺԲ., էջ 15–16)։

Կրթութեան եւ մշակոյթի հանդէպ Նորին Սրբութեան մշտական հոգածութեան մի արտայայտութիւնն է Խ. Աբովեանի անուան մանկավարժական համալսարանի մշակոյթի ֆակուլտետի դեկան Ռուբէն Միրզախանեանի պարգեւատրումը «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով (2009 թ., յունիսի 21)։ 2009 թ. յուլիսի 3-ին Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշանով պարգեւատրուեցին հայագէտ Արշակ Մադոյեանը եւ երգեհոնահար Վահագն Ստամբոլցեանը (2009, Է., էջ 4)։ 2011 թ. նոյեմբերի 21-ի կոնդակով «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշանին է արժանացել Վալերի Արութիւնովը։ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատեց նրա ունեցած ներդրումը թէ՛ երաժշտութեան, թէ՛ մանկավարժութեան մէջ. «Տասնամեակներ շարունակ աշխարհի հանրայայտ բեմերից Դուք օտարազգի ունկնդիրներին էք ներկայացրել հայ երգարուեստի գոհարները, ի թիւս որոնց Կոմիտասի, Արմէն Տիգրանեանի, Ալեքսանդր Սպենդիարեանի եւ այլ երգահանների մեծահամբաւ ստեղծագործութիւնները։ Գնահատարժան է նաեւ Ձեր աւանդը երգիչների նոր սերնդի պատրաստութեան շնորհակալ գործում։ Երկար տարիներ դասաւանդելով Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցում՝ Դուք Ձեր սաներին

փոխանցել էք Ձեր գիտելիքներն ու վարպետութիւնը՝ նրանց քայլերն ուղղելով դէպի երգարուեստի բարձունքներ»։

Վեհափառ Հայրապետի խօսքում ընդգծուած է նաեւ Արութիւնովի հաւատարմութիւնը Հայ Առաքելական Եկեղեցուն։ Դեռեւս Խորհրդային Միութեան տարիներին խիզախ հայորդին Բաքուի Սուրբ Յարութիւն եկեղեցու երգչախմբի անդամ էր, իսկ տարիներ անց նաեւ եղել է Մայր Տաճարի երգչախմբի մենակատար, որի երգերը հնչել են «որպէս սրտաբուխ աղօթք առ Բարձրեալն Աստուած» (2011, ԺԱ., էջ 115–116)։

«Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանին է արժանացել նաեւ գրող, հրապարակախօս, «Ոգնի» երգիծաթերթի գլխաւոր խմբագիր Արամայիս Սահակեանը. գնահատուած է նրա հայրենասէր, ազգասէր, եկեղեցասէր ոգին։ Նրա մասին օրհնութեան գրից քաղաբերենք հետեւեալ խօսքերը. «Հայ գրականութեան ծաղկուն անդաստանի մէջ վաստակաշատ էք Դուք, սիրելի՛ պրն. Սահակեան։ Ձեր արձակ ու չափածոյ ստեղծագործութիւնները, երգեր դարձած հարիւրաւոր բանաստեղծութիւնները, հրապարակախօսական յօդուածները քաջածանօթ ու հոգեհարազատ են մեր ժողովրդին» (2011, ԺԲ., էջ 3–4)։

2012 սեպտեմբերի 6-ի կոնդակով Հայոց Եկեղեցու «Գրիգոր Լուսաւորիչ» բարձրագոյն շքանշանով է պարգեւատրուել բանաստեղծ եւ բժիշկ Ռուբէն Սեւակի եղբօրորդին՝ ֆրանսաբնակ Յովհաննէս Չիլինգիրեանը։ Իր օրհնութեան խօսքում Հայոց Կաթողիկոսը նշում է նրա դերն իր ժողովրդի կեանքում որպէս պատմաբան, ազգային եւ հասարակական գործիչ։ «Առանձնակի գնահատանքով ենք անդրադառնում, որ Դուք Հայրենի մեր երկրի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ հարազատ կապուածութիւնը արտայայտեցիք սրտաբուխ յանձնառութեամբ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին նուիրելով Ձեր մեծ ազգականի՝ հայ նշանաւոր բանաստեղծ ու բժիշկ, Ցեղասպանութեան նահատակ, լուսահոգի Ռուբէն Սեւակի արխիւային նիւթերը եւ Ձեր նկարների արժէքաւոր հաւաքածուն» (2012, Թ., էջ 3–4)։

Նշենք նաեւ, որ Յովհաննէս Չիլինգիրեանի ջանքերով Մայր Աթոռում՝ Ղազար Ջահկեցի Կաթողիկոսի կառուցած շէնքում (ԺԸ. դար), ստեղծուել է Ռուբէն Սեւակի անուան թանգարան։

2015 թ. փետրուարի 26-ին հայրապետական կոնդակով արուեստի, առողջապահութեան եւ գիտութեան ոլորտներում ունեցած պատկառելի վաստակի համար «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատուոյ բարձր

շքանշաններ յանձնուեցին մի խումբ գործիչների, որոնց մէջ էր ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ, արուեստաբան Շահէն Խաչատրեանը։ Նոյն թուականի մարտի 13-ի հայրապետական կոնդակով Հայ Առաքելական Եկեղեցու բարձր եւ պարտաւորեցնող «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պարգեւին են արժանացել ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ, կոմպոզիտոր Վլադիլեն Բալեանը, Սիմէոն Հախումեանը, Կոմիտասի անուան լարային քառեակի գեղարուեստական ղեկավար Էդուարդ Թադեւոսեանը եւ ՀՀ ժողովրդական արտիստ Թովմաս Պօղոսեանը (ՔՀ, փետրուար, Բ., թ. 4, էջ 4)։

2016 թ. «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» պատուոյ բարձրագոյն շքանշանին են արժանացել Մարտիկեան ամուսինները (Դէթրոյթ, ԱՄՆ)։ Նրանց բարերարութիւնների թուին (բազմաթիւ բարեսիրական ծրագրեր, օգնութիւն սահմանամերձ բնակավայրերի կարիքաւոր հայորդիներին) դասւում է նաեւ «Երեմեան» միաբանական շէնքի նորոգութեան հովանաւորութիւնը (2016, էջ Թ., էջ 8–9)։

2017 թ. իր բարերարութիւններով աչքի ընկած ռուսաստանաբնակ Ռազմիկ Բլիկեանը, որը նպաստել է ռուսական եկեղեցիների վերանորոգմանը, Վլադիմիր քաղաքում հայ-ռուսական մշակութային եւ կրթական կենտրոնի, կիրակնօրեայ դպրոցի հիմնադրմանը, արժանացել է Հայ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» բարձրագոյն պարգեւին (2017, Ը., էջ 5–6)։

Ահա ոչ լրիւ ցանկը մշակութային գործունէութեան համար տրուած այն պարգեւատրումների, որոնք պատիւ են բերում ստացողին եւ յուշում պարգեւատրողի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվրէպ հայեացքի մասին՝ հանդէպ հայրենանուէր ու ազգաշահ աստուածահաճոյ գործերը։

Այլ իրադարձութիւններ

Գահակալութեան 20 տարիների ընթացքում Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որպէս համամարդկային արժէքների փոխանցման գործուն միջոց, ինչպէս նաեւ ազգախնամ ծրագրերի իրականացման հնարաւորութիւն, մշտապէս կարեւորել է միջմշակութային շփումները։ Ռուսաստանի հիւսիսային մայրաքաղաքը՝ Սանկտ Պետերբուրգը, դեռ երեք դար առաջ՝ ԺԸ. դարում, հայերի համար դարձել էր գրահրատարակչական կենտրոն, հայերէն շատ ձեռագիր մատեաններ վերածել

տպագրի՝ շնորհիւ Գրիգոր Խալդարեանցի յոգնաջան նուիրումի եւ հովանաւորութեամբ ռուսահայոց թեմի հոգեւոր առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի։ Երախտագէտ հայ ժողովրդի համար սա նաեւ հայ-ռուսական մշակութային կապերի սերտացման հնարաւորութիւն էր, եւ երեք դար անց այդ կապերը պահպանել են իրենց կենսունակ գործունէութիւնը հայ համայնքի կեանքում։ Ինքը՝ Գարեգին Բ.-ն, ամեն կերպ նպաստում է այդ աւանդոյթների պահպանմանը։ Հենց դրան էր միտուած 2011 թ. յունիսի 28-ի նրա այցը Սանկտ Պետերբուրգի հայ-ռուսական բարեկամութեան մշակութային կենտրոնի բացման արարողութեանը։

Հանդիպմանը ներկայ էին Սանկտ Պետերբուրգի նահանգապետ Վալենտինա Մատուիենկոն, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանը, Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի նախագահ Կարէն Մկրտչեանը, Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխաւոր հիւպատոս Վարդան Յակոբեանը, Մայր Աթոռի տեղեկատուական համակարգի տնօրէն Տ. Վահրամ քահանայ Մելիքեանը։ Իր խօսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց նման կենտրոնների դերը, որոնք նպաստում են ոչ միայն երկու ժողովուրդների բարեկամական յարաբերութիւնների սերտացմանը, այլ նաեւ հայորդիների ազգային եւ հոգեւոր դաստիարակութեանը (տե՛ս 2011, Զ., էջ 44–46)։

2015 թ. լրանում էր Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը։ Աշխարհի շատ երկրներ ճանաչել եւ դատապարտել են այդ չարիքը՝ որպէս հայ ազգի եւ մարդկութեան դէմ գործուած յանցագործութիւն։ Սակայն լուռ էր Օսմանեան Թուրքիայի իրաւայաջորդը՝ Թուրքիայի Հանրապետութիւնը, որը ծրագրուած ոճիրը սոսկ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցած «ցաւալի դէպքեր», «կոտորածներ» եւ այլ արտայայտութիւններով է բնորոշում։ Յիրաւի, երկրային արդարութիւնը շատ անգամ թոյլ է, իսկ երբեմն՝ ուշացած, եւ միայն երկնային արդարութեան յոյսը կարող է վիշտն ամոքել, մեղմել ցասումն ու անարդարութեան զգացումը։

2015 թ. ապրիլի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցութեամբ ՀՀ նախագահի, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի, Քոյր եկեղեցիների հոգեւոր պետերի եւ ներկայացուցիչների, Հայ Կաթողիկէ եւ Աւետարանական Եկեղեցիների ներկայացուցիչների տեղի ունեցաւ Մեծ եղեռնի նահատակների սրբադասման արարողութիւնը։

«Օրհնաբանում ենք Տիրոջը, որ «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նահատակուած Յեղասպանութեան վկաներին թագադրում է սրբութեան պսակով ու նրանց բարեխօսութեամբ մեր կեանքին հեղում Իր անսպառ ողորմութիւնները»,– ասուած է Հայոց Կաթողիկոսի խօսքում (տե՛ս 2015, Դ., էջ 33)։

Յեղասպանութիւններն արդարացում չունեն, բայց ունեն պատճառներ։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց այդ պատճառներից ամենագլխաւորը, այն, որն ուղեկցել է այս ժողովրդին իր պատմութեան դժնդակ ժամանակներում. Յեղասպանութեամբ նահատակուածներն իրենց կեանքով հատուցեցին Քրիստոսին՝ քրիստոնէական արժէքներին հաւատարիմ մնալու համար։ Մէջբերենք. «Քրիստոսին նահատակութեամբ վկայելն ընդելուզուած է մեր ժողովրդի կեանքին։ Սրբութեան, առաքինութեան, անձնուիրումի հոգեւոր սխրանքի բազում վկայութիւններ են արձանագրուած նաեւ Հայոց ցեղասպանութեան ողբերգական տարեգրութեան մէջ։ Քրիստոնէական հաւատքի համար հալածուող հայորդին աղօթքով է անցել նահատակութեան ճանապարհը, իսկ նրան դաժանութեամբ հալածողը կարծել է, թէ իսպառ արմատախիլ է անում Քրիստոսի հանդէպ սէրը հայի կեանքից։ Յիսուս Քրիստոսի համար նահատակ հայորդու արիւնը անխախտ հաւատքի ու ազգասիրութեան դրոշմն է դրել անապատի աւազներին, մինչդեռ եղեռնագործը կարծել է, թէ հայը անհետ կորչում է պատմութեան հողմերում։ Քրիստոսանուիրումի եւ հայրենեաց սիրոյ նոյն այդ ոգով մեր ժողովուրդը հոգեւոր ու ազգային իր կեանքն է վերակերտել աշխարհի բոլոր կողմերում, վերածնունդ ապրել Արեւելեան Հայաստանում՝ մոխիրներից յառնած իր պետութեան հովանու ներքոյ։ Վերելքի իր ուղին մեր ժողովուրդը կերտել է զոհողութիւններով, մաքառումով, մարդկային խղճի ու իրաւունքի առջեւ իր արդար դատը բարձրաձայնելու ջանքերով՝ միշտ աղօթքով յիշելով բիւրաւոր վկաներին Հայոց ցեղասպանութեան» (2015, Դ., էջ 33–34)։

Իր խօսքում Վեհափառ Հայրապետը նաեւ առաւել քան յստակ մեկնաբանեց սրբադասման նպատակը. «Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Մենք ամենքս այսօր ականատեսն ենք մեր պատմութեան հոգեւոր վերափոխման, որին մասնակից ենք թէ՛ հաւաքաբար եւ թէ՛ անհատապէս։ Յեղասպանութեան նահատակների սրբադասումը կենարար նոր շունչ, շնորհ եւ օրհնութիւն է բերում եկեղեցական ու ազգային մեր կեանքում։

Մենք հաւատում ենք, որ մեր ժողովրդի հոգեւոր նոր վերածննդի պսակն ենք հիւսում՝ Հայոց ցեղասպանութեան նահատակներին սրբադասելով։ Մեր սուրբ նահատակների յիշատակն այլեւս ոչ թէ զոհի ու ննջեցեալի հոգեհանգստեան աղօթք է, այլ՝ յաղթանակած ու նահատակութեան արեամբ սրբագործուած անմարմին զինուորների յաղթական օրհներգութիւն» (2015, Դ., էջ 34–35)։

Կաթողիկոսի պատգամն էր նոր աւիւնով պայքարել հայ դատի արդարացի լուծման համար. սրբադասումը նոր շունչ պէտք է հաղորդի հայորդիներին թէ՛ իրենց վերածնուած հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետութիւնում եւ Արցախում, թէ՛ Սփիւռքում այդ պայքարն իր յաղթական աւարտին հասցնելու համար՝ բարեխօսութեամբ Ցեղասպանութեան սուրբ նահատակների։

Աստուածային նախախնամութեամբ այդ նոյն՝ 2015 թ.՝ Ցեղասպանութեան նահատակների սրբադասման տարում, սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը մի նոր ուրախութիւն էր հայ հաւատացեալ ժողովրդի համար։ Այդպէս՝ 2015 թ. սեպտեմբերի 27-ին՝ Վարագայ Սուրբ Խաչի տօնին, երբ նշւում է Հայաստան բերուած տէրունական Խաչափայտի մասունքի հրաշքով յայտնուելու յիշատակը, Սուրբ Էջմիածնում կատարուեց նաեւ Միւռոնի օրհնութեան արարողութիւնը։

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքում ասուած է. «Աստուծոյ ողորմութեամբ այսօր աշխարհի բոլոր կողմերից ազգիս զաւակները ուխտաւորաբար համախմբուել են Սուրբ Էջմիածնում՝ աղօթակից լինելու սրբալոյս Միւռոնի օրհնութեան արարողութեանը։ Մեր ժողովրդի հազարաւոր զաւակների ներկայութիւնն այստեղ վկայում է մեր կեանքում կարեւորութիւնն ու արժէքը սուրբ Միւռոնի, որ կնիքն է քրիստոնէական մեր ինքնութեան եւ շաղախը՝ ազգային մեր միասնականութեան» (2015, Թ., էջ 13)։

Եթէ փորձենք վերապատմել, ապա պիտի ասենք, որ Միւռոնի մասին Վեհափառ Հայրապետի խօսքը կարծես Հայոց քրիստոնէական մշակոյթն է ամփոփ ներկայացնում Նոյ նահապետից մինչեւ Թադէոս առաքեալ, մինչեւ Գրիգոր Լուսաւորիչ, մինչեւ տէրունաշնորհ Սուրբ Էջմիածինն ու «միւռոնաօծ մեր վանքերն ու եկեղեցիները, խաչքարերն ու մագաղաթները», քանի որ յիրաւի, «Միւռոնը միախառնում է մեր անցեալն ու ներկան… եւ գալիք բոլոր դարերը, բանզի բոլոր փորձութիւնների յանդիման մեր ժողովուրդը անխախտ պահեց Միւռոնի դրոշմը…» *(2015, Թ., էջ 13)։*

Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին օրհնուած Միւռոնը Վեհափառ Հայրապետը կոչեց ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ՄԻՒՌՈՆ, քանի որ վստահ էր, որ այն հաւատացեալներին պէտք է փոխանցի հայրենիքի նուիրեալ եւ քաջարի զաւակների արիութեան աննկուն ոգին։ Նրա պատգամը հետեւեալն էր. «Սուրբ Էջմիածնից բաշխուող սրբալոյս Միւռոնը թո՛ղ տարածի սրբութիւնն ու հոգեւոր առաքինութիւնների անուշաբոյրը աշխարհում եւ հանուր մեր ժողովրդի կեանքում, ազգային-եկեղեցական մեր օրհնեալ անդաստաններում, հայրենեաց պաշտպան մեր զինուորների, մեր Եկեղեցու բոլոր զաւակների սրտերում՝ դառնալով յաղթանակների ու բարի գործոց նոր ձեռքբերումների զօրութիւն ...Թող Սուրբ Էջմիածնի Միւռոնի յաւերժական լոյսը միշտ դրոշմուի մեր ժողովրդի զաւակաց հոգիներին, որ մշտապէս նորոգեն իրենց ուխտը առ Աստուած, ուխտը՝ առ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու նուիրական հայրենիքը։ Թո՛ղ աղաւնու բերած ձիթենու շիւղով Արարատի փէշերից ազդարարուած խաղաղութիւնը ամրացնի արդարութեան, մարդասիրութեան ոգին աշխարհում, զօրացնի համերաշխութիւնն ու համագործակցութիւնը մարդկանց եւ ազգերի» (2015, Թ., էջ 14–15)։

Այն, որ Հայոց Հայրապետի հոգածու հայեացքից դուրս չի մնում հայ ինքնութեան համար նշանակալից որեւէ մշակութային իրադարձութիւն, կարող է ցոյց տալ ընդամենը մէկ-երկու տարուայ դիտարկում։ Մի քանի բնորոշ օրինակներով անդրադառնանք հէնց վերջին երկու տարիներին՝ 2018 եւ 2019։ Այսպէս՝ 2018 թ. յուլիսի 17-ին Երեւանում տեղի ունեցաւ հասարակական-պետական գործիչ Արամ Մանուկեանի արձանի բացման արարողութիւնը, որն իր ներկայութեամբ պատուեց Հայոց Կաթողիկոսը։ Նա իր օրհնութեան խօսքում բարձր գնահատեց այս հայրենասէր գործչի ներդրումը Հայաստանի առաջին Հանրապետութեան ստեղծման հարցում, ինչպէս նաեւ հայ ազգի հետագայ գոյապայքարներում։ Գնահատանքի արժանացան նաեւ նրանք, ում բարերարութեամբ եւ հեղինակութեամբ իրագործուել էր այդ ստեղծագործութիւնը (բարերարներ՝ Աշոտ Թունեան եւ Գաբրիէլ Ջեմբերջեան, քանդակագործ՝ Դաւիթ Մինասեան)։

Նոյն թուականի նոյեմբերի 30-ին Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեան եւ գնահատանքի խօսքն ընթերցուեց Գիտութիւնների ազգային ակադեմիայի գրականութեան ինստիտուտի 75-ամեակի առիթով։ Գնահատանքի խօսքում արժեւորուած էր գրականութեան դերը հայ ժողովրդի կեանքում, ինչպէս նաեւ ինստիտուտի աշխատակիցների

վաստակը՝ հայկականութեան պահպանման, հետազօտման, արժեւորման ճանապարհին (2018, ԺԱ., էջ 9–10)։

2019-ից յիշենք Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը՝ ասուած Կոմիտաս վարդապետի շիրիմին։ Այն ոչ միայն մեծ երաժիշտի եւ տառապեալ հայորդու գործի, այլ նաեւ հայ ոգու վերապրող բնոյթի գնահատականն է. «Կոմիտասն Աստծու, Եկեղեցու եւ Հայրենիքի հանդէպ իր անսասան հաւատով մաքրեց ու հայացրեց մեր երգը, ստեղծեց այն հոգեւոր պարարտ անդաստանը, որտեղ հայն այլեւս յաւիտենապէս ճանաչում է իր հոգեւոր «ես»-ը, առերեսւում դարերի խորքից հնչող հայրապետների ու վարդապետների նուիրական աղօթքին, հայրենաշունչ եւ խրոխտ նախնեաց զգացումներին, շինականի անկեղծ ու ստեղծագործ հորովելին... Կոմիտաս վարդապետը յաւիտենութեան մէջ դրեց մեր երգը՝ ցեղասպանութեան սարսափի մէջ անգամ դառնալով հայ ժողովրդի անկորնչելի դարաւոր յոյսը եւ հոգու զրոյցն Աստծու հետ» (2019, Թ., էջ 15–16)։

Իւրաքանչիւր տօնին կամ յիշատակի օրուան Վեհափառ Հայրապետն իր ժողովրդին դիմում է ուղերձներով, որոնք իւրօրինակ պատգամներ են, Աստծու խօսքին հետեւելու յորդոր, աստուածահաճոյ գործելու ծրագրեր, խաղաղութեամբ ապրելու մաղթանքներ՝ ի շահ եւ ի փառս Հայ Հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետութեան։ Այդպիսի բազմաթիւ ուղերձներից ընտրենք մէկը, որը հայրենիքի հանդէպ սիրոյ եւ հայրենի երկրին ուխտաւորի երկիւղածութեամբ կապուած լինելու մշակոյթն է պատգամում։

2018 թ. մայիսի 28-ին Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Հռիփսիմէ վանքի 1400-ամեակի տօնը նշանաւորեց օրհնութեան գրով եւ հայրապետական կոնդակով։ Հռիփսիմէի անուան հետ է կապուած Հայոց դարձի պատմութիւնը։ Նրա եւ իր ընկերուհիների հաւատարմութիւնը Քրիստոսին, իրենց մայրապետի՝ երանելի Գայիանէի հետ նահատակուելը՝ յանուն հաւատի ճշմարտութեան, հայ ժողովրդի համար նշան եղան սթափման եւ հոգեւոր նորոգման։ Այնտեղ, ուր հանգչում են սուրբ կոյսերի մասունքները, Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոսի ջանքերով կառուցուեց Սուրբ Հռիփսիմէ եկեղեցին եւ դարձաւ մեր ժողովրդի սիրելի ուխտավայրերից մէկը։

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ յայտնի է իր բարենորոգչական գործունէութեամբ, օրհնութեան գրում ընդգծում է

սրբավայրի հէնց այդ նշանակութիւնը. «Քրիստոսի նոր վկաներով նոր պտուղներ տուեցին առաքեալների քարոզութեամբ մեր երկրում սերմանուած հունդերը։ Նահատակուած սուրբ կոյսերի եւ կենդանի նահատակ Սուրբ Գրիգոր մեր Լուսաւորչի հաւատքի ամրութեամբ ծագեց մեր ժողովրդի քրիստոնէական դարձի արշալոյսը, եւ «երկնաւոր խօսքերը լցրեցին մեր երկիրը»։ Հայաստանը դարձաւ առաջին քրիստոնեայ տէրութիւնը՝ Աստուծոյ սէրն ու ողորմութիւնը ճանաչած Տրդատ արքայով, Հայոց արքունիքով եւ ողջ ժողովրդով։ Հայաստանի վրայ կամար կապեց հոգեւոր տաճարի գմբեթը, որի աննիւթական սիւները դարձան Տիրոջ էջքի լոյսերը, որոնք հեղուել էին նաեւ սրբուհիների նահատակութեան երեք վայրերում։ Այդ օրից ի վեր մեր ժողովրդի համար չկայ աւելի հարազատ պատկեր, քան Արարատի փէշին աստուածահաստատ Մայր Տաճարը եւ նրա շուրջը բոլորած եկեղեցիները»։

* * *

2019 թ. չափազանց հարուստ է խորհրդանշային իմաստներով, սակայն մենք յիշատակենք միայն 1869 արգասաւոր թուականից բխող 150-ամեայ յոբելեանները. այդ տարում են ծնուել հայոց մշակոյթի երախտաւորներ Յովհաննէս Թումանեանը, Կոմիտաս վարդապետը, Լեւոն Շանթը, Երուանդ Օտեանը. ցանկը շարունակելի է... սակայն այս պահին յիշատակենք միայն մէկին՝ այդ թուականին ծնուած մէկ այլ արժանաւոր հայորդու՝ Գէորգ Զ. Զորէքչեանին, որին՝ որպէս Հայոց Եկեղեցու առաջնորդի, վիճակուած էին չափազանց դժուարին ժամանակներ։ Ինչպէս նշում է «Էջմիածին» ամսագրի խմբագրականը, «Գէորգ Զ. Զորէքչեանը Քրիստոսի հօտն առաջնորդելու իր խաչն ստանձնեց 1945-ին, երբ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին շնչահեղձ էր լինում, երբ 800 աղօթատներից միայն ութն էին գործում ծանրագոյն պայմաններում, եւ սպառնալիօրէն պակասել էր հոգեւորականների թիւը» (տե՛ս 2009, ԺԱ., էջ 3)։ Սակայն Գէորգ Զ. Զորէքչեանին էր վիճակուած թօթափել մահուան թմբիրը, յարութիւն պարգեւել փակուած եկեղեցիներին, վերաբացել Գէորգեան հոգեւոր ճեմարանը, Մայր Աթոռի տպարանը, «Արարատ» ամսագրի երբեմնի գործառոյթներն իրականացնել «Էջմիածին» ամսագրի միջոցով (տե՛ս անդ)։

Խորհրդանշական է, որ այս՝ սիրելի յոբելեաններով արդիւնաւորուած 2019-ին լրանում է նաեւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի

գահակալութեան քսանամեակը։ Նա լաւագոյնս կեանքի կոչեց իր նախորդների՝ Հայոց Եկեղեցու հոգեւոր եւ մարմնաւոր բարեզարդման տեսիլը՝ իր պետականամէտ եւ պետականաշէն գործունէութեամբ մշտապէս նպաստելով Հայոց նորանկախ հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետութեան, Արցախի եւ Սփիւռքի միասնութեանը, վերածնունդ պարգեւելով եկեղեցական կեանքի բոլոր ոլորտներին՝ միաբանական, միջեկեղեցական, մշակութային, կրթական, հրատարակչական եւ այլն։

Այս ամենի մանրամասն արձանագրումը կարելի է գտնել հենց թէկուզ Հայոց Կաթողիկոսի ամենամեայ զեկոյցներում, տարեվերջեան հաշուետուութիւններում, առաւել ծաւալուն ուսումնասիրութիւններում։ Մենք, սակայն, Վեհափառ Հայրապետի գահակալութեան 20-ամեայ գործունէութիւնից փորձեցինք առանձնացնել մի բնորոշ հատուած՝ նշխարաչափ մի պատում՝ մեծ մասամբ ուղղորդուած հէնց իր օրհնութեան գրերով եւ կոնդակներով։ Մեր ներկայացրածը, իհարկէ, ամբողջի մասն է միայն Հայոց Եկեղեցու առաջնորդի մշակութային գործունէութեան ողջ ծաւալից, սակայն այդ մասն իսկ լրացնում է հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային կենսագրութեան բովանդակութիւնը։

ԱՐՓԻՆԷ ԶԱՆԹԻԿԵԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ (2000–2019 ԹԹ.)

Հայոց հայրապետների միջեկեղեցական գործունէութեան կարգախօսը՝ իբրեւ Հայ Եկեղեցու դիրքորոշում, ԺԱ. դարում հաստատեց երջանկայիշատակ Ս. Ներսէս Դ. Շնորհալին (1166–1173 թթ.)՝ «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկբայականս, սէր յամենայնի»։ *Հայ Եկեղեցին, հաւատարիմ Տիրոջ խօսքին, միշտ խոնարհ ու խաղաղասէր է եղել, ուստի ձգտել է ջերմ յարաբերութիւններ պահպանել բոլոր Եկեղեցիների հետ՝ միեւնոյն ժամանակ հաւատարիմ մնալով առաքեալներից ժառանգած Սրբազան աւանդութեանն ու վարդապետութեանը։ Միջեկեղեցական եւ էկումենիկ այս աւանդոյթով է առաջնորդւում նաեւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Հայոց հայրապետը դիպուկ բնութագրում է. «Հայ Եկեղեցին, ինքնուրոյն պատմական զարգացմամբ հանդերձ, երբէք չի կղզիացել, այլ միշտ առաջնորդուելով* «միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկբայականս եւ սէր յամենայնի» *գաղափարականով՝ իրեն համարել է Քրիստոսի տիեզերական Եկեղեցու մէկ փոքրիկ, սակայն կարեւոր մասնիկը»[1]։ Այսինքն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «էկումենիկ միութեան» եւ «միջեկեղեցական համագործակցութեան» նախապայման է համարում դաւանաբանական սեփական սկզբունքների անխախտ պահպանումն ու եկեղեցական աւանդութեան անսասանութեան ընկալումը։*

Վեհափառ Հայրապետի դիրքորոշումը միջեկեղեցական յարաբերութիւնների հաստատման դժուարին եւ պատասխանատու գործում թերեւս յստակ արտացոլուած է հայրապետական անդրանիկ կոնդակում. «Շարունակելու ենք գործուն մասնակցութիւն ունենալ

---

[1] *«Էջմիածին» ամսագիր, 2000, ԺԱ., էջ 8։ Նիւթերը հիմնականում քաղուած են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտօնական ամսագրից՝ «Էջմիածնից», ուստի այսուհետ հրատարակութեան թուականը, համարն ու էջերը կնշուեն շարադրանքում՝ փակագծի մէջ։*

միջեկեղեցական կեանքում՝ հաւատարիմ համայն աշխարհում խաղաղութեան պահպանման, ժողովուրդների՝ եղբայրական սիրով համագործակցութեան մեր Եկեղեցու աւանդներին։ Նոր ժամանակների տարաբնոյթ մարտահրաւէրների առջեւ քրիստոնէական Քոյր եկեղեցիների հետ մեր ջանքերը միաւորած՝ հետեւողականօրէն իրականացնելու ենք հոգեւորի լոյսով մարդկութեան կեանքի իմաստաւորման սուրբ առաքելութիւնը՝ յանուն քրիստոնէական սկզբունքների կենսագործմամբ բարու յաղթանակի եւ համընդհանուր երջանկութեան» («Էջմիածին», 2000, Բ., էջ 3-9)։

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետութեան շրջանում առաւել են ամրապնդուել եւ սերտացել յարաբերութիւնները ու համագործակցութիւնը քրիստոնէական բոլոր Եկեղեցիների հետ։ Այդ մասին էր վկայում Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի տօնակատարութիւններին քրիստոնէական գրեթէ բոլոր Եկեղեցիների հոգեւոր առաջնորդների, կրօնական եւ էկումենիկ տարբեր կազմակերպութիւնների ղեկավարների մասնակցութիւնը։ Նշենք նաեւ, որ Վեհափառ Հայրապետի գահակալութեան տարիներին պատմութեան մէջ առաջին անգամ Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, այցելեցին քրիստոնէական աշխարհում հեղինակութիւն վայելող բազմաթիւ հոգեւոր առաջնորդներ։

Այս շրջանում քրիստոնէական Եկեղեցիների հոգեւոր առաջնորդների փոխադարձ այցելութիւնները դարձել են առաւել յաճախակի եւ արդիւնաւոր։ Միջեկեղեցական հանդիպումներն աւարտւում են փոխադարձ յուշագրերի, հռչակագրերի, յայտարարութիւնների կամ ուղերձների ստորագրմամբ, քրիստոնէական սիրոյ ու վստահութեան մթնոլորտի ձեւաւորմամբ, յետագայ փոխգործակցութեան համար անհրաժեշտ պայմանների հաստատմամբ։ Ընդլայնուել են յարաբերութիւնները Քոյր եկեղեցիների, կրօնական եւ էկումենիկ բոլոր կազմակերպութիւնների հետ։ Կաթոլիկ Եկեղեցու հետ համագործակցութիւնն ստացել է միանգամայն նոր բովանդակութիւն եւ որակ։ Արեւելեան միաբնակ Եկեղեցիների հետ յարաբերութիւններն առաւել սերտ ու գործնական են դարձել։

Այս հաղորդմամբ փորձել ենք ներկայացնել Վեհափառ Հայրապետի միջեկեղեցական եւ էկումենիկ գործունէութեան համապատկերից որոշ դրուագներ։

2000 թ. փետրուարի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ռուս Ուղղափառ Եկեղեցու գահակալ, Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ պատրիարք Ալեքսի Բ.-ի եղբայրական հրաւէրով մեկնեց Մոսկուա։

Հայ հոգեւորականների պատուիրակութեան այցը Ռուս Ուղղափառ Եկեղեցու աթոռանիստ, Նորին Սրբութեան գնահատմամբ, Քոյր եկեղեցիների հոգեւոր պետերի եղբայրական սիրոյ ու յարգանքի արտայայտութիւնն էր։

Քոյր եկեղեցիների հոգեւոր առաջնորդները նշեցին, որ 70 տարուայ անհաւատութեան մթնոլորտի պատճառով երկու եկեղեցիներն անցել են փորձութիւնների միեւնոյն ճանապարհը։ Նրանք, կարեւորելով Հայաստանում եւ Ռուսաստանում աստուածմերժութեան պարտադրանքով փակուած կամ խոնարհուած եկեղեցիների վերականգնումը, այնուամենայնիւ, իբրեւ առաջին խնդիր, անդրադարձան այն ծրագրերին, որոնք կոչուած են վերականգնելու, վերակենդանացնելու Աստծու ժողովրդի աղճատուած հոգիներն ու վերադարձնելու նրանց Քրիստոսի Եկեղեցի (2000, Գ., էջ 3–19)։

2000 թ. յուլիսի 6-ին Մոսկուայի պատրիարքութեան միջեկեղեցական յարաբերութիւնների գրասենեակում, Կալինինգրադի ու Սմոլենսկի միտրոպոլիտ եւ Մոսկուայի պատրիարքութեան միջեկեղեցական յարաբերութիւնների բաժնի նախագահ Կիրիլի եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու միջեկեղեցական յարաբերութիւնների բաժնի պատասխանատու Տ. Եղնիկ եպս. Պետրոսեանի միջեւ տեղի ունեցաւ հանդիպում։ Սրբազան հայրն այս հանդիպմանը մասնակցում էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ եւ օրհնութեամբ։

Հանդիպման նպատակն էր Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջեւ անմիջական բանակցութիւններ սկսելու գործնական քայլերի կարգաւորումը։ Նշենք, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի եւ Համայն Ռուսիոյ պատրիարք Ալեքսի Բ.-ի միջեւ 2000 թ. փետրուարի 29-ից մինչեւ մարտի 3-ն ընկած ժամանակահատուածում կայացած հանդիպման ժամանակ արդէն իսկ ձեռք էր բերուել որոշակի պայմանաւորուածութիւն (2000, Է., էջ 107–109)։

2000 թ. օգոստոսի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկուա։ Յաջորդ օրը՝ օգոստոսի 18-ին, Վեհափառ Հայրապետի եւ Համայն Ռուսիոյ Ալեքսի Բ. պատրիարքի

մասնակցութեամբ հայկական խաչքար զետեղուեց նորակառոյց Ս. Ամենափրկիչ եկեղեցու առջեւ՝ ի նշան երկու Եկեղեցիների բարեկամութեան։ Խաչքարի տեղադրման հանդիսաւոր արարողութիւնից յետոյ տեղի ունեցաւ Ս. Ամենափրկիչ եկեղեցու օծման արարողութիւնը (2000, Թ., էջ 3)։

2000 թ. օգոստոսի 19-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մոսկուայի Ս. Ամենափրկիչ եկեղեցու օծման արարողութեանը ներկայ գտնուելուց յետոյ, մեկնեց Միացեալ Նահանգներ՝ մասնակցելու կրօնապետերի՝ ՄԱԿ-ի հովանաւորութեամբ կազմակերպուած գագաթնաժողովին։ Գագաթնաժողովի գլխաւոր քարտուղար Բաուա Ջէյնը Վեհափառ Հայրապետին ուղղուած հրաւէր-նամակում գրել է. «Ինձ համար մեծ պատիւ է արժանանալ Ձեր՝ իբրեւ աշխարհի ամէնից հռչակաւոր կրօնական առաջնորդներից մէկի մասնակցութեանը կրօնական եւ հոգեւոր առաջնորդների՝ Հազարամեակի աշխարհի խաղաղութեան գագաթնաժողովին» *(2000, Թ., էջ 6)։*

Նախքան օգոստոսի 28-ին գագաթնաժողովի աշխատանքներին մասնակցելը՝ Նորին Սրբութիւնը մասնակցեց ԱՄՆ հայոց արեւելեան թեմում կազմակերպուած միջոցառումներին՝ հանդիպումներ ունենալով թեմական-վարչական մարմինների պատասխանատուների, հայորդիների ու հոգեւոր դասի հետ՝ ամէնուր հաւաստելով, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն իր առաքելութեան ծաւալման նոր փուլ է մտել, ուստի այդ նպատակով կատարւում են վերակազմակերպման եւ ուժերի համախմբման աշխատանքներ։

Իր խօսքում Նորին Սրբութիւնը յատկապէս շեշտում էր համախմբման եւ համակողմանի աջակցութեան կարեւորութիւնը՝ Մայր Եկեղեցու գործունէութիւնն առաւել արդիւնաւէտ դարձնելու համար։

Օգոստոսի 28-ին տեղի ունեցաւ գագաթնաժողովի բացման արարողութիւնը։ Ներկայացնում ենք մի փոքրիկ հատուած Ամենայն Հայոց Հայրապետի բանախօսութիւնից. «Մարդկութեան պատմութիւնը համոզում է, որ առանց հոգեւոր ու բարոյական արժէքներով կեանքի իմաստաւորման ու զօրացման, անարդիւնք է հասարակութիւնների խաղաղ գոյակցութեան պահպանումը։ Առանց այս արժէքների մարդկութիւնը անզօր է անկորուստ ու անխաթար պահպանել աշխարհը....» (2000, Թ., էջ 6–11)։

2000 թ. սեպտեմբերի 18-ին Վեհափառ Հայրապետը Ռումին Ուղղափառ Եկեղեցու պետ, Նորին Սրբութիւն Թէոկտիստ պատրիարքի հրաւէրով մեկնեց Ռումինիա։ Հանդիպման նպատակը երկու Եկեղեցիների միջեւ բարեկամութեան ամրապնդումն էր։ Բարձր գնահատելով Հայ Առաքելական

Սուրբ Եկեղեցու դերն ու արժէքը թէ՛ հայ ժողովրդի, թէ՛ միջեկեղեցական կեանքում՝ Թէոկտիստ պատրիարքը մեր Եկեղեցին բնութագրեց իբրեւ «քրիստոնէութեանը ամենամօտ կանգնած եկեղեցի» *(2000, Թ., էջ 12–17)։*

2000 թ. նոյեմբերի 8-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուղեկցող պատուիրակութեան հետ մեկնեց Հռոմ՝ Յովհաննէս-Պօղոս Բ. պապին հանդիպելու եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի մասունքները Հայաստան տեղափոխելու, նաեւ Արեւելեան Եկեղեցիների աստուածաբանութեանը, պատմութեանն ու ծիսագիտութեանը նուիրուած գիտաժողովին մասնակցելու համար։

Նոյն թուականի նոյեմբերի 24-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկուա՝ հանդիպելու Մոսկուայի ու Համայն Ռուսիոյ պատրիարք Ալեքսի Բ.-ի եւ Կովկասի ժողովուրդների Վերին կրօնական խորհրդի նախագահ, Ադրբեջանի մուսուլմանների հոգեւոր առաջնորդ Շէյխ-ուլ-իսլամ Ալլահշուքիւր Փաշա-զադէի հետ։ Հանդիպման ընթացքում երեք առաջնորդները ստորագրեցին համատեղ հռչակագիր, որով Անդրկովկասում եւ սահմանակից տարածքներում խաղաղութեան ամրապնդման կոչ էր արւում (2000, ԺԱ., էջ 4)։

2001 թ. փետրուարի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ Ազգային ժողովում ներկայ գտնուեց Ուղղափառների եւրոպական միջխորհրդարանական վեհաժողովի շրջանակում ուղղափառ ժողովուրդների միասնութեան միջազգային հիմնադրամի կազմակերպած «Եկեղեցին, պետութիւնը, հասարակութիւնը եւ աշխարհի վերակառուցման հայեցակարգի ճգնաժամը» թեմայով միջազգային համաժողովի բացմանը։

Վեհափառ Հայրապետը խորհրդանշական նկատեց, որ Եկեղեցու, պետութեան եւ հասարակութեան առնչութիւնների վերաբերեալ կարեւորագոյն հարցադրումով այս համաժողովը տեղի է ունենում Հայաստանում. մի երկրում, որտեղ աշխարհիկ իշխանութիւնը, քրիստոնէութիւնը ճանաչելով որպէս պետական կրօն, դեռ 1700 տարի առաջ փաստեց Եկեղեցի-պետութիւն համագործակցութեան անհրաժեշտութիւնը։

Նորին Սրբութիւնը յատկապէս կարեւորեց վեհաժողովի եւ հիմնադրամի գործունէութիւնը՝ անդրադառնալով Ի. դարում Արեւելեան Եւրոպայի բազմաթիւ երկրներում ծաւալուած հակաեկեղեցական բռնութիւններին ու անաստուածութեանը, որն իր աղէտալի հետեւանքներն ունեցաւ հասարակութեան հոգեւոր կեանքում (2001, Բ.–Գ., 13–14)։

2001 թ. փետրուարի 23-ին Վեհափառ Հայրապետն անդրանիկ պաշտօնական այցով մեկնեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) պաշտօնատեղի՝ Ժնեւ։

Ժնեւում լինելով ԵՀԽ-ի պաշտօնական հիւրը՝ Հայոց հայրապետը հանդիպումներ ունեցաւ ԵՀԽ գլխաւոր քարտուղար Կոնրադ Ռայզերի, ԵՀԽ ընդհանուր քարտուղարութեան, ինչպէս նաեւ ԵՀԽ-ում Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչների հետ։

Ժնեւից Նորին Սրբութիւնը մեկնեց Լոնդոն՝ ներկայ գտնուելու մարտի 1-ին Բրիտանական գրադարանում «Գանձերը՝ տապանից» ցուցահանդէսի բացմանը՝ նուիրուած Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակին։ Վաչէ եւ Թամար Մանուկեանների հիմնադրամի մեկենասութեամբ կազմակերպուած ցուցահանդէսում ներկայացուեց հայ եկեղեցական արուեստի նմուշներ Մայր Աթոռի, ինչպէս նաեւ աշխարհի այլ թանգարաններից (2001, Բ.-Գ., 14–15)։

2001 թ. սեպտեմբերի 25-ին, Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեակին նուիրուած տօնակատարութիւններին մասնակցելու նպատակով, ՀՀ նախագահի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի հրաւէրով Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հռոմի սրբազան քահանայապետ Յովհաննէս-Պօղոս Բ. պապը։

Նշենք, որ պատմութեան մէջ առաջին անգամ Կաթոլիկ Եկեղեցու սրբազան քահանայապետն այցելեց ամենահին քրիստոնեայ պետութիւն՝ Հայաստան. եկաւ սիրոյ եւ օրհնութեան իր խօսքը փոխանցելու մեր ժողովրդին, գլուխ խոնարհելու քրիստոնէական համամարդկային մեր արժէքների առջեւ, ծնրադրելու ողջ հայութեան սրբութիւն սրբոց միածնաէջ Մայր Տաճարում, Իջման Սուրբ Սեղանի առջեւ երկրպագելու եւ աղօթք վերառաքելու առ Աստուած՝ պատմութեան մէջ մի նոր ու փառաւոր էջ բացելով Հայ Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների համագործակցութեան համար՝ 1700-ամեայ մեր Եկեղեցուն, նրա գահակալին ու հաւատացեալներին ցնծութեան եւ ուրախութեան մի նոր առիթ տալով։ Կաթոլիկ Եկեղեցու հոգեւոր առաջնորդի այցը Հայաստան եւ Սուրբ Էջմիածին, անշուշտ, պատմական իրադարձութիւն էր. Յովհաննէս-Պօղոս Բ. պապը մէկ անգամ եւս արժեւորեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարումը քրիստոնէութեան պատմութեան կերտման գործում. «Ձերդ Սրբութիւն Գարեգին Կաթողիկոս, եղբայրական սիրով ի Տէր ողջագուրում եմ Ձեզ եւ Եկեղեցին, որը

առաջնորդում էք։ Առանց Ձեր քաջալերանքի ես այժմ այստեղ չէի լինի, որպէս ուխտաւոր հոգեւոր ուղեւորութեան մէջ, որ գալիս է մեծարելու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու քրիստոնէական կեանքի բացառիկ վկայութիւնն այսքա՜ն երկար դարերի ընթացքում եւ յատկապէս քսաներորդ դարում, որը ձեզ համար եղաւ սարսափի եւ տառապանքի աննկարագրելի ժամանակաշրջան։

Համայն Կաթոլիկ Եկեղեցին կիսում է Ձեր եւ բոլոր հայերի անհուն ուրախութիւնը՝ այս մեծապէս սիրեցեալ երկրում Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն հռչակելու 1700-ամեակի առիթով» (2001, Թ., էջ 53–63)։

2001 թ. նոյեմբերի 3–5-ը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի հրաւէրով Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, այցելեց Կոստանդնուպօլսի տիեզերական պատրիարք Նորին Ամենասրբութիւն Բարդուղիմէոս Ա.-ն։

Այս այցելութիւնը եւս հաստատեց, որ Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեայ տօնակատարութիւններն ունեն ոչ միայն հայկական, այլ նաեւ համաքրիստոնէական եւ միջազգային հնչեղութիւն (2001, Ժ.–ԺԱ., էջ 5–24)։

2002 թ. հոկտեմբերի 18–23-ը Վեհափառ Հայրապետի հրաւէրով Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, այցելեց Ասորի Ուղղափառ Եկեղեցու պատրիարք Նորին Սրբութիւն Իգնատիոս Զաքքա Ա. Իւասը։

Սա Նորին Սրբութիւն Իգնատիոս Զաքքա Ա. Իւասի երկրորդ այցելութիւնն էր համայն հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածին։ Առաջին անգամ Մար Իգնատիոս Զաքքա Ա. պատրիարքը Մայր Աթոռ էր ժամանել 1982 թ.՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ի հրաւէրով՝ մասնակցելու Վեհափառ Հայրապետի գահակալութեան 27-րդ տարեդարձին նուիրուած հանդիսութիւններին։

Հանդիպման ընթացքում հոգեւոր առաջնորդները քննարկեցին երկու Եկեղեցիներին վերաբերող որոշ հարցեր, անդրադարձան քրիստոնեաների առջեւ ծառացած հիմնախնդիրներին ու դրանց յաղթահարման ուղիներին։ Սոյն այցելութիւնը եւս մէկ քայլ էր Հայ եւ Ասորի Եկեղեցիների բազմադարեայ բարեկամութիւնն առաւել ամրապնդելու ուղղութեամբ։

Մէջ ենք բերում մի փոքրիկ հատուած Ասորի Ուղղափառ Եկեղեցու պատրիարք Նորին Սրբութիւն Իգնատիոս Զաքքա Ա. Իւասի ողջոյնի խօսքից. «Գոհունակութիւն ենք յայտնում Աստծուն, որ մեր փոքրաթիւ ժողովուրդները ամէնուր պահեցին եւ պահպանեցին մեզ փոխանցուած սրբազան աւանդութիւններն ու Եկեղեցու սովորոյթները։ Գոհաբանութիւն ենք

յայտնում Աստծուն այս օրհնեալ հողի գոյութեան համար եւ հպարտ ենք ձեր ժողովրդով։

Մեր երկու Եկեղեցիների համագործակցութիւնը լաւ եւ բարի օրինակ եղաւ այլ Եկեղեցիների համար։ Ուրախ եմ, որ այստեղ եմ գտնում՝ շնորհաւորելու Նորին Սրբութեանը եւ հայ ժողովրդին 1700-ամեակի առիթով, երբ 17 դար առաջ քրիստոնէութիւնն այստեղ ընդունուեց որպէս պետական կրօն» (2002, Ժ., էջ 3–13)։

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրով 2003 թ. մայիսի 2-ին եռօրեայ այցով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ, Ալեքսանդրիայի պապ եւ Ս. Մարկոսի Աթոռի պատրիարք Շէնուդա Գ.-ն։ Հանդիպման ժամանակ Հայոց Հայրապետն իրաւամբ նկատեց. «Ղպտի Ուղղափառ Եկեղեցու հետ մենք նոյն դաւանանքը եւ նոյն հաւատքն ունենք ու երկար դարեր ապրել ենք ապաւինած Աստծուն՝ կրելով բազում տառապանքներ մեր սուրբ հաւատքի համար։ Առ Աստուած մեր հաւատքը, մեր սէրն ու նուիրումը եւ ապաւինութիւնը կեանք ու յարատեւութիւն պարգեւեցին մեր ժողովուրդներին. դժուարութիւնների առաջ չտկարացանք, չծնկեցինք, այլ, Տիրոջ հաւատքով զօրացած, կերտեցինք մեր վաղուայ օրը՝ այսօրը....» (2003, Ե., էջ 6)։

Նորին Սրբութիւն Շէնուդա Գ. պատրիարքը, շնորհակալութիւն յայտնելով ջերմ ընդունելութեան համար, հաւաստիացրեց, որ այսուհետ պէտք է առաւել զօրանայ համագործակցութեան ոգին ու եղբայրական սէրը երկու Եկեղեցիների միջեւ՝ մաղթելով հայ ժողովրդին ու եկեղեցականաց դասին Սուրբ Հոգու զօրակցութիւնը (2003, Ե., էջ 3–11)։

Այս նշանակալի հանդիպումը եզրափակուեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.-ի եւ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու հոգեւոր պետ Շէնուդա Գ.-ի միջեւ համատեղ յայտարարութեան ստորագրմամբ։

2003 թ. մայիսի 7–9-ը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրով, եռօրեայ այցով Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Վրաց Ուղղափառ Եկեղեցու պետ, Համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլիա Բ.-ն։ Հանդիպման ընթացքում քննարկուեցին որոշ խնդիրներ։ Իր երախտիքը յայտնելով հրաւէրի եւ ջերմ ընդունելութեան համար՝ Վրաց Եկեղեցու առաջնորդը հաւաստիացրեց, որ Հայոց ու Վրաց Եկեղեցիների եղբայրական բարեկամութիւնն առաւել կամրապնդուի երկու հովուապետերի ջանքերով՝ հարթելով առկայ բոլոր խնդիրներն ու դժուարութիւնները (2003, Ե., էջ 13–17)։

2003 թ. նոյեմբերի 26-ին Սուրբ Դանիէլեան մենաստանում տեղի ունեցաւ Կովկասի հիմնախնդիրների կարգաւորմանը նուիրուած քառակողմ հանդիպում՝ մասնակցութեամբ Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ պատրիարք Ալեքսի Բ.-ի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի, Համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլիա Բ.-ի եւ Անդրկովկասի մուսուլմանների հոգեւոր առաջնորդ Շէյխ-ուլ-իսլամ Ալլահշուքիւր Փաշա-զադէի։

Հանդիպումը բացեց եւ երեք երկրների հոգեւոր առաջնորդներին ողջոյնի խօսքով դիմեց Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ հոգեւոր առաջնորդ Ալեքսի Բ. պատրիարքը։

Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը Մոսկուայում տեղի ունեցող միջկրօնական այս խաղաղարարական հանդիպման ժամանակ մասնաւորապէս նշեց. «Արցախը իրականացնում է ինքնորոշման իր իրաւունքը, որը աստուածատուր շնորհ է, որն իրաւական յարաբերութիւնների տեսանկիւնից ամրագրուած է ՄԱԿ-ի՝ մարդու իրաւունքների երկու հիմնարար փաստաթղթերում՝ «Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքների միջազգային համաձայնագրում» եւ «Սոցիալական ու մշակութային իրաւունքների համաձայնագրում»։ Եւ եթէ Դուք, յարգարժան Շէյխ, բնորոշում էք Ադրբեջանն իբրեւ «օրէնք ու մարդու իրաւունքներ յարգող երկիր», ապա պիտի ընդունէք, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութիւնն իր նախնիների հողի վրայ ազատ ապրելու աստուածաշնորհ իր իրաւունքի տէրն է» (2003, Ժ.-ԺԱ., էջ 22)։

Քառակողմ հանդիպման աւարտին Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդները ստորագրեցին համատեղ ուղերձ՝ ուղղուած իրենց երկրների հաւատացեալներին։ Հանդիպման նպատակը Կովկասի տարածաշրջանում հակամարտութիւնների յաղթահարումն ու խաղաղութեան հաստատումն էր (2003, Ժ.–ԺԱ., էջ 18–25)։

2004 թ. յունիսի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ֆինլանդիայի եւ Տուրկուի արքեպիսկոպոս Իւկկա Պաարմայի հրաւէրով, պատասխան այցով մեկնեց Ֆինլանդիա։ Ֆինլանդիայի Աւետարանական-Լութերական Եկեղեցու պաշտօնական պատուիրակութիւնը՝ գլխաւորութեամբ Ֆինլանդիայի եւ Տուրկուի արքեպիսկոպոս Իւկկա Պաարմայի, Նորին Սրբութեան հիւրն էր այս այցելութիւնից երկու տարի առաջ։

Արքեպիսկոպոս Իւկկա Պաարմայի, ինչպէս նաեւ Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետ արքեպիսկոպոս Լէոյի հետ հանդիպումների

ընթացքում ընդգծուեց միջեկեղեցական կապերի կարեւորութիւնը։ Վեհափառ Հայրապետը յոյս յայտնեց, որ համագործակցութիւնը կը շարունակուի ոչ միայն հոգեւոր պետերի, այլ նաեւ եկեղեցապատկան հաստատութիւնների միջեւ (2004, Զ., էջ 3–10)։

2005 թ. մայիսի 31-ին Մոսկուայում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Ալեքսի Բ. պատրիարքին։

Հանդիպման ժամանակ երկու Եկեղեցիների հովուապետերն անդրադարձան եկեղեցական կեանքում արձանագրուած յաջողութիւններին, Ռուսաստանի եւ Հայաստանի հոգեւոր վերազարթօնքին։ Խօսուեց նաեւ երկու երկրներում իրականացուող մեծածաւալ եկեղեցաշինութեան մասին, որի առնչութեամբ Վեհափառ Հայրապետը Ալեքսի Բ. պատրիարքին յայտնեց Երեւանում ռուս ուղղափառ եկեղեցու կառուցման համար Հայաստանի իշխանութիւնների կատարած հողայատկացման մասին (2005, Զ., էջ 3)։

2006 թ. մայիսի 27-ից յունիսի 3-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հիւրընկալուեց Գերմանիայի Աւետարանական Եկեղեցու պատուիրակութիւնը, որի կազմում էին Ուղղափառ ուսանողներին կրթաթոշակ տրամադրող ծրագրի քարտուղար դոկտ. Միքայէլ Հիւբները՝ Էնլարգենից, Գերմանիայի Բողոքական Եկեղեցիների կողմից ուսանողներին կրթաթոշակ տրամադրող ծրագրի քարտուղար դոկտ. Եօհան Շնայդերը՝ Շտուտգարդից, Ուղղափառ Եկեղեցիների հետ կապերի պատասխանատու դոկտ. Դագմար Հելլերը՝ Հանովերից։

Նոյն օրը հիւրերին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը։

Հանդիպումից յետոյ հիւրերն այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարաններ։

Գերմանական պատուիրակութիւնը ծանօթացաւ Հայ Եկեղեցու ուսումնական ծրագրերին, այցելեց Գէորգեան հոգեւոր ճեմարան, Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոց եւ ԵՊՀ աստուածաբանութեան ֆակուլտետ (2006, Զ., էջ 157)։

2006 թ. յուլիսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխաւորած պատուիրակութիւնը մեկնեց Մոսկուա՝ մասնակցելու Ռուս Ուղղափառ Եկեղեցու եւ ԱՊՀ երկրների Միջկրօնական խորհրդի կողմից կազմակերպուած՝ Հոգեւոր առաջնորդների գագաթնաժողովին։ Ժողովի աշխատանքները տեւեցին մինչեւ յուլիսի 5-ը։

Վեհափառ Հայրապետը յուլիսի 4-ի իր ելոյթում մասնաւորապէս ընդգծեց՝ «Մենք պէտք է խոստովանենք, որ մինչեւ մեր կողմից չեն դատապարտուի բոլոր պատմական չարագործութիւնները մարդկանց ու ազգերի նկատմամբ, աւերածութիւններն ու ցեղասպանութիւնները, կը շարունակենք մնալ դրանց կրկնութեան վտանգի առջեւ, ինչի վկաներն էլ յաճախ դառնում ենք եւ այսօր....» (2006, Է.-Ը., էջ 6-10)։

Յուլիսի 5-ին տեղի ունեցաւ համաժողովի եզրափակիչ նիստը, ընդունուեց այս գագաթնաժողովի ուղերձը, որտեղ ներկայացուած էին միջկրօնական երկխօսութեան եւ համագործակցութեան հիմնական կէտերը։

Ուղերձը եզրափակւում էր հաւատացեալներին ուղղուած խօսքով։ Կրօնական առաջնորդները հաւատացեալներին կոչ էին անում յարգել եւ ընդունել միմեանց՝ անկախ կրօնական եւ ազգային պատկանելութիւնից, պահպանել խաղաղութիւնը՝ տրուած Բարձրեալի կողմից (2006, Է.-Ը., էջ 6-10)։

2006 թ. օգոստոսի 26-29-ը Ճապոնիայի Կիոտո քաղաքում տեղի ունեցաւ «Կրօնները խաղաղութեան համար» կազմակերպութեան 8-րդ համագումարը, որին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մասնակցում էր առաջին անգամ։

«Կրօնները խաղաղութեան համար» կազմակերպութեան նպատակն է խթանել փոխգործակցութիւնը ողջ աշխարհի կրօնական համայնքների միջեւ, ինչպէս նաեւ նպաստել առկայ հակամարտութիւնների վերացմանը՝ աշխարհում խաղաղութիւնն ամրապնդելու եւ կայուն զարգացում ապահովելու համար։

«Կրօնները խաղաղութեան համար» կազմակերպութիւնը իւրաքանչիւր 5 տարին մէկ անգամ համախմբում է աշխարհի կրօնական առաջնորդներին՝ զօրացնելու միջկրօնական համագործակցութիւնը հակամարտութիւնների լուծման, խաղաղութեան հաստատման եւ կայուն զարգացման ոլորտում։

1970 թ. հոկտեմբերին կայացած առաջին համաժողովից յետոյ համաժողովներ է գումարուել աշխարհի տարբեր երկրներում։ Իւրաքանչիւր համագումարից յետոյ մասնակիցները հեռանում են գործունէութեան ծրագրով, որը պէտք է իրականացնեն յաջորդ 5 տարուայ ընթացքում։

Համաշխարհային 8-րդ համագումարի թեման էր «Կրօններն աշխարհում խաղաղութեան համար. դիմագրաւել բռնութեանը եւ ձեռք բերել համընդհանուր անվտանգութիւն»։

Համագումարին մասնակցում էին հարիւրաւոր ներկայացուցիչներ՝ կրօնական առաջնորդներ, հասարակական եւ քաղաքական գործիչներ։

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ համագումարին մասնակցում էր Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպս. Պալիոզեանը, որը ներկաներին յղեց Վեհափառ Հայրապետի ուղերձը (2006, է.–Ը., էջ 176–179)։

2007 թ. յունիսի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սկսուեց Եւրոպայի Եկեղեցիների համաժողովի «Եկեղեցի եւ հասարակութիւն» յանձնախմբի ժողովը, որին մասնակցում էր շուրջ 35 ներկայացուցիչ Եւրոպայի քրիստոնէական Եկեղեցիներից։ Նոյն օրը տեղի ունեցաւ ԵԵԿ-ի «Եկեղեցի եւ հասարակութիւն» յանձնախմբի ժողովի պաշտօնական բացումը. հանդէս եկաւ յանձնախմբի համանախագահ տիկին Անթիէ Հայդեր Ռոթթուիլմը. նա շնորհակալութիւն յայտնեց Մայր Աթոռում կազմակերպուած ջերմ ընդունելութեան եւ Հայոց Եկեղեցու հարուստ հոգեւոր ժառանգութեանը հաղորդակցուելու հնարաւորութեան համար։ Օրուայ նիստերի ընթացքում ժողովականներն առանձին աշխատանքային խմբերում քննարկեցին «Եկեղեցի եւ հասարակութիւն» յանձնախմբի առաջնահերթ խնդիրները (2007, Զ.–է., էջ 144)։

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Եկեղեցիների եւրոպական կոնֆերանսի անդամ է 1977 թուականից։ 2003 թ. յունիսի 25-ից յուլիսի 2-ը Նորուէգիայի Թրոնդհայմ քաղաքում տեղի ունեցաւ Եւրոպայի Եկեղեցիների համաժողովի 12-րդ գլխաւոր ասամբլէան, որին մասնակցեց Հայոց Եկեղեցու պատուիրակութիւնը։

Մայր Աթոռն իր պաշտօնական տեսակէտն է յայտնել Եւրամիութեանը Թուրքիայի անդամակցութեան հարցի եւ «Կարտա էկումենիկա» կոչուող փաստաթղթի առընչութեամբ, որը վերաբերում է Եկեղեցիների համագործակցութեան նոր ձեւերին, ժողովուրդների ու կրօնների միջեւ երկխօսութեան հաստատմանը։ Անդամակցելով այս կառոյցներին՝ Հայ Եկեղեցին եւս իր կարեւոր նպաստն է բերում էկումենիկ զարգացմանը։ Միջեկեղեցական յարաբերութիւններում յատկապէս կեանքի է կոչել ԵՀԽ-ի եւ էկումենիկ շարժման տեսլականի կարեւոր կէտերից մէկը՝ համագործակցութիւնը Եկեղեցիների ու քրիստոնէական յարանուանութիւնների ներկայացուցիչների միջեւ։

2005 թ. Մեծ եղեռնի 90-ամեակի առիթով ԵԵԿ-ն յայտարարութեամբ դատապարտեց Հայոց ցեղասպանութիւնը եւ կոչ արեց

անդամ Եկեղեցիներին այդ օրը աղօթելու հայ նահատակների հոգիների խաղաղութեան համար։

«Եկեղեցի եւ հասարակութիւն» յանձնախումբն ստեղծուել է 1999 թ. ԵԵԿ-ի եւ Եւրոպայի էկումենիկ յանձնախմբի երկարատեւ աշխատանքի եւ միաւորման գործընթացի արդիւնքում (2007, Զ.-է., 144-146)։

2007 թ. յունիսի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եւրոպայի Եկեղեցիների համաժողովի «Եկեղեցի եւ հասարակութիւն» յանձնախմբի անդամներին։

Նորին Սրբութիւնն իր խօսքում նշեց. «Ուրախ ենք, որ 1977 թուականից մեր երջանկայիշատակ նախորդների խորագէտ տնօրինութեամբ Հայոց Եկեղեցին անդամ է Եւրոպայի Եկեղեցիների համաժողովի եւ իր գործուն մասնակցութիւնն է բերում Եկեղեցիների միջեւ փոխըմբռնման եւ երկխօսութեան հաստատման գործին»։ Վեհափառ Հայրապետն այս այցը նկատեց որպէս եւս մէկ հնարաւորութիւն՝ առաւել լաւ ճանաչելու Հայոց Եկեղեցին եւ նրա ներկայիս կացութիւնը։ Նորին Սրբութիւնն անդրադարձաւ նաեւ հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելութեանը եւ հանգամանօրէն ներկայացրեց Եկեղեցու առջեւ ծառացած խնդիրները, Հայ Եկեղեցու գործունէութիւնը քրիստոնէական դաստիարակութեան եւ ընկերային (սոցիալական) ոլորտներում։ Աւարտելով խօսքը՝ Ամենայն Հայոց Հայրապետը յաջողութիւն եւ արդիւնաշատ ընթացք մաղթեց յանձնախմբի աշխատանքներին (2007, Զ.-է., 147)։

2007 թ. սեպտեմբերի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Անգլիկան Եկեղեցու պետ, Քէնթրբերիի արքեպիսկոպոս դոկտոր Ռոուան Վիլեամսը։ Հայոց Հայրապետը ողջունեց Նորին Սրբազնութեան պաշտօնական այցելութիւնը Հայաստան եւ հայոց հոգեւոր կենտրոն։ Նորին Սրբութիւնը գոհունակութեամբ վերյիշեց եղբայրական հիւրընկալութեան անմոռաց պահերը, որ ապրել էր Մեծ Բրիտանիայի եւ Հիւսիսային Իռլանդիայի Միացեալ Թագաւորութիւն պաշտօնական այցի ժամանակ, նաեւ՝ Լոյսի երեկոյեան արարողութիւնը Անգլիկան Եկեղեցու հոգեւոր կենտրոն Քէնթրբերիի Մայր տաճարում։ Վեհափառ Հայրապետը այնուհետեւ նշեց, որ հոգեմտաւոր հարուստ ժառանգութիւն ունեցող մեր Եկեղեցիները բազմաթիւ մարտահրաւէրներ են դիմագրաւում հովուական կեանքում, միջեկեղեցական եւ միջկրօնական յարաբերութիւններում։

Քէնթրբերիի արքեպիսկոպոսը, անդրադառնալով Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմնադրման պատմութեանը, Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքին, դարերի ընթացքում քրիստոնէական վկայութեանն ու հայ ժողովրդի քաջարի մարտիրոսութեանը, ասաց. «Մենք մեծ ուրախութեամբ ենք ժամանել այս սրբավայր.... Գիտենք, որ սա Հայոց Եկեղեցու սիրտն ու ծննդավայրն է, աղբիւրն է այս ժողովրդի քրիստոնէական կեանքի»։ Արքեպիսկոպոս Ռոուանն իր խօսքում նշեց. «Սա այն ժողովուրդն է, որ կրկին ու կրկին կոչուած էր կրելու Քրիստոսի խաչը։ Եւ մենք, հաւաքուելով այստեղ, պատւում ենք այդ վկայութիւնը եւ գոհութիւն ենք յայտնում Հայր Աստծուն Քրիստոսի շնորհների համար, որ յայտնուեցին այս Եկեղեցու եւ ազգի կեանքում»։ Նա անդրադարձաւ նաեւ երկու Եկեղեցիների միջեւ առկայ երկար տարիների բարեկամութեանը, վերյիշեց շուրջ հարիւր տարի առաջ՝ Հայոց ցեղասպանութեան եւ հալածանքների տարիներին, Ռենդել Դէյուիդսօն արքեպիսկոպոսի գործադրած ճիգ ու ջանքերը։

2007 թ. սեպտեմբերի 25-ի երեկոյեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Վեհարանում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Անգլիկան Եկեղեցու պետ Քէնթրբերիի արքեպիսկոպոս դոկտոր Ռոուան Վիլեամսը ստորագրեցին համատեղ յայտարարութիւն (2007, Թ., էջ 3–12)։

2007 թ. սեպտեմբերի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետն ընդունեց իր հրաւէրով Հայաստան ժամանած Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխաւոր քարտուղար Սամուէլ Կոբիային։ Նորին Սրբութիւնը ողջունեց Սամուէլ Կոբիայի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ ուրախութիւն յայտնեց Մայր Աթոռում ԵՀԽ գործադիր կոմիտէի հերթական ժողովի գումարման առիթով։ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ասաց. «Մենք ուրախ ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր կարեւոր աւանդն է բերում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հիմնական ձգտումներին, որոնք են Եկեղեցիների եղբայրութիւնն ու համագործակցութիւնը։ Ուրախ ենք, որ այսօր մեր Եկեղեցին առաւել չափով ներկայութիւն ունի Եկեղեցիների համաշխարհային խորհրդում՝ նրա տարբեր կառոյցներում ու մարմիններում եւ իր աշխոյժ, եռանդուն մասնակցութիւնն է բերում նրանց աշխատանքներին» (2007, Թ., էջ 12)։ Անդրադառնալով Եկեղեցիների առաքելութեանը ԻԱ. դարում՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ համատեղ ջանքերով միայն հնարաւոր կը լինի յաղթահարել մարդկութեան առջեւ ծառացած մարտահրաւէրները։

Սեպտեմբերի 23–28-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարուեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործադիր կոմիտէի հերթական ժողովը։

Նորին Սրբութիւնը գոհունակութիւն յայտնեց Քոյր եկեղեցիների եւ միջեկեղեցական կազմակերպութիւնների հետ կապերի առաւել զօրացման համար՝ նշելով, որ Հայ Եկեղեցին գործուն մասնակցութիւն է բերում միջեկեղեցական յարաբերութիւնների հաստատմանն ու լաւագոյնս ներկայացուած է ԵՀԽ կառոյցներում եւ համանման միւս կազմակերպութիւններում։

Հայոց հոգեւոր առաջնորդը գնահատանքով արձանագրեց, որ Հայ Եկեղեցին մեծապէս օգտուել է այդ համագործակցութիւնից. ԵՀԽ-ն մշտապէս սիրով ու պատրաստակամութեամբ արձագանքել է Հայ Եկեղեցու բարձրացրած բոլոր խնդիրներին, ինչպէս օրինակ՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը, սոսկալի երկրաշարժի օրերին եղբայրական օգնութիւնը եւ Արցախի ժողովրդի իրաւունքների պաշտպանութիւնը (2007, Թ., էջ 12–15)։

2008 թ. մայիսի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Վատիկան՝ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու հոգեւոր առաջնորդ Բենեդիկտոս ԺԶ. պապի հրաւէրով։

Բենեդիկտոս ԺԶ. պապը, ողջունելով Հայոց հայրապետի այցը Վատիկան, անդրադարձաւ երկու Եկեղեցիների այժմեան յարաբերութիւններին՝ մաղթելով, որ Սուրբ Հոգին իրենց միշտ առաջնորդի դէպի սէր եւ խաղաղութիւն։ Սրբազան քահանայապետն իր զօրակցութիւնը յայտնեց Հայաստանին՝ խոստանալով, որ աջակցելու է մեր երկրին խաղաղութեան եւ արդարութեան որոնման ճանապարհին։

Երկու Եկեղեցիների առաջնորդներն իրենց խօսքում կարեւորեցին գործունէութիւնը էկումենիկ այն յանձնախմբի, որը կազմուած է Հռոմէական Եկեղեցու եւ Հին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչներից ու կոչուած է շարունակելու եւ խորացնելու երկխօսութիւնը նրանց միջեւ (2008, է., էջ 3–29)։

2008 թ. սեպտեմբերի 27-ին՝ ժամը 17-ին, Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցում տեղի ունեցաւ էկումենիկ աղօթքի արարողութիւն՝ նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարք Նորին Ամենասրբութիւն Բարդուղիմէոս Ա.-ի։

էկումենիկ արարողութեան ընթացքում ներկաներին հայրապետական իր խօսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Նորին Սրբութիւնն իր ուրախութիւնը յայտնեց, որ իր հրաւէրին ընդառաջ՝ Քոյր եկեղեցիների եւ միջազգային էկումենիկ կազմակերպութիւնների ներկայացուցիչները Միւռոնօրհնութեան առիթով Ս. էջմիածին են ժամանել՝ միասնաբար աղօթելու եւ իրենց զօրակցութիւնը յայտնելու Հայոց Եկեղեցուն ու մեր ժողովրդին (2008, Թ., էջ 16–17)։

2008 թ. սեպտեմբերի 29-ին Վեհափառ Հայրապետն ընդունեց Միւռոնօրհնէքի առիթով Մայր Աթոռ ժամանած Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու պատուիրակութեանը։ Հանդիպմանը ներկայ էին նաեւ Զմմառի Կաթոլիկ հայոց պատրիարքութեան ներկայացուցիչ Տ. Վարդան եպս. Աշքարեանը եւ Մխիթարեան միաբանութեան վանահայր Եղիա Քիլաղպեանը։

Նոյն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաեւ Հնդիկ Մալանկարա Քոյր եկեղեցու պատուիրակութեանը՝ գլխաւորութեամբ Նորին Սրբազնութիւն դոկ. Թոմաս Աթանասիուս միտրոպոլիտի եւ ուղեկցութեամբ հնդկահայոց հոգեւոր հովիւ Տ. Օշական վրդ. Գիւլգիւլեանի։

Վեհափառ Հայրապետը շնորհակալութիւն յայտնեց Միւռոնօրհնէքի սրբազան արարողութեանը նրանց բերած կարեւոր մասնակցութեան համար՝ նշելով, որ սա քրիստոնեաների համախմբման կարեւոր առիթ է՝ ի նշան քրիստոնէական սիրոյ եւ եղբայրութեան (2008, Թ., էջ 21)։

2010 թ. մարտի 16-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրով, պաշտօնական այցով Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ պատրիարք Նորին Սրբութիւն Կիրիլ Ա.-ն։

Իր խօսքում Կիրիլ Ա. պատրիարքը շնորհակալութիւն յայտնեց եղբայրական ջերմ ընդունելութեան համար։ Անդրադառնալով քրիստոնէական հաւատքի կարեւորութեանը հայ ժողովրդի կեանքում՝ Կիրիլ Ա. պատրիարքը յիշատակեց Հայ Եկեղեցու մեծագոյն սրբերին՝ Ս. Գրիգոր Լուսաւորչին ու Հռիփսիմեանց կոյսերին, որոնք հաւատքի սերմեր ցանեցին Հայաստանի օրհնեալ հողում։

Մարտի 18-ին՝ Ռուսաց պատրիարքի պաշտօնական այցի վերջին օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Վեհարանի դահլիճում, Վեհափառ Հայրապետը եւ Մոսկուայի ու Համայն Ռուսիոյ պատրիարք Կիրիլ Ա.-ն ստորագրեցին համատեղ յայտարարութիւն։

Արարողութեանը ներկայ էին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական առաջնորդները, Մայր Աթոռի միաբանները, Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամները եւ Մոսկուայի ու Համայն Ռուսիոյ պատրիարքին ուղեկցող պատուիրակութիւնը (2010, Գ., էջ 48–64)։

2010 թ. ապրիլի 26-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժամանեց Ադրբեջանի մայրաքաղաք Բաքու՝ մասնակցելու կրօնապետերի համաշխարհային գագաթնաժողովին՝ նուիրուած կրօնների եւ աւանդական արժէքների վրայ համաշխարհայնացման ազդեցութեան խնդիրներին։ Խօսելով համաշխարհայնացման վտանգների մասին՝ Վեհափառ Հայրապետն ասաց. «Մեր օրերում շարունակ առաւել մեծ շրջագիծ ընդգրկող հաղորդակցութեան եւ համագործակցութեան գործընթացները քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, կրթամշակութային ու այլ ասպարէզներում եւ ժողովուրդների մէջ մշտապէս սերտացող առընչութիւններն ու կապերը, ցաւօք, դեռ չեն գծագրում հեռանկարը այնպիսի աշխարհի, ուր թագաւորում է մարդասիրութիւնը, արդարութիւնը, աստուածադիր պատուիրանն ու օրէնքը, ուր գերագոյն արժէք է մարդը, եւ յարգւում է նրա իրաւունքը։ Այսօր համընդհանուր մտահոգութիւն են տեխնոլոգիական փորձարկումների, մթնոլորտային արտանետումների արդիւնքում առաջ եկող կլիմայական ու բնապահպանական խնդիրները, որ վկայում են արարչաստեղծ աշխարհի հանդէպ մարդկային յարգանքի եւ հոգածութեան պակասի մասին....»։ Իր խօսքում Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձաւ նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացին՝ մեծապէս կարեւորելով խնդրի խաղաղ հանգուցալուծմանն ուղղուած բոլոր ջանքերը։

Տեղի ունեցաւ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպում՝ մասնակցութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ պատրիարք Կիրիլ Ա.-ի եւ Կովկասի մահմեդականների վարչութեան նախագահ Շէյխ-ուլ-իսլամ Ալլահշուքիւր Փաշա-զադէի։

Հանդիպմանը քննարկուեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտութեանն առընչուող հարցեր։

Հանդիպման աւարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ պատրիարքը եւ Կովկասի մուսուլմանների վարչութեան նախագահը ստորագրեցին համատեղ յայտարարութիւն։ Ներկայացնում ենք մի հատուած այդ համաձայնագրից. «Յանուն ամենազօր Արարչի,

ի կատարումն մեր ժողովուրդների խաղաղութեան, բարօրութեան եւ երջանկութեան նուիրական երազանքների, մենք՝ ադրբեջանցի եւ հայ ժողովուրդների հոգեւոր առաջնորդներս, Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովուապետ Նորին Սրբութիւն Կիրիլ պատրիարքի բարձր միջնորդութեամբ հանդիպեցինք Բաքւում՝ հաւաստելու մեր յարգանքը միմեանց հանդէպ ու քննարկելու մեր ժողովուրդների եւ պետութիւնների միջեւ ճշմարիտ խաղաղութեան ու համաձայնութեան ձեռքբերման համար անյետաձգելի միջոցառումները։

Դիտարկելով այս հանդիպումը որպէս խաղաղարարական երկխօսութեան ծաւալում Հայ Առաքելական Եկեղեցու եւ Կովկասի մահմեդականների վարչութեան միջեւ՝ սկիզբ առած Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջնորդութեամբ 1988 թ., հաւատարիմ նախորդ յայտարարութիւնների ոգուն՝ մենք յոյս ունենք յետագայում եւս աջակցել մեր ժողովուրդների խաղաղ համագոյակցութեան սկզբունքների առաջընթացին եւ փոխընդունելի որոշումների մշակմանը՝ բացառապէս բանակցային ճանապարհով....» (2010, Դ., էջ 27–32)։

2010 թ. յունիսի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵՀԽ «Հաւատք եւ կարգ» յանձնախմբի գործադիր վարչութեան անդամներին։

Հիւրերին իր օրհնութիւնն ու գնահատանքը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Նորին Սրբութիւնը յանձնախմբի անդամներին ներկայացրեց Հայոց Եկեղեցու ներկայիս իրավիճակը, մարտահրաւէրները եւ գործունէութիւնը տարբեր ոլորտներում։ Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ միջեկեղեցական յարաբերութիւններին՝ մաղթելով, որ Աստծու սէրը ներկայ լինի դրանցում եւ միաւորի Քրիստոսի Սուրբ Եկեղեցին։ Վեհափառ Հայրապետը նաեւ գոհունակութեամբ նկատեց, որ վարչութեան անդամների ներկայութիւնը Հայաստանում առիթ կը տայ ճանաչելու Հայ Եկեղեցին եւ հայոց հոգեւոր կեանքը, ինչպէս նաեւ կը քաջալերի հաւատաւոր հայորդիներին ու կզօրացնի նրանց հաւատը (2010, Զ., էջ 10)։

2011 թ. սեպտեմբերի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխաւոր քարտուղար Օլաւ Տուէյտի գլխաւորած պատուիրակութեանը։ Անդրադառնալով Հայ Եկեղեցու մասնակցութեանը ԵՀԽ-ի աշխատանքներին՝ Ամենայն Հայոց Հայրապետն ընդգծեց, որ այն ապագայում առաւել խորութեամբ է

շարունակուելու, եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ըստ ամենայնի զօրաւիգ է լինելու ԵՀԽ-ի առաքելութեան արդիւնաւորմանը, քանի որ վերջինս նպաստում է Եկեղեցիների եղբայրական ոգու զօրացմանն ու ջանքերի մէկտեղմանը՝ խարսխուած փոխադարձ սիրոյ եւ միմեանց նկատմամբ ունեցած յարգանքի վրայ (2011, Թ., էջ 13)։

2012 թ. յունիսի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Եկեղեցիների համատեղ գործողութիւն» համադաշնութեան (Act Alliance) գլխաւոր քարտուղար Ջոն Նդունային՝ ուղեկցութեամբ ԵՀԽ հայաստանեան «Կլոր սեղան» միջեկեղեցական հիմնադրամի տնօրէն Կարէն Նազարեանի։ «Եկեղեցիների համատեղ գործողութիւն» համադաշնութիւնը 140 երկրում ունի 131 անդամ եւ գործունէութիւն է ծաւալում արտակարգ իրավիճակներում, ինչպէս նաեւ ընկերային (սոցիալական) եւ զարգացման ոլորտներում։

Նորին Սրբութիւնը ողջունեց Ջոն Նդունայի այցը Հայաստան ու Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ապա իր գնահատանքը բերեց համադաշնութեանը՝ Հայաստանում «Կլոր սեղան» հիմնադրամի եւ համադաշնութեան հայաստանեան ֆորումի հետ համագործակցութեան, ինչպէս նաեւ արտակարգ իրավիճակներում ցուցաբերուող զօրակցութեան համար։ Վեհափառ Հայրապետը կարեւորեց Եկեղեցիների փոխհամագործակցութիւնը զանազան ոլորտներում, ինչը նպաստում է համընդհանուր ջանքերի մէկտեղմանը։

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը մասնաւոր մտահոգութիւն արտայայտեց Սիրիայում տեղի ունեցող իրադարձութիւնների առընչութեամբ, որոնց հետեւանքով սիրիաբնակ բազմաթիւ հայորդիներ ներգաղթում են Հայաստան։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կոչ արեց միջեկեղեցական կառոյցներին, այդ թւում նաեւ «Եկեղեցիների համատեղ գործողութիւն» համադաշնութեանը՝ անհրաժեշտ աջակցութիւն ցուցաբերելու անօգնական վիճակում յայտնուող հայորդիներին (2012, Զ., էջ 4)։

2012 թ. սեպտեմբերի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Քրիստոնէական միասնութեան պապական խորհրդի նախագահ Նորին Սրբազնութիւն կարդինալ Կուրտ Կոխին՝ ուղեկցութեամբ Մայր Աթոռի միջեկեղեցական յարաբերութիւնների բաժնի տնօրէն Տ. Յովակիմ եպս. Մանուկեանի։

Ողջունելով կարդինալ Կոխի ներկայութիւնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Ամենայն Հայոց Հայրապետը բարձր գնահատեց Հայ Առաքելական

եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ առկայ եղբայրական յարաբերութիւններն ու համագործակցութեան ոգին։ Նորին Սրբութիւնը նշեց, որ նման այցելութիւնները ոչ միայն ուրախութիւն են բերում հայ ժողովրդի զաւակներին, այլ նաեւ զօրացնում են նրանց հաւատքը, քանի որ հաւատացեալ հայորդիներն ականատես են լինում սիրոյ այն ջերմ մթնոլորտին, որ առկայ է երկու Եկեղեցիների միջեւ։

Իր հերթին կարդինալ Կոխը շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին հրաւէրի եւ ջերմ բարեմաղթանքների համար՝ ուրախութեամբ նշելով, որ իր համար մեծ պատիւ է գտնուել մի երկրում, որտեղ քրիստոնէութիւնն առաջինն է ընդունուել որպէս պետական կրօն, որն ունի քրիստոնէական խոր արմատներ ու հարուստ մշակոյթ, եւ որտեղ ժողովուրդը, հակառակ բազմաթիւ փորձութիւնների ու զրկանքների, մինչ օրս անսասան պահպանել է քրիստոնէութեան հանդէպ իր հաւատարմութիւնը։

Զրոյցի ժամանակ անդրադարձ կատարուեց խորհրդային վարչակարգի տարիներին Հայոց Եկեղեցու առջեւ ծառացած դժուարութիւններին ու խոչընդոտներին, անկախ պետականութեան պայմաններում հոգեւոր կեանքի զարթօնքին եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաջընթացին ու արձանագրած ձեռքբերումներին։ Նորին Սրբութիւնը կարդինալ Կոխին ներկայացրեց նաեւ Մայր Աթոռի կողմից իրականացուող ծրագրերը տարբեր ոլորտներում՝ գոհունակութեամբ ընդգծելով, որ Կաթոլիկ Եկեղեցու աջակցութեամբ Հայ Եկեղեցու մի շարք միաբաններ իրենց հոգեւոր կրթութիւնը շարունակել են տարբեր երկրների կաթոլիկ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում (2012, Թ., էջ 16)։

2014 թ. ապրիլի 23-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց մի խումբ կաթոլիկ ուխտաւորների՝ գլխաւորութեամբ Միլանի Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդարանի իսլամի հետ երկխօսութեան հարցերով պատասխանատու Դօն Ջիամպիերօ Ալբերտիի։ Հանդիպման սկզբում Դօն Ջիամպիերօ Ալբերտին Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց ուխտագնացութեան նպատակը՝ աւելի լաւ ճանաչել հայ ժողովրդին ու նրա հոգեւոր մշակոյթը։

Ուխտաւորներին իր օրհնութիւնն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ շնորհաւորելով Տէր Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան տօնի առիթով։ Վեհափառ Հայրապետն իր խօսքում մասնաւորապէս անդրադարձաւ Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների պատմական

առընչութիւններին եւ ներկայիս ջերմ յարաբերութիւններին՝ կարեւորելով միջեկեղեցական ոլորտում գործադրուող ջանքերը՝ ի նպաստ մարդկութեան կեանքում փոխադարձ սիրոյ, համերաշխութեան ու գործակցութեան ամրապնդման[2]։

2014 թ. մայիսի 7-ին եղբայրական այցով Վատիկան մեկնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Մայիսի 8-ին Առաքելական պալատում Վեհափառ Հայրապետը հանդիպեց Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու սրբազան քահանայապետ Նորին Սրբութիւն Ֆրանցիսկոս պապին։

Ֆրանցիսկոս պապն անդրադարձաւ Հայ Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ առկայ փոխյարաբերութիւններին՝ գոհունակութեամբ նշելով, որ վերջին տասնամեակներին դրանք աւելի են սերտացել ու ջերմացել։ Հռոմի սրբազան քահանայապետը նաեւ շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին՝ երկու Եկեղեցիների միջեւ երկխօսութեան զարգացմանը բերած կարեւոր զօրակցութեան համար։ Մասնաւորապէս խօսելով մեր օրերում նահատակութեան մասին՝ Ֆրանցիսկոս պապն ընդգծեց. «Իրականում ողբերգական դիպուածներով Քրիստոսի համար իրենց արիւնը հեղած նահատակների թիւն անցեալ դարում շատ աւելի է, քան առաջին դարերում։ Եւ այս մարտիրոսութեան մէջ հայ ժողովրդի զաւակներն ունեն իրենց պատուաւոր տեղը....» (ՔՀ, 2014, մայիս Ա., էջ 1–2)։

2014 թ. հոկտեմբերի 10-ի երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրով, եռօրեայ եղբայրական այցով Հայաստան ժամանեց Անտիոքի եւ Համայն Արեւելքի նորընտիր պատրիարք Նորին Սրբութիւն Մօր Իգնատիոս Եփրեմ Բ.-ն։ Ասորի Ուղղափառ Եկեղեցու հոգեւոր պետին ուղեկցում էին Տրիպոլիի եւ Լեռնային Լիբանանի արքեպիսկոպոս, Ս. Սինոդի գլխաւոր քարտուղար Մօր Թէոփիլոս Սալիբան, Հոմսի արքեպիսկոպոս Մօր Սիլուանոս Բուտրոս ալ Նեհմեհը, պատրիարքական քարտուղար Մօր Տիմոթէոս Մաթթա ալ Խուրին, հայր Կարլոս Բաբին եւ հայր Ջոզէֆ Բալին։

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գերագոյն հոգեւոր խորհրդի, հոգեւորականաց դասի եւ հաւատացեալ ողջ ժողովրդի անունից բարի գալուստ մաղթելով Ասորի Եկեղեցու գահակալին՝ Ամենայն Հայոց Հայրապետն աղօթքով հայցեց, որ բարին Աստուած Իր Սուրբ Աջի

---

[2] *«Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթ (այսուհետ՝ շարադրանքում՝ ՔՀ), 2014, ապրիլ Բ., էջ 3։*

ամենախնամ հովանու ներքոյ պահի ու պահպանի Սիրիան եւ Հայաստանի Հանրապետութիւնը, Ասորի Ուղղափառ եւ Հայ Առաքելական Եկեղեցիները, Իր օրհնութեամբ առաւել արդիւնաւորի փոխյարաբերութիւններն ու համագործակցութիւնը երկու Եկեղեցիների՝ Սուրբ Հոգու երկնառաք պարգեւներով առատապէս շնորհազարդելով բարեպաշտ զաւակներին՝ հայ եւ ասորի եղբայր ժողովուրդներին։ Վեհափառ Հայրապետը նաեւ մաղթեց, որ Տէրը քաջառողջ կեանք եւ գահակալութեան երկար տարիներ պարգեւի Նորին Սրբութիւն Մօրան Մօր Իգնատիոս Եփրեմ Բ.-ին։

Հոկտեմբերի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Նորին Սրբութիւն Մօր Իգնատիոս Եփրեմ Բ. Անտիոքի եւ Համայն Արեւելքի պատրիարքը երկու Եկեղեցիների պատուիրակութիւնների ներկայութեամբ ստորագրեցին համատեղ յայտարարութիւն (ՔՀ, 2014, հոկտեմբեր Ա., էջ 2–4)։

2015 թ. ապրիլի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու քահանայապետ Ֆրանցիսկոս պապի հրաւէրով, եղբայրական այցով մեկնեց Վատիկան։

Ապրիլի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վատիկանում մասնակցեց Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի առիթով Ս. Պետրոսի տաճարում Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու քահանայապետ Ֆրանցիսկոս պապի մատուցած Ս. Պատարագին։ Սրբազան արարողութեան ընթացքում Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու հայր Ս. Գրիգոր Նարեկացին Կաթոլիկ Եկեղեցու կողմից հռչակուեց «Եկեղեցու վարդապետ»։ Պատարագի աւարտին հայկական ծէսով կատարուեց հոգեհանգստեան արարողութիւն Մեծ եղեռնի նահատակների համար (2015, ապրիլ Ա., էջ 4–5)։

2015 թ. յունիսի 9-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործադիր կոմիտէի նիստի անդամներին (ՔՀ, 2015, յունիս Ա., էջ 1)։

2015 թ. յունիսի 8-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ մեկնարկեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործադիր կոմիտէի հերթական նիստը։ ԵՀԽ գործադիր կոմիտէի հնգօրեայ ժողովը որոշուեց անցկացնել Հայաստանում՝ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի, ինչպէս նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ ԵՀԽ-ում համանախագահութեան առիթով (ՔՀ, 2015, յունիս Ա., էջ 2–3)։

2015 թ. հոկտեմբերի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մեծ Բրիտանիայի եւ Հիւսիսային Իռլանդիայի Միացեալ Թագաւորութիւն։

Հոկտեմբերի 28-ին Վեստմինստերեան աբբայութիւնում (Մեծ Բրիտանիայի եւ Հիւսիսային Իռլանդիայի Միացեալ Թագաւորութիւն) Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ տեղի ունեցաւ յիշատակի արարողութիւն՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան սուրբ նահատակներին (ՔՀ, 2015, հոկտեմբեր Բ., էջ 1–2)։

2016 թ. յունիսի 24-ին սկսուեց Հռոմի սրբազան քահանայապետ Նորին Սրբութիւն Ֆրանցիսկոս պապի եռօրեայ այցը Հայաստանի Հանրապետութիւն՝ «Այց առաջին քրիստոնեայ երկիր» կարգախօսի ներքոյ։

Յունիսի 24-ի երեկոյեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Հռոմի սրբազան քահանայապետ Նորին Սրբութիւն Ֆրանցիսկոս պապի հանդիպումը, որին ներկայ էին Կաթոլիկ Եկեղեցու պատուիրակութիւնը, Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց դասը, Հայաստանից ու Սփիւռքից ժամանած թեմական առաջնորդներ եւ առաջնորդական տեղապահներ։ Այս այցելութիւնը, յիրաւի, պատմական նշանակութիւն ունեցաւ երկու Եկեղեցիների հետագայ համագործակցութեան եւ առաւել ջերմ ու սերտ յարաբերութիւնների հաստատման համար։

2016 թ. յունիսի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանի գահասրահում տեղի ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Հռոմի սրբազան քահանայապետ Ֆրանցիսկոս պապի համատեղ հռչակագրի ստորագրման արարողութիւնը (ՔՀ, 2016, յունիս Բ., էջ 1–11)։

2016 թ. յուլիսի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Անտիոքի Ուղղափառ Եկեղեցու Զահլէի միտրոպոլիտ Անտոնիոս Ալսորուն՝ ուղեկցութեամբ Հայաստանի Հանրապետութիւնում Լիբանանի արտակարգ եւ լիազօր դեսպան Ժան Մաքարօնի եւ բարերար Նիկոլա Աբօֆայիսայի։ Նորին Սրբութեանը փոխանցելով Անտիոքի Ուղղափառ Եկեղեցու պետ Յովհաննէս Ժ.-ի եղբայրական ողջոյններն ու բարեմաղթանքները՝ Զահլէի միտրոպոլիտն իր ուրախութիւնը յայտնեց՝ առաջինը պետականօրէն քրիստոնէութիւնն ընդունած օրհնեալ երկիր այցելութեան առընչութեամբ։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բերելով իր օրհնութիւնը, վերստին յայտնեց եղբայրական սէրն ու ջերմ զգացումները Անտիոքի Ուղղափառ Եկեղեցու պետի հանդէպ, ինչպէս նաեւ երախտագիտութեամբ վերյիշեց Լիբանանի եւ Արաբական պետութիւնների հոգածու վերաբերմունքը, որ ցուցաբերուել է հայ ժողովրդի նկատմամբ՝ հնարաւորութիւն ընձեռելով Մեծ եղեռնից մազապուրծ հայերին վերակառուցելու իրենց ազգային հոգեւոր կեանքը (ՔՀ, 2016, յուլիս Բ., էջ 1)։

2016 թ. նոյեմբերի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը երկօրեայ այցով մեկնեց Մոսկուա՝ մասնակցելու Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Կիրիլ պատրիարքի ծննդեան 70-րդ յոբելեանական տարեդարձի հանդիսութիւններին։

Նոյեմբերի 22-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մոսկուայում՝ Ս. Դանիէլի պատրիարքանիստ վանքում, հանդիպում ունեցաւ Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Կիրիլ Ա. պատրիարքի հետ (ՔՀ, 2016, նոյեմբեր Բ., էջ 1–2)։

2017 թ. մարտի 19-ին սկսուեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջեկեղեցական այցը Ֆինլանդիա։ Նորին Սրբութիւնն իր միջեկեղեցական այցելութիւնը կատարում էր Ֆինլանդիայի Լիւթերական-Աւետարանական Եկեղեցու պետ՝ Տուրկուի արքեպիսկոպոս Կարի Մէկկինէնի եւ Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետ, համայն Ֆինլանդիայի եւ Կարելիայի արքեպիսկոպոս Լէոյի պաշտօնական հրաւէրի շրջանակում։

Նոյն օրը՝ երեկոյեան, Հելսինկիի Լիւթերական-Աւետարանական Եկեղեցու Մայր տաճարի սրահում տեղի ունեցաւ նաեւ Վեհափառ Հայրապետի եւ նրան ուղեկցող պատուիրակութեան հանդիպումը Ֆինլանդիայի նորակազմ հայ համայնքի հետ։ Կենտրոնական Եւրոպայի եւ Սկանդինաւիայի երկրների հայրապետական պատուիրակը, յանուն Ֆինլանդիայի հայ համայնքի, իր որդիական շնորհակալութեան ու բարիգալստեան խօսքն ուղղեց Վեհափառ Հայրապետին՝ ընդգծելով այն դրական զարգացումները, որ վերջին տարիներին տեղի էին ունեցել Ֆինլանդիայի հայորդեաց կեանքում։

Յաջորդ օրը՝ մարտի 20-ին, տեղի ունեցաւ Նորին Սրբութեան պաշտօնական հանդիպումը Տուրկուի արքեպիսկոպոս, Ֆինլանդիայի Լիւթերական-Աւետարանական Եկեղեցու պետ Կարի Մէկկինէնի հետ՝ Հելսինկիի Լիւթերական-Աւետարանական Մայր տաճարում։

Վեհափառ Հայրապետին ու նրան ուղեկցող պատուիրակութեանը բարի գալուստ մաղթելով՝ արքեպիսկոպոս Կարի Մէկկինէնը

յատկապէս կարեւորեց Հայ Առաքելական եւ Ֆինն Լիւթերական-Աւետարանական Եկեղեցիների միջեւ ձեւաւորուած եղբայրական ջերմ յարաբերութիւններն ու հետագայ նոր հեռանկարների զարգացումը։ Ներկայ Ֆինն հաւատացեալներին ու հոգեւորականներին իր խօսքն ուղղեց նաեւ Ամենայն Հայոց Հայրապետը («Էջմիածին», 2017, Գ., էջ 5–19)։

2018 թ. ապրիլի 4-ի երեկոյեան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հրաւէրով Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու քահանայապետ Ֆրանցիսկոս պապի, եղբայրական այցով ժամանեց Վատիկան՝ մասնակցելու Ս. Գրիգոր Նարեկացու արձանի բացման արարողութեանը։

Ապրիլի 5-ի առաւօտեան Վեհափառ Հայրապետը պատուիրակութեան ուղեկցութեամբ մեկնեց Առաքելական պալատ, ուր տեղի ունեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Հռոմի սրբազան քահանայապետի առանձնազրոյցը (ՔՀ, 2018, ապրիլ Ա., էջ 3)։

2019 թ. ապրիլի 2-ին Մոսկուայում՝ Ս. Դանիէլի պատրիարքանիստ վանքում, տեղի ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մոսկուայի ու Համայն Ռուսիոյ Կիրիլ պատրիարքի հանդիպումը։

Հանդիպման ընթացքում հովուապետերը գոհունակութեամբ հաստատեցին երկու ժողովուրդների եւ Եկեղեցիների միջեւ զարգացող փոխգործակցութիւնն ու համագործակցութիւնը՝ միջեկեղեցական եւ միջազգային ամենատարբեր հարթակներում կրօնական, հասարակական հիմնախնդիրներին ընդառաջ (ՔՀ, ապրիլ Ա., էջ 1)։

2019 թ. ապրիլի 25-ի երեկոյեան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Վատիկանի պետքարտուղար կարդինալ Պիետրո Պարոլինի հրաւէրով, մեկնեց Ֆլորենցիա (Իտալիա)՝ մասնակցելու «Կրօնների փառատօն» արարողութեանը։

Ապրիլի 27-ին Ֆլորենցիայի (Իտալիա) Ս. Մինաս տաճարում, Ս. Մինաս հայազգի մարտիրոսի նահատակութեան եւ համանուն տաճարի հիմնադրման 1000-ամեակի յոբելեանական տօնախմբութեան շրջանակում, տեղի ունեցաւ «Կրօնների փառատօն» միջկրօնական արարողութիւնը։ Միջկրօնական արարողութեանը բանախօսութեամբ հանդէս եկաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը (ՔՀ, 2019, ապրիլ Բ., էջ 4–5)։

Կրետէ (Յունաստան) հովուապետական այցի երրորդ օրը՝ 2019 թ. մայիսի 6-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատուիրակութեան ուղեկցութեամբ այցելեց Կրետէի Յոյն Ուղղափառ Եկեղեցու արքեպիսկոպոսարան, որտեղ հանդիպեց Նորին Սրբազնութիւն Իրենէոս արքեպիսկոպոսին։ Հանդիպմանը ներկայ էր նաեւ Կրետէի նահանգապետ Ստաւրոս Առնաուտակիսը։

Իրենէոս արքեպիսկոպոսը, մեծ սիրով եւ յարգանքով ողջունելով Ամենայն Հայոց Հայրապետին, ընդգծեց, որ Նորին Սրբութեան այցն արդէն անջնջելիօրէն արձանագրուել է Կրետէի պատմութեան մէջ։ Նա հաստատեց, որ պատմական այս այցելութիւնը պայծառացրեց հայկական եկեղեցու 350-ամեակի տօնախմբութիւնը։ Վեհափառ Հայրապետը նշեց՝ այցելութիւնը կատարել է այն համոզմամբ, որ այն պիտի առաւել զօրացնի երկու ժողովուրդների միջեւ յարաբերութիւնները, որոնք միշտ յատկանշուած են եղել եղբայրութեան ոգով եւ սիրով (ՔՀ, 2019, մայիս Ա., էջ 3)։

2019 թ. յունիսի 8-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիպում ունեցաւ Համայն Բելառուսի պատրիարքական էկզարխ, Մինսկի եւ Զասլաւի միտրոպոլիտ Նորին Սրբազնութիւն Պաւէլի հետ։ Միտրոպոլիտը Հայաստան էր ժամանել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրով։ Լինելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիւրը՝ նա պէտք է ծանօթանար Հայոց Եկեղեցու կեանքին, կրթական ծրագրերին, ինչպէս նաեւ այցելեր տարբեր վանքեր ու պատմական վայրեր։

Ուրախութիւն յայտնելով Մինսկի եւ Զասլաւի միտրոպոլիտ Պաւէլի Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցի առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակութեամբ ընդգծեց, որ այն ոչ միայն անձնական բարեկամական ու ջերմ կապերի վերահաստատումն է, այլ նաեւ միտուած է նպաստելու Եկեղեցիների միջեւ եղբայրական յարաբերութիւնների եւ գործակցութեան առաւել զօրացմանը (ՔՀ, 2019, յունիս Ա., էջ 1–2)։

2019 թ. սեպտեմբերի 25-ին «Կրօնները յանուն խաղաղութեան» միջազգային միութեան ընտրեալ ընդհանուր քարտուղար պրոֆ. Ազզա Քարամը եւ գործող ընդհանուր քարտուղար հայր Կեօիշի Սուգինօն պաշտօնական գրութեամբ ծանուցել են Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ օգոստոսի 20–23-ը Գերմանիայի Լինդաու քաղաքում տեղի ունեցած «Կրօնները յանուն խաղաղութեան» համաշխարհային 10-րդ համաժողովի ընթացքում Վեհափառ

Հայրապետն առաջադրուել եւ աշխարհի 125 երկիր ու կրօնական տարբեր համայնքներ ներկայացնող 700 պատուիրակի կողմից ընտրուել է միութեան պատուաւոր նախագահ։

2019 թ. նոյեմբերի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց պաշտօնական այցով Հայաստանի Հանրապետութիւն ժամանած Սուրբ Աթոռի՝ պետութիւնների հետ յարաբերութիւնների քարտուղար արքեպիսկոպոս Պօլ Ռիչարդ Գալագերին եւ նրա գլխաւորած պատուիրակութեանը։

Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր բարեմաղթանքն ու գնահատանքը բերեց պատուիրակութեան անդամներին՝ անդրադառնալով Վատիկանի եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ ձեւաւորուած ջերմ կապերին ու գործակցութեանը։ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախութեամբ արձանագրեց, որ իր գահակալութեան շրջանում Հայոց եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ յարաբերութիւններն առաւել են ջերմացել ու զօրացել։ Խօսելով Քոյր եկեղեցիների հետ յարաբերութիւնների եւ սերտ համագործակցութեան մասին՝ Վեհափառ Հայրապետը գոհունակութեամբ ընդգծեց, որ ներկայ ժամանակահատուածում Եկեղեցիների առջեւ ծառացած մարտահրաւէրները կարելի է յաղթահարել միայն միասնական ջանքերով եւ գործնական քայլերով (ՔՀ, 2019, նոյեմբեր Ա., էջ 3–4)։

Սոյն նիւթի սահմանում անհնար էր ներկայացնել Վեհափառ Հայրապետի միջեկեղեցական եւ էկումենիկ արգասաբեր գործունէութեան ամբողջական պատկերը։ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ որպէս հայ ժողովրդի հոգեւոր առաջնորդ, մշտապէս առաջնորդուել է իր տեսլականով ու համոզմամբ, որ թէեւ «Մենք փոքր ազգ ենք, սակայն եկեղեցական յարաբերութիւններում մեր կեցուածքը բնորոշ է զօրաւոր Եկեղեցիներին եւ զօրաւոր ազգերին։ Փոքր ազգերին բնորոշ է ամփոփուած մնալը՝ պահելու համար իրենց արժէքները, իրենց աւանդութիւնները.... Մեր կեանքն ու գործունէութիւնը բնորոշ են մեծ եւ զօրաւոր ուժեր ունեցող ազգերին։ Այդ ուժը մենք ստանում ենք Տիրոջից, Նրա հանդէպ ունեցած մեր հաւատից։ Չենք կարող մեր ճանապարհը շարունակել, եթէ այն Աստուծոյ կամքը չլինի» («Էջմիածին», 2007, ԺԱ., 54–55)։

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ ՀԱՏՎԱԾԸ

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս, Հատընտիր պաշտոնականք (2010–2018), հտ. Բ./Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս։ Կազմող՝ Տ. Արարատ բհն. Պողոսյան.– Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, 2019.– 720+2 ներդիր էջ։

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հարուստ պատմության ընթացքը դարեր ի վեր արձանագրվել է ժամանակի պատմիչների, ժամանակագիրների, ականատես-վկաների հիշատակությունների, հիշողությունների, վկայությունների, ինչպես նաեւ սրբազան ավանդության մեջ։ Հայոց Եկեղեցու վաղ եւ միջնադարյան պատմական շրջանը, ցավոք, երբեմն ընթացել է արժեքավոր տեղեկությունների բացակայությամբ, երբեմն այդ տեղեկությունները եղել են ոչ լիարժեք, թերի, երբեմն էլ հանդես են եկել բեւեռացված եւ միակողմանի կարծիքներով ու գնահատականներով։ Հիշյալ իրողությունները խոչընդոտել են Հայոց Եկեղեցու առավել ամբողջական, համապարփակ եւ լիարժեք պատմության շարադրանքին։ Եկեղեցու պատմության նոր ժամանակները ուսումնասիրողների համար առավելապես կարեւորվում են այն հանգամանքով, որ Հայոց Եկեղեցուն վերաբերող բազմազան եւ բազմաբնույթ տեղեկությունները լիովին բավարարում են լիարժեք եւ ամբողջական պատմություն շարադրելու պահանջներին եւ կարող են հսկայածավալ ու բազմաբովանդակ հետազոտությունների հնարավորություն ապահովել։ Հատկապես սկսած ԺԹ. դարից՝ Հայոց Եկեղեցու պատմությանը վերաբերող տեղեկությունների պակաս կարծես թե չկա, իսկ Մայր Աթոռի պաշտոնական տեղեկատվական աղբյուրի՝ «Արարատ» ամսագրի, իսկ Ի. դարի կեսից նաեւ «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը Եկեղեցու պատմական առօրյան դարձրեց բոլորին հասանելի եւ հսկայածավալ նյութով

ապահովեց հետազոտող շրջանակներին։ Այսօր՝ ԻԱ. դարասկզբին, «տեղեկատվական սով» անշուշտ չի սպասվում, եւ «Էջմիածին» ամսագրի պաշտոնական տեղեկատվությունը դառնում է այն հարուստ շտեմարանը, որի ուսումնասիրությունները վեր են հանում ժամանակակից եկեղեցական կյանքի բոլոր նրբություններն ու առանձնահատկությունները։

Այս տեսանկյունից բավականին արժեքավոր են Մայր Աթոռի հրատարակած Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Հատընտիր պաշտոնականքի» առաջին եւ երկրորդ հատորները, որոնք լիարժեք պատկերացում են տալիս Վեհափառ Հայրապետի վերջին 20 տարվա ժրաջան եւ բեղուն գործունեության մասին։ Քննարկվող սույն կարեւոր հրատարակությունը վերոհիշյալ «Հատընտիր պաշտոնականքի» Բ. հատորն է եւ ընդգրկում է հիմնականում «Էջմիածին» ամսագրում հրատարակված, իսկ որոշ դեպքերում նաեւ առաջին անգամ հրատարակվող Ամենայն Հայոց Կաթողիկոսի 2010–2018 թթ. կոնդակները, օրհնության գրերը, մաղթանքները, խոսքերը, քարոզները, ուղերձները, պատգամները, տարատեսակ հռչակագրերը, հայտարարությունները եւ այլն։

«Հատընտիր պաշտոնականքի» Բ. հատորը ամբողջական տեսքի բերել եւ հրատարակության է նախապատրաստել Տ. Արարատ քհն. Պողոսյանը, ինչը, անշուշտ, գովեստի եւ դրվատանքի արժանի աշխատանք է, քանի որ մեկ ամբողջական ժողովածուի մեջ նմանատիպ բազմաբնույթ եւ հարուստ տեղեկությունների մեկտեղումը բավականին հեշտացնում եւ միաժամանակ լայն հնարավորություն է ընձեռում Հայոց Եկեղեցու տվյալ ժամանակահատվածի պատմության, առօրյայի, կրոնական կյանքի, եկեղեցու հասարակական գործունեության լիարժեք եւ ամբողջական ուսումնասիրությունների համար։ Այս հատորի հրատարակությունը հատկապես պետք է կարեւորենք այս տեսանկյունից, քանզի Հայ Եկեղեցու մասին անաչառ եւ անկողմնակալ ուսումնասիրությունների հարցը առավել արդիական է եւ ժամանակակից հարափոփոխ կյանքի հրամայականներից մեկն է։

Ինչպես առաջաբանում իրավացիորեն նշում է Արարատ քհն. Պողոսյանը, «Հայոց պատմությունը, եկեղեցագիտությունը, աստվածաբանությունը եւ հայ մատենագրությունն ուսումնասիրելիս անհնար է շրջանցել Հայոց կաթողիկոսների գործունեությունը» (էջ 5), ինչը ելակետ է եղել նաեւ մեծանուն հոգեւորական-գիտնական Մաղաքիա արք. Օրմանյանի համար։ Այս սկզբունքը ուղենիշ է դարձել Տեր Արարատի համար՝ «Հատընտիր պաշտոնականքի» Բ. հատորը կազմելիս։ Ինչպես

պարզաբանում է կազմողը, հատորում ընդգրկված կոնդակների, պաշտոնական խոսքերի եւ օրհնության գրերի մեծ մասը ժամանակին տպագրվել է «Էջմիածին» ամսագրում, որոշները վերցված են «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթից, իսկ գիտաժողովների եւ տարատեսակ միջոցառումների ժամանակ հնչած խոսքերն ու զեկույցները հրատարակվում են առաջին անգամ։ Ժողովածուն ունի յուրատեսակ թեմատիկ, ժանրային եւ ըստ ուղղվածության բաժանումներ, որոնք, ըստ կազմողի, «...խիստ պայմանական են եւ ընդամենը միտված են ընթերցողի փնտրած նյութը արագ եւ հեշտ գտնելուն» (էջ 6)։ Այս դեպքում կազմողը լիովին իրավացի է, քանի որ ըստ ժամանակագրության որոշակի բաժինների եւ ենթաբաժինների դասակարգված ուղերձները, կոնդակները եւ խոսքերը ընդամենը հնարավորություն են տալիս ցանկալի նյութը հեշտությամբ գտնելու, իսկ դրանց բովանդակային, ժամանակագրական, պատմական, աստվածաբանական եւ այլ կողմերի ու գծերի վերհանումը, գնահատումը եւ արժեւորումը արդեն յուրաքանչյուր հետազոտողի հետաքրքրությունների ու նախասիրությունների հարցերն են։

«Հատընտիր պաշտոնականքի» Բ. հատորի ուսումնասիրության մեր ելակետը նշված ժամանակահատվածում Հայոց Եկեղեցու կրոնական, դավանաբանական, աստվածաբանական, վանական, հոգեւոր-մշակութային, կրթական, միջեկեղեցական եւ հասարակական գործունեության արժեւորումն է ու գնահատումը։ Կազմողի կողմից արդեն իսկ դասակարգված նյութը, ինչպես նշեցինք, պայմանական է, քանի որ եկեղեցական համակարգը բազմազան է, եւ նշված ոլորտներից յուրաքանչյուրը հավասարապես հանդես է գալիս բոլոր հարթություններում։ Ըստ այդմ, Վեհափառ Հայրապետի կոնդակները, «Ս. Գրիգոր Լուսավորիչ», «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ», «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանների, արքության պատվի շնորհման եւ բազմաբովանդակ այլ օրհնության գրերը, տարբեր առիթներով հնչեցված մաղթանքները, խոսքերը, քարոզները, ուղերձներն ու պատգամները, պարգեւաբաշխումները, ինչպես նաեւ պետություն-եկեղեցի հարաբերություններին առնչվող տարատեսակ խոսքերն ու գրերը մենք դիտարկում ենք Հայոց Եկեղեցու դարեր շարունակ իրականացրած ազգահավաք, ազգապահպան, միավորիչ եւ կարգավորիչ գործառույթների համատեքստում։ Աներկբա է, որ «Հատընտիր պաշտոնականքում» զետեղված նյութերը ներկայացնում են Վեհափառ Հայրապետի եւ Հայոց Եկեղեցու հոգեւոր-կրոնական, հասարակական,

քաղաքական, մշակութային գործունեությունը, հատկապես այն գործուն դերակատարությունը, որ Եկեղեցին ունի ժամանակակից հայ իրականության մեջ։ Ժողովածուն արդիական մեծ հնչեղություն ունի նաեւ պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների արժեւորման տեսանկյունից։

Հայրապետական կոնդակների ցանկը բացում է Հայոց Եկեղեցու նվիրապետական աթոռներից մեկի՝ Կ. Պոլսի պատրիարքության 550-ամյակի առիթով հրապարակված կոնդակը, որով Վեհափառ Հայրապետը օրհնություն ու շնորհավորանքներ է հղում Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանին՝ միաժամանակ արժեւորելով եւ գնահատելով Հայոց Եկեղեցու նվիրապետական այս աթոռի ազգային-եկեղեցական եւ հոգեւոր-մշակութային գործունեությունը։ Ներեկեղեցական կյանքի ոլորտին են վերաբերում նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակները Արթիկի թեմի ստեղծման եւ Մեքսիկայի հայ համայնքները ԱՄՆ հայոց արեւելյան թեմի կազմից հանելու եւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի մեջ ներառելու մասին։ Առանձին ուշադրության են արժանի նաեւ թեմական եւ համայնական կյանքի նշանակալի իրադարձություններին նվիրված գրերը, ուղերձները եւ խոսքերը, որոնցից կարելի է առանձնացնել Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի 300-ամյա հոբելյանի եւ Բուլղարիայի հայոց թեմի 145-ամյակի առիթներով հղված օրհնության գրերը՝ գնահատելով եւ արժեւորելով Ռուսաստանի եւ Բուլղարիայի բազմադարյա հայկական համայնքների ազգանվեր եւ հայապահպան գործունեությունը եւ Հայոց Եկեղեցու անուրանալի դերն ու նշանակությունը այդ հարցում։

Հայոց Եկեղեցու հայրենանվեր, ազգապահպան եւ միավորիչ գործունեության լավագույն վկայություններից է Հայոց ազգային բանակի հետ փոխգործակցությունը, որը հատկապես դրսեւորվում է Հայոց բանակում Եկեղեցու բարեխնամ գործունեությամբ եւ զորամասերում հոգեւոր ներկայացուցիչների ընդգրկմամբ։ Հայոց պետականության այուներից մեկը հանդիսացող բանակին էլ նվիրված են Վեհափառ Հայրապետի կոնդակները՝ հրապարակված Հայոց բանակի 20 եւ 25-ամյակների առիթով, ինչպես նաեւ Բանակի օրվա առիթով հղված ուղերձները, բանակի զորատեսակներին ընծայվող խաչվառների օրհնության ու բաշխման առիթով եւ սպաների ու զինվորների պարգեւատրության հանդիսության ժամանակ հնչեցրած խոսքերը, որոնք ոչ միայն ընդամենը ուղերձներ կամ խոսքեր են, այլեւ Հայոց պանծալի բանակի արժեւորումն ու գնահատականը, հայրապետական օրհնանքի, ոգեշնչումի եւ ծնողական սիրո դրսեւորումը։ Եւ, անշուշտ,

դրա վկայությունն են Վեհափառ Հայրապետի այն խոսքերը, որ՝ «Ուժեղ բանակը գրաւականն է մեր Հայրենիքի խաղաղ, ապահով ու անվտանգ կեանքի, մեր երկրի զարգացման եւ ազգի յարատեւութեան։ ... հայրենեաց պաշտպան զինուորն ու սպան զօրեղ ու անպարտելի են ոչ միայն լաւագոյն զինուածութեամբ, այլեւ յատկապէս քաջարի ոգով, հոգեղէն ներուժով։ Բանակի իրական հզօրութիւնը հայրենասէր, արդարամիտ ու ճշմարտասէր հոգու մէջ է, հաւատքով ու անձնդիր ծառայութեան մէջ...» (էջ 14)։

Դարեր շարունակ Հայոց Եկեղեցու հոգեւոր-մշակութային գործունեության հիմնաքարերից է եղել՝ «...մեր գրաւոր մշակոյթի հարուստ եւ անգին ժառանգութիւնը...» (էջ 16–17)։ Եկեղեցին միշտ բարձր է գնահատել գիտության, արվեստի, մշակույթի անխոնջ մշակների վաստակն ու ժառանգությունը՝ լինելով հայ բազամադարյա մշակույթի ստեղծողն ու կրողը միաժամանակ։ Այս իրողության արտահայտությունն են Վեհափառ Հայրապետի կոնդակները՝ Հայ գրատպության 500-ամյակի եւ Աստվածաշունչ մատյանի հայերեն տպագրության 350-ամյակի առիթներով (էջ 16, 33), ինչպես նաեւ մշակույթի, արվեստի եւ գիտության ոլորտի հայ ժողովրդի տաղանդավոր զավակների տարբեր հոբելյաններին եւ այլ առիթներին հղված օրհնության գրերը (մեծանուն նկարիչ Ժանսեմ, պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյան եւ այլք)։

Հայ գրահրատարակչությունը հայ ժողովրդի կյանքում ամենանշանակալի իրադարձություններից է, որի հետագա ազդեցությունը եւ արձագանքը տեսնում ենք հսկայածավալ գրական ժառանգության մեջ, եւ ինչպես իրավացիորեն նշում է Վեհափառը, «Հայոց գրերի գիւտից յետոյ հայ գրահրատարակութիւնը իր նշանակութեամբ մեր դպրութեան պատմութեան յաջորդ շրջադարձային իրադարձութիւնը եղաւ եւ կեանքի կոչուեց ու արգասաւորուեց իմացութեան եւ գրքի հանդէպ անհուն սիրով ու նախանձախնդրութեամբ, որոնք Հայոց գրերի առատ պարգեւներով ներշաղախուած են նկարագրին մեր ժողովրդի» (էջ 17)։ Նույնքան նշանակալի իրադարձություն է Աստվածաշնչի հայերեն տպագրության 350-ամյակը՝ «...հայոց կեանքում Քրիստոսի լոյսը առատացնելու մեծաշնորհ, աստուածօրհնեալ գործի պանծալի յոբելեանը» (էջ 34)։

Մեծ արժեք են ներկայացնում Հայոց Եկեղեցու ազգապահպան եւ ազգահավաք գործունեությանը նվիրված կոնդակներն ու գրերը, որոնք վերաբերում են հայ հասարակական կյանքին, համազգային նշանակության հարցերին, հայ ժողովրդի պատմության կարեւորագույն եւ

դրամատիկ իրադարձություններին, հայրենիք-սփյուռք բազմակողմանի եւ դինամիկ փոխհարաբերություններին, որոնք գնահատվում եւ արժեւորվում են թե՛ պատմականորեն, թե՛ ժամանակակից արդի հիմնախնդիրների լուծման համատեքստում։ Այս բազմաբնույթ եւ բազմաբովանդակ հիմնախնդիրներին վերաբերող Հայոց Եկեղեցու պաշտոնական վերաբերմունքն ու մոտեցումներն են ներկայացված Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Պաշտոնականքում»։ Ժամանակագրական եւ թեմատիկ բաժանումներից պայմանականորեն վեր կանգնելով՝ պետք է առանձնացնենք հատկապես մի քանի ոլորտներ, որոնց վերաբերյալ նյութը արդիական է եւ խիստ կարեւոր՝ ժամանակակից հետազոտական հիմնախնդիրների վերհանման եւ գիտական ուսումնասիրությունների տեսանկյունից։

Նախ հարկ ենք համարում անդրադառնալ հայ հասարակության համար համազգային նշանակության այնպիսի խնդիրների արծարծմանը եւ քննարկմանը, ինչպիսիք են Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյա հոբելյանը, Հայաստանի անկախության տոնը, Արցախի հիմնախնդիրը, արցախյան հերոսամարտը եւ այլն։ Կոնդակների շարքում առանձնանում է Հայոց Հայրապետի կոնդակը Հաղթանակի եւ խաղաղության օրվա, Շուշիի ազատագրության եւ Արցախի պաշտպանության բանակի 25-ամյակի առիթով, որում հայրապետական օրհնությանը զուգահեռ գնահատվում եւ արժեւորվում են Արցախի ազատագրական պայքարը, մարտերի մեջ կազմավորված, ամրացած եւ զորացած Արցախի պաշտպանության բանակը, Արցախի թեմի հոգեւոր դասն ու բանակում ծառայող հոգեւոր սպասավորները, բոլոր զորահրամանատարներն ու զինվորները՝ հրամայական ունենալով համայն հայության բաղձալի ցանկությունների իրականացումը։ Այս առումով Վեհափառ Հայրապետի ընդհանրացնող ուղենշային խոսքն է. «Արդ, ապրենք ու գործենք մեր հայրենիքը շէնացնելու, մեր բանակը զօրացնելու, ազգային զարթօնքի մեր իղձերը մարմնաւորելու ջանք ու եռանդով, յաղթանակի առաջնորդելով նաեւ Արցախի Հանրապետութեան ճանաչումը» (էջ 42)։

Հաջորդիվ հարկ ենք համարում առանձնահատուկ շեշտել Հայաստանի անկախությանը եւ հանրապետական այլ տոներին նվիրված կոնդակներն ու գրերը, ինչպիսիք են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակը Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակի առիթով, ինչպես նաեւ շնորհավորական խոսքերն ու ուղերձները Հանրապետության օրվա եւ ՀՀ անկախության տոնի առթիվ։ Այս դեպքերում եւս հայրապետական խոսքը

եւ միտքը թեւածում են հայ ժողովրդի դարավոր պատմության անդաստաններում՝ հիշատակելով արիության եւ հերոսության այն դրվագները, երբ ժողովրդական միասնության եւ Եկեղեցու սուրբ նահատակների հեղած արյամբ ժողովուրդը հասել է իր բաղձալի երազանքին, իսկ երկարատեւ ընդմիջումից, մաքառումներից եւ ցեղասպանության ենթարկվելուց հետո «...հինգ եւ կէս դարերի երկարատեւ դադարից յետոյ վերականգնուեց հայկական պետականութիւնը» (էջ 45–46)։ Հայոց պետականությունը ամուր պահելու եւ «հայրենիքով համախմբուած լինելու», հայրենիքը «հաւատաւոր ոգով ու նուիրեալ գործերով շէնացնելու, զօրացնելու» հրամայականի ամփոփումն է հայրապետական պատգամը. «...սիրեցեալ մեր ժողովրդին, մեր Եկեղեցու թեմական, համայնքային մարմիններին, ազգային, գիտական, կրթական, մշակութային կառոյցներին՝ զանազան միջոցառումներով տօնախմբելու յոբելեանական տարեդարձը՝ դարձնելով հայրենասիրութեան ոգու, քաղաքացիական գիտակցութեան ու պարտքի արթնութեան, ազգի ու Եկեղեցու միասնականութեան ուժ ու զօրութիւն, նորոգութիւն հաւատքի եւ քաջալերութիւն հայրենաշէն ու ազգաշէն գործերի» (էջ 47)։ Այս ոգին եւ հայոց պետականության արժեքային ընկալումն ու գիտակցումն են թեւածում նաեւ Հանրապետության եւ Անկախության տոներին նվիրված հայրապետական ուղերձներում, գրերում եւ խոսքերում (տե՛ս էջ 491, 493, 494, 499, 502 եւ այլն)։

Օրհնության գրերի, ուղերձների եւ խոսքերի մի ստվար հատվածը ներառում է համազգային այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են Հայոց ցեղասպանությունը, դրա համաշխարհային ճանաչման գործընթացն ու այդ ուղղությամբ տարվող աշխատանքները։ Հայոց ցեղասպանության 100-ամյակի առիթով է Վեհափառ Հայրապետի կոնդակը, որում Մեծ եղեռնի հիշատակի օրը ոչ միայն «... ոգեկոչման եւ խնկարկման օր» է, այլեւ «արդարութեան եւ ճշմարտութեան անլռելի, զօրեղ» պահանջի օր, արդարություն, որ՝ «պահանջում է մեր անմեղ զոհերի արիւնը, մեր ժողովրդի կրած տառապանքը, արդարութիւն են պահանջում մեր աւերակուած սրբութիւնները, մեր ժողովրդի ոտնահարուած իրաւունքները, նաեւ կեղծուող եւ խեղաթիւրուող պատմութիւնը մեր ժողովրդի» (էջ 31)։ Այս կոնդակը միաժամանակ երախտիքի խոսք է՝ ուղղված այն պետություններին, կազմակերպություններին եւ անհատներին, որոնք ճանաչել եւ դատապարտել են Հայոց ցեղասպանությունը։ Այս ամենի տրամաբանական շարունակությունը եղավ Հայոց Եկեղեցու եւ հայ ժողովրդի

կյանքում աննախադեպ մի իրադարձություն՝ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման արարողությունը, որի կապակցությամբ է 2015 թ. ապրիլի 23-ին հնչած հայրապետական խոսքը՝ «...որ վասն հավատո եւ վասն հայրենյաց նահատակված Ցեղասպանության վկաներին թագադրում է սրբության պսակով ու նրանց բարեխոսությամբ հեղում մեր կյանքին Իր անսպառ ողորմությունները» (էջ 354)։ Անշուշտ՝ ԻԱ. դարի հայ ժողովրդի եւ Հայոց Եկեղեցու կյանքում ամենանշանակալի իրադարձություններից է Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասումը, որը Եկեղեցու մի շարք գործառույթների (աշխարհայացքային, միավորիչ, մխիթարիչ) խտացված, հավաքական արտահայտությունն է։

Օրհնության գրերում, մաղթանքներում, խոսքերում եւ ուղերձներում առանձնանում է Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին, Հայոց Եկեղեցու Սփյուռքում ծավալած ազգապահպան, մշակութաստեղծ եւ ազգահավաք գործունեությանը, Սփյուռքի առանձին համայնքների եկեղեցական եւ հասարակական կյանքին, հովվապետական այցերին, ծիսապաշտամունքային կյանքին վերաբերող հսկայածավալ նյութը, որն աչքի է ընկնում ոչ միայն պատմական հարուստ տեղեկություններով եւ եկեղեցական ժամանակագրությամբ, այլեւ վեր է հանում Սփյուռքի համայնական կյանքի առանձնահատկությունները, հիմնախնդիրներն ու հրամայականները, համահայկական որոշ կառույցների ազգանվեր գործունեությունը։ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու մաղթանքներն է բերել «Հայաստան» համահայկական հիմնադրամի հաստատման 25-ամյակի, ՀԲՀՄ Լոնդոնի մասնաճյուղի հիմնադրման 100-ամյակի կապակցությամբ, ՀԲՀՄ երեւանյան կենտրոնի բացման, Հայաստան-Սփյուռք հինգերորդ եւ վեցերորդ համաժողովների բացման եւ այլ առիթներով։

Ընդհանրապես «Հատընտիր պաշտոնականքի» Բ. հատորի օրհնության գրերի եւ մաղթանքների, խոսքերի, քարոզների, ուղերձների թեմատիկ ընդգրկումը բավականին լայն է, այստեղ հանդիպում ենք հայտնի հոգեւորականների եւ նրանց գործունեության տարբեր հոբելյանների առիթով հնչեցված օրհնության գրերի (էջ 48, 53), Վեհափառ Հայրապետի՝ Իզմիրլյան բժշկական կենտրոնի բացման առիթով հնչեցված խոսքին, հովվապետական այցերի ժամանակ տարբեր առիթներով հնչած խոսքերի եւ քարոզների, ինչպես նաեւ հայրենիքում ու աշխարհի տարբեր ծայրերում կառուցված եկեղեցիների օծման առիթներով հնչեցված խոսքերի։

Բավականին մեծ տեղ են գրավում ոչ միայն պետական տոների եւ հասարակական հնչեղության այլ իրադարձությունների առիթով հնչած գրերը, ուղերձներն ու պարգեւագրերը (Մարտի 8-ի, Շրջանավարտների օրվա կամ «Լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխության կապակցությամբ), այլեւ քրիստոնեական կարեւորագույն տոներին նվիրված գրերը, ուղերձներն ու քարոզները (Ս. Ծնունդ, Ս. Հարություն, Ս. Աստվածածնի Ավետում, Ս. Վարդանանց եւ այլն)։ Ամանորի եւ Ս. Ծննդյան կապակցությամբ օրհնության գրերից մեկը կարելի է առանձնահատուկ համարել, որովհետեւ ուղղված է սիրիական պատերազմի բովով անցած սիրիահայությանը եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հղված հայրական սիրո եւ օրհնության լավագույն դրսեւորումներից մեկն է (էջ 298–299)։ Պարգեւաբաշխումների շարքում ներկայացված Վեհափառ Հայրապետի խոսքերից հատկապես կարելի է առանձնացնել Էդուարդո Էօրնեկյանին ՀՀ ազգային հերոսի կոչում շնորհելու արարողության ժամանակ հնչած օրհնության եւ գնահատանքի խոսքը (էջ 482–483)։

«Հատընտիր պաշտոնականքի» Բ. հատորի բավականին ծավալուն հատվածներից մեկը ներառում է Վեհափառ Հայրապետի օրհնության գրերը «Ս. Գրիգոր Լուսավորիչ», «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ», «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանների հանձնման առիթներով։

Հայոց Եկեղեցու Ս. Գրիգոր Լուսավորիչ պատվո բարձրագույն շքանշանը շնորհվում է ի նշանավորումն մեծ բարերարությունների, որոնք մատուցվել են Հայոց Եկեղեցուն եւ հայ ժողովրդին։ Նշված ժամանակահատվածում այս շքանշանին արժանացել են հայ եւ օտարազգի այրեր ու կանայք, որոնք իրենց ավանդն ու մեծ ներդրումն ունեն Հայոց Եկեղեցու բարգավաճման, զարգացման, թեմական կյանքի կայացման, եկեղեցաշինության եւ այլ գործերում։ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանակիր այրերի թվում են այնպիսի հայտնի դեմքեր, ինչպիսիք են Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա.-ն, ռուսաստանցի պետական գործիչ Գերման Գրեֆը, վրացի պետական գործիչ Բիձինա Իվանիշվիլին, մեծահարուստ բարերարներ Սամվել Կարապետյանը, Ռուբեն Վարդանյանը, Դանիել Խաչատուրովը, Կոլյա եւ Ռոզա Ծառուկյանները, ինչպես նաեւ Մայր Եկեղեցու, հայրենիքի եւ սփյուռքի տարբեր թեմերի, եկեղեցիների եւ տարածքների բարեկարգման, վերանորոգման եւ կառուցապատման համար մեծ ներդրումներ ունեցած հայորդիներ աշխարհի տարբեր ծայրերից, որոնցից շատերի անունները համեստորեն բարձրաձայնված չեն,

սակայն նրանց եկեղեցանվեր գործունեությունը արժանի է հիշատակության։ Դրանք են Սինան Սինանյանը (Կալիֆոռնիա), Սարո Խուդավերդյանը (Միլան), Մարկո Զարիկյանը (Կարակաս), Սուրեն Սարգարյանը (Օդեսա), Սահակ Կարապետյանը (Դոնի Ռոստով), Հովհաննես Զիլինգարյանը (Փարիզ), Վարդգես Արծրունին (Մոսկվա), Սերգեյ Համբարձումյանը (Մոսկվա), Շաքե եւ Գրիգոր Պաթմանյանները (Սիդնեյ) եւ այլք։

Օրհնության գրերի մի մասն էլ վերաբերում է «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» եւ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանների շնորհմանը, եւ քանի որ այս շքանշաններին, որպես կանոն, արժանանում են գիտության, կրթության, գրականության, մշակույթի եւ արվեստի տարբեր բնագավառներում Հայոց Եկեղեցուն մատուցած ծառայությունների եւ բազմամյա եկեղեցանվեր գործունեության համար, ուստի այս դեպքում էլ արժանիորեն գնահատվել են տարբեր բնագավառների այնպիսի հայտնի գործիչներ, ինչպիսիք են՝ Էդուարդ Տեր-Ղազարյանը, Զորի Բալայանը, Սուրեն Զոհրաբյանը, Ռազմիկ Դավոյանը, Արամայիս Սահակյանը, Ալբերտ Մկրտչյանը, Սվետլանա Նավասարդյանը, Արտեմ Սարգսյանը, Վիլեն Հակոբյանը եւ Տ. Տաթեւ արք. Ղարիբյանը։

Օրհնության վերոհիշյալ գրերի շարունակությունն են վաստակաշատ եպիսկոպոսներից մի քանիսին արքության պատվի շնորհման գրերը, պատիվ, որին արժանանում են Հայոց Եկեղեցու նվիրյալ մեծանուն եպիսկոպոսները՝ իրենց արգասավոր, անձնվեր, նախանձախնդիր ծառայության համար։ Հիշյալ ժամանակահատվածում արքության պատվի շնորհ ստացած եպիսկոպոսներն են Տ. Սեպուհ եպս. Զուլջյանը, Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Տ. Առաքել եպս. Քարամյանը, Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Տ. Փառեն եպս. Ավետիքյանը եւ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը։

«Հատընտիր պաշտոնականքի» Բ. հատորի վերջին մասը ներառում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքերն ու ուղերձները տարբեր հոբելյանների ու տարելիցների կապակցությամբ (օրինակ՝ Հայոց ցեղասպանության հիշատակի օր, Արցախի Հանրապետության 20-ամյակ, Սոս Սարգսյանի հուղարկավորություն, Քըրք Քըրքորյանի հիշատակի ոգեկոչման արարողություն եւ այլն), ինչպես նաեւ կրթական միջոցառումների, գիտաժողովների եւ համաժողովների ժամանակ հնչած խոսքերն ու պատգամները։ Ժողովածուի վերջին, առավել հիշատակելի հատվածը ներառում է «Միջեկեղեցական» ընդհանուր ենթավերնագրի ներքո տպագրված

ողջույնի խոսքերը, պատգամները եւ շնորհավորական գրերը, որոնք Հայոց Եկեղեցու էկումենիկ գործունեության եւ միջեկեղեցական զարգացած հարաբերությունների աներկբա վկայություններն են։ Հայոց Եկեղեցու բազմազբաղ Հայրապետի խոսքերը, հնչեցված տարբեր ժամանակներում եւ տարբեր առիթներով, եւս մեկ անգամ գալիս են ապացուցելու նրա գործունեության լայն շրջանակն ու աշխարհագրական ընդգրկվածությունը, Հայոց Եկեղեցու բեղուն եւ արդյունավետ համագործակցությունը քրիստոնեական տարբեր եկեղեցիների հետ։ Այստեղ տեսնում ենք Հայոց Հայրապետի ողջույնի խոսքը՝ Ուղղափառության միջխորհրդարանային համաժողովի 17-րդ վեհաժողովի բացման առիթով, պատգամը ԵՀԽ 10-րդ համաժողովի բացման աղոթքին, շնորհավորական գիրը Ասորի Ուղղափառ եկեղեցու առաջնորդին, խոսքը Ֆրացիսկոս Պապի հետ հանդիպումների եւ համատեղ այլ էկումենիկ արարողությունների ժամանակ։ Միջեկեղեցական էկումենիկ բեղուն գործունեության հետեւանք են ժողովածուի վերջին հատվածում զետեղված համատեղ հռչակագիրն ու խոսքը, հիշատակության արժանի Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ֆրացիսկոս Պապի համատեղ հռչակագիրը եւ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպման ժամանակ հնչած հայրապետական խոսքը։

Այսպիսով՝ վստահորեն կարող ենք արձանագրել, որ «Հատընտիր պաշտոնականքի» Բ. հատորի լույս ընծայումը որակական առումով անգնահատելի աշխատանք է եւ ունի գիտաճանաչողական մեծ դեր ու նշանակություն Հայոց Եկեղեցու նորագույն պատմության ուսումնասիրության եւ վերլուծության տեսանկյունից, միտված է խթանելու եկեղեցական կյանքի զարգացումը, բարձրացնելու եկեղեցու դերակատարությունը, ամրապնդելու պետություն-եկեղեցի, հայրենիք-սփյուռք հարաբերությունները եւ միջեկեղեցական կապերը։ Ժողովածուն փաստացի լրացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կարեւոր եւ արժեքավոր հրատարակությունների շարքը, ընդգրկում ազգային-եկեղեցական հիմնախնդիրների լայն եւ բազմաբնույթ շրջանակ եւ կարող է դառնալ Հայոց Եկեղեցու նորագույն պատմությանը նվիրված հետազոտությունների եւ ուսումնասիրությունների բավականին հարուստ սկզբնաղբյուր։

ՊԱՐԳԵՎ ԲԱՐՍԵՂՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու, ԵՊՀ դոցենտ

СОДЕРЖАНИЕ

ИЕРЕЙ АРАРАТ ПОГОСЯН – От редакции 5

ИЕРЕЙ АРАРАТ ПОГОСЯН – Краткая летопись деятельности Его Святейшества Гарегина II, Верховного Патриарха и Католикоса Всех Армян (2010–2019 гг.). 8

Проповедь **ЕПИСКОПА МУШЕГА БАБАЯНА**, произнесенная в ходе Литургии в монастыре Святой Гаяне 95

АВЕТИС КАЛАШЯН – Католикос Всех Армян Гарегин II о Геноциде армян . . . 100

ЛУСИНЕ ВАРДАНЯН – Деятельность Его Святейшества Гарегина II, Верховного Патриарха и Католикоса Всех Армян, во благо народа и во имя сохранения культуры (2000–2019 гг.) 119

АРПИНЕ ЧАНТИКЯН – Межцерковная и экуменическая деятельность Его Святейшества Гарегина II, Верховного Патриарха и Католикоса Всех Армян (2000–2019 гг.). 149

ПАРГЕВ БАРСЕГЯН – Очередной небольшой отрезок из истории Армянской Церкви 176

CONTENTS

FR. ARARAT POGHOSYAN — Editorial 5

FR. ARARAT POGHOSYAN — Brief chronicle of activities
of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians (2010—2019). 8

Sermon delivered by **H.G. BISHOP MOUSHEGH BABAYAN** during
the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery. 95

AVETIS KALASHYAN — His Holiness Karekin II, Catholicos
of All Armenians, on the Armenian Genocide 100

LUSINE VARDANYAN — Cultural and nationalistic activity
of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians (2000—2019) 119

ARPINE CHANTIKYAN — Inter-church and ecumenical activity
of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians (2000—2019) 149

PARGEV BARSEGHYAN — Another small part of the historical route
of the Armenian Church 176

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆՅ. ՊՕՂՈՍԵԱՆ – Խմբագրական 5

Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆՅ. ՊՕՂՈՍԵԱՆ – Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի 2010–2019 թթ. համառօտ տարեգրութիւն 8

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում Ս. Պատարագին 95

ԱՒԵՏԻՍ ՔԱԼԱՇԵԱՆ – Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Մեծ եղեռնի մասին 100

ԼՈՒՍԻՆԷ ՎԱՐԴԱՆԵԱՆ – Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի մշակութախնամ ազգանուէր գործունէութիւնը (2000–2019 թթ.) 119

ԱՐՓԻՆԷ ՉԱՆԹԻԿԵԱՆ – Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջեկեղեցական եւ էկումենիկ գործունէութիւնը (2000–2019 թթ.) 149

ՊԱՐԳԵՒ ԲԱՐՍԵՂԵԱՆ – Հայոց Եկեղեցու պատմական ընթացքի հերթական փոքրիկ հատուածը 176

ԱԲՀ - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ագերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865

ԱԺ - Արեւելագիտական ժողովածու, Երեւան

ԱԻ - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ԱՀ - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1–26, Շուշի/Թիֆլիս, 1896–1916

ԱՖՏ - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան

ԲԵՀ - Բանբեր Երեւանի համալսարանի, Երեւան

ԲՀ - Բանբեր հայագիտության, Երեւան

ԲՀԱ - Բանբեր Հայաստանի արխիվների, Երեւան

ԲՄ - Բանբեր Մատենադարանի, Երեւան

ԳԱԹ - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան

ԳԻ - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ԳՀՃ - Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին

ԴԱՆ - Դաշտային ազգագրական նյութեր

ԴՀՊ - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեանց), հ. 1–13, Թիֆլիս, 1893–1917

ԴՀՎ - Դիվան հայ վիմագրության, Երեւան

Ե(Լ)Ժ - Երկերի (լիակատար) ժողովածու

ԵՊԿ - Երեւանի պետական կոնսերվատորիա

ԵՊՀ - Երեւանի պետական համալսարան

ԷԱԺ - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոստանյան), հ. 1–9, Մոսկվա, 1901–1913

ԷՊԱԹ - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան

ԼԻ - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ԼՀԳ - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան

ՀԱ - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա

ՀԱԱ - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան

ՀԱԲ - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1–4, Երեւան, 1971–1979

ՀԱԲՆ - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան

ՀԱԲՌ - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1–5, Երեւան, 1942–1962

ՀԱԹ - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ

ՀԱԻ - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ՀԱՊ - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան

ՀԲԲ - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1–4, Երեւան, 1944–1945

ՀԺՀ - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան

ՀՀ - Հայագիտական հանդես, Երեւան

ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան

ՀՀՀ - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս

ՀՀՀԾ - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան

ՀՀՀՍ - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ

ՀՀՄ - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան

ՀՀՄԾ - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան

ՀՀՑ - Հայագիտության հարցեր, Երեւան

ՀՀԾՏԲ - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան), հ. 1–5, Երեւան, 1986–2001

ՀՊԹ - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան

ՀՊՀ - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան

ՀՊՀՑ - Հայոց պատմության հարցեր, Երեւան

ՀՊՄՀ - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան

ՀՍՀ - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1–13, Երեւան, 1974–1987

ՀՏ - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան

ՄԱ - Մերձավոր Արեւելք, Երեւան

ՄԱԵԺ - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան

ՄՀ - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

ՄՄ - Մաշտոցի անվան Մատենադարան, Երեւան
ՄՊՎ - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երեւան
ՄՑՀՁ - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երեւան
ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1–2, Վենետիկ, 1836–1837
ՆՀԺՊ - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երեւան
ՇՀՀԿ - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
ՊԲՀ - Պատմաբանասիրական հանդես, Երեւան
ՊԻ - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
ՊՄ - «Պատմություն եւ մշակույթ» հայագիտական հանդես, Երեւան
ՎՀԵՊ - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երեւան
ՎՀՀ - «Վէմ» համահայկական հանդես, Երեւան
ՏՀԳ - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երեւան
ՑՁՄՄ - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երեւան
ՔՀ - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
ՔՀՀ - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002
ՕԱՀՀՄ - Օտար աղբյուրները հայերի եւ Հայաստանի մասին, Երեւան
АГВ - Армянский гуманитарный вестник, Ереван
АО - Археологические открытия, Москва
АПА - Археологические памятники Армении, Ереван
АРА - Археологические раскопки в Армении, Ереван
ВВ - Византийский временник, Ленинград-Москва
ВДИ - Вестник древней истории, Москва
ВЕУ - Вестник Ереванского университета, Ереван
ВОН - Вестник общественных наук, Ереван
ДВ - Древний Восток, Ереван
ДКА - Древнейшая культура Армении, Ереван
ИАЭ - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
ИАН - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
ИФЖ - Историко-филологический журнал, Ереван
КБС - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
КВ - Кавказ и Византия, Ереван
КДА - Культура древней Армении, Ереван
КСИА - Краткие сообщения института археологии, Москва
КСИИМК - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
МАК - Материалы по археологии Кавказа, Москва
МИАН - Материалы по истории армянского народа, Ереван
МНМ - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991–1992
НАА - Национальный архив Армении, Ереван
СА - Советская археология, Москва
СМОМПК - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1–46, Тифлис, 1881–1915
СЭ - Советская этнография, Москва
ХВ - Христианский Восток, Санкт-Петербург
AJNES - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
AS - Anatolian Studies, Cambridge
AW - Antike Welt, Mainz am Rhein
BAR - British Archaeological Reports, International Series, Oxford
CAH - Cambridge Ancient History, Cambridge
IC - Iran and the Caucasus, Leiden
JANER - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
JAOS - Journal of American Oriental Society, Michigan
JAS - Journal of Armenian Studies, Belmont
JSAS - Journal of the Society for Armenian Studies, Fresno
MDOG - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
OrCh - Oriens Christianus, Leipzig
PO - Patrologia Orientalis, Paris-Brepols
RÉArm - Revue des études arméniennes, Paris
SMEA - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829–4243

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխաւորութեամբ եւ որոշմամբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ազգային եւ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատուական հանգոյցի» ձեւաւորման աշխատանքներին:

Այս հանգոյցում ի մի են բերւում հայագէտների եւ գիտութեան տարբեր բնագաւառների ներկայացուցիչների հրատարակած յօդուածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցութիւնն են բերում հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչութիւնները, գրադարանները:

Հանգոյցը հասանելի է համացանցային հասցէով:

Բոլոր նիւթերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման համար:

Ունեցէ՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտուելով հանգոյցից, տարածելով տեղեկատուութիւն դրա մասին, տրամադրելով թուայնացուած նիւթեր:

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»
Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal “Etchmiadzin”

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am կամ http://www.flib.sci.am/arm/node/2
Հեռ. (+374–10) 517–196/174

Ստորագրուած է տպագրութեան՝ 26.12.2019 թ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ